


66 5
14 75

Է. Կ. խոզաբեկյան

ԱՐՅԱԽԸ
ՓՈՐՉՈՒԹՅԱՆ
ԺԼՄԻՆ



Վ. Կ. Բարձրաբեկյան

0

ԱՐՅԿԵԸ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԺԿՄԻՆ

32.536

ԼԵՐՆՈՒԹՅԱՆ ԳԱՐՄԱՐՏԻ
ՄԵ Լ. Վ. ԲԱՐՁՐԱԲԵԿՅԱՆ
Գ Ք Ա Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1991

ԱՆՀԱՏԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երկրում հողակված վերակառուցումը անցնում է դժվար հաղթահարելի արգելափակոցներով: Թվում էր, թե այդ բազաբականությանը երկրում պիտի սկիզբ առնեք սպասումներով լի մի դարուն, որն իր անձրևների հետ պիտի սրբեր ու տաններ տարիներով լճացած կեղտաշերերը՝ հողն ազատելով ավելորդ բեռից, թե պիտի արմատակալվեր, ծլարձակվեր, բարիքով պտղակալվեր իր սաղմերը զցած երկրի հասարակական-քաղաքական կյանքը: Բայց, ցավոք, երկիրը իրական վերակառուցման ընթացքի մեջ չէ: Բյուրոկրատիան ամուր կառուչ է հնից և խարխափում է անցյալի լաբիրինթոսում: Վճռական քայլեր չեն կատարվում տնտեսության մեջ հիմքային վերափոխումներ կատարելու, արտադրության ու աշխատանքի կազմակերպման հին ձևերից հրաժարվելու ուղղությամբ: Աշխարհով մեկ շատ պարզորոշ դարձավ, որ միայն իրական դեմոկրատիայի ու հրապարակաչնության պայմաններում է հնարավոր թոթափել անցյալի ծանր բեռը, կտրել բոլոր այն մարդկանց դիմադրությունը, ովքեր հանդես են գալիս էկոնոմիկայի և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում ժողովրդի իրական շահերից բխող վերակառուցման քաղաքականության դեմ: Լիակատար բացախոսության պայմաններում երկրում հանգամանալից խոսակցություն ծավալվեց անհատի պաշտամունքի և լճացման տարիներից կուտակված բացասական երևույթները բացահայտելու և ստեղծված դժվարին կացությունից դուրս գալու ուղիներ փնտրելու համար: Բայց ի՞նչ օգուտ:

Ամբողջ երկրով մեկ հույս էր տածվում, որ հրապարակաչնությունը հնարավորություն կընձեռի արագորեն արմատախիլ անել կյանքի տարբեր ասպարեզներում արմատ-

Խոշարեկան Վ. Ե.

և 751 Արցախյան փորձության ժամին.— Եր., Հայաստան, 1991.— 255 էջ,

Գրքում լայնաշաղկում է արցախյան շարժման ազատագրական բնույթը, այն դիտվում որպես ազգային հարաբերությունների բնագավառում խնամիր քաղաքականություն մշակելու և կենսադործելու կարևոր նախագայմանը: Տրվում են ԱԲՄ-ի հայ բնակչության էնթնորոշման իրավունքի արդարացի խնդրի ևսթյունը, Ադրբեջանական ԽՍՀ հայաշատ վայրերում սպիտակ շարդի և գրան ուղեկցող կարմիր շարդի հետեանքով Ադրբեջանական ԽՍՀ հայաթնություն բնթանքը՝ 1918—1990 թվականներին: Գրքում մեծ տեղ է հատկացվում 1988—1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ բնակչության բռնադուրթի, քեղասպանության, Հայաստանում նրանց բնակեցման, ինչպես նաև Հայաստանից ադրբեջանցի բնակչության արտագաղթի իրական պատճանների բացահայտման հարցերին: Վիճակագրական անաշտ փաստերի հիման վրա մերկացվում են ադրբեջանցիների կողմից իրական ժողովրդագրական պրոցեսները նենգափոխված ներկայացնելու բոլոր փորձերը նախատեսվում է բնթերցող լայն շրջանների համար:

0803100200 Հայաստանում ԳՄԴ 66—5(2)
 701 (01)—91

ISBN 5—540—01350—6
 © Խոշարեկան Վ. Ե., 1991

ներ գցած ցավոտ հարցերը, գտնել տենդային վիճակից դուրս գալու և ճգնաժամը հաղթահարելու ամենազղու ղեղամիջոցները: Բայց ավագ, ճգնաժամը գեո խորանում է ու խորանում: Անցյալում, մասնավորապես անհատի պաշտամունքի տարիներին և մեր օրերում շատ պրոբլեմներ կուտակվեցին նաև ազգային հարաբերությունների բնագավառում: Ի դեպ, այս ասպարեզում ևս ստալինականությունը արմատախիլ չի արվել, սմանց հոգևրանություն, գործելակերպի, վարքի ու բարքի մեջ նրա շունչն ու ուժն գեո խիստ ձևով զգացնել են տալիս: Լուծում չեն ստացել ազգերի սուվերեն իրավունքների հետ կապված հարցերը, իրավունքներ, որոնք անարգվել են և ոտնահարվել Ստալինի «հայրական հոգատարությունը»: Եվ քանի դեռ հասարակական-քաղաքական կյանքի որևէ ասպարեզում չրիվ ու ամբողջապես չենք ձերբազատվել ստալինիզմից, նշանակում է վերակառուցում և դեմոկրատիան քայլ չեն կատարել առաջ:

Ստալինյան սոցիալիզմը երկու կարգի են.

Ռճրագործություններ, որոնք անդառնալի են, բայց, որոնք պետք է բացահայտվեն, գատադարտվեն, դրանցից քաղաքական դասեր քաղվեն: Հասկանալի է, որ այսօր արդեն ոչ մի կերպ հնարավոր չէ վերադարձնել այն միլիոնավոր մարդկանց կյանքը, ովքեր դարձան ստալինյան սադրանքների անմեղ զոհ: Նրանց մեջ էին նաև իրենց գործին նվիրված պարզ ու հասարակ աշխատավորներ, ականավոր գիտնականներ, Մեծ հայրենականում երկրի պաշտպանության համար կյանքը նվիրաբերելու պատրաստակամ աշխատողներ, որոնց ղգալի մասը ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներից հաղթվ հրաշքով փրկվելուց հետո հայրենիքում «ապաստան» գտան փշալարերի օղակում: Ո՞ր մեղքերի համար:

Ռճրագործությունների երկրորդ խումբը վերաբերում է էկոնոմիկային, երկրի սոցիալ-տնտեսական վարդացմանը, ազգային հարաբերություններին, որոնց համար շատ թանկ վճարեց ժողովուրդը: Երկիրը կորցրեց վիթխարի նյութական, հոգևոր ու բարոյական արժեքներ, ոտնահարվեցին և շարունակվում են ոտնահարվել ազգային շահերը:

Ի տարբերություն ստալինյան սոցիալիզմի սոցիալիզմի առաջին խմբի, ներկա հասարակական-քաղաքական կյանքը բա-

ցահայտելով սոցիալիզմի սկզբնական փուլի երկրորդ խմբի էությունը, այն ծնող ակունքները, իրականացման ձևերն ու մեթոդները՝ պետք է էլք որոնի խաթարված էկոնոմիկայի հետագա վերելքն ապահովելու, աշխատավորների շահերն ու իրավունքները պաշտպանելու, կուտակված սոցիալական ու ազգային հարաբերությունների առողջացման շատ խնդիրներ լուծելու համար:

Ճավոտ և անհապաղ լուծման կարոտ հարցերի մեջ հույժ կարևոր, սթափ ու սրտացավ վերաբերմունք է պահանջում Լեոնային Ղարաբաղի խնդիրը: Պրոբլեմը սկզբնավորվել է ստալինյան կամայականության պայմաններում, այնուհետև տասնամյակներ շարունակ խորացել ու ծավալվել Ադրբեյջանական և ՍՄՀ-ում և այսօր էլ ցցուն կերպով արտահայտվում է Ադրբեյջանի կառավարող շրջանների կողմից կիրառվող հայահարած և, ընդհանրապես, ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության քաղաքականության պատճառով: Նախիջևանը դարձավ այդ քաղաքականության «պսակը», նրա հայ բնակչությունն արտաքսվեց իր դարավոր բնօրրանից: Վերջով երկրից այն է, որ նույն կանխամատածված քաղաքականությունն իրականացվում է նաև Լեոնային Ղարաբաղում, Ադրբեյջանի այլ հայաշատ վայրերում, որտեղ սպիտակ ջարդը մերթ ընդ մերթ փոխվեց կարմրով՝ սուղծելով սուղդալիթ, խոշալու, բաբու, կիրովաբադ, դաշքեսան... Դա է իրական պատճառը հայ ժողովրդի հուղումների, բազմահազարանոց միտինգներում ու նստացույցերում հնչող արգար պահանջի:

Հուղումների գաղափարական ակունքը Ադրբեյջանի պատմաբանների կողմից հայ ժողովրդի պատմության և մշակութի կուպիտ խեղաթյուրումն է, որ վերջին տասնամյակներին շափի որևէ զգացում չի ճանաչում: Պատմության կեղծարարները հատկապես ուժգնորեն հարձակվեցին Արցախի և Նախիջևանի վրա, դրանք հայտարարելով ազգանա-ադրբեյջանական մարզեր: Մինչդեռ իրականությունն այն է, որ Լեոնային Ղարաբաղը հայոց հնազարյան Արցախ նահանգի մի մասն է կազմում: Մ.թ.ա. VI դարի առաջին կեսերից սկսած Արցախը մտնում էր Երվանդունիների թագավորության մեջ և զբաղեցնում էր Կուր գետի աջափնյա տարածքը: Հետագայում Արցախը մտնում էր Տիգրան Մեծի թագավորության մեջ: Ըստ «Աշ-

խորհացույցի» Արցախը Հայաստանի 12-րդ նահանգն էր նախիջևանը Մեծ Հայքի կենտրոնական շրջաններից էր և հիմնականում բնոցրկում էր պատմական Հայաստանի վասուպուրական նահանգի նախաձավան և Գողթն գավառները, Սյունիքի նահանգի Ծրնշակ, Ճանուկ ու մասամբ Կովտական գավառները, Արարատ նահանգի Շարուր գավառը եվ երբ 1828 թ. տեղի ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Խուսաստանին, նախիջևանը իր գավառներով մտավ սկզբում Հայկական մարզի, իսկ այնուհետև Երևանի նահանգի մեջ, Զնայած պատմական այս անհերքելի իրողություններին, Աղբրեջանում հաստատված մուսավաթական կառավարությունը 1918—1920 թթ. փորձում էր զենքի ուժով բռնազրավել Լեռնային Ղարաբաղը և նախիջևանը: Այն, ինչը 1918—1920 թթ. չհաջողվեց մուսավաթական կառավարությանը ռազմական ուժով, 1921 թ. հուլիսի 5-ին շատ հանգիստ կարողացան իրականացնել Ստալինը և Նարիմանովը:

1918—1920 թթ. մուսավաթական զավթիչները ռազմական դործողություններով ոչ մի կերպ չկարողացան ընկճել Արցախի ժողովրդին և ծնկի բերել նրան, թեև բավականին երկար ժամանակ երկրամասը պաշարել էին շորս կողմից և կտրել ոչ միայն դրսի աշխարհից, այլև մայր ժողովրդից: Արցախյան պաշտպանությունը գլխավորում էր Հայոց ազգային խորհուրդը:

1920 թ. ապրիլին Աղբրեջանում խորհրդային կարգերի հաստատումով ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ Լեռնային Ղարաբաղը Աղբրեջանին միացնելու նախկին մուսավաթական քաղաքականության մեջ: Աղբրեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը, Ստալինի աջակցությամբ ու հովանավորությամբ, պահանջում էր անվերապահորեն Լեռնային Ղարաբաղը, նախիջևանը և Զանգեզուրը միացնել Աղբրեջանին: Ն. Նարիմանովի զավթողական նման պահանջը «հիմնավորվում էր» դաշնակցական Հայաստանի հետագա «հզորացումը» կանխելու և Աղբրեջանում խորհրդային իշխանությունը իբրև թե «դիսկրիմինացիայի» շենթարկելու համար:

Նկատենք, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց մեկ օր հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ին, երբ «դաշնակցական հզորացմանը» նպաստելու պատճառաբանությամբ վերացել էր, Բաքվի պրոլետարիատը, հանձինս Աղբրեջանի հեղկոմի, հատուկ ղեկավարացիայով ողջունելով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, Լեռնային Ղարաբաղը և նախիջևանը ճանաչեց խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս: Աղբրեջանական ԽՍՀ հեղկոմը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը ճանաչել էր նաև մինչ այդ՝ 1920 թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ:

Հեղկոմի ղեկավարների 1-ի ղեկավարացիան ողջունեցին Ի. Ստալինը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և պետական ու կուսակցական մի շարք հայ գործիչներ: Աղբրեջանի հեղկոմի ղեկավարացիայի հիման վրա և ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի պլենումի որոշմամբ 1921 թ. հունիսի 19-ին Հայաստանի հեղկոմը, «խորհրդային Հայաստան» օրաթերթում հրապարակած ղեկբեռով, ազդարարում էր, որ Լեռնային Ղարաբաղը այսուհետև Հայաստանի սոցիալիստական հանրապետության անբաժանելի մասն է:

Բայց Աղբրեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը, որը ստորագրել էր խորհրդային Հայաստանին հղած ղեկավարացիան, մասնակցել Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի պլենումի որոշման ընդունմանը, մի փոքր անց՝ դեմ դուրս եկավ Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանին վերամիավորելու մասին որոշմանը: Նա սպառնալից պնդում էր, որ հարցը հօգուտ Աղբրեջանի շլուծելու դեպքում հետևանքների համար Աղբրեջանի հեղկոմը պատասխանատվությունն իր վրայից վերցնում է, քանի որ հանրապետությունում ուժեղանում են «հակախորհրդային խմբերը»:

Ն. Նարիմանովի և Ստալինի մասնակցությամբ ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4-ին, լսելով ինդրո առարկա հարցը, ձայների մեծամասնությամբ որոշում է Լեռնային Ղարաբաղը վերամիավորել խորհրդային Հայաստանին: Նարիմանովը բողոքում է նման որոշման դեմ և պահանջում, որ հարցը տեղափոխվի ՌԿ(բ)Կ Կենտկոմ: Եվ թեև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն որոշում է ընդառաջել նարիմանովի այդ պահանջին, սակայն անսպասելիորեն հաջորդ

1 Այդ մասին մանրամասն տե՛ս «Нагорный Карабах» исторический справочник, Е. 1988, էջ 22.

օրը՝ հուլիսի 5-ին, նորից գումարվում է ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի նիստը, որի ժամանակ հարցը առանց քննարկելու և քվեարկության դնելու կամայականորեն որոշվում է Լեոնային Ղարաբաղը միացնել Ազրբեջանին: Միանգամայն պարզ է, որ նիստը գումարվել և որոշումը ընդունվել է Ստալին-Նարիմանով գործարքի և Ստալինի կողմից գործադրված ճնշման պայմաններում:

Աշխարհի դիվանագիտական պրակտիկայում չկա այնպիսի մի դեպք, երբ սուվերեն հանրապետությունների միջև սահմանային հարցերը որոշվեն ո՛չ թե դիվանագիտական ճանապարհներով, այլ կուսակցական որոշումներով: Հետևաբար, վերակառուցման լույսի ներքո այսօր Լեոնային Ղարաբաղի ժողովուրդը իրավացիորեն բողոքում է ստալինյան այգորինակ որոշման դեմ նաև այն պատճառով, որ կուսակցական մարմինը նման որոշում ընդունելու իրավունք չունի: Սակայն պիտի անցնեին տասնամյակներ, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը կարողանար արձանագրել (1990 թ. փետրվարի 13-ին), որ «...Լեոնային Ղարաբաղի ճակատագիրը որոշվել է ոչ սահմանադրական և իրավասություն չունեցող կուսակցական մարմնի՝ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի կամայական որոշմամբ, որը կայացվել է ուրիշ պետության ազգային-պետական շինարարությանը մասնակցելու իրավունք չունեցող սուբյեկտի կողմից և, հետևաբար, գրանցվել է որպես խորհրդային մեկ այլ սուվերեն հանրապետության ներքին գործերին միջամտելու կոպիտ ակտ, որի հետևանքով ոսնահարվել են ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները, հաշվի չի առնվել երկրամասի 95 տոկոս կազմող հայ բնակչության, ինչպես նաև խորհրդային Հայաստանի բնակչության կամքը»:

1990 թ. փետրվարի 13-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց հետևյալ որոշումը. «Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը, որի հետևանքով խախտվել է Լեոնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը, անհրաժեշտ է ենթարկվել Հայաստանի ԽՍՀ տարածքի մի մասի մասին որոշումը, և հայ ժողովուրդը բաժանվել է երկու

հատվածի, համարել իրավասությունից զուրկ, միջազգային իրավունքին անհարիր և անօրինական»:

Ի դիվանագիտության պատմության մեջ աննախադեպ է նաև Նախիջևանը որպես ինքնավար հանրապետություն Ազրբեջանի կողմի մեջ մտցնելու մասին ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև 1921 թ. մարտին Մոսկվայում կնքված պայմանագրի համապատասխան հատվածը: Մինչև սուաշին համաշխարհային պատերազմը Ռուսաստանի վարչական բաժանումով Նախիջևանը Երևանի նահանգի գավառներից մեկն էր: Եվ ահա, առանց խորհրդային Հայաստանի կամքը հարցնելու, 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի միջև կնքվող պայմանագրով, Ստալինի ակտիվ գործակցությամբ, Թուրքիային հանձնվեցին (իրավականորեն ձեռակերպվեցին) ոչ միայն Թուրքիայի կողմից Հայաստանից գրավված տարածքները, այլև Ազրբեջանին տրվեց Նախիջևանի գավառը: Բայց չէ՞ որ Նախիջևանը մինչ այդ հայտարարվել էր որպես խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս, որպիսին էր նա իսկապես: Թուրքիայի պնդմամբ այդ պայմանագրով հատուկ կետ ընդգրկվեց, որը «պարտավորեցնում էր Ազրբեջանին», որ նա Նախիջևանը չվիզի մի երրորդ պետության՝ այսինքն Հայաստանին: Ի՞նչ դավեշտ: Նախիջևանի գավառը, սրբ երբեք Ազրբեջանի մեջ չի եղել, այժմ Թուրքիայի թեյադրմամբ տրվում է Ազրբեջանին:

Ազրբեջանի կազմում Նախիջևանի, որպես ինքնավար հանրապետության, առկա փաստը չի համապատասխանում նույնիսկ «ստալինյան սահմանագրության ոգուն»: Ստալինյան և լճացման տարիներին ընդունված և ներկայումս գործող սահմանագրության մեջ չկա հիշատակում այն մասին, որ որևէ հանրապետության տարածքում զանգվածաբար բնակվող ազգային փոքրամասնությունը կարող է ճանաչվել որպես ինքնավար հանրապետություն՝ իր մայր հանրապետության կազմում: Սահմանադրական այդ ո՞ր կետի համապատասխան է տեղի ունեցել այն իրողությունը, որ ազրբեջանցիներով և հայերով բնակեցված և շրտ կողմից Հայաստանով շրջափակված Նախիջևանը դարձել է ինքնավար հանրապետություն Ազրբեջանական ԽՍՀ-ի կազմում:

Ոչ ոք երբեք հարց չի տալիս, թե ԽՍՀՄ սահմանագրությանը

չհամապատասխանող այդ ինչ բացառիկ իրավիճակ է ստեղծվել Աղբյուրների համար:

Նախիջևանի և արցախահայության խնդրին պետք է մոտենալ նաև միջազգային կոնվենցիաներով ընդունված դիրքորոշումներից: Ըստ այդ սկզբունքների ազգը չի զրկվում իր պատմական տարածքին վերստին տեր դառնալու իրավունքից, եթե նա այդ տարածքից զրկվել է ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով: Նարադրանքում մենք կտեսնենք, որ Նախիջևանի հայ ժողովուրդը բռնագաղթից սպիտակ և կարմիր շարդի անմիջական սպառնալիքների տակ:

Մինչդեռ անպակաս են հարցադրումներն այն մասին, որ ԽՍՀՄ-ը կազմավորվել է որպես հանրապետությունների պաշտամանագրային միություն, ուստի ազգային հարցի որևէ լուծում չպետք է հանգեցնի միութենական հանրապետությունների տարածքային սահմանների փոփոխության, եթե այդ փոփոխությունը դեմ է արտահայտվում ինքը՝ միութենական հանրապետությունը: Նման հարցադրումը ճիշտ կարող է լինել ընդհանուր առմամբ: Բայց եթե խնդիրը շղափում է միութենական հանրապետության կազմում գտնվող ինքնավար միավորումներին, ապա որոշիչը պետք է դառնա ոչ թե միութենական հանրապետության բարեհաճությունը, այլ ինքնավար հանրապետության կամ մարզի բնակչության մեծամասնության կամքը:

Որոշ «վայ» տեսարաններ կամ «ազգային հարցի» այսպես կոչված «պիտակներ» տարբեր ազգերի «իրավահավասարությունը» տեսնում են հենց առաջին հայացքից նկատելի անիրավա՛նավասարության մեջ: Եթե այդ իրավիճակը ինչ-որ չափով նանդորժելի էր մինչ այժմ, ապա արդի պայմաններում տարբեր ազգերի «անիրավահավասար» վիճակի արդարացումն ու հետագա պահպանումը հակադեմոկրատական է և չի բխում սրե՛կ իրավական պետության ազգային քաղաքականության սկզբունքներից:

Եվ, դավո՛ք, գործելով հին ստերեոտիպերով (որը այժեի կենսունակ է) այսօր էլ ոտնահարվում են ազգային հարցերի վերարևրյալ սահմանադրական հիմնադրույթները: Սխալ է, երբցս սխալ, խնդրի լուծման ելակետ ընդունել և հարց վճռելիս վկայակուշել ԽՍՀՄ սահմանադրության 78-րդ հոդվածը: Իսկ

70-ո՞րդը: Ղարարադրյինները ելնում են ազգերի ազատ ինքնորոշման մասին ԽՍՀՄ սահմանադրության 70-րդ հոդվածի պահանջներից: Երկրի ղեկավարները գտնում են, որ դա հակասահմանադրական է:

Չպետք է մոռանալ, որ 78-րդ հոդվածը նույնպես իր մեջ ազգերի ինքնորոշման հնարավորություն է պարունակում, բայց զուրկ է իրականության վերածվելու պայմանից, քանի որ նրա նախապարհին վեր են բարձրանում անհաղթահարելի արգելափակոցներ: Կարծում եմ, որ անընդունելի է միևնույն պետության մեջ ապրող ազգերին տարբեր իրավունքներով օժտելը: Ի՞նչ սկզբունքով, օրինակ, կարելի է արդարացնել այն հարցադրումը, ըստ որի միութենական ամեն մի հանրապետություն, սահմանադրական հիմունքներով, իրավասու է ինքնորոշման հարց բարձրացնել, իսկ ինքնավար հանրապետությունը կամ մարզը զուրկ է այդ սահմանադրական իրավունքից: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ մարզը միութենական հանրապետության կազմից դուրս գալու և մայր հանրապետությանը վերամիավորվելու խնդիր է դնում՝ մուգաշափ անգամ շխաթարելով ԽՍՀՄ-ի տարածքային սահմանները: Ուրեմն, առաջին դեպքում, որը հանգեցնում է երկրի քարտեզի վերաձևմանը՝ թույլատրելի է, երկրորդ դեպքում, որով ԽՍՀՄ բնդհանուր քարտեզի վերաձևման հարց չի զրկվում, թույլատրելի չէ: Այսպիսով, ստացվում է, որ իրավական պետության մեջ ազգերը բաժանվում են «հատուկ» արտոնություններով օժտված և ինքնորոշման իրավունքներից զուրկ ազգերի:

Նման պարագաներում, ինչպես նկատում են շատերը, ինքնավար միավորումները կարող են հանդես գալ իրենց ժողովրդի կամքին հակասող իրապայմաններում: Օրինակ, դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ միութենական հանրապետությունը օգտվելով իր ինքնորոշման իրավունքից՝ ֆեդերատիվ միավորումից դուրս գալու պահանջ է առաջադրում: Նման պահանջը մեխանիկորեն տարածվում է նաև ինքնավար միավորման վրա, եթե նույնիսկ նրա ժողովուրդը ֆեդերացիայից դուրս գալու ոչ մի պահանջ չի առաջադրում: Դրանով իսկ չի՞ հավերժացվում ստալինյան սահմանադրությանը հաստատված քաղաքականությունը, որով մի ազգ ստրկական կախվածության մեջ է մեկ այլ ազգից: Եվ այդ

կախվածությունից նա կարող է ազատագրվել միայն այն դեպքում, երբ այդ շնորհը կրարեհաճի «պարզել» միութենական հանրապետությունը:

Ժամանակն է այդ հարցադրումը վերաշարադրել այսօրվա պահանջներին համապատասխան: Վճռականորեն դատապարտելով և մի կողմ նետելով ազգերի ինքնորոշման իրավունքի անհատի պաշտամունքի և լճացման ժամանակներում տեղ գտած հակադեմոկրատական, հակաիրավական և միջազգային ստանդարտներին շհամապատասխանող սուբյեկտիվ սահմանումները, պետք է հիմք ընդունել խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային նորմերին համապատասխանող նկատառումները:

Գաղտնիք չէ, որ անհատի պաշտամունքի և լճացման տարիներին ազգային հարաբերությունների ասպարեզում գոյացած նստվածքը ոմանց հոգեբանության մեջ այնքան խորն է թափանցել, որ արմատախիլ անելը դարձել է դժվարագույն խնդիր: Այդ ուժերը կառչելով այն տարիներին մշակված հակադեմոկրատական սկզբունքներին, ցանկանում են այն հավերժացնել պետության սահմանադրական փաստաթղթերում:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարին տրված զեկուցման մեջ Մ. Ս. Գորբաչովն ասաց. «Ազգային ինքնորոշման սկզբունքը, որն առաջ է քաշել Լենինը, եղել և մնում է կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության ղիխավոր տարրերից մեկը»²: Նույն համագումարում, քաղարկելով Մ. Ս. Գորբաչովի այս արտահայտությունը, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բ. Վ. Գաղամյանը իր ելույթում նշեց. «Մկեք ինքնեբա մեզ հարցնենք, թե հանուն ինչի», հանուն այդ ո՞ր քարձրագույն սկզբունքների պետք է ստուպի Ղարաբաղի հայ ժողովուրդը: Դա ի՞նչ ինքնորոշում է, եթե փոքրաթիվ ազգը ինքնորոշման համար պետք է թույլատրվու խնդրի ավելի մեծ ազգից: Վերջինս կարող է ողորմարար թույլատրել կամ անբարտավանորեն արգելել: Սա ի՞նչ մեծապետական թույլատրական ինքնորոշում է»³:

Խորհրդային պետականության իրավական հարցերը վրձնելիս պրակտիկ կյանքում, շատ հաճախ, շրջանցվել են ոչ միայն միջազգային ընդունելի նորմերը, Խոսելով ազգերի ինքնորոշման իրավունքի մասին Լենինը գրում է. «Ինքնորոշման ազատության, այսինքն՝ անջատման ազատության կողմնակիցներին մեղադրել սեպարատիզմը խրախուսելու մեջ, նույնպիսի հիմարություն է և նույնպիսի կեղծավորություն, ինչպես ապահարզանի աղատության կողմնակիցներին՝ ընտանեկան կապերի քայքայումը խրախուսելու մեջ մեղադրելը»⁴:

Վճռականորեն դատապարտելով ազգերի ինքնորոշման իրավունքի՝ անհատի պաշտամունքի և լճացման ժամանակներում ԽՍՀՄ սահմանադրության մեջ տեղ գտած հակադեմոկրատական սուբյեկտիվ սահմանումներն ու դրանցից բխող մեկնարանությունները, պետք է ելնել դեմոկրատական սկզբունքներից: Չէ որ Վ. Ի. Լենինը շատ հստակ և գիտական հիմունքներով է դնում հարցը: Նա գրում է, որ «Ազգերի ինքնորոշում ասելով հասկացվում է հենց էաղափական ինքնորոշումը, այսինքն անջատման, ազգային ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը»⁵: Եվ ապա՝ անջատչան հարցը պետք է լուծվի «բացառապես տվյալ տագածրի բնակչության ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկության հիման վրա»⁶: Վ. Ի. Լենինի օրով ճիշտ այս սկզբունքով լուծվեցին Ֆինլանդիայի ու Լեհաստանի ինքնորոշման հարցերը:

Չպետք է մոտանալ, որ պրակտիկ կյանքում գիտական սկզբունքներից կատարվող ամեն մի շեղում, և այն էլ ազգային հարցում, հղի է վտանգավոր հետևանքներով:

Տեղին կլինեք նորից դիմել Վ. Ի. Լենինին՝ մեջ բերելով հետևյալ միտքը. «Շվեդական այն սոցիալ-դեմոկրատը, որը կողմ չի նորվեգիայի անջատման ազատությանը, ստոր է»⁷:

Վ. Ի. Լենինը երբեք չի հիշատակում, որ ինքնորոշման իրավունքը կարող է հատուկ լինել միմիայն միութենական հանրապետություններին, իսկ ինքնավար մարզը գրկված է

4 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Ե., 1930, հ. 25, էջ 345:
5 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Ե., 1979, հ. 24, էջ 302:
6 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Ե., 1979, հ. 23, էջ 385:
7 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Ե., 1983, հ. 49, էջ 401:

2 Իզվեստիա, 1989, 31 մայիսի
3 Նույն տեղում, 1989, 8 հունիսի:

նման իրավունքներից: Հակաբնական է տարբեր ազգերի մեջ խտրականություն դնելը՝ նրանց բաժանելով որոշակի իրավունքներով օժտված տիրապետող ազգերի և իրավազուրկ, ենթակա ազգերի, որոնք ճակատագրի բերումով պետք է հլու-հնազանդ ծառայեն ու կամակատար դառնան տիրապետող ազգի քմահաճույքներին, նրանց կողմից հարուցված անլուր հալածանքները տանեն խոնարհաբար:

Ղարաբաղյան պրոբլեմը դուրս է դալիս տարածքային հարցադրման շրջանակներից, որը լուի ամանցյալ է և ստանում է սահմանադրական նշանակություն:

Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ դեմարման Գերագույն խորհրդի տասներորդ արտահերթ նստաշրջանի 1989 թ. սեպտեմբերի 17-ին ընդունած որոշման մեջ արձանագրվում է. «Քանի որ ԼՂԻՄ-ի հարցը Հայաստանի հարուցած հարցը չէ, այլ բարձրացրել է ԼՂԻՄ-ի ժողովուրդը, և այն պետք է դիտել որպես միայն ժողովրդի ինքնորոշման հարց... ԼՂԻՄ-ի պրոբլեմը երկու հարևան հանրապետությունների միջև վեճի հարց չէ, այլ ԼՂԻՄ-ի ժողովրդի կամքն է և պետք է լուծվի ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա»:

Շրջանցելով ազգերի ինքնորոշման դեմոկրատական նորմերը կամ դրանք յուրովի վերաշարադրելով, Ազրբեջանում առաջ են քաշվում Լեոնային Ղարաբաղի պրոբլեմը «լուծելու» կամ ավելի ճիշտ՝ խճճելու. դանազան տարրերակներ: Նրանք (և ոչ միայն նրանք) գտնում են, որ ինքնորոշման տեսական դրույթները պրակտիկ կյանքում իրականացնելը վաղ է: Դեռ չեն հասունացել դրանք իրականացնելու համապատասխան իրական պայմանները: Այս հայեցակետը հենց նաև ԽՍՀՄ ժողովրդական ղեկուսատիների առաջին համագումարում որոշ մարդկանց էլույթներում:

Միանգամայն պարզ է, որ կգա ժամանակը, ու մենք գրանում կհամոզվենք, որ Ազրբեջանում ազգերի ինքնորոշման իրավունքի դեմոկրատական սկզբունքները կվկայակոչվեն, դրանք կյանքում կիրառելու մասին թե՛ աղմուկ կբարձրանա միայն այն պահին, երբ նախիջևանի Ինքնավար Հանրապե-

տություն օրինակով հայաթափ կարվի ԼՂԻՄ-ը և նրա բնակչության թվակազմում կգերակշռի ազրբեջանական տարրը: Երկրորդ, նրանք առաջ են քաշում մի խիստ սուբյեկտիվ տարրերակ, որով վերջնականապես ցանկանում են թաղել բուն պրոբլեմը, այն է՝

— Վերացնել ԼՂԻՄ-ը որպես վարչական միավոր:

— Ներկայումս մարզի մեջ մտնող շրջանները որպես ինքնուրույն վարչական միավորներ ուղղակիորեն ընդգրկել Ազրբեջանական ԽՍՀ-ի կազմում:

Ահա զարաբաղյան պրոբլեմը վերջնականապես թաղելու և այդ ճանապարհով ստեղծված փակուղուց «դուրս գալու» մի գործուն բանալի, առանց «ավելորդ դիտացավանքների»: Ուստի, Ազրբեջանում զարաբաղյան խնդիրը առաջ է քաշվում ոչ թե լուծելու և ստեղծված իրավիճակից դուրս գալու, այլ մարզի հայ բնակչության կախվածության ստրկական լուծը էլ ավելի կուեղու նկատառումով:

— Կրել տասնամյակներ գոյություն ունեցող ճորտային կախվածության լուծը, մայր ժողովրդին վերամիավորվելու մասին ոչ մի խոսք: Ահա այն, ինչ պահանջում են Ազրբեջանում ԼՂԻՄ-ի հայ բնակչությունից: Հակառակ դեպքում սպառնում են սպանդով: Պրակտիկ կյանքում նրանք գործում են հենց այդ ոգով:

Այս ջարդարարների ջրաղացին ջուր են լցնում և ամբոխին որոշակի ուղղվածություն հաղորդում մտավորականության այն ներկայացուցիչները, որոնք մասսայական ինֆորմացիայի բուրդ աղբյուրների միջոցով, օգտագործելով նաև կուսակցական, գիտական և այլ ամբոխներ, կշտամբանքի ու սպառնալիքի հեղեղ են թափում զարաբաղյան շարժման վրա: Այն դատապարտվում է՝ պատրվակելով մարզը հանրապետության կազմից դուրս հայտարարելու և իրր թե ԽՍՀՄ քարտեզը «վերածելու» փորձի համար: Այդ առումով անպակաս են նախ սպառնացող և ապա «խրատական դասերը», որոնք վերածվեցին Ազրբեջանում ապրող հայ բնակչության նկատմամբ ջարդարար միջոցների կիրառմանը: Նախատեսվող զարաբաղյան շարժումը, «խրատական խոսքեր» էին բարբառում և որոշակի վտխ արտահայտում առ այն, որ ԼՂԻՄ-ին ինքնորոշման իրավունք վերապահելը կարող է հանգեցնել անկանխատեսելի

³ Խորհրդային Հայաստան, 1989, 23 սեպտեմբերի:

հետևանքների և, գրանով իսկ, սպառնալիքի տակ գնել Ազրբեջանում ապրող հայերի գոյությունը: Այդպես էլ եղավ Ազրբեջանում հայերի գոյությունը սպառնալիքի տակ է դրվել նախ՝ դարաբաղյան շարժումից շատ ու շատ առաջ, երբ իրականացվում էր սպիտակ ցեղասպանությունը:

Երկրորդ, նման հարցադրումով հրահրվում և որոշակի տոն էր տրվում Ազրբեջանում ծայր առած ահաբեկչական սանձարձակություններին:

Երրորդ, գրանով իսկ արձանագրվում էր այն քար անտարբերությունը, որ գրոսերվում էր երկրում իրավապահության և մի լարք այլ մարմինների զլխին կանգնած պաշտոնատար անձանց կողմից՝ Ազրբեջանում իրականացվող ոտնձգությունների նրկատմամբ: Ազրբեջանում ավելի քան երեք տարի սանձազերծվող տնօրինական ոչ մի քայլ չի դատապարտվել և իրավապահ մարմինների կողմից լուրջ հետաքննության հարց դարձել: Ավիլին, «Իզվեստիա» թերթը 1990 թ. հունիսի 25-ին հրատարակած հոդվածներից մեկում նշում է, որ «Ազրբեջանից բացի հանցագործությունների աճ նկատվում է բոլոր հանրապետություններում»:

ԱրԽ-ի հայ բնակչության ինքնորոշման հարցը ավտոնոմ հարց չէ: Դրա լուծումը հակասում է պանթուրքիզմի ստրատեգիական պլաններին: Պատահական չէ, որ Ազրբեջանում ստեղծված ժողովրդական ճակատը որոշակի կապ է տեսնում Լեոնային Ղարաբաղի պրոբլեմի և իրենց կողմից վաղուց ի վեր փափագած պանթուրքական միասնական պետություն ստեղծելու գաղափարի մեջ:

1989 թ. հոկտեմբերին մամուլում տպագրվեց Արմենպրեսի հաղորդագրումը Ազրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարներից մեկի՝ ոմն Ի. Ալիևի հետ տեղի ունեցած հարցազրույցի մասին, որը զետեղվել է Արու-Դաբիում հրատարակվող «Ալ բայան» թերթում՝ 1989 թ. սեպտեմբերի 17-ի համարում: Ինչպես նշում է Արմենպրեսը, հարցազրույցում առաջ քաշված թեզերը «այսօր Ազրբեջանում տիրապետող մտայնություն և քաղաքական ծրագիր են դարձել»⁹:

Հարցազրույցը հավաստում է, որ Ազրբեջանի ժողովրդա-

⁹ Խորհրդային Հայաստան, 1989, 17 հոկտեմբերի:

32536

կան ճակատի ծրագիրը հիմնվում է Քեմալ Աթաթուրքի հռչակած սկզբունքների վրա: Ի. Ալիևը գտնում է, որ Աթաթուրքի առաջ քաշած սկզբունքները, ի դեմս Թուրքիայում այսօր կիրառվող քաղաքականության, կյանքում քննություն են բռնել: Ժողովրդական ճակատը ձգտում է հավաստել Ազրբեջանի սուվերենությունն ու անկախությունը և հռչակել Ազրբեջանի թուրքական դեմոկրատական հանրապետություն: Ի. Ալիևը հայտարարում է, որ ժողովրդական ճակատը իր առջև երեք նպատակ է դնում. «1. Մեր թուրք ազգային անհատականությանը վերադառնալը: 2. Մեր մուսուլմանական մշակութային արժեքներին վերադառնալը: 3. Նորացում»¹⁰:

Ազրբեջանի ժողովրդական ճակատի հիմնական նպատակներից մեկը «Մեծ Թուրքիայի» ստեղծումն է կամ արտասահմանյան բոլոր թուրքերի միավորումը Թուրքիայի հովանու տակ¹¹: Նրանք Թուրքիան դիտում են որպես «Ասիայի և Կովկասյան ռեգիոնների բոլոր թուրք ժողովուրդների համար ղեկի Արևմուտք նաչող պատահանի»¹²:

Այսքանից հետո զարմանալու որևէ բան չկա Լեոնային Ղարաբաղի հարցում Ազրբեջանի ժողովրդական ճակատի ունեցած վերաբերմունքի մեջ: Լեոնային Ղարաբաղի պրոբլեմը նրանք դիտում են «պրովոկատոր հայերի» կողմից արհեստական հորինվածք, որը իբր թե «հովանավորվում է» ուսաների կողմից:

Ի. Ալիևն այդ հարցադրույցում «հավաստում է», որ իբրև թե հայերը Խորհրդային Միությունից, Ամերիկայից և Տրանսիայից զենք են ձեռք բերել, սակայն Ազրբեջանի «բրիտասարդությունը նրանց համապատասխան հակահարված կտա»¹³:


Հենց այդ նույն ողով 1989 թ. սեպտեմբերի 23-ին Ազրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանն րնդունում է Ազրբեջանի սուվերենության մասին օրենքը: Ժողովրդական ճակատի ծրագրի և Ազրբեջանի սուվերենության մասին օրենքի հոգե-

¹⁰ Խորհրդային Հայաստան, 1989, 17 սեպտեմբերի:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:



հարազատութունն ակնհայտ է: Այդ երկու փաստաթղթերը միմյանց լրացնող և նույն նպատակը հետապնդող անբնդունելի փաստաթղթեր են: Նպատակը Լեոնային Ղարաբաղի և ընդհանրապես Ադրբեջանում ապրող փոքրաթիվ ժողովուրդներին իրավադրկությանը սահմանադրական հիմնավորում տալն է, ԼՂԻՄ-ը ցրելը:

Սուվերենություն մասին հարեան հանրապետության Գերազույն խորհրդի ընդունած օրենքն ինքն իր մեջ հակասական է: Տվյալ դեպքում խոսքն այն մասին չէ, որ օրենքում ընդունված հոդվածները չեն բխում ԽՍՀՄ սահմանադրության սկզբունքներից և հակասում են այդ սահմանադրությանը, այլ տողորված են հանրապետությունում բնակվող փոքր ազգությունների սուվերեն իրավունքները խանձարուրի մեջ խեղդելու վճռականությունը:

Օրենքի նպատակը հայտարարվում է կամավոր հիմունքներով ԽՍՀՄ-ի կազմավորումը, և ապա՝ «Նորհրդային Ֆեդերացիայում ժողովուրդների ազատ և իրավահավասար միավորումը երաշխավորում է նրանց բազմակողմանի զարգացումը»: Եստ բարեկիրթ է: Բայց օրենքի հաջորդ հոդվածներից պարզ է դառնում, որ այդ «ազատ և իրավահավասար» միավորումը չի տարածվում հանրապետությունում գործող ինքնավար կազմավորումների վրա, այդ կազմավորումները, գրանցում ապրող ժողովուրդները, ըստ ընդունված օրենքի, գրկվում են իրենց պետականության գոյությունն ձևը որոշելու իրավունքից:

Եթե այդ օրենքով ԽՍՀՄ Ֆեդերացիան կազմավորվում է կամավորության հիմունքներով, ինչու՞ն նման կամավորությունը պետք է ոտնահարվի միութենական հանրապետությունում Ֆեդերացիան կազմավորելիս: Էլ չենք խոսում այն մասին, որ թե՛ Նախիջևանը և թե՛ Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ են մտել ոչ թե կամավորության սկզբունքով, այլ, ինչպես նկատեցինք, այդ սկզբունքը ոտնահարելով: Բայց զա չի խանգարում, որ օրենքում ԼՂԻՄ-ը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը հայտարարվի Ադրբեջանի անքակտելի մասը: Իրականում այդ ինքնավար կազմավորումները Ադրբեջանի անքակտելի մասը լինել չեն

կարող հենց այն պատճառով, որ նրա կազմի մեջ են մտցվել հակասահմանադրական սկզբունքներով:

Սյնելով դրանից, օրենքում կատարում են հաջորդ հակասահմանադրական, անխոհեմ և անխելոս նպատակներ հետապնդող քայլը, որը, ըստ էության, հակասում է հենց այդ օրենքում մինչ այդ առաջ քաշված «սկզբունքներին»: Անտեսելով այդ կազմավորումների տարածքի վրա ապրող ժողովուրդների կամքը, նրանց պետական ձևի ընտրության և սուվերենության հարցը պետք է վճռի ոչ թե ինքը՝ տարածքի բնիկ ժողովուրդը, այլ Ադրբեջանի ողջ բնակչությունը՝ հանրաքվեի միջոցով: Այդ դեպքում ո՞ւր մնաց ամեն մի ժողովրդի ինքնուրույնության, ինքնորոշման իրավունքի մասին դեկլարացիան:

Շարունակելով նման մտեցումը, տրամաբանական հարց է ծագում՝ ո՞վ պետք է վճռի Ադրբեջանի սուվերենության հարցը՝ Ադրբեջանում բնակվող ժողովուրդները, թե՛ ԽՍՀՄ-ում ապրող բոլոր ժողովուրդները:

Ադրբեջանի սուվերենության մասին օրենքում տեղ է գտել նաև ԽՍՀՄ զործող սահմանադրությանը հակասող հոդված, ըստ որի Ադրբեջանը իրեն իրավունք է վերապահում վերացնել Ադրբեջանի տարածքում գոյություն ունեցող ավտոնոմ միավորումները: Դա հակասում է ԽՍՀՄ սահմանադրության 78-րդ հոդվածին: Զե՞ որ ըստ այդ հոդվածի միութենական հանրապետություններում ինքնավար կազմավորումներ ստեղծելու կամ վերացնելու վերջնական վճիռ կայացնելու իրավունքը վերապահվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին:

Ո՞ւմ պարզ չէ, որ Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքի այդ հակասական բնույթը բացատրվում է ԼՂԻՄ-ի հայ բնակչությանը ինքնորոշման իրավունքից զրկելու մտահոգությամբ: Ինչպես շատ հարցերում, այս հարցում նույնպես Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հանդես է գալիս ժողովրդական ճակատի հետ սերտ դաշնակցած: Գերագույն խորհուրդը հյու-հնազանդ հետևելով ժողովրդական ճակատի թելադրանքին, օրենքի ուժ է տալիս նրա բոլոր նկատումներին: Ժողովրդական ճակատը հանդես է գալիս ԽՍՀՄ-ի կազմից Ադրբեջանը դուրս բերելու հայտարարությամբ: Այդ նույնն է հավաստում Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված

ված օրենքը Այդ դեպքում ի՛նչ վարչագիծ պետք է գրսևորի (ԳԻՄ-ի հայ բնակչութունը: Ըստ այդ օրենքի մարզը ևս կամա թե ակամա պետք է դուրս գա ԽՍՀՄ կազմից: Մինչդեռ դա հակասում է մարզի բնակչության գերազույն կամքին, Ուստի ըստ այդ օրենքի (ԳԻՄ-ի հայ բնակչութունը զրկված է ոչ միայն Ազրբեջանի կազմից դուրս գալու և իր պետականութան գոյութան ձևը որոշելու իրավունքից, այլև Ազրբեջանի Գերագույն խորհրդի որոշմամբ, սուս ու փուս ավտոմատ կերպով ԽՍՀՄ-ի կազմից դուրս մնալով, պետք է շարունակի իր ստրկական կախվածութունը Ազրբեջանից:

Այն, ինչ կամայականորեն կարող էին տեղի ունենալ անհասարակ պաշտամունքի տարիներին, անհանդուրժելի են մեր օրերում:

Ժամանակն է հաղթահարել և փափուղուց դուրս բերել անհատի պաշտամունքի և լճացման տարիներին, ինչպես նաև այսօր Երկրում ազգային հարաբերությունների բնագավառում տասնամյակների ընթացքում կուտակված պրոբլեմները:

1988 թ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Դաս առաջին

Ազգային հարաբերություններում վերակառուցման անհրաժեշտության մասին առաջանալը առաջինը հնչեց Լեոնային Ղարաբաղում: Չէ՛ որ պարարտ հող էր ստեղծվել բարձրաձայն խոսելու Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության ցայտօր ոտնահարված մարդկային իրավունքների և ազգային արժանապատվության մասին, ի տես ամենքի պարզելու ազգերի ինքնորոշման իրավունքի լայնախոհ դրոշը, չզրսևորելով ազգայնամոլական գեթ ոչ մի արարք, ատելություն որևէ նշույլ ազրբեջանցի կամ որևէ այլ ժողովրդի նկատմամբ:

Ահա թե ինչու ողջ հայ ժողովուրդը, ՀԽՍՀ բարձրագույն մարմինը 1988 թ. հունիսի 15-ին անվերապահորեն արձագանքեցին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության արդարացի պահանջին և դրա հիման վրա Ազրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին

վերամիավորվելու վերաբերյալ մարզի խորհրդային ու կուսակցական վերադաս մարմինների որոշումներին¹:

Ինչդիր վերստին զարձավ նաև Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի տասներորդ արտահերթ նստաշրջանի օրակարգի կարևորագույն հարց և ընդունվեց հետևյալ որոշումը. «Դիմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն խորհրդին՝ սույն թվականի սեպտեմբերին կայանալիք նստաշրջանում ճանաչել Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ինքնորոշման իրավունքը, որն արտահայտվել է ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների որոշումներում²: նստաշրջանում արձանագրվեց, որ «Լեոնային Ղարաբաղը Ազրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ է մտցվել ոչ իրավասու մարմինի՝ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշման հիման վրա, այն ժամանակ մարզի բնակչության 95 տոկոսը կազմող հայ բնակչության իրավունքների ոտնահարմամբ³: Ուստի ղեկի ունում ծագած ազգամիջյան պրոբլեմի արմատները «1920—1921 թթ. ապօրինարար և միջազգային իրավունքի տարրական նորմերի կոպիտ խախտմամբ ընդունված պայմանագրերի ու որոշումների մեջ են»:

Պրոբլեմի արդարացի լուծման նման պահանջը բխում էր երկիրը ղեմավարացնելու խնդիրներից և մեծ քայլ էր ստալինյան ոճրագործություններից մեկի գատնապարտման ճանապարհին: Դրանով իսկ կուղղվի այն կանխամտածված կամայականությունը, որ թույլ է տրվել 20-ական թվականների սկզբներին՝ ոտնահարելով ազգերի ինքնորոշման իրավունքի գիտական հարցադրումները:

Ասվածի լույսի ներքո ընդհանրացնելով երևույթները՝ դրական գնահատական պետք է տալ Լեոնային Ղարաբաղում և Հայկական ԽՍՀ-ում 1988 թվականին տեղի ունեցած համաժողովրդական ելույթներին: Դրանք սկզբում տեղի էին ունենում վերակառուցման ու ղեմավարտի մասին կուսակցության առաջադրած բանաձևի լույսի ներքո և արտահայտում

1 Կոմունիստ, 1988, 16 հունիսի
2 Խորհրդային Հայաստան, 1989, 23 սեպտեմբերի
3 Նույն տեղում:

էին հայ ժողովրդի կամքը և պատրաստակամութիւնը այդ քաղաքականութեան կենսագործման համար, Չէ՛ որ այդ ելույթները ընթանում էին վերակառուցումն ու դեմոկրատիան պաշտպանելու լոզունգներով և այդ քաղաքական կուրսի նըկատմամբ ցուցաբերվող մեծ նվիրվածութեամբ: Ի՛նչ հուսախաբուութիւն:

Այսօր այլևս անմոռաց պատմութիւն են այդ օրերի զանգվածային պոռթկումները, խաղաղ ու մեծարվեստ համաժողովրդական միտինգները: Գրանք ոչ թե մոռացման տրվող պահեր են, այլ իմաստութեան մեծ գպրոց, որից պետք է դասեր քաղել, դասեր՝ ճշմարտութեան և արդարութեան վերահաստատման, դասեր՝ ժողովրդի հետ լինելու, նրա խոհեմութեանն ապավինելու, նրա իրավացի պահանջները կատարելու, պատմութեան մեջ թույլ տրված սուբյեկտիվ շեղումներն ու սխալները շտկելու համար: Հիրավի, մենք պետք է տանք այդ օրերին տեղի ունեցած երևույթների օրյեկտիվ գնահատականը: Դա մեր պատմութիւնն է, նրա բաղադրամասը, մանավանդ, որ այս հարցի լուսարանումը մենք չենք գտնում կենտրոնական մամուլի հրապարակումներում, հեռուստատեսային հաղորդումներում: Ավելին, մեզ սագործներին մեղադրելու և դատապարտելու փոխարեն երկար ժամանակ նրանք միակողմանի պարտավում էին պայմանագրային պարտավորութիւնները թերակատարող ձեռնարկութիւններին, լիորանալով երևույթը ծնող և գործադուլներ հարուցող պատճառների մեջ: Երևույթների բուն էութեան մեջ թափանցելու ցանկութիւն չունեցող և հաճախ էլ պարզապես ինչ-որ փաստեր հորինող մարդիկ (Սվչարենկո, Զերնենկո, Բեկետև, Ավսիենկո, Զուբով), Բաբվում մի խումբ վայ գիտնականներ և կուսակցական ղեկավար աշխատողներ) թողնում են հիմնականը, միտումնավոր կերպով շրջանցում բուն խնդիրը և քննադատութեան թիրախն ուղղում հարցի ու ժողովրդի հետ ընդհանուր ոչինչ չունեցող առանձին սայթաքումների դեմ: Ոչ ոք չի կարող պնդել, թե սայթաքումները պետք է շրջանցել, նկատելու շատ: Բայց վտանգավորը ոչ միայն հնարովի փաստերի վրա տեսութիւն ստրբելն է, այլև առանձին մարդկանց սխալ քայլերը ժողովրդին վերագրելը և զրանցով ժողովրդի մասին ընդհանրացումներ կատարելը: Ընդհանրացումները պետք է կատարվեն՝

ելնելով երևույթներին ընտրող ամենաէական հատկանիշներին: Պետք է կարողանալ նշմարել նաև երևույթների ընդերքում դուռև սաղմնավորվող և ծնվող նորը, նկատել նրա ապագա միտումները և պայմաններ ստեղծել դրա զարգացման համար: Այդ նորը բացախոսութիւնն է, միտինգներում համաժողովրդական մակարդակով ոչ միայն ազգային հարաբերութիւնների նոր համակարգի սաղմնավորման երևույթը, այլև սոցիալ-տնտեսական զարգացման, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարիզներին վերաբերող խնդիրներում տարբեր լուծումների առաջադրումն ու քննարկումը: Իսկ դա մօրբիլիզացնում է մարդկանց, շարժում նրանց միտքը՝ խնդրի լուծման նոր տարբերակներ որոնելու և օպտիմալը գտնելու համար:

Իր ամբողջութեան մեջ 1988 թ. հայ ժողովրդի կամքի հորդացող ալիքը թեև դուրս եկավ իր ափերից, երբեք չազատրվեց և սրբեց-տարավ անցյալի դառնութեան շատ հուշեր: Այն նման չէր հորդացած ու փրփրակալած գետերի, որոնք հունից դուրս եկած զալարվող հոսանքով կեղտաջրի հետ միասին սրբում-տանում են ափերին փոված ամեն ինչ՝ պիտանին և ոչ պիտանին, պատճառելով ավերումնք ու մարդկային զոհեր: Հայ ժողովուրդը փոթորկահաշույց ծովի նման որքան ալիկծովեց զայրագին, նույնքան և հանդարտվեց, պարզվեց, որքան փոթորկվեց, նույնքան ինքնամաքրվեց և խաղաղվելուց առաջ դեպի ափ նետեց իր անարատ ջրերը թափանցած, իր համար խորթ օտար տարրերին: Ինչպես միշտ, այս անգամ էլ նա հանդես եկավ ի նվիրվածութիւն իր մեծ ու փոքր հայրենիքի, ի ամրապնդում երկրի բոլոր ազգերի ո՛չ թե լոզունգային, այլ անարատ բարեկամութեան, ի պաշտպանութիւն խորհրդային երկրի ձեռք բերած նվաճումների, հանուն դրանց բաղմապատկման: Այսպես նա պարզեց հեղափոխութեան գրոշը, աչդպես նա մեր երկրի բոլոր ժողովուրդների հետ փրկեց հայրենիքը ֆաշիզմի վտանգից և այսօր, այս ճակատագրական պահին, զորավիգ է վերակառուցմանը: Այս բոլորը առաջին դասն էր, որ մենք քաղեցինք այդ օրերին մեզ վեհացնող համաժողովրդական միտինգներից՝ Երևանում և Ստեփանակերտում:

Այն վերաբերում է երիտասարդության նկատմամբ մեր ունեցած պատկերացումների խոր շրջադարձին: Կարծում էինք, թե երիտասարդությանը հատկանշական են, առաջին հերթին, բարեկեցիկ և սպառողական ձգտումները: Ինչ-որ տեղ մեզ վախեցնում էր նրա աշխատանքային «թվացող» «ծուլությունը»: Բայց նա հանդես եկավ լայնախոհ, սթափ, համբերատար: Մենք՝ միջին և տարեց սերնդի մարդիկ, հոգով վեհացած՝ ընթանում էինք փառապանծ երիտասարդության շարքերին համաքայլ, երբեմն էլ նրա հետևից: Միտինգների ժամանակ երիտասարդությունն իր կազմակերպվածությամբ, գործելակերպով ու հասունությամբ, վերակառուցման քաղաքականությունը խորապես ըմբռնելու և գնահատելու ունակությամբ փայլուն օրինակ հանգիստացավ, որից գալիք սերունդները պետք է դասեր քաղեն: Բազմաթիվ խաղաղ, հանդիստ միտինգներում թույլ շտրվեց ազգայնամոլական ու քրեական ոչ մի արարք: Նա լրջախոհություն դրսևորեց հատկապես այն պահին, երբ 1988 թ. փետրվարին Ադրբեյջանի և Հայաստանի ժողովուրդներին զիմեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը: Երիտասարդությունը ամբողջ հայ ժողովրդի հետ միասին, անկախ սոցիալական պատկանելությունից, նրա դիմումն ընդունեց պահի կարևորության լուրջ պիտակցումով ու անմիջապես թողեց միտինգների հրապարակը: Աշխատանքային մեծ եռանդով գործի անցավ շաբաթ և կիրակի օրերին, մինչև այդ գործադուլների առթիվ բաց թողածը վերականգնելու հաստատակամությամբ:

Սակայն հետագա 7—8 ամիսների ընթացքում հայ ժողովուրդը բազմիցս նորից հավաքվեց Երևանի թատերական հրապարակում, Մատենադարանի առջև, Երևան քաղաքի գրլիտավոր պողոտայում: Ութի ելավ Մտեփանակերտի աշխատավորությունը: Քանի՛-քանի՛ գիշերներ լուսացրին հացազուլավորները: Եղան տևական միտինգներ, գործադուլներ, նստացույցեր...

Այս դասը վերաբերում է դեպի հայրենիքը հայ դուստրերի ու կանանց ունեցած անձնուրաց ու նուրբ սիրո նկատմամբ մեր համոզմունքների վերահաստատմանը: Նորից հայ կինը հանդես եկավ ոչ միայն որպես արդարության վերահաստատման համար մղվող պայքարի ողնշնչման աղբյուր, այլև նրա ակտիվ մասնակից: Ի դեմս միտինգների մասնակցող հայ կնոջ հպարտ, անձնուրաց, շեշտադրված կեցվածքի ու պահելակերպի, մենք նորից հանդիպեցինք Մամիկոններից Մեծ տիկնոջ Ֆենոմենը մարմնավորող խորխոս ու հողեղեն կերպարին:

Ղարաբաղյան խնդիրը արդարացի լուծելու, հայրենիքի ցավերով տոգորված նրա «ցավը տանելու» խիստ արտահայտված պատրաստակամությամբ և միտինգներում հարյուր-հազարավոր մարդկանց հուզումների ու ալեկոծումների պահերին իրենց զսպվածությամբ կանայք, երիտասարդությանը ոգևորելով հանգերծ, հատուկ լիցք են հաղորդում նրան՝ կարգ ու կանոն, սթափ ու խոհուն վարվելակերպ դրսևորելու, ցանկացած որևէ ժողովրդի արժանապատվությանը մաղաչափ անդամ չկալելու, համակեցության ընդհանուր նորմերից շեղվող ավելորդություններ թույլ չտալու համար:

Մենք՝ այրերս ու տղաները միտինգներում վերստին ճաշակեցինք մայրության, բույրության ու կանացիության կշռադատված ու խոհեմ վարվեցողության պտուղները: Նորից ու նորից համոզվեցինք, որ հանապազօրյա տնային հոգնատանջ աշխատանքը, երեխաների խնամքի ու դաստիարակության, սերունդներին անխոռով մեծացնելու համար մայրերի լուսացրած անջուն գիշերներն ու զրկանքները, մայրական այս ծանր ու հոգնատանջ պարտականությունների հետ տղամարդկանց համահավասար, իսկ հաճախ առավել շատ աշխատանքային մասնակցությունը հանրային տնտեսությունում նրանց մեջ չեն խամրել՝ դրսևորելու սերը դեպի հայրենիքը, անձնուրացությունը՝ հանուն արդարության հաղթանակի:

Այս դասը մենք քաղեցինք 1988 թ. փետրվար-մարտյան օրերին: Այն վերաբերում է ժողովրդական զանգվածներից Հայաստանի կուսակցական կազմակերպության ղեկավարության կտրվածությունը: Նրա դիրքի անորոշությունը, մտավորականությանը համաժողովրդական շարժումից հեռու պահելու ձգտումը, դարաբաղյան հարցը ժամանակին գիտականորեն ըմշակելու, սեփական պլատֆորմի բացակայությունը, ժայրահեղ երկչուությունը, օբյեկտիվ ինֆորմացիա հաղորդելու ձևեր ու մեթոդներ մշակելու ու կիրառելու անկարողությունը և, ընդհանրապես, ժողովրդի ձայնի նկատմամբ ցուցաբերած անտարբերությունը հանդեպին կուսակցական մարմինների ինքնամեկուսացման: Հայաստանի ղեկավարությունը վերից վար ոչ մի կերպ չկարողացավ ներազդել իրադարձությունների ընթացքի վրա: Կուսակցական ղեկավարությունն այդ ուղղությունը նույնիսկ ոչ մի փորձ չարեց: Ինքնամեկուսացումն արտահայտվեց ոչ միայն նրանում, որ ՀԿԿ Կենտկոմի բյուրոս չկարողացավ պլանավորել մասսաների շարժումը, այլև հանրապետությունում բախտի քմահաճույթին թողնվեցին մամուլը, ինֆորմացիայի մյուս օրգանները: Ավելին, ՀԿԿ Կենտկոմի հատուկ հսկողությամբ մամուլը երկար ժամանակ լուռ ու մունչ դիրք էր բռնել քաղաքական կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների հանդեպ:

Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության շարժումը չսկսվեց հանկարծակի՝ մեկ օրում, մեկ շաբաթում, մեկ ամսում: Այն հաստունանում էր տասնամյակներով: Հետևաբար, խաղաղ միտինգներում առաջադրված խնդիրները բնավ էլ նոր չէին: ՀԿԿ Կենտկոմին լավ հայտնի էր, որ տակավին 1987 թ. Լեոնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ մարզի տասնչակ հազարավոր աշխատավորներ (80 հազար լավահաս բնակչություն) գիմուններ էին հղել ԽՄԿԿ Կենտկոմ: Այդ մասին դեռևս տարիներ առաջ և հենց նույն 1987 թ. մի շարք գիտական կազմակերպություններ իրենց ժողովներում և, առաջին հերթին, ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կուսակցական կազմակերպության ղոնրաց ժողովում, որոշումներ էին ընդունել: Մի՞թե այս ամենը ՀԿԿ Կենտկոմի ղեկավարներին չէր հուշում՝ մտահոգ-

վելու զանգվածների կողմից ներքևից բարձրացվող հարցերով, ունենդիր լինելու նրա ձայնին և նախապես կազմելու մի հեղինակավոր հանձնաժողով՝ խնդրի պատմական, գիտական հանգամանքները օբյեկտիվ հիմունքներով պարզելու և դրա հիման վրա ՀԿԿ Կենտկոմի ճիշտ դիրքորոշումը մշակելու համար: Բուն հարցի նկատմամբ 1988 թ. ՀԿԿ Կենտկոմի ղեկավարության անտարբերությունը, ժողովրդական զանգվածներին զլխավորելու, նրանց պայքարի ընթացքը ճիշտ հունով տանելու փոխարեն ծայրահեղ գզուշավորությունը թելադրվում էր ինչ գնով էլ լինի իրենց խարխլվող պաշտոնական դիրքը պահելու միտումով:

Ի դեպ, գտնվեցին շատ ու շատ գիտական և ստեղծագործական կոլեկտիվներ, բաղմաթիվ անհատներ, որոնց թվում նաև տողերիս գրողը, որոնք ՀԿԿ Կենտկոմին և նրա բյուրոյին անաշտ քննադատության էին ենթարկում՝ մեղադրելով քաղաքական իրադրության մեջ չկողմնորոշվելու, շարժումից հեռու մնալու և, առհասարակ, անպատասխանատու և անհոգի վերաբերմունքի համար:

Հաճախ կենտրոնական մամուլը Լեոնային Ղարաբաղի անշուրջամբ հանրապետությունում ծնունդ առած շարժումը կապում էր հին ղեկավարության, նրա օրոք հանրապետությունում կուտակված բացասական երևույթների, սովետային էկոնոմիկայի, մաֆիայի հետ՝, որ իբր թե այդ շարժմամբ ղեկավարությունը ուղում էր մարդկանց ուշադրությունը շեղել սոցիալ-տնտեսական բնագավառում եղած անհաջողություններից, կոծկել կոռուպցիայի, կաշառակերության ու հովանավորչական իր քաղաքականությունը: Դա բնավ էլ այդպես չէ: Նման մեկնաբանությունը ժողովրդական շարժման վրա սովեր պցելու, այն արատավորելու միտումնավոր փորձ է: Նրանց բնավ էլ արտակարգ իրավիճակ պետք չէր: Հենց ինքը՝ հին ղեկավարությունը այնքան էր սարսափած ազգային դարթոնք ապրող շարժումից, որ ամեն գնով այն խեղդելու փորձ էր անում:

Հանրապետության իրար փոխարինող կուսակցական ղեկավարությունը ինչ-որ ջանքեր էր գործադրում՝ որոնել ու

՝ Գիտլոգ ամսագիր, 1990, № 5, էջ 61-66:

զտնել մեթոդներ ու միջոցներ ժողովրդական շարժումը գլխավորելու և այն իր համար ցանկալի հունով տանելու համար: Բայց ապարդյուն: Մի կողմից ինքրեցիան, ղեկավարման լճացման ժամանակաշրջաններից եկող հին ստերեոտիպ եղանակներից ձեռքազատվելու դժվարությունները, ինչպես նաև վերահաս աղետը հանրապետությունում ստեղծեցին չափազանց բարդ ու անասելի իրավիճակ: Հենց այս բարդ իրավիճակում դրսևորվեց կենտրոնի ոչնչով շարդարացված վերաբերմունքը սահմանադրական հիմունքներով Լեոնային Ղարաբաղի հարցի լուծման նկատմամբ: Գեմոկրատիայի ծավալման ու ժողովրդական շարժումը գլխավորելու ձևեր և մեթոդներ մշակելու օպտին չէր խոսում նաև մինչև երկրաշարժը հանրապետությունում ոչնչով չպատճառարանված պարետային ժամ մտցնելը: Այս ծայրահեղ իրավիճակում և հետագայում թույլ արվեցին բազմաթիվ սխալներ, որոնք բախտորոշ դարձան Լեոնային Ղարաբաղի համար:

Ղարաբաղյան հարցի հետ միասին միտինգներում ջրի երես էին ելնում և բացահայտվում հանրապետության տնտեսական կյանքում տեղ գտած բազմաթիվ թերություններ և պրոբլեմներ, որոնց նկատմամբ երկար ժամանակ հանրապետության կառավարման վերին օղակներում լուրջ ըմբռնում չէր գրսեվորվում: Թերությունները բացահայտելիս ժողովուրդը գնում էր առջևից, իսկ ղեկավարությունը՝ հետևից:

Անպայման երկրաշարժ էր պետք, որ ատոմային էլեկտրակայանը փակելու համար ժողովրդի և մամուլում՝ գիտության կողմից առաջ քաշված հարցերն ուշադրության արժանանային: Անավամ մի արասցե, իսկ եթե այդ երկրաշարժը ցնցե՞ր ատոմակայանը:

Մի՞թե պետք էր, որ թունավորման բազմաթիվ դեպքեր տեղի ունենային և ծայր առնեին ժողովրդական հուզումներ, որ նոր միայն որոշում ընդունվեք «Նախրիտի» թունավոր արտադրամասերը, Կիրովականի, Ալավերդու և այլ քիմիական վտանգավոր արտադրությունները փակելու համար: Բայց չէ՞ որ հանրապետության կառավարման վերին օղակներում նրատած պաշտոնատար անձինք բուն իրավիճակի մասին նախապես քաջատեղյակ էին: Արդյոք նրանց ոչինչ չէի՞ն հուշում այդ ձեռնարկությունների շրջակայքում օգային ավազանի

աղտոտվածության հետևանքով շարորակ նորագոյացություններից առաջացած մահացություններից ղեկավարը, մեռած ու թերհաս ծնված երեխաների թվի ավելացումը, կանանց շրերություն և տղաների անսեռունակության, մանկական մահացության բարձր տոկոսը և այլն:

Կասկած չի հարուցում, որ երկրաշարժն իր ավերիչ ուժը չէր գործադրի այս մասշտաբով, եթե լճացման տարիներին տիրող իրավիճակում անտարբեր չլինեին ժողովրդի և գիտության ձայնի նկատմամբ: Անտարբերությունն ու անհոգությունը հանրապետության լճացման շրջանի ամենամեծ ողբերգություններից մեկն է եղել:

Ընդհանուր առմամբ անտարբերությունն իր հետ բերեց նաև ահավոր ծայրահեղ վերաբերմունք «Նախրիտ» (և ոչ միայն «Նախրիտի») գիտաարտադրական միավորման ճակատագրի նկատմամբ: Միավորման միայն թունավոր և խիստ վտանգավոր արտադրությունները փակելու և մյուս արտադրությունները նորագույն տեխնիկայով վերազինելու կոնկրետ վճիռներ կայացնելու փոխարեն, հարցի բուն էությունը ոչ լավատեղյակ, բայց արդեն թյուր ինֆորմացիայի աղբեղության տակ ոտքի ելած ժողովրդական զանգվածների ճնշման ներքո, ՀևՄՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը գիմեց ողջ միավորումը և մյուս ձեռնարկությունները փակելու տնտեսապես իրեն շարդարացնող սխալ քայլին: Մինչդեռ պետք է տիրապետել ժողովրդական զանգվածների բորբոքված զգացմունքները զսպելու, ճշմարտության մեջ նրանց համոզելու և երկվայթներն իրենց բնականոն ընթացքով առաջնորդելու վսեմ արվեստին:

Պես հիմնգրող

Սա վերաբերում է Անդրկովկասի ժողովուրդների իրական պատմությունը ստեղծելուն:

Ինչպես անհատի պաշտամունքի, այնպես էլ լճացման տարիներին ամեն կերպ արդելվում էին հայ պատմարանների ու տնտեսագետների փորձերը՝ դրադվելու խորհրդային Հայաստանի տարածքից դուրս գտնվող պատմական Հայաստանի անցյալի, նրա ներկա իրավիճակի սոցիալ-տնտեսական, ժո-

դովորագրական, մշակութային ժառանգութեան, այնտեղ բընակվող հայ ժողովրդի համար կենսական անհրաժեշտութիւնն ներկայացնող բաղում այլ հարցերի լուսաբանմամբ:

Աւագարեզը մնացել էր աղբբեջանցի գիտնականներին, որոնց կլակետային սկզբունքը հաճախ ո՛չ թէ գիտական պատմութեան ստեղծումն է, այլ «պատմաշինարարութեամբ» զբաղվելը, ամեն ինչ իրենց ցանկութեանը հարմարեցնելը: Աղբբեջանում այդ վայ պատմաբանների համար ստեղծվել է շահագանց արտոնյալ իրավիճակ: Թգտվելով հանրապետութեան կուսակցական ղեկավարների հովանավորութիւնից (ալիևներ, բաղիրովների, վեգիրովների, մութալիբովների), իրական պատմութեանը կեղծելու, խեղաթուրելու և իրենց ցանկութեաններին համապատասխանեցնելու ճանապարհով հորինվեց մի մտացածին վարկած, ըստ որի պատմական Հայաստանի մասը կաղմող Գարգմանաց աշխարհը, Արցախը, Նախիջևանը և Խորհրդային Հայաստանի ներկայիս տարածքի զգալի մասը պատմականորեն Աղբբեջանի բաղկացուցիչ մասն են: Առանց աղբբեջանները հիշատակելու, իսկ եղածներն էլ կեղծելու միջոցով Կովկասյան Աղվանքի, ինչպես նաև Հայկական Աղվանքի բնակիչները ներկայացվեցին որպես աղբբեջանցիների նախնիներ: Աղվանից աշխարհի (բուն Աղվանքի) տարածքի մեջ մտցրին ոչ միայն ներկայիս Աղբբեջանը, այլև Խորհրդային Հայաստանի մի մասը, Արցախն ու Ուտիքը:

Մինչդեռ հույն-հոմեական և հայկական աղբբեջանները պարզելիպարզ մատնանշում են, որ Կուր գետի աջափնյա տարածքը՝ Արցախն ու Ուտիքը ի սկզբանե անդի, մինչև դրանց միացումը Ռուսաստանին (1813 թ.) իրենց հայ բնակչութեամբ հանդիսացել են Մեծ Հայքի անքակտելի մասը:

Պատմական այս անհերքելի իրողութիւնները ոչ մի արժեք չունեն Զ. Բունիաթովի և խմբակցութեան պատմաբանների համար, որոնք թե՛ բուն Աղվանքի (Կովկասյան) բնակիչներին և թե՛ Արցախի հայերին և նրանց մշակութային ժառանգութիւնը հոշակում են աղվանա-աղբբեջանական:

Աղբբեջանում ինֆորմացիայի բանավոր և գրավոր միջոցները նման մտայնութիւնը դարձրին համազգային: Դրանում մեծ էր իսլամի և նրա սպասավորների դերը: Ի՞նչ անի պատմութիւնից անտեղյակ հասարակ աղբբեջանցին: Նրան սո-

վորեցրել են, որ զարաբաղցի հայը ուղում է խել իր պապենական հողերը: Եվ նա դինվորագրվում է հայերի «տանձգութիւններին» դեմ մղվող թուրքական արշավանքին: Եվ այդ մոլեռանդութիւնն էր, որ ծնեց սումգալիթը, Բաքվի և Կիրովաբադի հայասպանութիւնը:

Կեղծիքին դինվորագրված «գիտնականները» տասնամյակների ընթացքում մոլորութեան մեջ գցեցին ոչ միայն սեփական ժողովրդին: Նրանք աշխարհը ողողեցին իրենց հակադիտական տեսակետներին հարմարեցված կեղծ փաստաթղթերով, գրքույկներով և հանիրավի հոդվածներով: Արտասահմանյան շատ երկրներ առաջվող օտար լեզուներով հրատարակված այդ գրքույկներում և հոդվածներում, արտասահմանյան մամուլում ղեկողված հարցալրույցներում ամեն կերպ փորձում էին սուվեր գցել զարաբաղյան պրոբլեմի վրա: Մեծ փութաբանութեամբ ճգնում են ապացուցել զարաբաղում հայ բնակիչի եկվոր լինելու մասին զառանցանքները, ջանում են աշխարհին ներկայացնել իրենց «մեծահոգութեան» մասին՝ հայերին այդպիսի մարդ «նվիրաբերելու» առասպելը: Առիթը բաց չեն թողնում հոխորտալու, որ հայերը «երախտագիտութեան» փոխարեն սուր են ճոճում աղբբեջանցիների դեմ, որ «անզուպ» պալքարի են էլել աղբբեջանի «պապենական» հողերը նրա իսկական տիրոջից խելու և Հայաստանին «բռնակցելու» համար:

Սկզբում աղբբեջանցի «պատմաբանները» գնալով թուրք կեղծարարների հետքերով՝ փորձեցին իրենց պապենականը համարել և սեփականացնել Հայաստանի մի մասը, սպա չուրացնել պատմական արժեքները և մշակութային կոթողները, խաշբարերն ու հուշարձանները: Օրը ցերեկով միջնադարյան հայ պատմիչները հոշակվում էին աղբբեջանցիներ: Հենց այսօր էլ Աղբբեջանում շարունակում են կեղծել պատմութիւնը: Այսբանից հետո էլ բնավ չի խանգարում, և դրանում զարմանալու բան չկա, որ շարքային աղբբեջանցին իր կրոնական և մտավոր առաջնորդի զրգմամբ միաժամանակ «սրբազան պատերազմ» հայտարարի հայ ժողովրդի, նրա մշակութային ու ճարտարապետական անգնահատելի արժեք ներկայացնող համաշխարհային անկրկնելի կոթողների դեմ:

Հարց է ծագում. եթե դրանք աղբբեջանական ծագում

ունեն, ապա ինչո՞ւ են բարբարոսաբար ավերում, պայթեցնում, քարուքանդ, ջարդուփշուր անում:

2. Թունիաթույլի և հայ ժողովրդի պատմությունը նենգափոխող նրա կուսակից-հեղինակների դեմ հայ և ռուս գիտնականները գրեցին բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ, որոնցում փաստական հարուստ հիմքի վրա մերկացվում էին այդ վայ պատմաբանների հակագիտական մարզանքները: Սակայն կեղծարարը հենց նրա համար է կեղծարար, որ կեղծելով ու եղծելով պատմությունը՝ հաշվի չի նստում պատմական փաստերի ու իրողությունների հետ: Առ այսօր հենց այդպիսի էլ գործում է բունիաթույլան խմբակցությունը, գործում է այդպես, որովհետև շարունակ օգտվում է կենտրոնական իշխանությունների, աղբբեջանական կոմկուսի և գիտությունների ակադեմիայի ղեկավարության օգնությունից և աշակցությունից՝ այն էլ անսահման շափերով:

Դաս վեցերորդ

Հարկ չկա մեկ առ մեկ թվարկելու բոլոր այն դրդապատճառները, որոնք թե՛ Հայաստանում, թե՛ Լեռնային Ղարաբաղում հանգարտված ու արգեն գործի անցած ժողովրդին 1988թ. կեսերին բորբոքում ու զրգում էին նոր միտինգների, նոր գործադուլների: Այդ դրդապատճառները բաժանվում են երկու կարգի.

Որպես շարժառիթ առաջին պլան են մղվում հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանում տարվող խտրականության, ազգային արժանապատվության ոտնահարման, վանդալիզմի ու ցեղասպանության քաղաքականությունը: Գրա «պսակը» դարձավ Սոււմգայիթը: Ադրբեջանի ու Հայաստանի աշխատավորությանը Ա. Ս. Գորբաչովի հղած դիմումից չէր անցել մի քանի օր, երբ կազմակերպվում է սոււմգայիթյան եղեւնը:

Եվ այսպես, 1988 թ. ընթացքում Երևանի թատերական, Ստեփանակերտի Լենինի հրապարակները լեփ-լեցուն էին (և այն էլ որերորդ անգամ) հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանում կազմակերպված մասսայական անկարգությունների, բանդիտիզմի միջադեպերի առիթով: Ո՞ր են տանում 1988 թ. Մասիսում, 1989 թ. «Անուշ» արտագրական միավորման ձեռ-

նարկությունում թունավորման հետքերը, երբ «մոզական գաժաղտնով» թունավորվեցին ու խեղանդամ դարձան տասնյակ հայ աշխատավորուհիներ, ովքե՞ր, ի՞նչ նպատակով, ի՞նչ մութ ուժեր գործեցին «Զվարթնոց» օդանավակայանում:

Չմտանանք, որ հայ ժողովրդին 1988 թ. «էքստրեմիզմի» և շովինիզմի մեջ մեղադրելու համար Ադրբեջանում ծավալվող մարաթոնին միացան կենտրոնական մամուլի գրեթե բոլոր սրկանները, կենտրոնական հեռուստատեսությունն ու ռադիոն, գրավոր ու բանավոր պրոպագանդայի բոլոր միջոցները: Միայն կողմնորոշման հետևանքով անպակաս էին հայ ժողովրդին «էքստրեմիզմի», ուրիշ հողերը զավթելու համար կատարվող «տոնձգությունների» համար բարձր ոլորտներում խտրական բնույթ կրող և նախնական սխեմաներով հրավիրված նիստերը, Ադրբեջանում աշխատավորական միտինգները: Բայց դա դեռ բոլորը չէ: Ուստի 1988 և 1989 թթ. երևանում և Ստեփանակերտում ամեն անգամ գործադուլները վերսկսելու գործում պակաս գեր շխաղաց մամուլը՝ իրականությունը խեղաթյուրող իր հողվածներով, ռադիոն և հեռուստատեսությունը՝ իրենց հաղորդումներով:

Հայ ժողովրդին վերստին բորբոքելու առումով վճռական դեր խաղաց 1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի վարվելակերպը և գիրքորոշումը: Շրջանցելով իր իսկ հռչակած դեմոկրատիայի տարրական նորմերը, փաստորեն թույլ շտփեց, որ նիստը ղեկավարի նախագահության նախագահ Ա. Ա. Գրոմիկոն, թեև ձևականորեն նիստը նա էր վարում: Նախագահության նիստում հայ հոեւորների ելույթների ընթացքում նրա անհարկի միջամտություններն ու ավելորդ ընդհատումները ակնհայտորեն ցույց օվեցին, որ շրջանցվում է սոււմգայիթյան եղեւնագործությունը, կազմակերպիչները երբեք հրապարակ չեն գալու: Հենց այդ նիստում արգեն պարզ դարձավ, թե ինչո՞ւ կենտրոնը սոււմգայիթյան զոհերի համար երբևիցե ցավակցություն հայտնելու փորձ անգամ չարեց:

Սկզբում, երևույթն իր ամբողջ էությունը ծավալվելու պահին, առանց պատճառների մեջ խորամուխ լինելու և իրականությունը պարզելու, կենտրոնը, լրատվական բոլոր միջոցները

և մասսայական ինֆորմացիայի մյուս օղակները անտարբեր գիտորդի դիրք էին բռնել Լեոնային Ղարաբաղում և նրա շուրջը ճազավաճիկ իրազարժությունների նկատմամբ: Գործելով նախկին ստեբենոսիպով, երևույթները գնահատում էին հին շափանիշներով, հայ ժողովրդի կողմից բարձրացված հարցերը «բուժվում» էին նախապես կազմված ղեկատուներով՝ առանց բուն ցավը և նրա պատճառը որոշելու: Որոշ ժամանակ անց մամուլի «լուսթյան զավագրությունը» տեղի տվեց կենտրոնի կողմից հրահանգվող միակողմանի և շինծու մեկնարանությունների, որոնց նպատակը իրականություն քողարկումն էր: Ավելին, սումգայիթյան վանդալիզմին քաղաքական գնահատական տալու փոխարեն Ստեփանակերտում և Հայաստանում քարձրացված հարցերը վերագրելով մի խումբ «էքստրեմիստներին» գտնում էին, որ իբր թե վերջիններս գործում են արտասահմանի թելադրանքով: Իսկ երբ ասվում էր ճշմարիտ որևէ խոսք կամ ձեռնարկվում ինչ-որ ձևով արդարությունը պաշտպանելու որևէ փորձ, կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը դրանց պատասխանելու փոխարեն հրապարակ էին հանում զարբառչան շարժումը քաղաքականապես պիտակավորելու, իրականության հետ անշուշտ շունչող հոգված, հարցազրույց կամ հաղորդում՝ նոր հուզումների ու գործազույնների առիթ տալու բացահայտ միտումով:

Անշուշտ, զարբառչան շարժման ընթացքը խտտորելու, հարցը վերջնականապես թաղելու գործում օղուտ շտվեցին քաղաքական պիտակներն ու անհարկի ահաբեկումները:

Պաշտոնատար մի ընկերոջ հետ հարցազրույցը* «հավատում» էր, որ սումգայիթյան սպանող պայմանավորված է զարբառչահայերի՝ իրենց մայր հայրենիքի հետ վերամիավորվելու պահանջով և Սումգայիթում տարիների ընթացքում կուտակված սոցիալ-տնտեսական իրավիճակով: Ստացվում է, որ Ղարաբաղի հայ բնակչությունը ինքնորոշման հարցը բարձրացնելու իրավունք չունի, քանի որ սպանող կկազմակերպվի, Եվ այդպես, եթե որևէ քաղաքում առկա են սոցիալ-տնտեսական չլուծված պրոբլեմներ, մեղավորը հայերն են:

* Խոսքը ԽՍՀՄ դատախազի նախկին տեղակալ Կատուսի մասին է:

Բայց եթե, իբրք, «սումգայիթը» բողոք էր սոցիալական անարդարությունների դեմ, ապա ինչու այն պետք է ուղղվեր հայերի և ոչ թե քաղաքի և հանրապետության ղեկավար մարմինների գործունեության դեմ:

Կամ՝ շատ հաճախ կենտրոնական մամուլի էջերում և հեռուստատեսությամբ զարբառչան պրոբլեմի առնչությամբ որևէ լուր է հաղորդվում, ապա այն ներկայացվում է շատ մթազնամ ձևով: Ի վերջո պարզ չի դառնում՝ ովքեր են այդ շարիք գործողները, հայե՞րք, թե՛ ազրբեջանցիները: Սրինակ՝ հաղորդելով Լեոնային Ղարաբաղ մեկնող բեռնատար ավտոմեքենաների, Բաբու, Մեղրի, Ղափան մեկնող ուղեգնացքների վրա կատարվող հարձակումների, երկաթգծերը քանդող և ուղեբեռները թալանող մարդկանց և այդ կարգի այլ ավազակաբարո իրական զեպքերի մասին, շրջանցվում է հեղինակների ազգային պատկանելիությունը, էլ չենք ասում երևույթը ոչ ամբողջությամբ և շատ հաճախ խեղաթյուրված ներկայացնելու մասին: Մնում է, որ ընթերցողը կամ դիտողը ինքը արամաբանորեն եզրակացնի, որ աղետի գոտու ուղեբեռներ տեղափոխող զնացքի վրա հայը հարձակվել և ընթացքը խաթարել չէր կարող: Բայց ընթերցողը որքան էլ օժտված լինի գերտրամաբանությամբ, չի կարող գլուխ հանել մի այնպիսի հաղորդումից, ուր մեղադրվում են անորոշ մարդիկ՝ զինվորների վրա զենք բարձրացնելու և զինվորներ սպանելու մեջ: Ավելորդ չէր լինի հիշատակել, որ դրեթե համանման դիրքորոշում են արտահայտում նաև Լեոնային Ղարաբաղում հատուկ կառավարման կոմիտեի որոշ անդամներ: Այսպես ինչով բացատրել, որ ԼՂԻՄ-ի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում հատուկ կառավարման կոմիտեի ներկայացուցիչը խուսափելով կոնկրետ պատասխանից, բացատրում է, թե Լ՝ հայկական, Ե՝ ազրբեջանական մամուլն իրար արժեն, «եբրեմն նույնիսկ մտածում ես, թե նրանք միմյանց չեն արտագրում»: Մնում է զարմանալ: Այդ մարդիկ ո՞չ հայկական մամուլն են ընթերցում, ո՞չ էլ ազրբեջանական և, ինչպես մնացած բոլոր հարցերում, երևույթները «հավասարակշռելու» գիժ են վարում: Նրանք բնավ էլ չեն ուղում նկատել, որ հայկական մամուլը լարվածությունը թուլացնելու, ազրբեջանականը՝ ղենքի գիմելու կոչ են անում:

Այդպես էլ երկար ժամանակ մեր երկրի ժողովուրդների համար պարզ չդարձավ, թե ինչ է կատարվում Հայաստանում և Ադրբեյջանում, թեև բավական ժամանակ անց զրոջ Բորոժի-կի «Գիրքորոշում» հեռուստատեսային հաղորդումը այդ մասին կողմորոշում տվեց: Հարցի էությունը ներկայացնելու տեսակետից որոշ դեր խաղաց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանը, 1990 թ. փետրվարի 19-ին կալացած երկու պալատների համատեղ նիստը: Առաջին անգամ երկրով մեկ, թեև ոչ լրիվ ու պարզ, բայց ինչ-որ շահով հայտնի դարձավ, որ Պարբաղյան պրոբլեմը լուրջ խոշընդոտներ ունեցող խնդիր է, որ այն չի ծագել հենց այնպես, այլ Ադրբեյջանի ղեկավարության կողմից Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ տասնամյակներ շարունակ տարվող խտրականության, նրա արժանապատվությունը ոտնահարող քաղաքականության և անմարդկային վերաբերմունքի արտահայտություն է: Թեև, պետք է ասել, որ դեռևս ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Հայաստանից և ԼՂԻՄ-ից ընտրված մի խումբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ իրենց ելույթներում շոշափել էին պրոբլեմի տարբեր կողմերը և, փոխկապակցված ձևով լրացնելով մեկը մյուսին, նոր լույս են սփռել Պարբաղյան շարժումը բնութագրելու և փակուղուց դուրս բերելու հարցի վրա: Նրանք իրենց ելույթներում բացահայտել էին Արցախի իրական պատմությունը՝ տասնամյակներ շարունակ խեղաթյուրող սուբյեկտիվ դրսևորումների հետևանքով ստեղծված դրամատիկ մի ողջ հետևանքներով: Իրավացիորեն շեշտադրվեց, որ մինչև այսօր միտումնավոր կերպով շուտ են տվել պատմության և ներկայումս դրսևորվող երևույթների պատճառահետևանքային կապակցությունները, առանց բուն երևույթի պատճառների մեջ խորանալու հանիրավի և հախուռն գատապարտվել են հետևանքները և դրանց հիման վրա հանգել միտումնավոր, մտացածին եզրակացությունների և դրանց համապատասխան առաջադրվել են իրականությունից կտրված, ճշմարտությանը հակասող սխալ լուծումներ: Բայց ի՞նչ օգուտ:

Ղարաբաղյան պրոբլեմը նոր չէ: Այդ շարժումը հաճախ է ծավալվել, բայց անհատի պաշտամունքի և լճացման տարիներին այն խեղդվել է խանձարուրի մեջ: Երկրում հռչակվող

ղեմակրատիայի և հրապարակայնության պայմաններում այդ շարժումը կարողացավ համազգային բնույթ ընդունել և, դրանով իսկ, նպաստել ազգային հարաբերությունների վերակառուցման հարցադրումներին: Ավելի ու ավելի պարզ է դառնում ճշմարտությունը, որ խրատական ու շինծու սխեմաները այլևս դործել չեն կարող, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը կարոտ է լուծման:

Ղարաբաղյան պրոբլեմն ավելի պարզորոշ կերպարանք ստացավ մանավանդ այն բանից հետո, երբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի կողմից կազմակերպված պատգամավորական հանձնաժողովը իրադրությունը ծանոթանալու հատուկ առաքելությամբ այցելեց Լեռնային Ղարաբաղ:

Հանձնաժողովը հաստատապես համոզվեց, որ մարզի հայ բնակչությունը տասնամյակներ շարունակ կրել է ազգային ճնշման լուծը, և Պարբաղյան շարժումը, որպես հակառակացիա, առաջին հերթին ազգային հալածանքի և ապա տնտեսական ու սոցիալական զարգացման ասպարեզում կիրառվող խտրական քաղաքականության արտահայտություն է:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամ Ա. Եմելյանովը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի կողմից առանձնացված հանձնախմբի կազմում ԼՂԻՄ այցելուց հետո «Արգումենտի Ի Ֆակտի» շաբաթաթերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում ասաց, որ մարզում պրոբլեմի սուր բնույթը բացատրվում է ոչ միայն հանրապետությունների, այլև կենտրոնական մարմինների վերաբերմունքով: Նա գտնում է, որ կենտրոնական մարմինների դանդաղաշարժություն և քարացած վերաբերմունքի հետևանքով հարցի լուծումը բաց է թողնվել առնվազն մեկ տարով:

Մինչդեռ պրոբլեմը ժամանակին դրական ընթացք չստանալու հետևանքով այն դուրս եկավ վերահսկողությունից: Այլապես չէին ծնվի սումգայիթյան ողբերգությունը, Տերզանայի, Նովի Ուզենի, Աբխազիայի, Գանձակի ու Բաքվի, Ոչի դեպքերը:

Ղարաբաղյան խնդրի լուծման ճանապարհին ընդունված կիսատ-պոստ որոշումները պայմանավորեցին նաև Ադրբե-

ջանում մինչև օրս շարունակվող ավազակարարո վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:

Կենսա թիչ շեն այն մարդիկ, որոնք խրատական տոնով կոչ են անում մոռանալ «փոխադարձ» վիրավորանքները, միմյանց հաշտության ձեռք մեկնել, բարեկամություն վերահաստատել: Այդ ի՞նչ փոխադարձ վիրավորանքների մասին է խոսքը: Որքան հայտնի է, միշտ էլ, տասնամյակներ շարունակ ամեն կարգի վիրավորանք միակողմանիորեն սանձազերծվել է հարևան հանրապետության կողմից, որը համբերատար տարել է հայ ժողովուրդը: Բայց, բոլոր դեպքերում, հիշաշար շինելու մասին խորհուրդը զովելի ու ուշադրության արժանի քայլ է: Իհարկե, պետք է մոռանալ վիրավորանքները, մանավանդ մեր երկու ժողովուրդները իրար հետ կողք կողքի ապրել են և դեռ պիտի ապրեն զարբերով: Դրա հետ մեկտեղ, պատմությունից է հայտնի, որ մենք հիշաշար ժողովուրդ շենք և, բնդհանուր առմամբ, դատապարտում ենք հիշաշարությունը մարդկային բոլոր հարաբերություններում: Մակայն մեր այս կարգի «խորհրդատուներին» կցանկանայինք հիշեցնել, որ նախ՝ ինչպես ժողովուրդների, այնպես էլ մարդկանց միջև չի կարող լինել անկեղծ մտերմություն, երբ նրանցից մեկը ձրգտում է իշխել մյուսին, ամեն քայլափոխին դիմացիներն սպանելու, ծաղրածանակի ենթարկելու, իր բնօրրանից քշելու բիրտ մեթոդներ գործադրելով: Ինչի նման կլինեն մտերմությունը զարբարողի հայի և աղբբեջանցու միջև, երբ վերջինս ցանկանում է պահպանել նախկին «տերն ու ծառայի» հարաբերությունները: Հիշաշարությունը վերացնելու համար պետք է կտրել այն ծնող արմատը:

Մերկորդ, ժամանակը չէ՞ արդյոք, որ մեր բարի «խորհրդատուները» խորհուրդ տան նաև մեր հարևաններին, մի այնպիսի խորհուրդ, որ նրանք ուժ գտնեն իրենց մեջ՝ դատապարտելու հայ ժողովրդի նկատմամբ դրսևորած սեփական վարքագիծը: Զէ՛ որ դա էլ քաղաքակրթության տարրական նորմերից է:

Ցավոք, այս բոլորի փոխարեն Աղբբեջանում, ինչպես նաև «խորհրդատուներին» շրջանում գտնվում են մարդիկ, որ 1915թ. և սումգայիթյան ցեղասպանության միջև մի այնպիսի կապ են որոնում, որով մեզքք բարդեն հայերի վրա: Հիշենք Անարիեն,

Ձիա Բունիաթովին, զնդապես Պ. Ստուգենկերին, Ա. Մոթալիբովին, Գ. Գլուշովին և ուրիշներին: Օրինակ, ինչպե՞ս գնահատել Աղբբեջանի գրողների միության նախագահ Անարի ճիզվիտական զրպարտությունը ֆրանսիական «Ֆիգարո» թերթի էջերում: Զափը կորցրած «գրողը» անամոթաբար հայտարարում է, թե սումգայիթ չի եղել, եղել է միայն հայ ժողովրդի մազոխիզմ, ժողովուրդ, որ պատրաստ է սումգայիթ հնարելու: Այդ նույն մտայնությամբ է տառապում կեղծարար Զ. Բունիաթովը: Նա «ԷՄ» շարաթաթերթի 1989թ. մայիսի 16-ից 20-ի համարներում գետեղած «Ինչու՞ սումգայիթը» տիրահույակ հոգվածում ոչ միայն սումգայիթը դաշնակների վրա բարդելու ցինիկ փորձ է կատարում, այլև սպառնում է նոր սումգայիթներով:

Զէ՛ որ այդ նույնն են բարբաշում նաև թուրք ցեղասպաններ՝ 1915թ. գործադրած ոճիրը բարդելով հայերի վրա: Ո՛չ անարա-զիա-բունիաթովյան բանասրկուները և ո՛չ էլ թուրքական ցեղասպանները երբեք ստախոսության ամոթից շեն խորշում ու կարմրում: Հասարակ տրամաբանություն ունեցող ամեն մարդ կարող է հարց տալ, թե այդ ինչպե՞ս կարող էր վայրագ ուժով օժտված մի այնպիսի պետության մեջ, ինչպիսին Թուրքիան էր, նրա բնասպանության տակ ապրող փոքրաթիվ հայ ժողովուրդը (այն էլ նախապես գինաթափված և գլխատված) իրականացնել 1915թ. թուրքերի ցեղասպանությունը, կամ 1988թ. սումգայիթյան և նրա շարունակությունը կազմող և մինչև օրս հարատևող բանդիտիզմը Աղբբեջանում:

1915թ. Արևմտյան Հայաստանում և այսօր Աղբբեջանում գործադրված ցեղասպանության միջև որոշակի ուղղակի կապ գոյություն ունի: Մեկը սանձազերծել են թուրք ենիչերիները, մյուսը՝ նրանցից ոչնչով շտարբերվող աղբբեջանցի մարդասպան ու մարդակեր սաղրիշները, որոնք արբեցած են պանիսլամիզմի թույնով և գործադրում են ամեն մի ջանք ու միջոց՝ հայության ֆիզիկական բնաջնջման իրենց ցեղակիցների 1915թ. ու գործը մինչև վերջ հասցնելու համար:

Աղբբեջանում բոլոր օղակներում գեմ էին կենսային Ղարաբաղի պրոբլեմը անգամ ինչ-որ ձևով արժարծելուն, գրանելով, որ նման պրոբլեմ առհասարակ գոյություն չունի:

Դեմոկրատական հիմունքներով զարգացման ուղի բանած

իրավական պետության շրջանակներում հարցի լուծման բանալին ոչ թե տարածքային պատկանելության հարցադրումն է (թեև հանրահայտ ճշմարտություն է, որ Լեոնային Ղարաբաղը պատմականորեն նրա տարածքում ապրող բնիկ ժողովրդի՝ հայերի սեփականությունն է), այլ այդ տարածքի վրա ապրող ժողովրդի գերագույն կամքը:

Արդյո՞ք բոլոր ազրբեջանցիներն են այդպես մտածում ու գործում: Այդ հարցին կարելի է պատասխանել՝ մեջ բերելով Ստեփանակերտում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հասուկ հանձնաժողովի հանդիպման ժամանակ (1989 թ. հուլիս) Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի բրիգադավար Ա. Զաֆարովի արտահայտած հետևյալ միտքը. «Ես,— ասել է նա,— ազգությամբ ազրբեջանցի եմ... Այն երկիրը, որտեղ մենք ապրում ենք, հայկական է... Այստեղ տարածքային հարց չկա: Արցախի հայ բնակչությունը պարզապես ուզում է օգտվել ազգերի ինքնորոշման իրավունքից»⁵:

Ի՞նչ ասել: Կան մարդիկ, պաշտոնատար անձինք, որոնք դանում են, որ շփտք է անդրադառնալ պատմության հին ու նոր ակունքներին (Ե. Մ. Պրիմակով). կամ՝ ԼՂԻՄ-ը երկու հանրապետությունների միջև համեզ պատառ է կամ «ընդամենը կովախնձոր»:

Մեր խորհրդատու «բարեկամները» մեջ կան մարդիկ (Ա. Սուրսպիև, «Կոմսոմոլցկայա պրավդա»), որ սումգայիթյան երևույթները նույնացնում են Լեոնային Ղարաբաղի հայ ազգային ազատագրական պայքարի հետ: Այս հարցումը իր շար գիտավորություններում ավելի հետուն զ՛աց խորհրդային զինվորական ուսադիր կրող գնդապետ Պ. Ստուդենիկինը: Նա (հետագայում նաև ուրիշները) «Կոմսոմոլցկայա պրավդայի» էջերում զրպարտիչ հողված տպագրեց այն մասին, որ Խորհրդային Հայաստանում իբր թե սպանել են հասարակական կարգ պաշտպանող զինվորների: Այդ սուտ հողվածի համար նա մնաց անպատիժ: Եվ ահա «Սովետսկայա Ռոսիայի» էջերում նա հաջորդ «մարդասիրական» քայլն է կատարում: Նա հանդես եկավ այն «գիտական հայտնագործություններ», որ պետք է հավասարության նշան դնել մի կողմից Լեոնային Ղարա-

բաղի և թբիլիսյան դեպքերի, իսկ մյուս կողմից՝ Սումգայիթում և Ֆերդանայում տեղի ունեցած դեպքերի միջև, այսինքն՝ հավասարության նշան դնել ազգային ազատագրական բնույթ կրող խաղաղ շարժման և բանդիտիզմի ու եղեռնագործության միջև:

Ավելին, այդ բոլորի սկզբնաղբյուրը նա տեսնում է «հայ տեևորիստները» գործունեության մեջ, «տեևորիստներ», որոնք իբր թե 1976 թ. կազմակերպել են պայթեցումը մոսկովյան մետրոպոլիտենում: Այդ հարցում «նշավակելով» Ս. Զատիկյանին և նրա «տեևորիստական» խմբի անդամներին, որոնք իբր թե իրենց ստեղծած, այսպես կոչված, «Հայաստանի նոր կուսակցությամբ» (ե՞րբ, որտե՞ղ) հիմք են դրել ազգային հանրապետություններում այս օրերին սկիզբ առած շարժումներին:

Ընդամեն գնդապետը ուղղակի կապ է տեսնում այսօրվա երևույթների և իր մտացածին մի վարկածի միջև, ըստ որի «հայ հակահեղափոխական ահաբեկիչները» երևիանների դանդավածային սպանությունների նպատակով 1977 թ. պետք է ուսմբեր պայթեցնեին «Դեսակի միրի» մետրոպոլիտենի կայարանում, որը «բարեբախտաբար» կանխվեց: Տեսք թե բանը ո՛ւր է հասել: Արդյոք ի՞նչն է տեղիք ավել, որ «վայ» գնդապետի հիշաշարության թույնը, երկար տարիներ կուտակվելուց հետո, նոր է ժայթքում՝ իր լավայով սեւացնելով ոչ միայն դարաբաղյան արդարացի շարժումը, այլև քողարկելու սումգայիթի ու Ֆերգանան: «Եվ ահա,— ցինիկորեն եզրափակում է գրն՝ գապետը,— մեզ հասան մոսկովյան այն վաղեմի պայթյունների արձագանքները (խոսքը 1976 թ. մոսկովյան մետրոպոլիտենի պայթյունի մասին է— Վ. Խ.), բայց այժմ արդեն Լեոնային Ղարաբաղում, Թբիլիսիում, Ֆերդանայում»⁶:

Այդ նույն երգն է երգում նաև Գ. Գլուշկովը: Նա «Բակինսկի ուրուի» թերթի էջերում շուտ տալով տեղի ունեցող իրական երևույթները՝ «տեսական ընդհանրացումներ» կատարելու խիստ հավակնոտ տոնով ինքնապաշտպանության տակ է վերցնում Ազրբեջանում իրագործվող ցեղասպանությունն ու բանդիտիզմը, կենտրոնական մամուլին հատուկ մեղադրանք ներկայացնում ուղիղում տեղի ունեցող երևույթները ազրբե-

⁵ Արհրդային Ղարաբաղ, 1989, 25 հուլիսի:

⁶ Սովետսկայա Ռոսիա, 1989, 13 հուլիսի:

չանական սցենարով շնորհայացնելու համար: Նրան, հավանաբար, չի բավարարում և այն, որ երկար ժամանակ ոչ միայն Ադրբեյջանում և Լեռնային Ղարաբաղում, այլև հաճախ Հայաստանում տեղի ունեցող երևույթները կենտրոնական հեռուտատեսությամբ ներկայացվում էին ոչ միայն ադրբեյջանական սցենարով, այլ հազորդում էին իրենք՝ Ադրբեյջանի թղթակիցները, որ կենտրոնական հեռուտեստեսության էկրանից հայկական հանրապետությունում տեղի ունեցող երևույթների կապակցությամբ 1988 թ. բնթացքում ոչ մի հայ թղթակից եթեր դուրս գալու իրավունք չստացավ:

Թողնե՛ք այս բուլբուլ:

Մեր մեծ «տեսաբան» Գլուշկովը կատարում է այն նույն ընդհանրացումը, ինչ վերևում հիշատակվող հեղինակներն են կատարում: Նա գրում է. «Ղարաբաղյան շարժումը երկրում ազգամիջյան էքստրեմիզմի անդրպայթյունի ալիք առաջացրեց: Զէ՛ որ խոր անալիտիկ լինելու կարիք էլ չկա, քանի որ գա պարզ է կենցաղային գիտակցության մակարդակով, որպեսզի հասկանալի լինի հաջորդ իրադարձությունների (Ֆերզանա, Նովի Ուզնն, Արխազիա) կապը Ղարաբաղյան շարժման հետ»:

Անշուշտ, եթե Գ. Գլուշկովը օժտված լիներ կենցաղային գիտակցության մակարդակից վեր բարձրանալու ունակությամբ, կկարողանար հասկանալ ազգային ազատագրական շարժման ու բանգիտիզմի տարբերությունը:

Հուսանք, որ Ադրբեյջանում այդ կենցաղային գիտակցության մակարդակից վեր դանկող առողջ մտավորականությունը ինքը կդապարտի ազգամիջյան կրքեր բորբոքող նման սազրիչներին:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Ժողովրդագրական զարգացման միտումները, ամբողջությամբ վերցրած, իրենց վրա կրում են ինչպես որոշակի պայմաններում շրջանակում ազգային հարաբերությունների, այն-

5 Թահիսսի սարոյի, 1989, 9 օգոստոսի

պես էլ սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման կնիքը:

Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Ադրբեյջանական ԽՍՀ այլ հայաբնակ վայրերում կուտակված ազգային շուծված շատ պորբեմներ իրենց հերթին հակազդել են այդ շրջանների ոչ միայն ժողովրդագրական, այլև սոցիալ-տնտեսական զարգացման բնթացքի վրա: Մինչև օրս ԼՂԻՄ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հայերի ազգային շահերը ոտնահարող, հայ բնակչությանը մարզից արտաքսելու ազգային խտրականության քաղաքականության շարունակությունն է: Տասնամյակներ շարունակ երիտասարդությունը զուրկ է եղել աշխատելու և ապրուստ վաստակելու իրական հնարավորություններից: Դա առանձնապես արտահայտվել է բարձր որակավորման մասնագետ կադրերին աշխատանքով չապահովելու հարցում: Ընդհանուր առմամբ, նույնիսկ բնակչության աննշան աճի, իսկ մինչև 1988 թ. աշխատունակ տարիքի բնակչության բացարձակ թվի նվազման պայմաններում, մարդում հայ բնակչության աշխատանքային ռեսուրսների պոտենցիալը լրիվ չի օգտագործվել: Աշխատանքի կիրառման հիմնական բնագավառը գյուղատնտեսությունն է, ուր մեքենայացման շնորհիվ զբաղվածությունը զրսեկորել է կրճատման հայտնի միտում: Այդ իսկ պատճառով լուրջ պրոբլեմ է դարձել ակտիվ աշխատանքային տարիքի բնակչության զբաղվածությունը ոչ միայն արդյունաբերության առաջատար ճյուղերում, լուսավորության, առողջապահության և մշակութային օջախներում, այլև գյուղատնտեսության մեջ: Պատանիների ու աղջիկների մի զգալի մասը կրթություն են ստանում մարզի սահմաններից դուրս՝ և այլևս չեն կարողանում հետ վերագաճնալ ոչ միայն մարդում աշխատանքի իրավունքից, ըստ էության, զուրկ լինելու, այլև աշխատանքային տեղեր չլինելու պատճառով: Օրինակ, 1983—

* Լեռնային Ղարաբաղը միշտ էլ աչքի է ընկել բնակչության կրթական բարձր մակարդակով: Այստեղի բարձրորակ մասնագետները հաշտությունը աշխատում են ամբողջ երկրի ժողովրդական տնտեսության մեջ, մասնավորապես գիտատեխնիկական առաջընթացի նյութական հիմքը կազմող առաջատար ճյուղերում, գիտության, մշակույթի, լուսավորության և առողջապահության ապահովողներում:

1987 թթ. շորս տարիներին մարզի 7749 շրջանավարտներից երկրի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններն են ընդունվել 2014-ը¹, Բայց բանն այն է, որ մարզում աշխատանքի համապատասխան բնագավառ չլինելու պատճառով նրանք չեն վերադարձել: Ինչ աշխատատեղերի մասին է խոսքը, եթե մասշտաբային ընդլայնված վերարտադրություն տեղի չի ունենում ժողովրդական տնտեսության և ոչ մի ասպարեզում: Գա, իր հերթին, որոշակի ազդեցություն է ունենում նաև ծննդի մակարդակի վրա, չէ որ երիտասարդությունը թողնում է մարզը, իսկ բնակչությունը ծերանում է: Ծննդի նվազումը, իր հերթին, որոշակի ներգործություն է ունեցել լուսավորության մեջ ընդգրկվածության և այդ բնագավառի ընդարձակման վրա: Թեև հարկավոր է նորից ընդգծել, որ ինչպես այդ, այնպես էլ ընդհանուր առմամբ սոցիալ-տնտեսական բնագավառում տեղ գտած ամեն մի բացասական երևույթ առաջին հերթին բացատրվում է ազգային խտրականությամբ: Ցածր ծննդի հետևանքով պակասել է դպրոցում սովորող երեխաների ընդհանուր թվաքանակը: Օրինակ, 1970 թ. համեմատությամբ մարզում 1988 թ. դպրոցականների թիվը նվազել է 13 հազարով²:

Արտաքուստ ստեղծվում է այն տպավորությունը, որ միանգամայն արգարացվում է մարզում դպրոցների թվի նվազմանը ուղղված քաղաքականությունը: Բայց դա միայն առաջին հայացքից: Նույնիսկ դպրոցներում սովորող երեխաների ընդհանուր թվի նվազման պայմաններում մարզում չեն բավարարում աշակերտական տեղերը, դպրոցական շենքերը հին են: Ընդհանրապես հալ բնակչության և, մասնավորապես, դպրոցահասակ երեխաների արտագաղթի հարցում պակաս դեր չի խաղացել նաև դպրոցներում սովորելու համար տարրական նորմալ պայմանների բացակայությունը: Բավական է ասել, որ մինչև 1970-ական թվականները, այսինքն խորհրդային իշխանության հիսուն տարիների ընթացքում, մարզի հայկական շրջաններում պետական բյուջեի հաշվին չի կառուցվել ոչ մի դպրոցական շենք, ակումբ, կուլտուրայի տուն, սպոր-

տային կամ հասարակական որևէ այլ օբյեկտ: Միայն Ստեփանակերտում 1988 թ. ավելի քան 3000 աշակերտական տեղերի հույժ կարիք էր զգացվում: Դպրոցներում տեղերի քանակը 5810 է, իսկ աշակերտները 9118 են³, Այդ պատճառով էլ, օրինակ, № 10 միջնակարգ դպրոցի շենքը թեև նախատեսված է 1175 աշակերտի համար, բայց իրականում այնտեղ են հաճախում 1600 աշակերտներ: Այլ կերպ լինել չէր կարող. վերջին տասը տարում Ստեփանակերտում կառուցվել է ընդամենը մեկ դպրոցական շենք⁴, Ինչ հրաշք պետք է տեղի ունենար, որ 1988 թ. մարզի Շահմասուր գյուղի առաջին դասարանում սովորեի միայն մեկ աշակերտ⁵, Պարզ է, որ այդպիսի թեկուզ և հին դպրոցը ժամանակի ընթացքում արհեստականորեն «մեծ» կթվա: Կամ Հայրենական մեծ պատերազմից առաջ Մարտունու շրջանի Կաղարծիի միջնակարգ դպրոցում սովորում էին 400, իսկ 1987—1988 ուսումնական տարում ընդամենը՝ 70 աշակերտ, քանի որ գյուղում տարվա ընթացքում գրանցվում է 4—6 ծնունդ⁶: Միանգամայն այլ է պատկերը մարզի ազդեցիկագույնից բնակեցված գյուղերում: Խոջալուի գյուղական լյորհրդի տարածքի գյուղերում 1987—1988 ուս. տարում գործում էր մեկ միջնակարգ, մեկ ութամյա և երկու տարրական դպրոց: Դրանցում սովորում էր 461 աշակերտ: Երեք մանկապարտեզներում ընդգրկված էին 120 երեխա⁷: Մինչդեռ Ստեփանակերտի նախադպրոցական 11 հիմնարկներից 5-ը տեղավորված են հարմարեցված շենքերում: Մանկապարտեզներում տեղերի քանակը 1575 է, բայց կա 2735 երեխա⁸, Այստեղ 280 տեղերի համար նախատեսված մսուր-մանկապարտեզներից չուրաքանչյուրում դաստիարակվում են 430—450 երեխա: Անհրաժեշտ են 280 տեղանոց քաղաքային տիպի 5 մսուր-մանկապարտեզ: 12-րդ նշգամյակում նախատեսված էր կառուցել 280 տեղանոց մեկ մանկապար-

³ Սեմյա, 1988, № 43:

⁴ Խորհրդային Ղարաբաղ 1988, 13 մայիսի, 3 հունիսի:

⁵ Նույն տեղում, 1988, 5 հոկտեմբերի:

⁶ Նույն տեղում, 1988, 21 հոկտեմբերի:

⁷ Նույն տեղում, 1988, 12 հունիսի:

⁸ Սեմյա, 1988, № 2:

¹ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 13 մայիսի:

² Խորհրդային Ղարաբաղ, 1988, 25 մայիսի, 18 հունիսի:

տեղ և 1176 տեղանոց հանրակրթական մեկ դպրոց⁹։ Բանն այն է, որ մտուր-մանկապարտեզների թեկուզ մի փոքր խումբ հնարավոր չէր բացել առանց Բարձրի ղեկավարության հետ համաձայնեցնելու։ Չի կարելի անտեսել սոցիալական անարդարության նաև շատ գրեթե անհասարակ, որոնք առիթ են գարձել և դրդել երիտասարդությանը դիմելու արտահոսքի։

Չափազանց մտահոգ է մարդի առողջապահության, մասնավորապես մանկաբուժության բնագավառը։ Ասկերանը, որը մարզի խոշոր շրջկենտրոններից մեկն է, շունի շրջանային 4իվանդանոց¹⁰։ Բնակչության 10 հազար շնչի հաշվով հիվանդանոցային մասնակալների և բնակտարածության ապահովվածությունը ԼՂԽՄ-ը թեև գերազանցում է թե՛ Ադրբեջանական և թե՛ Հայկական հանրապետությունների ցուցանիշները, բայց, ցավոք, դա հիմնականում բացատրվում է բնակչության, մասնավորապես երիտասարդության արտագաղթով։ 1971—1986 թթ. բժիշկների թվի կրկնապատկման դեպքում անգամ մարզը այդ ցուցանիշով զգալիորեն զիջում է Ադրբեջանական ԽՍՀ-ի միջին ցուցանիշին (բավական է ասել, որ 1970 թ. մարդում աշխատում էին ընդամենը 240 բժիշկ)։ Այդ բնթացքում հիվանդանոցային մասնակալների թիվը 18 տոկոսով¹¹ ավելացնելու պայմաններում անհամ բնակչության 10 հազար շնչի հաշվով բոլոր մասնագիտությունների գծով թե՛ բժիշկների և թե՛ հիվանդանոցային մասնակալների թիվը ավելի քիչ է, քան հանրապետությունում՝ ամբողջությամբ վերցրած համապատասխանաբար 1,2 և 1,7 անգամ¹²։ 1986 թ. Լեռնային Ղարաբաղում բնակչության 10 հազար շնչին ընկնում էր 28,7, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ 38,4 բժիշկ¹³։

Տարեցտարի շեն կատարվում բնակարանային շինարարության սյունները, նույնիսկ պետական և կոոպերատիվ ձևաձևարկությունների շինարարության պլանային ծավալների զգալի կրճատման պայմաններում։ Վերջին երկու տասնամ-

յակներում՝ 1966—1986 թթ., մարդում շահագործման հանձնված ընդհանուր օգտակար բնակտարածության 58,3 տոկոսը բաժին է ընկնում անհատական շինարարությանը, իսկ հանրապետությունում, ամբողջությամբ վերցրած, այն կազմում է 41,6 տոկոս։ Բնակտարածությամբ ապահովվածության բարձր մակարդակը բնակչության, մասնավորապես երիտասարդ տարիքի բնակչության դարձյալ արտահոսքի հետևանքն է։ Մարզի շատ գյուղերում այսօր կան սեփական տներ, որոնցում ապրում են թոշակառու տարիքի մարդիկ, կամ ամբողջապես դատարկ տներ։ Մարդում բնակելի տարածությամբ ապահովվածությունը զուտ թվացող է։ Մի այնպիսի պատրանք է ստեղծվում, որ իբրև թե մարդում բնակարանային պրոբլեմ չկա։ Այս, ինչպես նաև ԼՂԽՄ-ի վերաբերյալ տնտեսական ու սոցիալական զարգացման իրավիճակը բնութագրող բազմաթիվ այլ ցուցանիշներ «ծուռ հայելու» մեջ ներկայացնելու նպատակով Ադրբեջանում սկզբունք է դարձել վիճակագրական միջին տվյալներից օգտվելը։ Ադրբեջանում գտնում են, որ 1986 թ. ԼՂԽՄ-ի ամեն մի բնակչի բաժին է ընկնում 14,6 բառ. մ բնակտարածություն։ Թե որքանով է ճիշտ այդ միջինացված տվյալը, թողնենք մի կողմ։ Բայց չէ՞ որ դա պատկերացում չի տալիս Սանփանակերտի և որոշ շրջկենտրոնների մասին։ Այդ դեպքում ինչով բացատրել Սանփանակերտում բնակարան ստանալու համար մեծ հերթերը։ Քաղաքի բոլոր ձևաձևարկություններում բնակարան ստանալու համար սպասում են մինչև 20 տարի¹⁴։

Ստեփանակերտում բնակարաններ ստանալու հետ կապված մեծ հերթերը բացատրվում են ոչ միայն կենտրոնից այդ նպատակների համար նախատեսվող և տպա հատկացվող կապիտալ ներդրումների պակասով, այլ բնակարանային արարության պլանների մշտական, տարիներ շարունակ սկզբունք դարձած թերակատարումներով։

Ինչ վերաբերում է գյուղական վայրերին, ապա ճիշտ են նկատում «Խորհրդային Ղարաբաղ» թերթի հոդվածագիրները, որ եթե հայ բնակչության արտագաղթը շարունակվի այն տեմպերով, ինչ մինչև այժմ է եղել, ապա մարզի գյուղական

⁹ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 25 մայիսի։

¹⁰ Նույն տեղում, 1988, 17 հունիսի։

¹¹ Народное хозяйство АзССР к 70-летию Великого октября, с. 271.

¹² Նույն տեղում, էջ 3, 12, 270, 282։

¹³ Նույն տեղում, էջ 12, 282։

¹⁴ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 18 հունիսի։

վայրերում յուրաքանչյուր շնչին բաժին կրնկնի 20—25 քառ.մ. բնակատարածություն: 25 որ շատ տներ լրիվ գատարկվել են, իսկ շատ տներում էլ բնակվում են իրենց կյանքի մայրամուտն ապրող մեկ կամ երկու ծերունիներ:

Ողբալի վիճակում է հազորդակցության ցանցը: Եարունակարար այս խնդիրը ոչ ոքի չի հետաքրքրել: Եատ գյուղերում, ուր հանրային տնտեսության մեջ աշխատանքի տեղափոխվելու հնարավորությունները խիստ սահմանափակ են, միակ հույսը կարող էր լինել անձնական օժանդակ տնտեսությունը (մասնավորապես տարիքավորների համար): Բայց խճուղիների, ինչպես նաև շուկայի հետ հազորդակցության այլ միջոցների բացակայությունը, հանգեցրել է նրան, որ բնակչությունը լքել է այդ գյուղերը: Մինչև վերջին ժամանակներս մարզը երկաթուղային գծով կապված չէր այլ շրջանների հետ: Վերջին տարիներին կառուցված մինչև Ստեփանակերտ ձգվող երկաթգիծը (ընդամենը 18 կմ) ոչ մի ձևով չի լուծում ներքին հազորդակցության խնդիրները: Բացակայում են անմիջական խճուղային կապերը Լեռնային Ղարաբաղի մարզային ու շրջանային կենտրոնների և գյուղերի ու առանձին շրջանային կենտրոնների, ԼՂԽՄ-ի ու Հայկական ԽՍՀ-ի միջև, թեև դրանք միմյանցից հեռու չեն:

Կան ճանապարհներ, որոնք անանցանելի են, մասնավորապես անձրևներին և ձմռանը, երբ անհնար է դառնում շրջկենտրոն կամ Ստեփանակերտ մեկնելը և վերադարձը: Այս առնչությամբ ահա թե ինչ է գրում «Խորհրդային Ղարաբաղ» թերթը. «Ձարմանայի է այն, որ ամենաբարձր ինստանցիաներում մեր ճանապարհները հիմնականում մեղ ասֆալտապատ են ներկայացնում: Վերջերս Բաքվում տեղի ունեցած «կյոթ սեղանի» շուրջը գրույցի ժամանակ հանրապետության կառավարության խորհրդային, հասարակական մարմինների և գիտության բնագավառի մի շարք աշխատողներ ձգտում էին մեր մարզը ներկայացնել որպես դրախտավայր: Հիմա մենք որի՞ն հավատանք՝ մեր աչքով տեսածի՞ն, թե դրվածի՞ն կամ ասվածի՞ն»¹⁵, Մինչև շրջկենտրոն գնալ և գալը պրոբլեմ է, իսկ մարզկենտրոն՝ երազանք¹⁶:

Հենց այդ պատճառով ներկայումս տասնյակ հազարավոր փախստականներ գլխի վրա ծածկ շունենալով կուտակվել են Ստեփանակերտում և շեն կարողանում բնակություն հաստատել իրենց հայրենի գյուղերում՝ ծնողների նախկին բնակարաններում: Թեև այդ լքյալ բնակարանների մի զգալի մասը տարիների ընթացքում դարձել է բնակվելու համար ոչ այնքան պիտանի:

Հայ բնակչության շահերը ոտնահարող խտրականության քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել սոցիալական, տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում ու բոլոր մակարդակներում: Սոցիալական անարդարության քաղաքականությունը բացահայտորեն դրսևորվում է հենց այս օրերին: Դա է վկայում ոչ միայն 1988 թ. ընթացքում կրոնաազգայնամոլական շաղախով բռնակցված հիստերիան, որը Սումգայիթի հետ միասին հանգեցրեց նրա օրգանական շարունակությունը կազմող Աղզամի, Սակերանի, Շուշիի, Խոջալուի, Բաքվի, Գանձուկի և Նախիջևանի ղեպքերին, այլև Աղբբեջանի կառավարող շրջանների կողմից Լեռնային Ղարաբաղում տասնամյակներով կուտակված սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման անմխիթար վիճակը: Կանխամտածված ձևով սխալ է կենսագործվում ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի «1988—1995 թթ. Աղբբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը միութենական համապատասխան կազմակերպություններին հանձնարարել են 1988—1989 թթ. մշակելու Լեռնային Ղարաբաղի տնտեսական և սոցիալական զարգացման կոմպլեքսային ծրագրերը՝ մինչև 2005 թվականն ընկած ժամանակաշրջանի համար: Այդ ծրագրի կենսագործումը լուրջ քայլ պետք է հանդիսանար Լեռնային Ղարաբաղի սոցիալական և տնտեսական զարգացման ոլորտում մինչև օրս թույլ տրված խեղաթյուրումների հաղթահարման, ինչպես նաև նրա արտադրողական ուժերի և ենթակառուցվածքի համակողմանի զարգացման խնդիրների լուծման ճանապարհին: Մինչդեռ ԼՂԽՄ-ի կառավարման հատուկ կոմիտեի աչքի առջև և ներկայումս այդ որոշումը կենսագործ-

¹⁵ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 1 հուլիսի
¹⁶ Նույն տեղում:

վում է լուրջ խեղաթյուրումներով և միակողմանիորեն: Իրականում ստացվում է այնպես, որ այդ հայտնի որոշումը իբր քն ծնվել է Լեոնային Ղարաբաղում «ադրբեջանցիների նկատմամբ տասնամյակներ շարունակ կիրառվող խտրականության և սղզային արժանապատվության ոտնահարման» քաղաքականության շարժառիթով: Շուշիում, Խոջալուում և ադրբեջանցիներով բնակեցված այլ վայրերում Ադրբեջանի կառավարության կողմից ինտենսիվ բնակարանաշինարարություն ծավալելու փութաշանութունը, հայ բնակչության կարիքների նկատմամբ մարզը տնօրինող գինվորականների կողմից ցուցաբերվող անհարգի վերաբերմունքը, ԼՂԻՄ-ի սոցիալ-տրնտեսական զարգացման գործում արհեստականորեն Հայաստանի չեղարացումը՝ Ղարաբաղը բացահայտորեն ադրբեջանականացնելու ակտիվ քաղաքական կուրսի բաղկացուցիչ մասն են: Այդ կուրսը նպաստում է բոլոր կողմերից արհեստականորեն հավաքագրվող ադրբեջանցի բնակչությանը հետևողականորեն ԼՂԻՄ-ում բնակեցնելու և այնտեղի հայ բնակչությանը արտաքսելու շուրջ յոթ տասնամյակների ընթացքում շարունակաբար կենսազործվող պրոցեսը վերջնական ավարտին հասցնելուն: Ղարաբաղի հայը դժգոհում է իր ազգային արժանապատվությունը արհամարհելու և սոցիալատնտեսական ծանր իրավիճակի համար, մինչդեռ կենտրոնը 500 մլն ռուբլին տրամադրել է Քաքվին:

Տասնամյակների ընթացքում Ադրբեջանում, և անգամ ԼՂԻՄ-ում հայ զպրոցականը զրկված է եղել մայրենի լեզվով իր ժողովրդի պատմությունը սովորելու իրական հնարավորությունից: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի հայկական դպրոցներում արդենվում էր հայոց պատմությունը Հայաստանում յույս տեսած դասագրքերով դասավանդելը, ուսական դպրոցներում, որոնց կոնտիգենտը միայն հայեր էին, հայոց լեզու և պատմություն դասավանդելու մասին խոսք անդամ լինել չէր կարող...: Իսկ աշխատողների վարձատրությունը, սոցիալական պայմանները, ազգային հալածանքը: Այդ մասին իր տեղում:

ԼՂԻՄ-ում ոտնահարվում էին մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակությանը առնչվող պահանջները: Մարզում ընդամենը գործում է 11 մարզադպրոց: Գրանք բոլորն էլ լուսնեն

քեփական մարզական բազա: Ուսումնական պարապմունքներն անց են կացնում հանրակրթական դպրոցներում: Մարզում իսպառ բացակայում են լողավազանները: Տասնամյակներ շարունակ չի կառուցվել սոցիալ-մշակութային նպատակների համար որևէ շենք. աստված գիտե, թե ե՞րբ է շահագործման հանձնվելու Ստեփանակերտի մարզային համալիրը, որի շինարարությունը սկսվել է 14 տարի առաջ¹⁷:

Մարզում հայ բնակչության նկատմամբ կանխամտածված քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել նաև հայ աշխատավորության աշխատանքի և վարձատրության կազմակերպման համակարգում: Աշխատանքի վարձատրության շահանիշ է ծառայել ոչ թե աշխատանքային գործունեությունը, այլ ազգային պատկանելությունը, նայած թե տվյալ օրյակուր տրտեղ է տեղադրված՝ մարզի հայկական, թե ադրբեջանական շրջաններում: Ընչ խոսք, դրան մեծապես նպաստել է հրամայական մեթոդներով էկոնոմիկան կառավարելու լծացման շրջանին հատուկ բացասական երևույթների հանգույցը: Բայց դա խտրականության քաղաքականությունը քողարկելու սոսկ միջոց էր և ոչ թե կիրառելու պարտադիր պայման: Օրինակ, ինչով բացատրել, որ Գյոզայի կարի Ֆարբիկայի, Շուշիի ու Աղզամի կառույցների ադրբեջանցի բանվորների միջին աշխատավարձը երկու անգամ գերազանցել է Ստեփանակերտի և մարզի մյուս շրջանների կարի Ֆարբիկաներում ու կառույցներում աշխատող բանվորների միջին աշխատավարձի շահերին¹⁸: Իսկ իրականացվում էր ոչ միայն այդ ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածություն, այլև Ադրբեջանում գտնվող գլխադաս կազմակերպությունների կողմից իջեցվող ոչնչով չհիմնավորված արտադրական նորմաների տարբերությամբ:

Ադրբեջանական շրջաններում տեղադրված ձեռնարկությունները բնութագրվում են ավելի բարձր տեխնիկական հագեցվածությամբ, քան հայկական շրջանների նույնատիպ ձեռնարկությունները: Բարձր արտադրական նորմաները փոխանակ սահմանվեն բարձր տեխնիկական հագեցվածություն

¹⁷ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 13 մայիսի, 13 օգոստոսի
¹⁸ Նույն տեղում, 1988, 5 հունիսի, 5 օգոստոսի:

ունեցող ձեռնարկությունների համար, սահմանվում են հայկական շրջաններում տեղադրված ձեռնարկությունների համար¹⁹։ Տեխնիկատնտեսական տեսակետից ոչնչով չհիմնավորվող նորմաները կատարվում և գերակատարվում են, իսկ բարձր նորմաները թերակատարվում են և որոշակիորեն ազդում աշխատողների աշխատավարձի մակարդակի վրա։ Այդպես էր իրավիճակը նաև մետաքսի, կահույքի, կարի և այլ արտադրական ձեռնարկություններում։

Մարզկային ի՛նչ արժանապատվություն և խիղճ պետք է ունենար ավտոտրանսպորտային նախարարության ղեկավարությունը, որ նախապես ստորագրեր և սահմաներ տարբեր նորմաներ միևնույն տարածությունն երթևեկող ավտոբուսների վարորդների համար՝ ելնելով ավտոբուսն սպասարկող պարկի տեղադրվածության ազգային պատկանելությունից։ Արեւ տրամաբանություն կա՞, թե ինչու «Աղղամ-Ստեփանակերտ» երթուղին սպասարկող նույն մակնիշի ավտոբուսի վարորդի համար պետական գանձարան մուծելու նորմա է սահմանվել 65 ուրլի, իսկ «Ստեփանակերտ-Աղղամ»՝ հակառակ երթուղին սպասարկող հայ վարորդների համար՝ 95 ուրլի, կամ «Կիրովաբադ-Ստեփանակերտ» երթուղու ավտոբուսի վարորդի համար 95 ուրլի, իսկ հակառակ երթուղում, հայ վարորդի համար՝ 125 ուրլի²⁰։ Ի՛նչ զավեշտ է։ Կարծեք թե հակառակ երթուղում միևնույն ճանապարհը ազդեցանցի վարորդի համար կարճանում է, իսկ հայ վարորդի համար երկարում է։ Երևույթի «տրամաբանական» հիմքը նպատակային, կազմակերպված քաղաքականությունն է։

Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը հիմնականում ագրարային բնույթ է կրում։

Մարզի արդյունաբերությունը ներկայացնում են ընդամենը մի քանի տասնյակ ձեռնարկություններ, որոնց մի մասը հիմնադրվել է ղեռուս մինչև հեղափոխությունը։ Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում մասնագիտացել են մետաքսի և մետաքսի զործվածքների, գինու և կոնյակի ավանդական արտադրությունների գծով։ Ստեղծվել են կոշիկի,

կահույքի, շինանյութերի, լուսավորման ապարատների և այլ ձեռնարկություններ։ Այդուհանդերձ, արդյունաբերության ճյուղային կառուցվածքում, իրականում, որևէ առաջադիմական փոփոխություն չի կատարվել, Ի՛նչ վերաբերում է 1970—1980-ական թվականներին արդյունաբերության այսպես կոչված «արագացված» զարգացմանը, որի մասին շատ են խոսում Աղբեջանում, ապա դա թվացող է։ Նախ, դրան նախորդող տարիներին մարզը հանրապետության մյուս շրջանների համեմատ ունեցել է զարգացման խիստ ցածր տեմպեր։ Օրինակ, 1950-ական թվականներին բնակչության 1000 շնչի հաշվով 10 անգամ ավելի պակաս կապիտալ ներդրումներ են կատարվել, քան Աղբեջանական ԽՍՀ-ի միջին ցուցանիշը։ Ուստի, այսպես կոչված «արագացումը» վերաբերում է աճի տեմպերին, երբ այն համեմատում ենք խիստ ցածր բազայի հետ։ Երկրորդ, այդ «արագացումը» պայմանավորված է արդյունաբերության այն ճյուղերով, որոնք մասնագիտացել են գյուղատնտեսական հումքի վերամշակման, մասնավորապես մինչև 1985 թ. կոնյակի (1971—1985 թթ. արտադրությունն ավելացել է 5,3 անգամ), գինու (2,3 անգամ), կահույքի (2,7 անգամ) արտադրության մեջ, մի երևույթ, որը արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերի իրական պատկերը չի արտահայտում, քանի որ այն բնութագրվում է համախառն արտադրանքի գներով։ Մինչդեռ հայտնի է, որ հենց այդ արտադրանքի գները 1971—1985 թթ. բարձրացել են և դրա համար էլ արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը այդ թվականին արհեստականորեն «արագացված» տեսք են ընդունել։ Մյուս կողմից, ԼՂԻՄ-ի նկատմամբ նման «ուշադրությունը» պայմանավորված է նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության անընդհատ աճող զժգոհությամբ, որը իր արտահայտությունն է գտել Խորհրդային Միության կենտրոնական մարմիններին բազմիցս հղած դիմում-բողոքներում։ Եվ արդեն հայ բնակչության «պահանջների թուլացումը» անմիջապես ներազդել է մարզի զարգացման վրա։ Այսպես, 1981—1985 թթ. ԼՂԻՄ-ի արդյունաբերության զարգացման աճի տեմպերը կազմել են 129 տոկոս և զիջում են ինչպես հանրապետության միջին (136,3 տոկոս), այնպես էլ գերազանցապես աղբեջանացիներով բնակեցված Նախիջևանի Ինքնավար Հանրապե-

¹⁹ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 5 օգոստոսի։

²⁰ Նույն տեղում, 1988, 11 հոկտեմբերի։

տուժյանը (203 տոկոս)²¹, ԼՂԻՄ-ը միշտ էլ զիջել է Ազրբեջանական ԽՍՀ-ին բնակչության 1000 շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրության և գործող արդյունաբերական արտադրական հիմնական ֆոնդերի մակարդակով: 1981—1985 թթ. մարզը բնակչության 1000 շնչի հաշվով կատարված կապիտալ ներդրումներով ավելի քան 2, իսկ 1986թ. 2,7 անգամ զիջում էր Ազրբեջանական ԽՍՀ միջին ցուցանիշին²²: ԼՂԻՄ-ը շուրջ համակցված կերպի գործարան, շունի երկաթբետոնե իրերի գործարան, շունի տնաշինական կոմբինատ²³: Ահա թե ինչու մեկուկես տասնամյակում մարզում թերակատարվում են կապիտալ ներդրումների, շինարարական մոնտաժային աշխատանքներ, հիմնական արտադրական ֆոնդերի շահագործման պլանային առաջադրանքները: Միայն 1971—1987 թթ. պլանավորված 147 մլն ոտք. հիմնական ֆոնդերից 1/4-ը շահագործման չի հանձնվել²⁴: Ըստ որում այդ միջոցների մի զգալի մասը հատկացվել է Սարսանգի ջրամբարի կառուցմանը, որը նախատեսված է նաև մարզի սահմաններից դուրս գտնվող հարթավայրային շրջանների հողերի ոռոգման համար: Համապատասխան պոմպակայաններ կառուցելու միջոցով Սարսանգի ջրամբարը կարող էր սպասարկել մարզի մի շարք հայկական գյուղեր²⁵: Բայց ո՞վ է դրան ուշադրություն դարձնողը: Ի դեպ, ԽՍՀՎ Կենտկոմը և ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը դեռևս 1979 թ. ընդունած որոշումով պետք է թարթառ գետի ջրով ոռոգելի դարձվեին Կուրուպատկինայի, Ալիբալուի, Աղբուրանի արտավայրերը: Տարիներ են անցել, բայց ոչ «չուր կա, ոչ էլ ջրազաց»: Նկատենք նաև, որ Ստեփանակերտում և մարզի գյուղերում լուծված չի եղել նաև խմելու ջրի պրոբլեմը, թեև շատ գյուղերում աղբյուրները բնդամենք մեկ-երկու կիլոմետրի վրա են²⁶: «Մարզի շատ գետեր, գետակներ, առվակներ,— գրում է «Նորհրդային Ղա-

րաբաղ» թերթը,— կեղտոտված են մասսայականորեն: Ստեփանակետը ջուր է ստանում Բալլաջու, Տրակետ, Խալիֆալի գետերից, սուբարտեզյան հորերից և աղբյուրներից: Գետերից ստացվող ջուրը տարվա բուրբ ամիսներին կեղտոտ է լինում: Այդ ջուրը հաճախ չի կարելի օգտագործել նույնիսկ տնտեսական կարիքների համար: Մինչդեռ քաղաքի մոտ գտնվող «Վարարակն» աղբյուրի ջրի մեծ մասը աննպատակ հոսում է ձորերով»²⁷: Համապատասխան նյութական բազայի բացակայության, մատակարարման գործում տեղ գտած էական թերությունների պատճառով ձգձգվում են մի շարք օբյեկտների շինարարության ժամկետները, ավելանում է անավարտ շինարարության ծավալը, որը հանգեցնում է ԼՂԻՄ-ի ժողովրդատնտեսական կոմպլեքսում էական կորուստների:

Կեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ից բաժանվում է Ազրբեջանական ԽՍՀ-ի տարածքի մեջ մտնող նեղ շերտով, բայց Հայկական ԽՍՀ-ի հետ մինչև վերջերս գործնական որևէ կապ չունեն: Նրա ընդհանուր տնտեսական կապերի բաժնի մեջ Հայկական և Վրացական հանրապետությունների հետ ունեցածը հազիվ 2 տոկոս էր կազմում²⁸:

Տասնամյակներ շարունակ շնչին կապիտալ ներդրումները չէին կարող էական դեր խաղալ արդյունաբերության նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործում: Արդյունաբերական ձեռնարկություններում մեծ մասամբ գերիշխում է իր դարն աչյրած հին տեխնիկական և ձեռքի աշխատանքը (մետաքսի, կարի, կահույքի, կոշիկի և այլ ձեռնարկություններում), դրանք գուրկ են նորմալ արտադրական շենքերից: Օրինակ, կարի ֆաբրիկան իր գործունեության 50 տարիներին տեխնոլոգիական պրոցեսների վերափոխման չի ենթարկվել: Հնացած ու շարքից դուրս եկած կարի մեքենաները տեղադրված են կողք կողք՝ տեխնոլոգիական նորմաների կուպիտալառամներով, բանվորներն ազատ շարժվելու հնարավորություն չունեն, ընդմիջման ժամանակ սնվում են հենց հաստոցների մոտ: Ֆաբրիկայի տարածքը փոքր է, աշխատանքա-

21 Народное хозяйство АзССР к 70-летию Великого октября, Баку, 1987, с. 11, 258, 271, 279.

22 Նույն տեղում, էջ 3, 11, 270, 279:

23 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 24 հուլիսի:

24 Կոմունիստ, 1988, 11 մայիսի:

25 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 9 մայիսի:

26 Նույն տեղում, 1988, 29 մայիսի, 1 հունիսի:

27 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 7 հունիսի:

28 Կոմունիստ, 1988, 9 մայիսի:

չին պայմանները՝ վատ²⁹։ Կամ վերցնենք Ղարմետաքս կոմբինատը։ Այն շունի ներկման արտադրամաս, ներկելու համար հումքը առաքվում է Շեքիի մետաքսագործական միավորում, որտեղ քմահաճորին մետաքսի որակը ցածր է զնահատվում՝ դրանով իսկ իջեցնելով Ստեփանակերտի մետաքսի գործարանի բանվորների աշխատավարձը³⁰։ Կոմբինատում խախտված է բոժոժի հումքի պահեստավորման ու արտադրական հզորությունների միջև համապատասխանությունը։ Մեկ տարում արտադրված թանկարժեք և երկրին խիստ անհրաժեշտ հումքը գործող կարողություններով մեկ ամբողջ հնգամյակում հալիվ կարելի է մշակել։ Մինչդեռ պահեստում այն երկար պահել չի կարելի, քանի որ կարճ ժամանակի ընթացքում որակազրկվում է՝ մեծապես ազդելով նաև թելի որակի վրա³¹։ Իսկ դա ոչ սրի չի հուզում։

Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողներին մեծապես մտահոգել է Աղբբեջանի տարբեր քաղաքներից հումքի անկանոն մատակարարումը և նրա խիստ ցածր որակը։ Դա ազդում է և՛ արտադրության համաշափ կազմակերպման (խախտվում է սիթմիկ աշխատանքը), և՛ պատրաստի արտադրանքի որակի վրա։ Բաքվի կաշվի գործարանը, օրինակ, Ստեփանակերտի կոշիկի գործարանին միշտ էլ մատակարարել է երկրորդային հումք³²։ Ըստ որում Աղբբբեջանի թեթև արդյունաբերության նախարարությունը հանրապետության կոշիկի այլ ձեռնարկությունների կողմից լընդունված և մերժված հումքը հատուկ եռանդով պարտադրում է Ստեփանակերտի կոշիկի գործարանին, այն դեպքում, երբ վերջինիս պահեստներում կուտակված գերնորմատիվային ցածր որակի հումքը մեծ քանակությամբ է կազմում³³։

Հասկանալի է, որ նման պայմաններում Ստեփանակերտի կոշիկի գործարանում իրենց վարպետությամբ աչքի ընկնող կոշկարարները մնում են «սեեքես»։

Իրենց արտադրանքի որակով չեն հպարտացել նաև կա-

հույքագործները։ Պահարաններ, ննջաննյակային կահույք, մահճակալներ, աթոռներ պատրաստելու համար Բաքվից առաքվել են ստանդարտ շափերին շհամապատասխանող տարբեր հաստություններ և մեծ մասամբ չհղկված, ճաքճքված փխրուն փայտաթևփային սալիկներ (ԴՄՊ) և նրբասալիկներ։ Անորակ են Աղդամից ստացված մեխերը³⁴։ Գործարանը թեև տեղադրված է նորակառույց շենքում, բայց այն շահագործման է հանձնվել մեծ թերություններով և ստեղծվել է որոշակի անհամապատասխանություն հին նախապատրաստական և նոր շենքում տեղակայված հիմնական արտադրամասերի կարողությունների միջև։

Առավել տխուր և մտահոգող է եղել շինարարության բնագավառում տիրող իրավիճակը։ Արդյունաբերական ձեռնարկությունների նման, այս բնագավառում ևս, շարունակ վերելից իջեցվել են արտադրական հզորությունների հետ ազերս չունեցող բարձր պլանային առաջադրանքները։ Նման պարագայներում որոշակի մտահոգության առարկա պետք է դառնար համապատասխան կուպիտալ հատկացումներով ձեռնարկությունների և շինարարական կազմակերպությունների նյութատեխնիկական բազան ինչ-որ շափով բարելավելու խնդիրը։ Իսլախս և պետք էր սպասել, վերագաս կազմակերպությունները նման գլխացավանք իրենց չեն պատճառել։

Տարիներ շարունակ որոշակի անհամապատասխանություն է տիրել Ստեփանակերտի շինարարական կազմակերպություններին հատկացվող նվազ ֆոնդերի (որոնք իրականում նույնպես չեն ստացվել) և պլանով նախատեսվող աշխատանքների ծավալների միջև։ Նման պարագաներում սովորական է եղել շինմոնտաժային աշխատանքների առաջադրանքների թերակատարումները։ Բայց դա բնավ էլ չի խանգարել, որ հաջորդ տարիներին իջեցվեն ավելի բարձր պլանային առաջադրանքներ՝ նույն կամ ավելի պակաս շափով հատկացվող ֆոնդերի պայմաններում³⁵։

Խիստ ցածր է եղել Ստեփանակերտի շինարարական կազմակերպությունների տեխնիկական հագեցվածության մակար-

29 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 5 օգոստոսի։

30 Նույն տեղում, 1988, 13 մայիսի։

31 Նույն տեղում, 1988, 20 մայիսի։

32 Նույն տեղում, 1988, 11 մայիսի։

33 Նույն տեղում, 1988, 11 մայիսի։

34 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 22 մայիսի, 6 օգոստոսի։

35 Նույն տեղում, 1988, 14 օգոստոսի։

դակը: Չկա երկաթքեռանն կոնստրուկցիաների գործարան, խիստ քիչ են աշխատանքային կոունկները, տրակտորները, էքսկավատորները, բեռնատար ավտոմեքենաները³⁶: Շինարարական օբյեկտներում չկան ամբարձիչներ³⁷, նույնն է իրավիճակը փոքր մեքենայացման միջոցների հետ: Չեն բավարարում եռակցման ապարատները, շաղախախառնիչները, մուրճերը, սղոցները, շարժական սանդղակները: Օրինակ, № 9 շինտրեստի № 3 շարժական մեքենայացման շարասյան բանվորների մեքենազինվածությունը, դրամական գնահատմամբ, նախատեսվող միջին նորմաներից ցածր է եղել 4 անգամ, էներգազինվածությունը՝ 2,5 անգամ, էլեկտրազինվածությունը՝ 4 անգամ³⁸: Նման պայմաններում, հրե գործող մեքենաներն էլ հնացած են ու շարքից դուրս են գալիս, մեքենայական պարկը համալրելու մասին մտահոգվող չի եղել:

Ստեփանակերտում և մարզի հայկական շրջաններում կոունցյների ձգձգումը, պլանային առաջադրանքների թերակատարումը բացատրվում են նաև հանրապետության կազմակերպությունների կողմից շինանյութերի առաքման գործում տեղ գտած կամայականություններ: Հասկանալի է, որ դա ԼՂԽՄ-ի հայ բնակչության նկատմամբ դրսևորվող քաղաքականության քնդհանուր շղթայի օղակներից մեկն է:

Բարձրից, Սումգայիթից, Կիրովաբադից, Մինգչաուրից առաքվող բոլոր շինանյութերը տարիներ շարունակ տեղ են հասել ուշացումներով և ցածր որակով: Վազաններով առաքվող ստանդարտ շափերի քարերը տեղ են հասնում պակասով³⁹: Դրանք պակասում են Աղզամում: Շինանյութերի մշտական պակասի պատճառով Ստեփանակերտում ամսվա ընթացքում 30—40 տոկոսով պարապուրդները⁴⁰ եղել են սովորական երևույթ: Իրենց հզորությունը և նույն տրեստին պատկանող Շուշիի և Լաչինի ստորաբաժանումները ավելի լավ են մատակարարվել, քան Ստեփանակերտի ստորաբաժանումները⁴¹:

36 Խորհրդային Ղարաբաղ, 1988, 21 հոկտեմբերի:

37 Նույն տեղում, 1988, 13 մայիսի:

38 Նույն տեղում, 1988, 21 հոկտեմբերի:

39 Նույն տեղում, 1988, 14 օգոստոսի:

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում:

Շինարարության կազմակերպման պրոբլեմը առավել քան սրվել է վերջին երկու-երեք տարիների ընթացքում, դա բացատրվում է ոչ միայն Ադրբեյջանի տարբեր վայրերից շինանյութերի և շինարարական տեխնիկայի մատակարարման գործում տիրող մշտական խափանումներով, այլև դրանց առաքումը լրիվ դադարեցնելով, այդ հարցում Հայաստանի պատրաստակամությունը սվիեններով դիմավորելով և արհեստական բարդություններ ստեղծելով:

Չնայած այս ամենին, փոքրիկ մարզը միութենական հասարակական աշխատանքի բաժանման մեջ իր նկատելի մասնակցությունն է բերել գյուղատնտեսական մի շարք արժեքավոր մթերքների արտադրությանը: 1981—1985 թթ. տարեկան միջին հաշվով ԼՂԽՄ-ում արտադրվել է 145,7 հազ. տոննա խազող, մինչև 11 հազ. տոննա միս, շուրջ 55 հազ. տոննա կաթ, որը զգալի չափով գերազանցում է 1000 շնչի հաշվով Ադրբեյջանական ԽՍՀ-ի համապատասխան միջին ցուցանիշը: Բարձր են նաև այդ մթերքների պետական գնումների մակարդակները՝ ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ նրա գյուղատնտեսական շրջանների միջինի համեմատությամբ: 1986 թ. ԼՂԽՄ-ը բնակչության մեկ շնչին ընկնող մսի (անասունների և թռչունների միսը կենդանի քաշով) գնումներով նախընտանիս գերազանցում էր 4,6, կաթով՝ 2,7, ցորենով՝ ավելի քան 1,4 անգամ, խազողով՝ 1,6 անգամ⁴²: Մարզը, որի տարածքը 4,4 հազ. քառ. կմ է, պահում է շուրջ 100 հազար գլուխ խոշոր հզգերավոր անասուն (մթերատու), ավելի քան 275 հազար գլուխ ոչխար և այծ, 95 հազար խոզ (Ադրբեյջանական ԽՍՀ-ում պահվող խոզերի ավելի քան 40 տոկոսը)⁴³: Միավոր հողատարածության հաշվով այստեղ 1,2 անգամ ավելի շատ անասնազոխաքանակ է պահվում, քան հանրապետության միջինն է և 1,7 անգամ ավելի շատ, քան գյուղատնտեսական թերում ունեցող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում⁴⁴: Այդուհանդերձ մարզը գյուղատնտեսական մթերքների

42 Народное хозяйство АзССР к 70-летию Великого октября, с. 265, 273—277.

43 Նույն տեղում, էջ 3, 96, 267, 268, 270, 275:

44 Նույն տեղում:

ասպարեզում ունակ էր անհամեմատ շատ ավելին անելու, եթե գործեր տնտեսաշարժարկային մեխանիզմը: Դա հնարավորություն կտար շարժման մեջ դնելու գոյություն ունեցող բոլոր ռեզերվները, այդ թվում գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման հնարավորությունները: Ռեզիդնալ տնտեսաշարժարկային հարաբերությունների բացակայության պայմաններում մարզը տալիս է ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ, քան ստանում է, այդ պատճառով էլ աշխատավորությունը մասմթերքների ու կաթնամթերքների խիստ կարիքի մեջ է, որը պակաս բացասական դեր չի խաղում նրանց նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու հարցում:

Ջարմանալի է, որ մարզում գտնվող Շուշի քաղաքում կատարվում էր մսի ազատ վաճառք, իսկ մարզի կենտրոն Ստեփանակերտում՝ մեկ բնակչին տրվում էր ամսական բնդամենը մեկ կիլոգրամ միս⁴⁵:

Մեծ դժվարություններ են ստեղծվում խաղողը և մրգերը պահեստավորելու, պետությանը հանձնելու և այն վերամշակելու հետ կապված հարցերում: Դա վերաբերում է նաև օժանդակ տնտեսություններից ստացված բերքին: Խաղողի մի զգալի մասը, վերամշակող ձեռնարկությունների արտադրական ցածր հզորությունների պատճառով, չի վերամշակվում: ՌՖՆՍՆ-ի հարավային շրջաններ խաղողը և մրգերը տեղափոխելու փորձերը հաջողությամբ չեն պսակվում: Ճանապարհին տրորվում, փչանում են⁴⁶:

Այսպիսով, ԱՂԻՄ-ը դարձել է Ազրբեջանական ԽՍՀ-ի գաղութային հումքային կցորդը: Դա մեծապես կաշկանդել է նրա տնտեսական զարգացումը, մանավանդ որ լիակատար չեն օգտագործվում ո՛չ գյուղատնտեսական, ո՛չ էլ արդյունաբերական զարգացման հնարավորությունները: Մինչև Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի քաղաքական լուծումը պետք է խորհել այնտեղ տարածքային տնտեսաշարժի սկզբունքների արժատավորման, մայր հայրենիքի հետ տնտեսական, հոգևոր, մշակութային կապերի հաստատման ամրապնդման մասին:

Վերը նշվածով հանդերձ ԱՂԻՄ-ի հայ բնակչությունը ժանր

ապրումների մեջ է ոչ այնքան սոցիալ-տնտեսական ոլորտում իր լուծումը շատացած խնդիրների (թեև դա իր հերթին մարդկանց նիստ ու կացի և վարվելակերպի վրա մեծ ազդեցություն է գործում) կապակցությամբ, որքան մարզում ստեղծված ժողովրդադրական տազնապայից իրավիճակով, տասնամյակներ շարունակ իր ազգային իրավունքները սահմանափակելու, ազգային արժանապատվությունը ոտնահարելու պատճառով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազգային իրավունքները ոտնահարելու և նրա նկատմամբ խտրական քաղաքականություն կիրառելու իմաստը Լեռնային Ղարաբաղը հայաթափ անելու և մարզը ադրբեջանականացնելու մեջ է: Դա Ազրբեջանի ղեկավարության կողմից տասնամյակների բնթացքում կիրառվող քաղաքականության ուղղակի շարունակությունն է:

Այդպիսի քաղաքականության վտանգը գոյություն է ունեցել ինչպես պարսկական տիրապետության, այնպես էլ հետագա տարիների բնթացքում: Սակայն թե՛ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո բնկած ավելի քան մեկդարյա պատմական ժամանակաշրջանում (մինչև 1917 թ.) և թե՛ հեղափոխության նախօրյակին հայ բնակչությունը գերակշիռ մեծամասնություն էր կազմում այստեղ ապրող մյուս ազգությունների նկատմամբ՝ բոլորը միասին վերցրած: Մինչև Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելը, 1918—1920 թթ. ազգամիջյան բնդհարումների հետևանքով բնակչության բնդհանուր թվաքանակը զգալիորեն պակասեց: Այսպես, եթե Լեռնային Ղարաբաղի ներկայիս տարածքում 1913 թ. ապրում էր շուրջ 176 հազար մարդ, ապա 1926 թ. այն զգալիորեն նվազեց՝ կազմելով 125,3 հազար մարդ: Դրա հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղի բնդհանուր բնակչության թվակազմում զգալիորեն բարձրացել էր հայ բնակչության տեսակարար

⁴⁵ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 18 հունիսի:

⁴⁶ Նույն տեղում, 1988, 20 մայիսի:

¹ НКАО 50 лет в дружной Советской семье, Степанакерт, 1973, с. 32—33.

կշիռը: Այն 1921 թ. կազմեց 94,4 տոկոս: Այդ փուլում հայ բնակչության տեսակարար կշռի նման բարձրանալը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ, 1918—1920 թթ. Լեռնային Ղարաբաղը, շնայած Աղբրեջանի մուսավաթական ուժերի անընդհատ հարձակումներին, մնաց անկախ: Երկրորդ, տիրելով Լեռնային Ղարաբաղի հարևանությանը բնիկ հայ բնակչությանը բնակեցված մի շարք շրջանների՝ Աղբրեջանի մուսավաթական կառավարությունը կազմակերպեց հայ բնակչության շարդ, որից փրկվածների մի մասը ապաստան գտավ Լեռնային Ղարաբաղում:

Ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղը, ինչպես և ամբողջ Հայաստանը, այդ տարիներին տվեց մեծաթիվ կորուստներ:

Սակայն Աղբրեջանի մի խումբ աշխարհագրագետներ, առանց որևէ ստույգ վիճակագրական աղբյուր վկայակոչելու (ի միջի այլոց դա դարձել է միտումնավոր սովորություն), նույն «Բակինսկի ութույի» թերթի էջերում գրում են, որ իբր թե 1921 թ., Լեռնային Ղարաբաղը Աղբրեջանին հանձնելու պահին, այնտեղի բնակչության թվակազմի 90 տոկոսը աղբրեջանցիներ էին²: Նման կեղծ պնդումը չի կատարվում հենց այնպես, Գրանով նրանք փորձում են «բացատրել», «պատճառաբանել» ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի որոշումը հուլիսի 5-ի որոշմամբ փոխարինելու անհրաժեշտությունը: Բայց, ցավոք, ինչպես հաճախ, այս անգամ էլ հասարակ տրամաբանությունը բացառվում է: Այդ մարդիկ երբեք իրենք իրենց հարց չեն տալիս՝ արդյո՞ք հնարավոր է 10 տոկոս հայերով բնակեցված տարածքին շնորհել ինքնավար մարզի ստատուս՝ Աղբրեջանական ԽՍՀ-ի կազմում:

Խորհրդային կարգերի հաստատումը Ղարաբաղում առաջին մի քանի տարիներին ինչ-որ չափով նպաստեց բնակչության ընդհանուր թվաքանակի՝ կայունացմանը և նրա ավելացմանը: Դա հիմնականում տեղի էր ունենում բնական աճի շնորհիվ: Բայց այդ ընթացքը կարճ տևեց: Լեռնային Ղարաբաղը Աղբրեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ մտնելուց հետո սկիզբ է առնում նրա հայ բնակչության արտագաղթը: Այն մերթ թափ

առնելով և մասշտաբներն ընդլայնելով, մերթ դանդաղելով և մասշտաբները չափազորելով, հիմնականում հանգեցրել է մարզի հայ բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազմանը: Ընդ որում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մեծ արտահոսքը մինչև երկրորդ աշխարհամարտը ուղեկցվում էր բնական բավականին բարձր աճով: Վերջինիս շնորհիվ այդ ընթացքում դրսևորվեց հայ բնակչության բացարձակ աճի որոշ միտում, թեև այն մեծ մասշտաբ չընդունեց: 1926 թ. և 1939 թ. մարդահամարների ընթացքում, Աղբրեջանում հրապարակված վիճակագրական տվյալներով, մարզում հայ բնակչությունը ավելացավ 18,9 տոկոսով, այսինքն՝ 1926 թ. 111,7 հազարից 1939 թ. հասավ 132,8 հազարի³: Նույն տարիներին մարզի բնակչության ընդհանուր թիվը 125,3 հազարից՝ հասավ 159,8 հազարի կամ ավելացավ 20,4 տոկոսով: Դրա հետևանքով հայերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր բնակչության թվակազմում կրճատվեց և 1930 թ. իջավ 83,1 տոկոսի, Մինչդեռ այդ տարիներին ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև Խորհրդային Հայաստանը բնութագրվում էին ծննդաբերության և բնական աճի բավականին բարձր մակարդակով: Բավական է ասել, որ 1940 թ. Հայկական ԽՍՀ բնակչության ծննդաբերության և բնական աճի մակարդակով Միությունում առաջին տեղն էր զբաղում և Աղբրեջանական ԽՍՀ-ին գերազանցում էր համապատասխանաբար 11,8 և 12,7 մարդով (բնակչության 1000 շնչի հաշվով)⁴: Գրեթե համանման տարբերություն էր նկատվում

³ Всесоюзная перепись населения 1959 г. Азербайджанской ССР, М., 1963, с. 140. Численность и состав населения СССР, М., 1924, с. 126.

⁴ Հիշատակվող աղբյուրներում 1926 թ. ԼՂԽ-ի բնակչությանը վերաբերող աճյալը թեև հավաստի չէ, բայց այստեղ և հետագա համեմատություններում դա է օգտագործվում, քանի որ Աղբրեջանում հրապարակվող աղբյուրներում այդ է հիշատակվում: Թանն այն է, որ 1926 թ. մարզի բնակչության վերաբերյալ մարդահամարի նյութերը կեղծվել են: Ըստ արխիվային նյութերի 1926 թ. մարդահամարով ԼՂԽ-ի բնակչության ընդհանուր թիվը 140,1 հազար, իսկ հայ բնակչությունը 125,5 հազար է եղել: Հայերը կազմել են ընդհանուր բնակչության 89,6 տոկոսը, մուսուլմանները՝ 10 տոկոս (14 հազար), աստեղերը՝ 0,4 տոկոս (500), հույները՝ 0,1 տոկոս (100), տե՛ս Архив НКАО, фонд 2, оп. 1, Ед. хр. 7, л. 44—57.

⁵ Народное хозяйство СССР за 70 лет, М., 1987, с. 406—407.

² Բակինսկի ութույի, 1939, 7 հունիսի:

Լեոնային Ղարաբաղի և Ազրբեջանական ԽՍՀ-ի բնակչության բնական աճի մակարդակների միջև Այնուամենայնիվ այդ տարիները Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության վերարտադրությունը բնութագրող «ամենաշափավոր» տարիներն էին, երբ արտագաղթը թեև կար, բայց մարդում մնալու հնարավորություն ունեւր ծնված յուրաքանչյուր երկրորդ հայը:

Մեր երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին պատերազմի ժամանակ ծանր օրեր ապրեց նաև Լեոնային Ղարաբաղը: Այդ ահեղ գոտեմարտի տարիները իրենց որոշակի ազդեցությունն ունեցան մարզի հայ բնակչության վերարտադրության ընթացքի վրա: Հայրենիքի պաշտպանության համար զորակոչվեցին մի քանի տասնյակ հազար երիտասարդներ, որոնց մոտ կեսը զոհվեց պատերազմի դաշտում: Պատերազմի թատերաբեմից հեռու գտնվող ոչ մի ժողովուրդ այդքան մեծաքանակ զոհեր չի տվել: Դրա, ինչպես նաև անընդհատ ավելացող արտահոսքի հետևանքով մարզի հայ բնակչությունը զգալիորեն կրճատվեց և 1959 թ. կազմեց 110,1 հազար (ավելի քիչ, քան 1926 թ.): Ազրբեջանցի բնակչությունը շարունակում էր ավելանալ ինչպես բնական աճի, այնպես էլ դեպի Լեոնային Ղարաբաղ կատարվող ներհոսքի շնորհիվ: Այդ ամենի հետևանքով Լեոնային Ղարաբաղի բնակչության թվակազմում հայ բնակչության բաժինը զգալիորեն նվազեց և 1959 թ. իշավ 84,4 տոկոսի, Հետագա տարիներին Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության արտահոսքը ավելի ուժեղացավ: 1959 թ. և 1979 թ. մարդահամարի ընթացքում հայ բնակչությունը ավելացավ քնդամենը 13 հազար մարդով, իսկ ազրբեջանցիների բացարձակ աճը ավելի մեծ թիվ էր, այն դեպքում, երբ ազրբեջանցիները մարզի ընդհանուր բնակչության մեջ 1959 թ. կազմում էին ընդամենը 13,8 տոկոս: Այդ տարիներին ևս այստեղ բնական աճի մակարդակը բավականին բարձր էր: Այսպես, 1960 թ. մարդում 1000 շնչի հաշվով ծնվում էր 40,5 երեխա, իսկ բնական աճը 33,3 մարդ էր: Ըստ որում Լեոնային Ղարաբաղը այդ ցուցանիշներով փոքր-ինչ զիջում էր Ազրբեջանական ԽՍՀ-ին:

Հետագա տարիների ընթացքում ԼՂԻՄ-ի բնակչության բնական աճը դրսևորվում է խիստ նվազման միտումով, որը բացատրվում է նրանով, որ մի կողմից իջնում էր ծնունդը,

իսկ մյուս կողմից՝ բարձրանում էր մահացությունը: Այդ մասին է վկայում ներքոհիշյալ աղյուսակը:

Աղյուսակ 1

ԼՂԻՄ-ի բնակչության ծնունդը, մահը, բնական աճը՝ 1951—1987 թթ. (բնակչության 1000 շնչի հաշվով)

| Տարեթվերը | ծնվածների թիվը | մահացածների թիվը | բնական աճը |
|-----------|----------------|------------------|------------|
| 1951 | 31,4 | 9,4 | 22,0 |
| 1960 | 38,0 | 7,2 | 30,1 |
| 1961 | 40,5 | 7,2 | 33,3 |
| 1965 | 34,6 | 6,6 | 28,0 |
| 1970 | 27,6 | 6,9 | 20,7 |
| 1975 | 23,6 | 8,0 | 15,6 |
| 1980 | 25,1 | 7,3 | 17,2 |
| 1985 | 24,1 | 7,7 | 16,4 |
| 1987 | 23,2 | 7,4 | 17,8 |

ԼՂԻՄ-ի բնակչության բնական աճի նման նվազումը բացատրվում է ոչ միայն սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխումով (թեև քիչ նկատելի), այլև, առաջին հերթին, երիտասարդության սրբնթաց արտահոսքով: Դա հանդեցրել է մարզի հայ բնակչության «ծերացման», որը մի կողմից իջեցրել է ծնունդը և մյուս կողմից՝ բարձրացրել մահացությունը: ԼՂԻՄ-ի բնակչության տարիքային կազմում դրսևորվող աննպաստ փոփոխությունների հետևանքով ներկայումս մարզի հայ բնակչությունը բնութագրվում է այն միտումներով, ինչ բնորոշ է երկրի եվրոպական մասի հանրապետություններին: Ըստ որում առանձնապես արտահայտիչ է մահացությունը: Օրինակ, եթե 1970—1986 թթ. Ազրբեջանական ԽՍՀ-ում բնակչության 1000 շնչի հաշվով մահացել է 6—7 մարդ, ապա ԼՂԻՄ-ում այդ ընթացքում այն կազմել է 7,5—8

5 Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Стат. сборник, Степанакерт, 1983, с. 39. НКАО 50 лет в дружной советской семье, Степанакерт, 1973, с. 36.

մարդ՝ հանրապետությունում ծննդի բավականին բարձր մակարդակի պայմաններում: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի ընդհանուր վիճակը շատ վատացավ 1970 և 1979 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում, երբ մարզի աղբյուրների բնակչության 36,3 տոկոս աճի պայմաններում հայ բնակչությունն ավելացավ միայն 1,7 տոկոսով, կամ ընդամենը 2 հազարով: Այդ տարիներին մարզում մնում էր այստեղ ծնված 10 հայ բնակիչ միայն մեկը, իսկ մնացած 9-ը հեռանում էր երկրի այլ շրջաններ: 1979 թ. մարդահամարի տվյալներով այստեղ բնակվում էր 162,2 հազար մարդ, որից՝ 123,1 հազարը կամ 75,9 տոկոսը հայեր էին, Թավական է ասել, որ բնական զգալիորեն բարձր աճի պայմաններում մարզի հայ բնակչությունը 1939—1979 թթ. պակասել էր շուրջ 10 հազարով: Այդ մասին է վկայում ներքոհիշյալ աղյուսակը:

Աղյուսակ 2

ԼՂԻՄ-ի բնակչության թիվը և ազգային կազմը մարդահամարների տարիներին (հազ. մարդ)⁶

| | 1926 թ. | 1939 թ. | 1959 թ. | 1970 թ. | 1979 թ. | 1989 թ. |
|--------------------------------|---------|---------|---------|---------|---------|---------|
| Ամբողջ բնակչությունը այդ թվում | 125,3 | 150,8 | 130,4 | 150,3 | 162,2 | 189,1 |
| հայեր | 111,7 | 132,8 | 110,1 | 121,1 | 123,1 | 145,5 |
| տոկոսներով | 89,1 | 88,1 | 84,4 | 80,6 | 75,9 | 76,9 |
| աղբյուրների | 12,6 | 14,1 | 18,0 | 27,2 | 37,3 | 40,6 |
| տոկոսներով | 10,1 | 9,3 | 13,8 | 18,1 | 22,9 | 21,5 |
| ուսուներ | 0,6 | 3,2 | 1,8 | 1,3 | 1,9 | 1,9 |
| տոկոսներով | 0,5 | 2,1 | 1,4 | 0,9 | 0,8 | 1,0 |

Այսպիսով, Աղբյուրներում հրատարակված պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ 1926—1979 թթ. Ղարաբաղի

հայ բնակչությունը ավելացել է 10,2 տոկոսով⁷, իսկ աղբյուրների բնակչությունը՝ շուրջ 3 անգամ⁸:

Ընդ որում հայ բնակչության բացարձակ աճը շատ ավելի փոքր էր, քան աղբյուրներիներին, թեև 1926 թ. հայերը իրենց թվաքանակով շուրջ 10 անգամ զերազանցում էին աղբյուրներիներին: Պարզ է, որ դա հայ բնակչության մշտապես տեղի ունեցող կաշուն արտահոսքի և աղբյուրների բնակչության ներհոսքի արտահայտությունն է: Մի՞նչդեռ, եթե մարզում ստեղծված լինեին բնակչության վերարտադրության համար համապատասխան նորմալ պայմաններ, շտեմահարվեր նրա ազգային արժանապատվությունը, որոշ արտահոսքի պայմաններում անգամ մարզի հայ բնակչությունը ներկայումս կկազմեր 350-ից 400 հազար մարդ: Հենց այդ պատճառով էլ, եթե 1926 թ. ԼՂԻՄ-ում բնակչությունը կազմում էր Աղբյուրների բնակչության 100%-ի ընդհանուր բնակչության 5,4 տոկոսը, ապա 1989 թ. մարդահամարի տվյալներով իրավ մոտ 2,7 տոկոսի⁹:

Վերջին տասնամյակներում, մանավանդ 1988 թ. ստեղծված իրավիճակը, հիմք է տալիս ենթադրելու, որ այդ պրոցեսը ավելի ու ավելի կսաստկանա, եթե երևույթների ընթացքի մեջ արմատական քաղաքական բեկում չկատարվի: Զպետք է անտեսել, որ 1988 թ. սումգայիթյան և նրան հաջորդած դեպքերի հետևանքով Աղբյուրների հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ իր նախկին բնակավայրերում, հարազատների մոտ: Այդ պատճառով էլ 1989 թ. մարդահամարի տվյալներով մարզի հայ բնակչության տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձրացավ: Պետք է նկատել նաև, որ մարդահամարից հետո այս տոկոսը, հավանաբար, իջել է, մարզում աղբյուրներիներով բնակեցված շրջաններում ինտենսիվ բնակարանաշինարարություն իրականացնելու և աղբյուրներիներով բնակեցնելու հետևանքով:

⁷ Եթե նկատի առնենք 1926 թ. մարդահամարին վերաբերող վերջ հիշատակվող արխիվային նյութերը, ապա հայ բնակչությունն այդ ընթացքում ոչ թե ավելացել, այլ նվազել է 2,4 հազար մարդով:

⁸ НКАО 50 лет в дружной Советской семье, с. 33, Численность в состав населения СССР, с. 126.

⁹ ЗСФСР в цифрах, с. 4—5, 1989 թ. մարդահամարի նյութերը:

⁶ НКАО 50 лет в дружной Советской семье, с. 33. Численность в состав населения СССР, с. 126.

Զնայած արտագրության բնույթով Լեոնային Ղարաբաղը շարունակում է մնալ գերազանցապես ագրարային (1979 թ. քաղաքներում ապրում էր բնակչության 44 տոկոսը)¹⁰ և Ազրբեջանի հումքային կցորդը, այդուհանդերձ մարզը բնութագրվում է գյուղական հայ բնակչության էական նվազմամբ: 1923—1979 թթ. մարզի գյուղական բնակչությունը պակասել է 61,3 հազարով¹¹: Հասկանալի է, որ հայ գյուղական բնակչության բացարձակ նվազող թիվը գերակշռում է հիշատակվող 61,3 հազարին, քանի որ դրա մեջ են մտնում նաև ադրբեջանցիներով բնակեցված գյուղերի բնակիչները, որոնց թիվն անընդհատ ավելանում է: Այդ տարիների ընթացքում վերացվել են մի քանի տասնյակ հայկական գյուղեր: Երևույթը շարունակվեց նաև հետագայում:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԲՈՒՆԱԳԱՂԹԸ ԿԱՍ ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԽՈՒՆԱՑԱՍ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ասել, թե Ադրբեջանում այսօր իրականացվող ցեղասպանության և, ընդհանրապես, փոքր ազգերի նկատմամբ հայաժանրի սկիզբը դրվել է Ղարաբաղյան շարժմամբ, կնշանակի մեղանշել ճշմարտության և պատմական իրականության առջև Այստեղ կիրառվող ազգային քաղաքականությունը թուրքական ցեղասպանության տրամաբանական շարունակությունն է: Ադրբեջանի պետական ու քաղաքական շատ գործիչներ ուղղակի ժառանգեցին մուսավաթական իշխանությունների ցեղասպանության քաղաքական կուրսը:

Ադրբեջանում հայ բնակչության ազգային իրավունքների սահմանափակման և խտրականության ոչ պակաս ազդակող երևույթներ տեղ են գտել պատմական Հայաստանի մասը կաղմող և հայերով բնակեցված բոլոր զանգվածներում, մասնավորապես Նախիջևանում, Շահումյանի, Դաշքեսանի, Խան-

լարի, Շամխորի, Գետաբեկի շրջաններում, մի շարք քաղաքներում՝ Գանձակում, Նուխիում, Բաքվում և այլուր:

Հիշենք հայերի նկատմամբ կիրառված օրինականության այդ խախտումներից մի քանիսի արձագանքը միութենական մամուլի էջերում¹, որոնք վկայում են հայերի հանդեպ Ազրբեջանի ղեկավարների անհանդուժողական վերաբերմունքի և ոչ քիչ ադրբեջանցիների մուսուլմանական կրոնական ֆանատիզմի դրսևորման փաստերի մասին՝ մինչև 1988 թ. «ղաբարաղյան զեպերը»: Այդ խտրականության հետևանքով է, որ ոչ միայն ՀեՍՀ-ում, այլև մեր երկրի շատ տեղերում, մասնավորապես Հյուսիսային Կովկասի ցանկացած քաղաքում, Ադրբեջանական ԽՍՀ-ից արտագաղթած շատ հայեր են ապրում:

1918—1920 թթ. հայ բնակչության վիճակը ավելի քան անհանդուրժելի եղավ Շուշիում և Նախիջևանում: 1918—1920 թթ. հայ բնակչությանը Ադրբեջանում (Բաքու, Շուշի, Նախիջևան, Գանձակ և այլուր) դաժանորեն սրի քաշեցին թուրքական օկուպանտները և մուսավաթական բանդաները: 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայ բնակչության շարքը, որը համընկավ Բաքվի կոմունայի անկման հետ, տևեց երեք օր ու գիշեր: Սպանվեցին, անհետ կորան, փողոցներում շուրջկաշներով գերվեցին հազարավոր խաղաղ, անզեն հայ բնակիչներ: Սա չի՞ հիշեցնում արդյոք այսօրվա սոււմգայիթը, բաքուն, զանձակը, շահումյանն ու կրկժանը:

Տարբերությունը ժամանակների մեջ է: Մարդատյացություն, ցեղասպանության նպատակներով գործադրվող բարբարոսական ու արնախում մեթոդների, եղկելի ոճրագործությունների իրականացման ձևերի մեջ՝ ոչ մի տարբերություն:

1918 թ. սեպտեմբերին Բաքվում երեք օր տևած շարդի ընթացքում զոհվածների ընդհանուր թիվը հասնում էր 30 հազարի², բռնաբարված ու առևանգված հայ կանանց և ղեռատի աղջիկների թիվը՝ մի քանի հարյուրի: Սրի քաշված տղամարդ-

1 Իզվեստիա, 1987, 18 ապրիլի, Սեչևալա ժիզն, 1987, 24 զեկտեմբերի 2 Ե. Ղ. Սաբալյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., 1964, էջ 413, Ա. Ցափալյան, Բաքվի հերոսամարտը և անոր պարտությունը պատախանատուները, Կահիրե, 1973, էջ 120:

¹⁰ Численность и состав населения СССР, с. 14.

¹¹ НКАО 50 лет в дружной Советской семье, с. 31. Численность и состав населения СССР, с. 126.

կանց գիակաների կողքին բունաբարձել են նրանց կանայք, մայրերը, դուստրերը, քույրերը: Մոր ու աղջկան բունաբարձել են միմյանց ներկայությունը: Ահա թե ինչ է հաղորդել «Պրավդա» թերթը 1918 թ. սեպտեմբերի 21-ին «Քաբժի ողբերգությունը» վերաուսույթյամբ հոգվածում. «...Քուրբական ու մուսավաթական գինվորները հայերի կոտորածը սկսեցին քաղաքի արվարձաններում՝ էրմենիքներում և Ան քաղաքում, ուր հայ ազգաբնակչությունը լրիվ ոչնչացված է: Այնուհետև ջարդերը տարածվեցին քաղաքի կենտրոնական փողոցներում: Հաղարավոր Քուրբ գինվորներ վխտում էին քաղաքում, ներխուժում տաղանապով ու սարսափով համակված տները, սպանում դաշույններով, ստրճանակներով, գնդակահարում տեղն ու տեղը փողոցում, վայր նետում բարձրահարկ շենքերի վերին հարկերից:

Ռուս ընտանիքները նույնպես տուժեցին: Քուրբերը նրանց մեղադրում էին հայերի նկատմամբ կարեկցանք հանդես բերելու և նրանց ապաստանելու մեջ:

Հաջորդ օրը առավոտյան հավաքվեցին փողոցներում թափված գիակաները և մեքենաներով դուրս տարան: Մյուս օրը առավոտյան ջարդը վերսկսվեց:

Քուրբական իշխանությունները, ցնծություն ապրող Քուրբ սոյաները, ռեստորաններում հարբեցողությամբ զբաղված փառաները (նուրի փառան, նաղմը և մյուսները) դիտավորյալ կերպով անցործության էին մատնված և ոչ մի փորձ չէին անում պաղանություններին վերջ դնելու համար: Այդ ժամանակ, շքեղ յուշերով ողողված միլիտնատեր Գաջինսկու տանը Բաքվի բուրժուազիան մեծարում էր նուրի-Փաշային և Քուրբական սպաներին»:

Կամ վերցնենք Շուշին, որտեղ մուսավաթական իշխանության տարիներին զարձայլ կազմակերպվեցին հայերի ջարդերը: Նախօրը հարյուրամյակի վերջին Լեոնային Ղարաբաղի այդ զոհարը բնակչության թվով Անդրկովկասի Լրբորդ քաղաքն էր (Քբլիխիից ու Բաքվից հետո): 1986 թ. հայերն ալտեղ կաղվում էին բնակչության 56,7 տոկոսը: 1916 թ. 41,1

հաղար բնակչության 59,3 տոկոսը: Երբեմնի այդ զարգացած, Ասիայի և Եվրոպայի հետ աշխույժ տնտեսական ու մշակութային կապեր ունեցող քաղաքում այսօր ոչ մի հայ չի ապրում: 1988 թ. կեսերին Շուշիում կազմակերպված հայահալած քաղաքականության հետևանքով քաղաքը լքեցին վերջին հայ ընտանիքները: 1916 թ. Շուշիում հրատարակվում էր 21 թերթ և ամսագիր, որից 19-ը հայերեն, 2-ը ռուսերեն: Իսկ այսօր՝ ոչ մեկը, ոչ էլ մյուսը: Դա թերևս արդի զարգացման մակարդակն արտահայտող շափազանց կարևոր ցուցանիշ չէ, բայց մշակութային զարգացման և հարուստ ազգային ավանդույթների վկայություն է: Մինչդեռ, տարեցտարի արժանապատվությունը վերավորելու աստիճան սահմանափակվել են հայերի ազգային և սահմանադրական իրավունքները:

Ավելի դժգոհ երևույթների ակնհայտնա դարձանք 1988—1990 թվականներին: Մա այն փորձված եղանակն է, որով կարելի է հայ ժողովրդին քշել իրենց բնօրրաններից, վերջնականապես տեղ դառնալ պատմական Հայաստանի տարածքին, հայերի ձեռքի ու մտքի արգասիք մշակութային արժեքներին, տուն ու տեղին: Կա այդպիսի փորձ Քուրբիայում, պակաս փորձ չկա նաև Ադրբեջանում: Զէ՛ որ դրանք միշտ էլ պսակվել են նրանց համար մեծ հաջողությամբ՝ դեռևս մինչև 1917 թվականը: Վ. Վորովսկին 1906 թ. «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածում, որը խմբագրեց Վ. Բ. Լենինը⁵, հենց այնպես չէ, որ հավաստում է. «...Կովկասի պրոլետարիատի շարքերում ամենագիտակից տարրերը հայ բանվորներն էին: Եվ ահա կառավարության աչքում հայերը Կովկասում դառնում են հեղափոխության այն նույն խորհրդանիշը, ինչպիսին հրեաներն էին արևմտյան կամ հարավարևմտյան Ռուսաստանում: Այդ հեղափոխական ուժի դեմ պայքարելու համար մոբիլիզացվում են թաթարները՝ Կովկասի բնակչության այն մասը, որը իր սոցիալական իրավիճակով և իր կրոնական հավատալիքներով ամենից շատ է տարբերվում հայերից, ... թաթարներին լրիվ ազատություն էր ըն-

⁴ Кавказский календарь на 1917 г. Тифлис, 1916, от статистический, с. 193.

⁵ Վ. Բ. Լենին, ԵԺԺ, հ. 11, 1977, էջ 692:

³ Պրավդա, 1918, 21 սեպտեմբերի:

ձեռվում սպանելու, բռնանալու, թալանելու»⁶։ Կենտրոնական իշխանությունների կողմից թուրքերին այդ նույն ազատությունը ընձեռվեց նաև մեր օրերում։

Վիճակագրական տվյալներով հին հայկական մարզ Նախիջևանում 1917 թ. ապրում էր 53,9 հազար հայ (բնակչության ընդհանուր թվակազմի շուրջ 40 տոկոսը)⁷։ Բայց արդեն 1926 թ. մարդահամարի տվյալներով այդ թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 (1979 թ. մարդահամարի տվյալներով 3,4 հազար էր, այսինքն բնակչության լոկ 1,4 տոկոսը)⁸։

Բանն այն է, որ թուրքական երկրորդ ներխուժման և բնակչության զանգվածային շարժերից հետո Նախիջևանի հայ բնակչությունը 1920 թ. ստիպված էր, այն էլ որբերող անգամ, թողնել իր հայրենի օջախը։

1918—1920 թթ. ջարդից փրկված և իրենց տունն ու տեղը լքած Նախիջևանցի հայերին հետագայում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո էլ ադրբեջանական իշխանությունները արգելեցին վերադառնալ իրենց բնօրրանը, թեև նրանց աները դատարկ էին, զոները փակ, հողերն անմշակ։ Ադրբեջանի և Նախիջևանի կենտրոնները բազմիցս կայացրած հատուկ որոշումներով⁹ ամեն կերպ արգելք հարուցեցին նրանց վերադարձի առջև։ Ադրբեջանական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Մուսաբեկովը 1922 թ. հունիսի 24-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահին հղած հեռագրով հաղորդում է, որ Ադրբեջանի Կենտրոնի որոշմամբ «բնակչության մասսայական մուտքը Ադրբեջանի սահմանները»¹⁰ արգելվում է։

Հետագայում այդ արգելման սկզբունքը էլ ավելի խորացվեց, և ստեղծվեցին բոլոր խոշորագույնները հայերի վերադարձը կասեցնելու համար։ Օրինակ, Ադրբեջանի Ժողկոմխորհին ուղ-

ղրված Անդրկովկասի Կենտրոնի 1926 թ. նոյեմբերի 18-ի գեկուցագրում նշվում էր, որ «Ադրբեջանը յուրացրել է արգելման սկզբունքը, և այդ հանգամանքն այնքանով է էական, որ այդ արգելման սկզբունքը կիրառվում է նրա կողմից մի ամբողջ ինքնավար հանրապետությունում՝ Նախիջևանում, որտեղ գաղթականների հարցը... ձեռք է բերել ստավել սուր բնույթ և, որտեղ այն, ավելի շատ, քան մի որևէ այլ տեղ, կարիք ունի կարգավորման գործնական և կոնկրետ միջոցառումների»¹¹։

Անդրկովկասի Կենտրոնի օրենսդիր հանձնաժողովի գնահատումներով «Ադրբեջանում գաղթականների գործի իրական վիճակն... այն է, որ Ադրբեջանն ընդհանուր առմամբ խորհրդայնացման շրջանում նրա սահմաններից հեռացած հայ փախստականներին հետ չի բնդունել, և ընդհակառակը՝ գաղթականներ է տվել թուրք փախստականների թվից, որոնք, շքանկանալով մնալ իրենց նոր բնակավայրերում, հետ վերադարձան Հայաստան»¹², 1922—1926 թթ. Նախիջևանի փախստական հայերը բազմաթիվ դիմում-բողոքներ են ուղարկում իշխանության տեղական մարմիններին, Նախիջևանից գաղթված հայերի դիմում-բողոքները՝ հայրենիք վերադառնալու վերաբերյալ, անտեսվեցին։ Ավելին, «ելնելով Ադրբեջանի օրենսդրությունից, որը իր հողային օրենսդրությունից հանել էր բուն «վերաբնակեցում» հասկացությունը և այն փոխարինել բնիկ ժողովրդի «տարաբնակեցում» հասկացությամբ, կարելի է ենթադրել, որ այդ հանրապետությունը փաստորեն չի բնդունում գաղթականների պրոբլեմը»¹³, շնայած Ադրբեջանի հեռանկարային պլանով խնդիր էր դրված «նորաբնակներ հրավիրել հարևան հանրապետություններից»¹⁴, 1922—1926 թթ. Նախիջևանի փախստական հայերը իրենց ծանր վիճակի նկարագրությամբ և նախկին բնակավայրերը վերադառնալու համախոսական խնդրանքով բազմաթիվ դիմումներ են ուղարկում Ադրբեջանի և Նախիջևանի կառավարություններին՝ ցույց տա-

⁶ В. В. Варовский, Сочинения, т. 3, М., 1933, с. 106—107.
⁷ Кавказский календарь на 1917 г., с. 215—221. Численность и состав населения СССР, с. 126.
⁸ Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., Краткие сводки, вып. IV, М., 1928, с. 127, 128. Численность и состав населения СССР, с. 126.
⁹ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀԿՊԱ), ֆ. 130, ց. 6, գ. 197:
¹⁰ Նույն տեղում, ֆ. 129, ց. 42, Կ. 3, Թ. 13:

¹¹ ՀՀԿՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, Թ. 9:
¹² Նույն տեղում, Թ. 50:
¹³ Նույն տեղում, Թ. 52:
¹⁴ Նույն տեղում, Թ. 53:

լով, որ հոգեբեր անմշակ են մեում, Պատասխան շտաբանալով նրանք դիմում են միութենական համապատասխան մարմիններին: Հայ գաղթականների դիմում-բողոքների թիվը խիստ ավելանում է 1925 թ. մարտից, առանձնապես այն բանից հետո, երբ այդ հարցով 1925 թ. մարտի 11-ին Նախիջևան է այցելում ԽՍՀՄ ԺԿԿ-ի նախագահ Ա. Ի. Ռիկովը: Այդ առնչությամբ Ա. Ռիկովը մեղադրում է Նախիջևանի կառավարության ղեկավարությունը՝ հասնում այն բանին, որ պաշտոններից ազատվում և դատի են տրվում կառավարության որոշ անդամներ: Ա. Ի. Ռիկովը կառավարությանը մեղադրեց «համատարած... այլանդակություն»¹⁵ ստեղծելու մեջ: Գործադրվեցին վճռական միջոցներ, իշխանության որոշ ներկայացուցիչներ նույնիսկ գնդակահարվեցին: Դրանից հետո հայ փախստականներն էլ ավելի ուժեղ բողոքի արժեք բարձրացրին: Ելնելով ստեղծված նոր հոգեբանական իրավիճակից, նրանք ավելի ազատ ու անկեղծ էին արտահայտվում և ավելի հաստատակամորեն էին գործում¹⁶:

1925 թ. մարտի 21-ին Նախիջևանի հայ գաղթականների մի խումբ ներկայացուցիչներ իրենց ծանր վիճակի նկարագրությամբ և նախկին բնակավայրերը վերադառնալու համախոսական-խնդրանքով դիմում են Անդրկենտրոնին: Նրանք թախանձագին խնդրում են, որ Անդրկենտրոնումը «գաղթականների գործը ինքը տնօրինի»¹⁷:

1925 թ. մարտի 21-ին Անդրկովկասի Կենտրոնում ուղարկված Նախիջևանի փախստական հայերի ղեկուցադրում, նկարագրելով Նախիջևանի հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնության արտագաղթի պատճառ դարձած իրադարձությունները և գաղթականների ծանր վիճակը, հեղինակները հայտարարում էին, որ ցանկանում են վերադառնալ հայրենիք, և, որ Նախիջևանի Հանրապետությունն իրենց ընդունելու հնարավորություն ունի: Զեկուցագրի հեղինակները տվյալներ են բերում նաև նախկինում հայերով բնակեցված առանձին գյուղերում տիրող վիճակի մասին: Այսպես, օրինակ, բերված

ցուցակում նշված էր, որ Ալիաբադ գյուղը 1917 թ. ուներ 600 հայկական ծուխ, Ապրակունիսը՝ մոտ 300 ծուխ, Հաջիվարը՝ 200, Գյուլուտը՝ 250, Զազրատը՝ 600, Եսխանը՝ 250, Ղազանչին՝ 400, Կարախանբեկուն՝ 350, Քազաքենդը՝ 240, Թճբուլը՝ 500, Շահնամուղը՝ 350 հայկական ծուխ: Նշված էին նաև տասնյակ այլ գյուղեր¹⁸: (Այս տեղեկությունների հավաստիությունը հաստատում են նաև «Կովկասյան օրացույցի» 1917 թ. տվյալները)¹⁹: Դիմորդները նշում են, որ բոլոր այդ գյուղերն ավերված են և, որ այդ ավերակների վրա ապրում են մի քանի խումբ հայ և թուրք ընտանիքներ²⁰: Նրանք, ինչպես նշվեց, խնդրում էին Անդրկովկասի Կենտրոնումին «իր ձեռքը վերցնել գաղթականների հարցը և հոգակառնների բաշխումը»²¹: Բողոքի պատճենները դիմորդները հղում են ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ Մ. Ի. Կալինինին: Համապատասխան ղեկուցադրերը, Մ. Ի. Կալինինի մակագրությամբ, ըստ ընդունված կարգի, ուղարկվում է Ադրբեջանի ԿԳԿ-ին՝ Ձևնության առնելու համար: Մինևույն է, «սալը տեղից չի շարժվում»: 1925 թ. հունիսի 26-ին նույն մարդիկ հատուկ դիմում-բողոք են ներկայացնում Ռիկովին: Նրանք ուղղակի մեղադրում են Նախիջևանի կառավարության նոր ղեկավարությունը՝ հայերի նկատմամբ բուցաբերած դիտավորությունների և ազգային խտրականության ու հալածանքի, ինչպես նաև «անընդունակության, պահպանողականության, տգիտության և հայերի նկատմամբ ազգային թշնամանք դրսևորելու մեջ»²²: Դիմումի հեղինակները ուղղակի հայտարարում էին, որ «Եթերամասի ներկայիս վարչակազմը նույնքան բացասական վերաբերմունք ունի փախստական հայերի հարցի նկատմամբ, ինչպես և նախկին Ժողովխորհրդը»²³:

Ադրբեջանի Կենտրոնումին ուղղված Անդրկովկասի Կենտրոնումի հարցադրումները վերսկսվում են միայն 1926 թ. մարտի 26-ին: Ադրբեջանի Կենտրոնումի 1926 թ. մայիսի

18 ՀՀԿՊԱ ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 66:

19 Նույն տեղում, թ. 66:

20 Նույն տեղում, թ. 66:

21 Նույն տեղում, թ. 67:

22 Նույն տեղում, թ. 68, 69:

23 Նույն տեղում:

15 Заря Востока, 12.3. 1925 г.

16 ՀՀԿՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 27:

17 Նույն տեղում, թ. 63:

Յ-ի որոշման մեջ նշվում է, որ համասարարական հողաբաշխում իրագործելու նպատակով... և նախիջևանի ԻԽՍՀ սակավահողութայն պատճառով արգելվում է նախիջևանի ԻԽՍՀ-ը վերաբնակեցնել գյուղատնտեսութայնը զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողներով և դրան համապատասխան առաջարկվում է նախիջևանի ԻԽՍՀ հողօրդկոմատին՝ հողաբաժիններ տալ միայն այն անձանց, ովքեր հանրապետության սահմաններում բնակություն են հաստատել մինչև 1925 թ. ապրիլի մեկը²⁴։ Այս որոշումը միայն անտեղյակների համար էր։ Չէ՛ որ մինչև 1925 թ. ապրիլի մեկը ոչ մի հայ չէր կարող բնակություն հաստատել նախիջևանի ԻԽՍՀ-ում ոչ միայն այն պատճառով, որ 1922 թ. սկսած Ադրբեջանական ԽՍՀ-ի այս տերիտորիան փակ էր դադարականների համար, այլև այն պատճառով, որ նախիջևանը սահմանամերձ գոտի էր և մինչև 1925 թվականի ապրիլի մեկը ոչ ոք չէր կարող առանց զբանջման բնակություն հաստատել այնտեղ։ Ահա մի օրինակ, թե ինչպես էր լուծվում, ավելի շուտ, թե ինչպես էր ամեն ինչ արվում, որպեսզի չլուծվի հայ փախստականների վերադարձի հարցը։ Հայկական Ղազանչի գյուղը, ուր մինչև հեղափոխությունն ապրում էր 400 մարդ, որոնք տեղահան էին արվել իրենց հարազատ բնակավայրերից, հատկացվել էր Զանգեզուրից գաղթած 14 թուրք ընտանիքի։ Գյուղը իսկական տերերին վերադարձնելու բազմաթիվ դիմումներից հետո ԽՍՀՄ Ժողովուրդները այդ հարցի լուծման համար կազմակերպեց շեզոք հանձնաժողով՝ սահմանային բաժնի քաղցկ Դանիլենկոյի նախագահությամբ։ Հանձնաժողովի կազմում էին Հասանը (թուրք) և Սհանովը (հայ)։ Այդ հատուկ հանձնաժողովը տեղում ծանոթանալով գործերի վիճակին, 1925 թ. օգոստոսին բնդունեց որոշում՝ Ղազանչի գյուղը հայերին վերադարձնելու մասին, որը հաստատվեց նախիջևանի Կենտրոնական կոմիտեի և ուղարկվեց Անդրկովկասի Կենտրոնական 1925 թ. նոյեմբերի 3-ին այն հաստատվեց փոքր նախագահության կողմից և հերկայացվեց մեծ նախագահության վերընական հաստատմանը։ Անդրկովկասի Կենտրոնական այդ բողոքը նախնական քննության ուղարկեց Ադրբեջանի Կենտ-

24 ՀՀԳԱ, Վ. 130, ց. 6, գ. 197, թ. 69:

րոնով, որն իր 1925 թ. դեկտեմբերի 12-ի որոշումը անհետ համարեց թուրք ընտանիքների արտաբնակեցումը և հանձնարարեց նախիջևանի Կենտրոնական «վերականգնող» հատուկ հանձնաժողովի որոշումը՝ այն շեղյալ հայտարարելու առումով։ 1925 թ. դեկտեմբերի 23-ին նախիջևանի Կենտրոնական կոմիտեի և Ժողովուրդների համատեղ նիստը համաձայնություն տվեց Ադրբեջանի Կենտրոնական այդ որոշմանը և արգյունարում Ղազանչի հայերի դիմումը մերժվեց²⁵։

Նախիջևանի փախստականների հարցը ավարտվեց 1926 թ. հունիսի 12-ին, երբ ի պատասխան 1926 թ. մարտի 12-ին Անդրկովկասի Կենտրոնական հարցումներին, Ադրբեջանի Կենտրոնական պատասխանեց՝ ներկայացնելով քաղվածքներ երկու որոշումներից։ Գրանցից մեկը նախիջևանի Կենտրոնական կոմիտեի 1926 թ. ապրիլի 26-ին ընդունած որոշումն էր, որտեղ ասված էր. «Անշարժության առնելով, որ խնդրատուները վաղուց են գտնվում թիֆլիսում²⁶, իսկ ինչպես Երևում է նախիջևանի ԻԽՍՀ-ում հողաբաշխման ավելաներից, առկա է հողի պակաս, և հենվելով Ադրբեջանի Կենտրոնականի № 5 դեկրետի վրա, խնդրատուների դիմումը մերժվում է»²⁷։ Ադրբեջանի Կենտրոնականի 1926 թ. մայիսի 29-ի որոշման մեջ նշված էր. «Նկատի առնելով, որ սակավահողության պատճառով նախիջևանի ԻԽՍՀ-ի գյուղացիությունը ապահովված չէր անհրաժեշտ քանակությամբ հողով, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հողի խիստ կարիք ունի, ցանկացած դադարականների վերաբնակեցումը նախիջևանի ԻԽՍՀ-ում տեղի գյուղացիությանը կլինի ծայրահեղ ծանր դրության մեջ, ինչպես նաև նկատի առնելով Ադրբեջանի Կենտրոնականի նախագահության 1925 թ. մայիսի 2-ի որոշումը «Հողաբաժին ստանալ ցանկացող անձանց վերաբնակեցումը նախիջևանի ԻԽՍՀ արգելելու և միայն մինչև 1925 թ. ապրիլի մեկը տեղա-

25 ՀՀԳԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 69:

26 Գևոն 1925 թ. մարտի 27-ին, Անդրկովկասի Կենտրոնականի Թիֆլիսում ծայրահեղ ծանր վիճակում ապրող նախիջևանի փախստականների ներկայացուցիչների դիմումը՝ իրենց նախկին բնակավայրերը վերադարձնելու խնդրանքով։

27 ՀՀԳԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 72:

վորված անձանց հողաբաժիններ տալու մասին»²⁸, Ադրբեջանի Կենտրոնական օրոշում է. Նախիջևանի Կենտրոնականի հզրակացությունը, որ շարադրված է նրա 26.04.26 թ. օրոշման մեջ, համարել ճիշտ՝ մերժելով խնդրատուների դիմումը, իսկ Քիֆիսում բնակվող Նախիջևանի փախստականների ներգաղթը Նախիջևանի ԻԽՍՀ համարել անհնար»²⁹:

Սակայն այս հայտարարություններն ու օրոշումները անհիմն էին: Օրինակ, ըստ Նախիջևանի կենտրոնական վիճակագրական վարչության պաշտոնական տեղեկագրի, Ալիաբադ, Ապրակունիս, Հաջիվար, Կապուտ, Կարախանբեկլու, Քաղաքենդ և Քիբուլ գյուղերը 1917 թ. ունեին 2340 ծուխ, իսկ 1925 թ. հունիսին այնտեղ կար միայն 690 ծուխ, այսինքն՝ կրճատվել էր ավելի քան երեք անգամ³⁰: Եղած, շնայած և ոչ չրիվ, տվյալների համաձայն նման իրավիճակ էր տիրում ամբողջ Նախիջևանում:

Ժամանակին հայ փախստականները տվյալներ են տվել ժխերի թվի մասին մինչև իրենց արտագաղթը: Այդ տվյալները «առավել ճշգրիտ են, քանի որ տրված են անկասկած տեղյակ մարդկանց կողմից և ընդհանուր առմամբ համապատասխանում են «Կովկասյան օրացույցի» տվյալներին»³¹:

Սակայն դրանք էլ անտեսվեցին:

Անդրկովկասի Ժողկոմխորհին ուղղված Անդրկովկասի Կենտրոնականի օրենսդիր հանձնաժողովի «Գաղթականների հարցը Անդրֆեդերացիայում» ղեկուցադրում նշվում էր, որ Նախիջևանի Հանրապետության հողային ապահովվածությունը օրյեկտիվ հնարավորություն է բնձնում փախստականներին սկզբունքորեն հետ ընդունելու և հողով բավարարելու համար³²:

Սակայն Նախիջևանի Հանրապետությունում հաստատված հայ փախստականների ընդհանուր թիվը մինչև 1926 թ. 1072 ծուխ (մոտ 5000 մարդ) էր կազմում: Նախիջևանի լիճնային գոտու մի շարք գյուղերի հայ բնակչության հետ միասին հա-

յերի ընդհանուր թիվը, ինչպես ակնարկվեց, 1926 թ. մարտահամարի տվյալներով կազմում էր 11,3 հազար, ողջ բնակչության 10,8 տոկոսը³³: Նախիջևանի Նախիջևանի գավառի բնակչության ընդհանուր թիվը 1916—1926 թթ. կրճատվեց դրեթի 30 հազարով և 1926 թ. կազմեց սոսկ 90 հազար մարդ³⁴: Այսպիսով, իրենց անմարդաբնակ գյուղերում, սեփական տներում բնակություն հաստատելու նախիջևանցիների թախանձանքն ու երազանքը մնացին անկատար: Մինչև 1988 թ. դեպքերը Նախիջևանի առանձին գյուղերում թիշ չէին դատարկ ու կիսաքանդ տները, իսկ անցյալում կանգուն շատ գյուղեր էլ ավերակների են վերածվել:

Նախիջևանի ԻԽՍՀ-ում ոչ միայն խոշրնդոտներ էին ստեղծվում հայ փախստականների վերադարձի ճանապարհին, այլ արվում էր ամեն հնարավոր բան՝ մնացած հայ ազգաբնակչությանը վտարելու համար: Այսպես, 1926—1959 թթ. Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության ընդհանուր թվի 134,8 տոկոս աճի պայմաններում հայ բնակչության թիվը կրճատվեց և կազմեց 9,5 հազար մարդ: Ընդ որում, հայերի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ կազմեց արդեն 6,7 տոկոս³⁵: 1926—1979 թթ. ընթացքում Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության 229,2 տոկոս ընդհանուր աճի պայմաններում ադրբեջանցի բնակչությունն ավելացավ 2,6 անգամ, իսկ հայերինը կրճատվեց 3,3 անգամ: Մինչև 1988 թ. նույնմբերը այնտեղ հավանաբար ապրում էր 1—2 հազար հայ: Իսկ անհրաժեշտական շրջանի Նախիջևանի գավառի 44 հայկական գյուղերից մինչև 1988 թ. նույնմբերը «հայարնակ» էր միայն մեկը՝ Ազնաբերդը: Ավաղ, սրանք ևս, հարկադրանքի տակ, հազիվ փրկվելով զինված ադրբեջանցիների շրջապատումից, 1988 թ. նույնմբերին, թողնելով առև ու տեղ, մազապուրծ փախան և մեծ մասամբ բնակություն հաստատեցին Երևանում և Վայքում: Ժամանակի ընթացքում նրանք

28 Бакинский рабочий, 1925, 6 мая.

29 224ՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 73:

30 նույն տեղում, թ. 79:

31 նույն տեղում:

32 նույն տեղում:

33 Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., краткие сводки, вып. IV, с. 127, 128.

34 Кавказский календарь на 1917 г., с. 214—221. Народное хозяйство АзССР к 70-летию Великого Октября. Баку, 1987, с. 257.

35 ЗСФСР в цифрах, ст. 4. Итоги Всесоюзной переписи населения 1959 г. АзССР, М., 1963, с. 140—141.

աները փոխանակեցին Սղեզնաձորի և Վայքի ազրբեջանական բնակիչների հետ:

Ինքնավար հանրապետությունը գտնվում է սահմանամերձ գոտում, որի հետևանքով հայերի մուտքը այստեղ գրեթե անհնար է: Մինչդեռ այն միակողմանի սերտ կապերի մեջ էր Հայկական ԽՍՀ-ի հետ: Ինքնավար հանրապետության բնակչությունն իր տնամերձ տնտեսության արդյունքն իրացնում էր և արդյունաբերական ապրանքների զգալի մասը ձեռք էր բերում հենց Հայկական ԽՍՀ-ում:

Հայաթափության այս մեթոդի տարբերակներն իրականացվեցին Ադրբեջանի բոլոր հայաշատ վայրերում և նախապատրաստվում են ավելի լայն մասշտաբներով գործադրվելու Լեռնային Ղարաբաղում: Ինչու՞ չէ: Կյանքում քննություն բռնած եղանակներով կարելի է պատմական Հայաստանը զրկել բնիկ հայ ժողովրդից, խեղաթյուրել նրա պատմությունը, յուրացնել մշակույթը, հայկական տարածքները հայտարարել ազրբեջանական, Ահա այն քաղաքականությունը, որով ղեկավարվում են Ադրբեջանի կառավարող շրջանները:

ՓՈՔՐԱԹԻՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՍԻՄԻԼՅԱՑԻԱՆ ԱՂԻԲԵՋԱՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ 1988—1990 ԹԹ. ԴԵՊՔԵՐԸ

Ադրբեջանում անհանգստացնող իրավիճակ է տիրել ոչ միայն հայերի և ուսանների, այլև ազգային փոքրամասնություն կազմող մյուս ժողովուրդների ազգային իրավունքների ուսահարման առիթով:

Տասնամյակներ շարունակ փոքրաթիվ ազգությունների ու էթնիկական խմբերի նկատմամբ Ադրբեջանում իրականացվող խտրական քաղաքականության, ճնշման և անլուր հալածանքների ամբողջ իմաստը նրա ադրբեջանականացումն է: Այդ առումով երկրում հուշակված դեմոկրատիան այստեղ յուրովի ընկալվեց: Այն ավելի աշխուժացրեց հաջևան հանրապետության բոլոր ազգայնամուլ տարրերին՝ ավելի բացահայտ դարձնելով, մասշտաբային տեսք տալով և արյունալուս բնույթ հազորդելով փոքր ազգերի նկատմամբ մինչև այդ թաքուն ձևով դրսևորվող թշնամական վերաբերմունքին:

Ադրբեջանում իրականացվող ցեղասպանությունը ժրագրված է տասնամյակներով, թելադրվում է «Ադրբեջանում մեկ միասնական ազգ ստեղծելու» քաղաքականությամբ: Այդ մասին հատուկ հոդ են տարել Ադրբեջանի իրար փոխարինող բոլոր ղեկավարները մեկ առ մեկ, առանց բացառության: Պատահական չէ, որ «Դրուժբա նարոդով» հանդեսի թղթակից Բ. Խոյուպովը գրում է. «Ադրբեջանի որոշ նախկին ղեկավարներից առիթ եմ ունեցել լսելու հանրապետությունում «մեկ միասնական ազգ ստեղծելու» անհրաժեշտության մասին»¹: Նման մտահոգությամբ այստեղ բացահայտորեն ասիմիլացվել են այլ ազգեր, ժողովուրդներ, էթնիկական խմբեր, ասիմիլացվել են հարկադիր մեթոդներով, նրանց նկատմամբ անբարենպաստ միջավայր ստեղծելով, մարդահամարների ընթացքում ազգերի սահմանադրական իրավունքները ոտնահարելով, խեղաթյուրելով իրական վիճակագրական տվյալներն ու բուն վիճակագրությունը: Այս ճանապարհով ասիմիլացվել են ու շարունակվում են ասիմիլացվել քրդերն ու թալիշները, թաթերն ու լեզգիները, զաղստանցիներն ու պարսիկները և այլ ժողովուրդներ:

Մինչև 1988—1990 թթ. ազգամիջյան հարաբերություններին նախորդող «խաղաղ» տարիներին արտաքուստ այն պատկերն էր ստեղծվել, որ հարևան հանրապետությունում «մեծ հաջողությամբ» ավարտի փուլին է հասցվել միևնույն դավանանքին պատկանող այլ ազգությունների ու էթնիկական խմբերի ձուլումը: Մինչդեռ, իրական կյանքը ավելի զորու դուրս եկավ, չքի երես հանելով փոքրաթիվ ազգությունների ճակատագրի նկատմամբ գործադրվող բռնությունները: 1926 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում ապրում էին 77,3 հազար թալիշներ, 41,2 հազար քրդեր, 37,3 հազար լեզգիներ, 28,4 հազար թաթեր, 19,1 հազար ավարներ, 15,5 հազար ցախուրիներ, 9,5 հազար պարսիկներ²: Եվ քանի որ այդ ժողովուրդները ադրբեջանցիների նման բնութագրվել են բարձր բնական աճով և նվազ շարժունակությամբ, բոլորը միասին վերցրած, այսօր պետք է հասնեին միլիոնների: Այնինչ,

¹ Дружба народов, 1989, № 2, с. 184.

² ЗСФСР в цифрах, с. 6—7.

1979 թ. մարդահամարի տվյալներով ադրբեջանցիները 1926 թ. 1 մլն 438 հազարից հասել են 4 մլն 708,8 հազարի, իսկ մարդահամարի փաստաթղթերում թալիշներ, պարսիկներ, ցախուրիներ չեն հիշատակվում: Քաթերն ավելանալու փոխարեն 1926 թ. 28,4 հազարից մնացել են ընդամենը 8,8 հազար: Ինչ վերաբերում է թալիշներին, այս նրանք պետք է որ 1926 թ. 27,3 հազարից հնգապատկվելով զերազանցեին 0,5 միլիոնը: Բայց արդեն 1979 թ. մարդահամարի նյութերում թալիշներ նույնպես չեն հիշատակվում: Հենց այդ պատճառով 1989 թ. դեկտեմբերի 29-ին Զալիլաբադ քաղաքում նրանք ոտքի ելան իրենց իրավունքների պաշտպանությանը: Սղան արլունահեղություններ:

1990 թ. Շուսվարի 14-ին Ադրբեջանի Գուսարի քաղաքում լեզգի բնակչության միտինգը (քաղաքի բնակչության 90 տոկոսը լեզգիներ են), ելնելով իր սահմանադրական իրավունքներից, առաջ քաշեց Ադրբեջանում բնակվող հարյուր հազարավոր լեզգիների վերամիավորումը Գաղստանի ԻնՍՆ-ում ապրող 300 հազար արլունակից լեզգիների հետ: Մինչդեռ 1979 թ. մարդահամարի նյութերում լեզգիները ներկայացվել են ընդամենը 158 հազարով: Դա վկայում է այդ ժողովուրդների կամ բռնի ասիմիլացման կամ մարդահամարների ժամանակ կամայականորեն, նպատակային կարգով որպես ադրբեջանցիներ գրանցելու փաստի մասին և կամ էլ ստեղծվում մի այնպիսի իրավիճակ, երբ բուրգը, թալիշը, թաթը, լեզգին... ինքն է փոխում իր ազգային պատկանելիությունը: Պատահական չէ, որ Ադրբեջանի պատմաբաններն ու ժողովրդագիրները փորձում են «գիտականորեն հիմնավորել», որ Ադրբեջանում փոքրաթիվ ազգերի ձուլման «ընթացքը» օրինաչափ երևույթ է, տվյալ տարածքում մեծաթիվ ու փոքրաթիվ ազգությունների բնական զարգացմանը հատուկ պրոցես, և,

³ ЗСФСР в цифрах, с. 6—7. Численность и состав населения СССР, М., 1984, с. 126.

⁴ Դա չի խանգարում, որ Ադրբեջանում փոքրաթիվ ազգերի նկատմամբ որպես սլավոն վերաբերման օրինակ, վկայակոչվի լեզգիների թվի աճը: Տնտեսագիտության թեկնածու Կ. Մամեդովը, շատ ինքնագուշ, նշում է, որ 1959—1979 թթ. Ադրբեջանում լեզգիների թիվը ավելացել է 61 տոկոսով: Молодежь Азербайджана, 1990, 27 марта.

դրանով իսկ մերժել այն իրողությունը, որ Ադրբեջանում փոքր ազգերի ասիմիլացումը չի իրականացվել նախապես մշակված պլանով, բռնությանը ու հալածանքով:

Նման ասիմիլացումը ցեղասպանության քաղաքականության արտահայտման ձևերից մեկն է, որ լայնորեն ընդգրկել է նույն դավանանքի պատկանող ժողովուրդներին ու էթնիկական խմբերին, թեև մարդահամարների ընթացքում տեղի ունեցող վիճակագրական փաստերի խեղաթյուրումը կատարվել է նաև բոլոր այլ ազգերի նկատմամբ: Չմտանանք, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից ԱրՄ-ի բնակչության վերաբերյալ 1926 թ. մարդահամարի նյութերը «հատուկ» սրբազրման ենթարկելու պատճառով, 140,1 հազար բնակչություն ունեցող մարզը ներկայացվեց 125,3 հազար բնակչությամբ: Այսօր էլ վիճակագրական աղբյուրներում որպես կլակետ ընդունվում է այդ թիվը: Նման սրբազրմամբ կրճատումը տեղի ունեցավ հիմնականում մարզի հայ բնակչության հաշվին: Ինչպես նկատեցինք, 1926 թ. մարդահամարի տվյալներով մարզում հայերը թեև կազմում էին 125,5 հազար, բայց «սրբազրված» փաստաթղթերում ներկայացվեց 111,7 հազար, այսինքն մարդահամարի իրական տվյալներից 13,8 հազարով ավելի պակաս:

Կարծես թե վերահիշյալ մեր հարցադրումները նկատի առնելով է, որ (որոնք զետեղվել են ՀնՍՀ ԳԱ կողմից հրատարակված «Нагорный Карабах», Ե., 1988, գրքում, պարբերական մամուլում և թերթերում հրատարակված հոդվածներում) պատմաբան Աբասովը այն միտքն է արտահայտում, որ Ադրբեջանում «ասիմիլացիան ամենից ավելի շատ շոշափել է քրդերին»⁵: Ինչ արած: Վիճակագրական անհերքելի փաստերին առարկելը զժվար է, թեև Ադրբեջանում դա ընդունված կարգ է, բայց Աբասովը ինչ-որ տեղ ուղում է «օրյակտիվ» ձևանալ: Սվ, հավանաբար, որպես ի հաստատումն քրդերի և այլ ազգությունների ասիմիլացման վերաբերյալ հարցադրումների, նույնությամբ կրկնում է մեր միտքը, նշելով,

⁴ Архив НКАО, фонд 2, оп. 1, Ед. кр. 7, л. 44—47. (ԱրՄ-ի արխիվ, ֆոնդ 2, ցուցակ 1, պահպանության միավոր 7, թերթ 44—47):

⁵ Коммунист Азербайджана, 1989, № 2, с. 85.

«Հատկանշական է, որ 1979 թ. մարդահամարի տվյալներով կազմված ժողովրդագրական տեղեկագրերում, Ազրբեջանում քրդերի թիվը չի հիշատակվում»: Ա. Աբասովը դա պատճառաբանում է, «համանաբար, հաշվի ունեցիով նրանց նվազման միտումը»:

Աբասովը թվում է, թե Աբասովը երևույթը պատճառաբանելու մի քայլ է կատարում: Բայց իրականում այդպես չէ: Ազրբեջանում ապրող էթնիկական խմբերի ձուլման պրոցեսը նա միանգամայն օրինաչափ երևույթ է համարում: Այդ դիրքերից խնդրին մոտենալիս պրոն է. «Ազրբեջանի քրդերի բնակիսն ասիմիլյացիաների (ընդգծումը մերն է— Վ. Խ.) տեղական ընթացքն իր ավարտի փուլն է թեևս հիշելու գեոևս XIX դարի վերջին: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ Անգլերի կողմից տարածքում քրդերն իրենց դավանանքով (մուսուլմաններ), տնտեսավարման ավանդական եղանակներով (ոչխարաբուծություն) շատ ավելի մոտ են ազրբեջանցիներին... ներկայումս փաստորեն քրդերն ազրբեջանցիներից չեն տարբերվում կենցաղով ու մշակույթով»⁶, նման հարցադրումով, Աբասովը և ուրիշները⁷ նախ փորձում են «գիտականորեն հիմնավորել», որ Ազրբեջանում փոքրաթիվ ազգերի ձուլման պրոցեսը օրինաչափ երևույթ է, տվյալ տարածքում մեծաթիվ ու փոքրաթիվ ազգությունների բնական զարգացմանը հատուկ երևույթ, իսկ մյուս կողմից՝ հանգիստ, առանց ազմուկի, մերձել այն իրողությունը, որ Ազրբեջանում փոքր ազգերի ասիմիլյացումը չի իրականացվել նախապես մշակված պլանով:

Ի՞նչ կա որ: Եվրոպայում միևնույն տարածքում դարերով իրար հետ կողք կողքի ապրող մեծաթիվ ու փոքրաթիվ շատ ժողովուրդներ, որոնք խոսում են տվյալ տարածքի մեծաթիվ ազգերի լեզվով (չմոռանալով սեփականը) և, որոնք իրենց կենցաղով, մշակույթով իրարից չեն տարբերվում, բայց ձուլման կամ ասիմիլյացման «օբյեկտիվ» պրոցեսի մասին երբեք չեն մտածում:

Ա. Աբասովի հարցադրումից ստացվում է, որ Հայաստա-

նում եզգիները և քրդերը հայերի հետ չեն ձուլվել զուտ այն պատճառով, որ նրանք միմյանցից տարբերվում են կրոնով, մշակույթով ու կենցաղով: Դրանում, իհարկե, բավականին ճշմարտություն կա, բայց որոշիչ պարագա է նաև հայերի ազգային քաղաքականությունը, ուր բացարձակապես բացակայում է այլ ազգեր իրեն ձուլելու որևէ մղում: ԶԷ՝ որ հենց Երևան քաղաքում ապրում են եզգիներ ու քրդեր, որոնք իրենց կուլտուրայով ու կենցաղով, հայերին լեզվի իմացությամբ (ճիշտ այդպես և ազրբեջանցիները) հայերից ոչնչով չեն տարբերվում:

Այսպիսով, շարունակելով Ա. Աբասովի «արամաբանական» այն թեզը, որ «Ազրբեջանում օրինաչափ երևույթ է դարձել նաև մյուս բոլոր փոքրաթիվ ազգերի (հայեր, ռուսներ, ուրիշներ) թվազգամի նվազումը (որին ակտիվորեն նպաստում է հանրապետությունում բոլոր մեթոդներով կիրառվող ազրբեջանացման քաղաքականությունը), կհանգենք այն պարզ հետևությունը, որ առաջիկա մարդահամարներից մեկում Ազրբեջանի բնակչության թվազգամում չեն հիշատակվի նաև ռուսները և այլ ազգություններ: Տվյալ դեպքում շատ հանգիստ կերպով, մի կողմի կողմին նաև կրոնական պատկանելիության, մշակույթի և կենցաղի տարբերությունները: Հենց ինքը՝ Ա. Աբասովը հիշատակում է, որ Ազրբեջանը աչքի է ընկնում առանձին էթնիկական խայտաբղետությամբ և դրանց թվազգամը զգալիորեն է որոշել, քանի որ նրանցից շատերը կենցաղում պահպանելով իրենց ազգային լեզուն իրենց ազրբեջանցի են համարում և համապատասխանաբար զրանցված են անձնագրերում և մարդահամարներում»⁸:

Ազրբեջանում փոքրաթիվ այլ ազգերի ասիմիլյացումը սերտորեն միահյուսվել է քրիստոնյա ժողովուրդների քեզասպանության և, առաջին հերթին, հայ բնակչությանը իրենց բնակավայրերից բռնազաղթեցնելու ակտիվ քաղաքականության հետ: Այդ քաղաքականությունը տարբեր ժամանակներում արտահայտման յուրահատուկ ձևեր է ընդունել: Անհատի պաշտամունքի և լճացման տարիներին դրանք հիմնականում

⁶ Коммунист Азербайджана, 1989, № 2, с. 83.

⁷ Եւրոպայի տեղում, էջ 86:

⁸ Молодежь Азербайджана, 1990, 27 марта.

⁹ Коммунист Азербайджана, 1989, № 2, с. 82, 83.

դրսևորվել են հետևյալ զրդապատճառների ազդեցությամբ ներքո:

Ազգային իրավունքների ոտնահարում, ազգային արժանապատվության նկատմամբ բացահայտ ու քողարկված, ուղղակի և անուղղակի արտահայտված ոտնձգությունների ու խտրական քաղաքականության կիրառում, դրանց հետ ուղեկցվող ազգային, սոցիալական, տնտեսական ու քաղաքական դարգացման բնականոն ընթացքը կանխամտածված ձևով խաթարող այնպիսի միջոցառումների գործադրում, որոնք բնորոշ չեն նույնիսկ գաղութային որևէ երկրի՝ գաղութատիրության ամբողջ պատմության ընթացքում:

Նման կարգավիճակը, եթե Ազրբեջանում բնակվող մուսուլմանական ժողովուրդներին, ինչպես նկատեցինք, հիմնականում դրդել ու մղել է բռնի ասիմիլացման, այս քրիստոնյա ժողովուրդներին դրդել է բռնագաղթի, քանի որ նրանց ասիմիլացնելու բոլոր փորձերը ի դեռե են եղել: Շատ դեպքերում, եթե արտագաղթը կամավոր բնույթ էլ է կրել, միևնույն է, հիմքում եղել է բռնությունը: Երբեք հարց չի ծագում, թե այդ ինչ պատահեց, որ 1970 և 1979 թթ. մարդահամարների միջև ընկած ընդամենը ինը տարիների ընթացքում Ազրբեջանական ԽՍՀ-ում ազրբեջանցիների թիվը 25 տոկոսով՝ 932 հազարով ավելանալու պայմաններում, ուսանքի թիվը 1970 թ. 510 հազարից իջավ 475 հազարի կամ հայերի թիվը 483 հազարից իջավ 475,5 հազարի: Բայց իրականում ուսանքը պակասել են ոչ թե 35 հազարով, իսկ հայերը 7,5 հազարով, այլ համապատասխանաբար ավելի քան 85 և 50 հազար մարդով: Փաստորեն այդ ընթացքում տարեկան, միջին հաշվով, Ազրբեջանը լքել է 9—10 հազար ուս, 4—5 հազար հայ:

Այդ պրոցեսը ավելի քան ինտենսիվ բնույթ ընդունեց 1980-ական թվականներին: Հանրապետության ընդհանուր բնակչությունը 1979 թ. 6 մլն. 28 հազար մարդուց 1989 թ. հասավ 7 մլն. 29 հազարի, այսինքն ընդամենը 10 տարում ավելացավ մեկ միլիոնով: Բայց այդ ընթացքում հայերի հետ մեկտեղ շարունակվում էին պակասել ուսանքը և ազգային փոքրամասնություն կազմող այլ ժողովուրդներ: 1970—1989 թթ., այսինքն մինչև 1988—1990 թթ. դեպքերը, հան-

րապետությունը լքել է տասնյակ հազարների կազմող ուս ազգաբնակչություն:

Ազրբեջանում ցեղասպանության արտահայտման երկրորդ ձևը ազգամիջյան հարաբերությունների սրման պահերին ցեղասպանության սպառնալիքի ազդեցության տակ մի այնպիսի իրավիճակ ստեղծելն է, երբ իր բնօրրանից բռնագաղթված հայ բնակչությունը այլևս չկարողանա վերադառնալ իր նախկին բնակավայրը: Վերաբնակեցման համար հարուցվում են ամեն կարգի արգելքներ՝ ընդհուպ հանրապետության իշխանությունների կողմից հակաիրավական ու հակասահմանադրական որոշումների ընդունումը: Այսպես եղավ 1918—1920 թթ. Գանձակի և Նախիջևանի գավառներից Հայաստան արտագաղթած հայ գաղթականների հետ: 135,8 հազար փախըստականներից իրենց բնակավայրերը վերադարձան միայն 8,3 տոկոսը (12330 մարդ)¹⁰:

Ազրբեջանում հայերի նկատմամբ կիրառվող ազգային հալածանքի և խտրական քաղաքականության հետևանքով մինչև 1988 թ. փետրվարյան բռնագաղթը արդեն էապես փոխվել էր Ազրբեջանական ԽՍՀ-ում հայ բնակչության տեղաբաշխման աշխարհագրությունը: Սովորական էր դարձել Ազրբեջանում բնակվող հայերի արտագաղթը Հայկական ԽՍՀ, միութենական այլ հանրապետություններ: Երկրի տարբեր շրջաններում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում հայ բնակչության հիմնական մասը կենսային Ղարաբաղից, Կիրովաբադից, Շահումյանից, Շուշիից, Շամխորից, Դաշքեսանից, Նանյարից արտագաղթվածներն են:

Դա, անշուշտ, «խաղաղ» զարգացման տարիներին, երբ մի քիչ այլ էր վերաբերմունքը հայ, ուս, հրեա մասնագետ կադրերի նկատմամբ: Թեև զույճ և սիրաշահող քաղաքականությունը հաճախ էր իր տեղը զիջում նրանց ազգային արժանապատվության ոտնահարմանը: Նման քաղաքականությունը բացատրվում էր մասնագետների խիստ կարիքով: Նրանք շափազանց անհրաժեշտ էին զարգացող ժողովրդական տնտեսությանը և մեծ օգնություն էին ցույց տալիս Ազրբե-

¹⁰ ՀՀԿՊԱ, ֆ. 130, ց. 6, գ. 127, ք. 40, 48:

շահում կադրերի պատրաստման գործին: Մինչդեռ այդ տարիներին սակավ էր ադրբեջանցիներից մասնագետ կադրերի, մասնավորապես տեխնիկական մտավորականությունը ներկայացնող բարձրորակ ինժեներների, տեխնիկների, նույնիսկ բարձր որակավորման քանվորների, ինչպես նաև մանկավարժների, առողջապահության, գիտության, մշակույթի, արվեստի, ճարտարապետության և ինտելեկտուալ շատ այլ բնագավառները ներկայացնող մասնագետների թիվը: Հանրապետությունում սեփական ազգային կադրերի բանակ ստեղծվելու համեմատ մշակվում է նոր վերաբերմունք այլազգի մասնագետների նկատմամբ:

Բայց քանի որ Ադրբեջանում ոչ միայն «մեկ միասնական ազգ ստեղծելու», այլև Քուրբիայի կողմից պանթուրքական նկատառումներով թելադրվող հեռահար նկրտումները իրագործելու ճանապարհին ընդդիմադիր եղան և անհաղթահարելի պատենը դարձան հիմնականում հայերը, ապա հարկավոր էր մշակել և կենսագործել հանրապետությունը հայերից «մաքրագարգելու» բարբարոսական մեթոդներ:

Ահա սա է սադրիչների կողմից հայերի նկատմամբ Ադրբեջանում ատելություն ու թշնամանք բորբոքելու «տրամաբանական» հիմքը: Այդ հեռահար նպատակի համար հայ բնակչությանը իրավազրկելու, ճնշելու և հալածելու տասնամյակներ շարունակաբար կիրառվող քաղաքականությունը հաղթական ավարտին հասցվեց 1988—1990 թթ. ընթացքում՝ ցեղասպանության բուրբ մեթոդների ու ձևերի գործադրմամբ: Խաղաղ, անզեն բնակչության՝ զառամյալների, կանանց ու երեխաների նկատմամբ կազմակերպված կարգով զենքի դորժադրումը, հայ բնակչության բռնագաղթն ու արտաքսումը դարձրեց անխուսափելի, Եվ, եթե բռնագաղթի նախորդ փուլերում սպիտակ շարժը հիմնականում իրականացվում էր առանց զենք գործադրելու, ապա այս փուլի համար բնորոշը կարմիր շարժն էր: Կարմիր շարժի հետ ուղեկցվող բռնագաղթի հետևանքով 1988—1990 թթ. Ադրբեջանից, իրենց նորրանից, տուն ու տեղից արտաքսվեցին ավելի քան 500 հազար հայ բնակչություն, որի շուրջ 368 հազարը մաղապուրժ փախան Հայաստան, մնացածը՝ երկրի այլ վայրեր, որոնցից շատերը

առ այսօր շունեն տուն ու տեղ, զբաղմունք, ապրուստ հայթայթելու որևէ միջոց և թափառական կյանք վարելով «շվում են» տեղից տեղ:

Դա ցեղասպանության արտահայտման երրորդ ձևն է, երբ շարժի հետևանքով բռնագաղթված բնակչությունը ինքն էլ ոչ մի կերպ չի ցանկանում վերադառնալ և բնակություն հաստատել իր նախկին բնակավայրում: Որ դա ցեղասպանություն է, բացատրվում է ոչ միայն զանգվածային շարժերով, մարդակերությունը բնորոշ արնախում մեթոդների գործադրմամբ, այլև նրանով, որ նախ այն նախապես պլանավորվում, կազմակերպվում ու ղեկավարվում է մեկ միասնական կենտրոնից: Երկրորդ, բռնագաղթի ու արտաքսման պատճառով բնիկ ժողովուրդը ըջվում է իր բնօրրանից, պապենական հողից, տուն ու տեղից, նման ճանապարհով հայրենիքի կորուստը նույնպես ցեղասպանություն է:

ՓՈՔՐԱՔԻՎ ԱԶԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԵՐՄՈՒՆԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փոքրաթիվ ազգերի նկատմամբ միանգամայն այլ վերաբերմունք է դրսևորվել Հայկական ԽՍՀ-ում: Այլապես ինչո՞ւ, ի տարբերություն հարևան հանրապետության, Հայկական ԽՍՀ-ում, ընդհակառակը, ավելանում էին հայկական էթնոսին շպտկանող բուրբ ազգությունները: Բնական, սոցիալ-տնտեսական պայմաններով այդ հանրապետությունները, ընդհանուր շատ գծեր ունենալով հանդերձ, տարբերվում են, սակայն, փոքր ազգերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը:

Հայկական ԽՍՀ-ում, նույնիսկ խորհրդային իշխանության առաջին տարիների ծանր պայմաններում, հարյուր հազարավոր հայ գաղթականների հարցը լուծելու հետ մեկտեղ, լուծվում էին նաև քաղաքացիական պատերազմի տարիներին Հայաստանից Պարսկաստան և Ադրբեջան արտագաղթած ադրբեջանցիների (ավելի ճիշտ թուրքերի)՝ ղեպի Հայաստան իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու հարցերը: Թուրք գաղթականների մոտ 80 տոկոսը, կարճ ժամանակու-

միջոցում, վերադարձավ և բնակություն հաստատեց Հայաստանում՝ իր նախկին բնակավայրերում: Նրանք բոլորը ապահովեցին հողով, բնակարաններով, համապատասխան գյուղատնտեսական գործիքներով: Ըստ որում աղբբեղանցիներին հատկացվող շնչային հողաբաժիններն իրենց շահերով գերազանցում էին հայերին հատկացվող հողաբաժիններին: Այդ միտումը պահպանվեց ընդմիջու: Թուրք փախստականները 1921 թ. Ղամաբլուի հեղկոմին ուղղված նամակում հաղորդում են, որ «Մաքրում և Պարսկաստանում նրանք ոչ միայն շարժանացան... նման եղբայրական վերաբերմունքի, այլև լրիվ թալանվեցին»¹: Ինչ վերաբերում է Աղբբեղանից արտագաղթած հայ գաղթականներին, ապա ինչպես նկատեցինք, Խորհրդային Աղբբեղանի ղեկավարությունը ամեն կերպ խոչընդոտում էր նրանց վերադարձը գեպի Աղբբեղան՝ իրենց նախկին բնակավայրերը: Աղբբեղանի գավառներից արտագաղթած հայ գաղթականներից, ինչպես նկատեցինք, իրենց նախկին բնակավայրերը վերադարձան միայն 8,3 տոկոսը², իսկ մնացածը մեծ զրկանքների գնով հիմնավորվեցին Խորհրդային Հայաստանում, որը այն ժամանակ ամենախիտ բնակեցված հանրապետություններից մեկն էր:

Ավելորդ չէր լինի հետադարձ հայացք ձգել 1920-ական թվականներին Հայկական ԽՍՀ-ում ստեղծված իրավիճակին, որը ավելի պարզ կզարձնի երևույթի էությունն իր ամբողջությունում մեզ:

Արևմտյան Հայաստանից կատարվող մեծ ներգաղթի հետ միասին, 1918—1920 թթ. Թուրքական զորքերի առաջխաղացման հետևանքով հայ բնակչության մեծ զանգվածները թողեցին նաև Կարսի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Կաղզվանի գավառները, այդ գաղթականները տարերայնորեն կուտակվեցին Արևելյան Հայաստանի մնացած գավառներում ու քաղաքներում: Զ. Կոբկոտյանի տվյալներով, միայն 1916 թ. Արևմտյան Հայաստանից Կովկաս անցան շուրջ 350 հազար հայ գաղթականներ, որոնցից գրեթե 200 հազարը բնակություն

հաստատեց Արևելյան Հայաստանում³: Ընդհանուր առմամբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին միայն Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան գաղթեց 500—600 հազար մարդ⁴: Բացի այդ, Արևելյան Հայաստանում հաստատվեցին 150 հազար մարդ Ցարական Ռուսաստանի հայկական մարզերից (Ղարսից, Սուրմալուից, Արզվիկից)⁵:

Գաղթականների հոսանքն իր ոլորապտույտի մեջ քաշեց նաև Անդրկովկասի հայ բնակչության մեծ մասին: 1918—1920 թթ. Անդրկովկասում իմպերիալիստական պատերազմի արհավիրքներին ավելացան ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը: Մուսավաթական Աղբբեղանը ոչ միայն շխարհագրավափերից հորդացող գաղթականության ապաստան դառնալ, այլ ինքը ևս վերածվեց հայ բնակչության արտագաղթի մեծ ոջախի: Արխիվային ոչ լրիվ տվյալներով, առաջին աշխարհամարտի և ազգամիջյան ընդհարումների ընթացքում Աղբբեղանից արտագաղթած հայերի թիվը (հաշվի չեն առնված Գանձակի բոլոր գավառները) կազմել է շուրջ 235 հազար մարդ⁶: Գանակի և Բաբվի նահանգների դաշտավայրային հայ բնակչության զգալի մասը ապաստանեց բարձրադիր վայրերում⁷: Մուսավաթական իշխանության տարիներին հայերի հետ մեկտեղ Աղբբեղանից արտագաղթում էին նաև այլ ազգություններ: Միայն 1918—1919 թթ. արտագաղթի պատճառով Աղբբեղանի ընդհանուր բնակչությունը պակասեց 401,5 հազար մարդով⁸:

Աղբբեղանում Կավէվակի⁹ ներկայացուցչի հաղորդմամբ, որը հաստատվում է Խորհրդային Ռուսաստանի արտգործո-

3 Զ. Կոբկոտյան, Ճերմակ ջարդից գեպի Կարսի շինարարությունը, Եր. 1929, էջ 31:

4 Վ. Ե. Խաչարեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828—1978), Ե., 1979, էջ 189:

5 2249Ա ֆ. 130, ց. 6, գ. 197, ք. 37:

6 Նույն տեղում, ք. 38:

7 Գ. Пичилян. Народное хозяйство и кооперация Армении, Тифлис. 1927, с. 96:

8 Материалы по экономической истории Азербайджана к V международному конгрессу экономической истории, Баку, 1970, с. 19:

9 Կավէվակ (Кевзак) Խորհրդային իշխանության օրոք ստեղծված վերականգնված հիմնարկություն:

¹ 2249Ա ֆ. 123, ց. 42, գ. 1, ք. 27, ց. 16, գ. 1095, ք. 5:

² Նույն տեղում, ֆ. 130, ց. 6, գ. 197, ք. 40, 48:

կամ Գ. Վ. Զիլբերինին կենտրոնական էվակուացիոն բյուրոյի գործակալի հզած հեռագրով, մինչև 400 հազար հայեր սովի ու թուրքերի սպառնալիքներից տեղահան են արվել և ճամփա բռնել դեպի Հյուսիսային Կովկաս: Փախստական հայերի վիճակն այնքան ծանր էր, որ, ինչպես նշվում էր այդ հազոր-դագրումներում, սովը «մարդկանց կհասցնի մարդակերու-թյան»¹⁰,

Այնուհանդերձ Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների թիվը հասավ 150 հազարի, որից մոտ 130 հազարը հայեր էին, մնացածը հույներ ու ասորիներ¹¹:

Անդրկովկասյան հանրապետություններում խորհրդային իշխանության հաստատումը, թվում էր, պետք է էպպես բա-րելյալի հայ բնակչության վիճակը: Նախիջևանի և Շարուրի գավառների գաղթականներին օգնություն կազմակերպելու գծով Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիտե-րիատի լիազորը 1921 թ. հունվարի 11-ի վերադասին հզած զեկուցագրում հաղորդում էր, որ ժամանակավոր սահմանից (Արարատ կայարանից) սկսած բնդհուպ մինչև Նախիջևան, երկաթգծի երկայնքով ընկած դուռներում կուտակվել են փա-խըստականների մեծ զանգվածներ, որոնք շարժվում են նրե-վանի ուղղությամբ¹²:

Նախիջևանի փախստականների մեծ մասը ժամանակա-վորապես ապաստանեց Զանգեզուրի գավառում, ինչպես նաև Վրաստանում: Հյուսիսային Կովկաս փախած Նախիջևանի փախստականների մի զգալի մասը վերադարձավ Հայաստան¹³:

Հայկական ԽՍՀ-ում ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության վառ վկայու-թյունն է այն, որ 1926 թ. և 1979 թ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում Հայկական ԽՍՀ-ում ինչպես արտասահմանից, այնպես էլ Ադրբեջանից, Վրաստանից և այլ հանրապետություններից հայ բնակչության ակտիվ ներ-գաղթի պայմաններում, Հայկական ԽՍՀ-ում ուսանելի

թիվն ավելացել է 3,6 անգամ, քրդերինը՝ շուրջ 3,4 անգամ¹⁴, ետրհրդային Միությունն ոչ մի հանրապետությունում այդ ըն-թացքում ուսանելի ու քրդերի աճի այդպիսի թափ չի նկատ-վել: 1959 թ. և 1979 թ. մարդահամարների ավյալներով Հայ-կական ԽՍՀ-ում ուսանելի թիվն ավելացել է 124,4 տոկոսով, եզդիների և քրդերինը՝ կրկնապատկվել է, իսկ մյուս ազ-գություններինն ավելացել է 148 տոկոսով¹⁵: Այս պրո-ցեսը շարունակվեց նաև 1980-ականի ընթացքում:

Ադրբեջանում քրդական գավառը վերացնելու հետ մեկտեղ փակվեցին հանրապետության տարածքում քրդական դպրոց-ները, վերացվեցին գիրն ու պրահանությունը, հրատարակվող թերթերը, մշակութային այլ օջախեր: Նույնը կատարվեց թալիշների և այլ փոքրաթիվ ազգությունների հետ: Հայկական ԽՍՀ-ում, բնդհակառակն, ստեղծվեցին քրդական գիր ու գրա-կանություն, մշակութային օջախեր, ազգային կադեր: Հրա-տարակվում է քրդական թերթ, քուրդ գրողների գրքեր, հան-րապետության ռադիոհաղորդումների ծրագրում տեղ են գտել ամենօրյա քրդական հաղորդումներ, ՀԽՍՀ գրողների միու-թյունում ստեղծվել է քրդական սեկցիա, ԳԱ արևելագիտու-թյան ինստիտուտում՝ քրդագիտության բաժին, դրանցում աշ-խատում և ստեղծագործում են քուրդ գրողներ ու գիտնական-ներ: Ահա թե ինչու երևանյան համաժողովրդական միտինգ-ներում հայ Լրիտասարդության սովար շարքերը խտացնում էին նաև եզդի ու քուրդ ժողովուրդների ներկայացուցիչները: Իսկ Սումգայիթում զոհված հայերի հիշատակը հարգելու հա-մար 1988 թ. մարտի 8-ին հարյուր հազարավոր հայ կանանց հետ ծաղիկները ձեռքներին, զլխահակ ու թաց աչքերով 1915 թ. եղեռնի զոհերի հուշարձանն էին այցելում եզդի ու քուրդ կանայք՝ իրենց ցավակցությունները արտահայտող տրանսպարաններով:

Հայկական ԽՍՀ-ում 1926 և 1979 թթ. մարդահամարների ընթացքում ադրբեջանցիների թիվն ավելացել է 192 տոկոսով,

¹⁰ ՀՀԳԱ, ֆ. 123, ց. 42, գ. 2, թ. 44:

¹¹ Նույն տեղում, թ. 43:

¹² Նույն տեղում, թ. 17, 19:

¹³ Նույն տեղում, գ. 6, թ. 328, գ. 10, թ. 5, գ. 11, թ. 11, գ. 15, թ. 17:

¹⁴ Советская Армения в цифрах. Статистический справочник, 1923—1927, Ереван, 1928, с. 10—11. Численность и состав населения СССР, с. 134.

¹⁵ Армения в единой семье народов СССР, с. 28; Население СССР по данным Всесоюзной переписи населения 1979 г., с. 28.

Քեկ Ազրբեջանական ԽՍՀ կառավարության խնդրանքով և միութենական կառավարության որոշմամբ 1948—1951 թթ. կազմակերպվեց Վրացական, Միջինասիական և Հայկական հանրապետություններում բնակվող 58,5 հազար ազրբեջանցիների տեղափոխությունը զեպի Ազրբեջանի¹⁶, 1959—1979 թթ. մարդահամարների տվյալներով Հայկական ԽՍՀ-ում ազրբեջանցիների թիվն ավելացավ 149,2 տոկոսով¹⁷:

ԲՆԱՃԵՍԱՐՀԻԿ ԺՈՂՈՎՐԻԿ ԴՌԻՍԱԿԱՆՆԸ

Միամիտ մարդկանց հավատացնելու մեծ հավանականությամբ Ազրբեջանում մինչև օրս, բոլոր մակարդակներով, ինչպես նաև կենտրոնական մամուլում երկար ժամանակ պրոպագանդվում էր այն մտայնությունը, որ Ազրբեջանում տեղի ունեցող երևույթները, այդ թվում հարյուրավոր կմ սառմանային խախտումները սկիզբ են առնում Լեոնային Ղարաբաղի իրազարձություններով, իսկ կոնկրետ միջնադարյան բարբարոսությունը արդարացնելու մղումով՝ ամբողջ մեղքը բացատրում են իբր թե վրիժառուությամբ լցված այն ազրբեջանցիների զայրույթի պոթենցիալով, որոնք արտագաղթել են Հայաստանից (իրենց արտահայտությամբ «արտաքսվել») և մինչև օրս հանդրվան լուսնն և թափառում են անտուն:

Այդ առումով հարկ է ամեն ինչ պարզել սկզբից և տեսնել թե ո՞վքեր էին ստիպված ավելի շուտ թողնել իրենց բնակավայրերը՝ հայե՞րը, թե՞ ազրբեջանցիները, ովքե՞ր գազանաբար հոշոտվեցին և թողած տուն ու տեղ, կայք ու հարստություն, մերկ ու տկլոր արտաքսվեցին ու դարձան փախստական, ովքե՞ր շատ հանգիստ պայմաններում արտագաղթեցին՝ իրենց հետ տանելով ողջ ունեցվածքը, ովքե՞ր անտուն ու թափառաշրջիկ դարձան և մինչև օրս բնակիր տեղից տեղ են «չվում» և ովքե՞ր չեն կողմնորոշվում բռնագաղթվածների թողած բնակարանները զբաղեցնելու ընտրության հարցում, օրի-

նակ, ընտանիքի որ մասը բնակեցնել գյուղական, որը քաղաքային բնակավայրերի ազատված բնակարաններում, ո՞ւմ հարեանները տեղն ու տեղը զավթեցին բռնագաղթված փախստականների բնակարանները՝ ընդարձակելով իրենց բունակտարածությունը:

Ազրբեջանում այսօր շատ է խոսվում այն մասին (և դարձել է մտահոգություն), թե ինչո՞ւ Հայկական ԽՍՀ-ում ապրող ազրբեջանցի բնակչությունը արտագաղթել է Ազրբեջանական ԽՍՀ: Անշուշտ, դա ցանկալի երևույթ չէր: Բայց ինչպես միշտ, այս հարցում էլ պատճառահետևանքային կապերը մի կողմ թողնելով, նկարագրվում են միմիայն հետևանքները: Ազրբեջանում այդ հարցով մտահոգվողներից ոչ մեկը երբեք հարց չի տալիս, թե ինչու դա տեղի ունեցավ: Ովքեր էին արտագաղթի կազմակերպիչները, որն է պատճառահետևանքային կապ գոյություն ունի՞ 1988 թ. փետրվարից ցայսօր Ազրբեջանի ցանկացած անկյունում կիրառվող հայահալած քաղաքականության և դրա հետևանք հանդիսացող՝ հայ ժողովրդի ցեղասպանության ու բռնագաղթի և Հայաստանից 1988 թ. նոյեմբերի վերջերին տեղի ունեցած ազրբեջանցիների արտագաղթի միջև: Ցեղասպանության հետևանքով Ազրբեջանից տեղի ունեցած բռնագաղթը, որը նախորդեց Հայկական ԽՍՀ-ից կատարվող արտագաղթին, հայ փախստականներով ողողից ոչ միայն մեր հանրապետությունը, այլև Հյուսիսային Կովկասը, մեր երկրի այլ վայրերը: Սեփական տուն, ունեցվածք ու կայքը հարկադրաբար թողած հարյուր հազարավոր անավեր հայեր դեռ այսօր էլ՝ իրենց բռնագաղթից տարիներ անց, վերջնական հանդրվան չեն գտել, չունեն տուն, աշխատանք, ապրուստի կաշուն և առայժմ հուսալի աղբյուր: Դրան ավելացավ 1990 թ. հունվարի Բաքվում հայ և ռուս ժողովրդի նկատմամբ գործադրվող ցեղասպանությունը, որի հետևանքով Բաքուն լրիվ դատարկվեց հայերից, ռուսական տասնյակ հազարավոր ընտանիքներ բռնագաղթեցին:

Ազրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը երկու տարվա ընթացքում հաջորդաբար բռնկվեց շորս փուլերով, Ցեղասպանության բռնկման ամեն մի նոր փուլ սկսվում է զանգվածային ջարդերով ու մեծ բռնագաղթով: Սվ եթե ցեղասպանության բռնկման ամեն մի

¹⁶ Материалы по экономической истории Азербайджана в V международному конгрессу экономической истории, с. 19.

¹⁷ Տեղի ուր հաղված է 1959 և 1979 թթ. մարդահամարների նյութերի հիման վրա:

նոր փուլի համար բնորոշը կարմիր ջարդն էր, ապա հարաբերական դադարի փուլերում բռնագաղթը ջարդով է ուղեկցվում մերթ քնդ մերթ: Հարաբերական դադարի բնթացքում փախստականների շարքերը նոսրանում են:

Աղբրեջանում հայ բնակչության ցեղասպանության և բրոնազաղթի սկիզբը դրվեց Մուսգալիթով: Երկրորդ փուլը սկսվեց 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ ցեղասպանության ալիքը ոլորապատույտի մեջ ներքաշեց Աղբրեջանի գրեթե ամբողջ հայ բնակչությանը: Պաշտոնական տվյալներով 1983 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1989 թ. ապրիլ ամիսը հանրապետություն ժամանեցին ավելի քան 180 հազար բռնագաղթված փախստականներ:

1989 թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկսած սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղթը: «Բնավեր ու տնավեր» փախստականների նոր վանդածներ հալածված ու անարգված, դանակահարված, խոշտանգված ու քարկոծված, մահվան սպառնալիքներից ահաբեկված ու ծեծված մասան Հայաստան: Այսպիսով, նորից իրենց բնակավայրերը լքեցին ավելի քան 30 հազար հայեր, որոնցից 20 հազարը ուղղություն բռնեց դեպի Հայաստան:

1990 թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատը, Աղբրեջանի կառավարող իշխանությունների հետ մեկ բռնեցք կազմած, ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը դարձավ Աղբրեջանից հայերի արտաքսման շորրորդ և վճռական փուլը, թեև հերթի է դրված ԼՂԻՄ-ի, Շահումյանի, Գետաշենի հայ բնակչության արտաքսումը:

Բոլորիս է հայտնի, որ Աղբրեջանում սովորական դարձած ցեղասպանության և բնակչության արտաքսման բռնկման ամեն մի նոր փուլ ավարտվում է հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարին ղեկից հեռացնելով: Այդքանը միայն: Արարքի համար ոչ մի ղեկավար աշխատող պատիժ չի կրում: Ավելին, Աղբրեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը, որը սուսմագալիթյան բանդիտիզմի, 1988 թ. Ազգամի ղեկաբերի կազմակերպիչն էր, ոչ միայն անպատիժ մնաց, այլև 1989 թ. հուլիսին, տիկնոջ հետ միասին, առոք-փառոք հանգստանում էր Զեխույազավհիայի կառույթի վարիչ հայտնի առողջարանում: Մինչդեռ այդ առող-

ջարանում հիմնականում հանգստանում են բացառապես աշխատավարձերի կուլեկտիվների ներկայացուցիչներ, բուսման կարիք ունեցող մարդիկ՝ առանց ամուսնական զույգերի:

Աղբրեջանում կոմկուսի ամեն մի առաջին նոր ղեմք, առանց այլևայլության, շարունակում է նախորդի հայահալած քաղաքականությունը: Նրանք այդ կարևոր ղեկը ստանձնելիս և նրանցից հետո, պետական և կուսակցական բարձր մակարդակներում շքախմբին ուղղություն ու տոն տվող ելույթներում, ինչ-որ մի բան նախկին ղեկավարության հետ կապելով, հաճախ նաև նրանց հասցեին շփոթ, բայց իբր թե «գաստապարտող» արտահայտություններով, ժողովուրդների «եղբայրությունը» հավաստող փբուն ղեկավարացիաներով, կուկորդիլոսյան արցունքներ թափելով, օդատարածելով թուրքական դիվանագիտության ողջ զինանոցը, տողամիջում ամբողջ մեղքը Աղբրեջանի հողերը «հափշտակելու» միտում ունեցող հայ ժողովրդի վրա բարդելու ճանապարհով «թող են փշում» բոլորի աչքին և նույնիսկ համակրանք շահում: Բայց ոչ ոք չի էլ ուզում խորանուկ երևույթի բուն էություն մեջ: Ո՞վ է ում հողերը հափշտակել, ո՞վ է իրականացրել դադարափոխության քաղաքականություն և ո՞վ է ուզում շարունակել այդ քաղաքականությունը՝ ուրիշ ժողովուրդներին կեղեքելու միջոցով: Աճ դարի երկրորդ կեսից սկսած թեև փլուզվել է դադարափոխության համակարգը համայն աշխարհում, բայց ոչ ոքի հոգսը չէ, որ Լեռնային Ղարաբաղը կեղեքվում է գաղութատիրության ճիրաններում: Ավելին, Աղբրեջանում ցեղասպանության և արտաքսման բռնկմանը հաջորդող դադարի պահերն օգտագործվում են Աղբրեջանի և աղբրեջանցիների նկատմամբ իբր թե անարդար վարվելու հարույ՜հրոցներով, «ինտերնացիոնալիստ» ներկայանալու թմբկահարմամբ, մեղքերն ուրիշների վրա բարդելու, կուրծք ծեծելու արարողություններով: Ոմանց հոգու խորքում հավատ ներշնչելու բարոյախոսական քարոզներով, երբեմն «ինքնախարաղանման» երփնեխանոց նոտաներ և տարբեր հնարքներ գործադրելու միջոցով շրջանցում են իրականությունը, քողարկում նախորդ փուլում իրենց խակ կազմակերպած ցեղասպանությունը: Ցեղասպանությունը ներկայացվում է ոչ որպես այդպիսին, այլ որպես մի սովորական ընդհարում, որում աղբրեջանցիները մեղք չունեն: Ավելին,

այդ ընդհարումը իրենք չեն «նախաձեռնել», առիթը իրենք չեն «ստեղծել»: Իսկ եթե որևէ բան էլ պատահել է, ապա ազդրեջանցիներին է պատահել: Օրինակ, աշխարհով մեկ ձայն են բարձրացրել, թե ինչո՞ւ է Բաքվում արտակարգ դրություն հայտարարվել, ինչո՞ւ է զորք մտել Բաքու և անմեղ «մարդասպանների» ձեռքը բռնելով, թույլ չի տվել, որ այդ արյունաբու գազանը «հանուն մարդասիրության» հռչակի այլ ազդության պատկանող մարդկանց բուրդին՝ մեկ առ մեկ: Աշխարհով մեկ Ազրբեջանի սաղրիչները վայնասուն էին բարձրացրել Բաքվում արտակարգ դրություն հայտարարելու մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշման դեմ: Ամիսներ անց Ազրբեջանի պրեզիդենտ Ա. Մուսթափիբովը գտնում է, որ «Հենց Ղարաբաղյան շարժման խմորումների վրա անեցին ազգայնամոլական, ծայրահեղական միտումներ, որոնք մեզ հասցրին սե հունվարին»: Ազրբեջանում իրենց իսկ ձեռքերով իրականացված բոլոր «սե գործերը», առանց կարմրելու և ամոթի որևէ զգացումի, շիկաչակիչելով որևէ հիմնավոր փաստ, բարդում են տուժող կողմի՝ հայերի վրա:

Սումգայիթ

Ազրբեջանում երբեք ճշմարիտ պատասխան չի տրվում այն հարցին, թե «փախստական» արտահայտությունը որտեղից և ինչպես քաղաքացիական իրավունք ստացավ: Ո՞ւմ հայտնի չէ, որ այն կյանք մտավ Սումգայիթով: Չէ՞ որ բուրդի աչքի առջև հայ բնակչության երեք օր տեղը շարդի ընթացքում և նրանից հետո, արդեն խոշտանգված՝ փախստական գարձավ նումգայիթում ապրող 17 հազար հայ բնակչություն: Նրանք մաղապուրժ փախան սպանդից, փախան, ով ինչպես կարող էր՝ որը ծպտյալ, որը ավտոմեքենայով, որը սարքով, բացառիկ «երջանիկներին» էլ բախտ վիճակվեց մի կերպ հասնել Բաքու և այնտեղից, տասնապատիկ ավելի վճարելով, ինքնաթիռերով փախչել Ազրբեջանից: Գա 1915 թ. ցեղասպանության շարունակությունն էր XXI դարի նախաշեմին:

Սումգայիթը նախապես պլանավորված փորձ էր հետագա

մեծամասշտաբ ցեղասպանություն իրագործելու համար: Նրա կազմակերպիչները դրանով իսկ ցանկանում էին շուրջփեղ կենտրոնական իշխանությունների, իրավապահ մարմինների, լրատվական միջոցների դիրքորոշումը: Փորձը լավ քննությունն բռնեց: Սումգայիթյան և դրան հաջորդող ղեկավարի գահիճները շրջանցվեցին, ոճիրը մնաց ստվերում, բանդիտիզմը շորակավորվեց և քաղաքական գնահատական շտապավ: Իսկ դա հղեռնագործին ավելի ոգևորելով՝ նոր ոճիրների մղեց:

Տարակույս չկա, որ «սումգայիթը» և հետագայում «բաքուն», «գանձակը», «խոջալուն», «շուշին», «աղզամը» և այլն նախապես պլանավորվել, կազմակերպվել և ղեկավարվել են մեկ կենտրոնից: Մի պահ վերանանք մոսկովյան դատավարության ընթացքում պարզված եղկելի, անմարդկային իրողությունից և դիմենք հասարակ տրամաբանությունը: Սումգայիթյան եղեռնը տեսել է երեք օր ու գիշեր՝ բուրդի աչքի առջև: Եթե դա կազմակերպված չէր ու շունք ղեկավար կենտրոն, հապա ի՞նչ էին ահում կուսակցական, պետական, խորհրդային և իրավապահ մարմինները Սումգայիթում, մեկ-երկու քայլի վրա գտնվող Բաքվում: Նրանք լոկ դիտողի պերճում էին: Ինչո՞ւ և ովքե՞ր են անջատել հայերի, միայն հայ բնակիչների հետախուսները, նախապես ճշգրտել նրանց բնակարանների հասցեները, գործարաններում սառը պենք պատրաստել և այլն, և այլն, ո՞ր «նախապես» թողնես, ո՞րը թվարկես: Ազրբեջանի ղեկավարները Բաքվում անտեղյակ էին այս բուրդին: Դա դիտավորյալ «անտեղյակություն» էր, թե՛ «մեղսագործություն»: Հավանաբար, թե՛ մեկը և թե՛ մյուսը: Մի՞թե այս մասին մեզ ոչինչ չի հուշում 1988 թ. փետրվարի 14-ի գիշերը կուսակցության ԱԳՄ-ի մարդկամի բյուրոյի նիստում Ազրբեջանի կոմկուսի Կենտկոմի քամին վարիչ Ասադովի ահազու սպառնալիքը. «Հարյուր հազարավոր ազրբեջանցիներ պատրաստ են ցանկացած պահին ներխուժել Ղարաբաղ և սպանոց սարքել»: Հետագա անցքերը ցույց տվեցին, որ սպանդը կազմակերպվել է նախապես մշակված ծրագրով և ունեցել է իր ղեկավար կենտրոնը: Գրանում ակտիվ մասնակցություն են ունեցել հանրապետական, բացառված չէ նաև կենտրոնական իշխանությունները: Այլապես ինչո՞վ բացատրել կենտրոնական իշխանությունների այն վարքագիծը, որ գր-

1 Սուլեյմանյան, Երևան, 2008, ս. 36, սկզբումբեր, էջ 11:

սևորվեց ինչպես սումգայիթյան դատավարության, այնպես էլ հետագա դեպքերի ընթացքում: Միտումնավոր քայլ չէ՞ր արդյոք սումգայիթյան դատավարության գործը 10—12 դատարանների միջև բաժանելը: Պատասխանելու համար մեք բերենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի 1990 թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ լիազումար նիստում Մ. Ս. Պետրուշենկոյի ելույթից հետևյալ երկտողը. «Ինչո՞ւ, ո՞ւմ էր ձեռնառն Սումգայիթի գործը բաժան-բաժան անելը, այն Ռուսաստանյան Ֆեդերացիայի մարզային դատարաններին հանձնելը և գրանով իսկ լավ նախապատրաստված գործի դատավարությունը հունից շեղելը: Ես երեկ ՊԱԿ-ի ղեկավարներից մեկին ուղղակի հարցրեցի. «Կազմակերպիչները բացահայտվե՞լ են»: «Այո՞, բացահայտվել են»: «Տվեք ինձ նյութերը»: «Կներեք,— ասում է,— մենք դրանք բաժան-բաժան ենք արել վերևից եկած հրամանով և հանձնել ենք հանրապետության 10—12 դատարաններին»: Եկեք բնզունենք առաջին որոշումը՝ միավորենք Սումգայիթի վերաբերյալ քրեական գործը... Եվ հանձնարարենք Գերագույն խորհրդին կրկին վերադառնալ սումգայիթյան գործին, քանզի հենց անպատժելիությունն ու անօրինականությունն են ծնել այն իրավիճակը, որն այսօր ստեղծվել է»¹: Այո՞, գործը «բաժան-բաժան է արվել վերևից եկած հրամանով»: Սումգայիթյան դատավարությունը ինչ-որ զորավոր ձեռքով միաց կես ճանապարհին:

Եվ այսքանից հետո, սումգայիթյան եղևոն ապրած և Ազրբեջանից մաղապուրծ փախած հայերին համոզում էին վերադառնալ Սումգայիթ, վերադառնալ Ազրբեջան, դա հակամարդկային էր: Թեև հետագայում Ազրբեջան վերադառնալու ավելորդ փորձեր կատարվեցին: Բայց իզուր: Պետք էր, արդյո՞ք, նորից համոզվել Ազրբեջանում հայերի նկատմամբ դրսևորվող վայրագությունների մնչ, միամտորեն հավատալ նրանց փարիսեցի խոստումներին, քո ու երեխաներիդ կյանքը ենթարկել ավելորդ վտանգի: Մի՞թե հետագա դեպքերը դա շապաղուցեցին: Իր բնակավայրը վերադառնալու հարցում փախըստականների մեծ մասը զգուշանում էր իր նկատմամբ

Ազրբեջանում զանգվածաբար դրսևորվող անարդար վիրավորանքից, հետագա անվտանգության նկատմամբ կասկածից:

Թող ամեն մի նորմալ քաղաքացի մի պահ իրեն դնի փախըստական հայի տեղը, երբ իր երեխային խոշտանգել են, կեռնն ու աղջկան խմբակայնորեն բռնաբարել, հրապարակայնորեն գործադրել ծաղր ու ծանակի բարբարոսական անմարդկային մեթոդներ, ավերել, կողոպտել իր տունն ու տեղը, սպանել, խոշտանգել, կրակի վրա խորովել հարազատներին... Ինչի՞ նման կլինի այլևս կյանքն այնտեղ, որտեղ ամեն մի քայլափոխում մարդը պիտի վերապրի այդ դժոխային մղձավանջը: Եվ առհասարակ մի՞թե հայի համար հնարավոր է ապրել Սումգայիթում և կամ Ազրբեջանում: Նրանց Սումգայիթ, իսկ հետագայում Ազրբեջան վերադառնալու պահանջը անբարոյական պահանջ էր:

Սումգայիթի վկայեց, որ ոճրագործի յուրաքանչյուր հաջորդ քայլը կմնա անպատիժ, եկել է գործելու ժամը, Ազրբեջանը հայաթափ անելու ամենահարմար պահը: Սումգայիթից հետո Ազրբեջանում ապրող հայ բնակչության ձակատարի համար «մտահոգություն» արտահայտեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը: Իհարկե, դա «մտահոգություն» էր, «մտավախություն», թե հայ ազատագրական շարժման հետագա ընթացքը կանխելու նպատակով արված անկեղծ հայտարարություն, միզուցե և սպառնալիք, այսօր դժվար է ասել: Բայց մի բան պարզ էր, որ գլխավոր քարտուղարի այս «մտահոգությունը» շատ լավ ընկալեցին Ազրբեջանում:

Այո՞, Ազրբեջանում հետագա իրագործությունները հասունանում էին կենտրոնական իշխանությունների կողմից սումգայիթյան ցեղասպանությունը վարպետորեն կոծկելու, Ազրբեջանում աստիճանաբար սանձաղեղծվող հետագա դեպքերը «չնկատելու» և, դրանք ինչ-որ ձևով «արդարացնելու» մտացածին քաղաքականությամբ: Ուստի ոչ միայն անտարբերությունը, այլ երևույթների քաղաքական գնահատական չտալը, այն շղատապարտելը, իրավախախտումների անպատժելիությունը, ազատագրական պայքարի դուրս եկած ԼՂԻՄ-ի հայ ժողովրդի ինքնորոշման հարցը շրջանցելը, կենտրոնական իշխանությունների կողմից կոնստրուկտիվ վճիռներ կայաց-

¹ Ավանգարդ, 1990, 7 մարտի:

նելու և հաբցը ինչ-որ ձևով արդարացի լուծելու փորձ անգամ չձեռնարկելը, այլև խորհրդային ժողովրդին և աշխարհի հասարակայնությանը թշուր և կեղծ ինֆորմացիաներով թյուրիմացություն մեջ գցելու հայանի միտումը, Ազրբեջանում վաչրինացիները ամբոխին մղեց նոր ցեղասպանություն: Չմոռանանք, որ այս բալտը է՛լ ավելի էր ուղևորում ու զստեպնդում զինված ու զուգազած ամբոխին, համոզում նրանց՝ հայերին ազդովին ոչնչացնելու համար իրենց «արդարացի», «սրբազան պատերազմը» մինչև հաղթական վախճան հասցնելու գործում: Այդ էին հրահրում Ազրբեջանի հանրապետական ու շրջանային թևերը, հեռուստատեսությունը, ռադիոն, լրատվական բալտը միջոցները: Ժողովրդական դանդախներին, հատկապես երիտասարդությանը, թունավորում և հրահրում էին միտինգներում, հեռուստատեսությամբ, ռադիոյով հանդես եկող վալ մտախորականները, կրոնի սպասավորները, կուսակցական, պետական ու քաղաքական գործիչները:

Ազրբեջանում հայաճալած քաղաքականությունը նկատմամբ կենտրոնական իշխանությունների վերաբերմունքը, հրապարակավ գործադրվող վաչրագությունների մտացածին քուլտուրումը, ինչպես նաև Ազրբեջանում կատարվող ոճիրները՝ դավին անտեղյակ հայ ժողովրդի վրա բարդելու բազմաթիվ փորձերը, օրենքի ու օրինականության խախտումների համար պատասխանատվության շրջանցումը հանգեցրին Հայաստանն ու ԼՂԻՄ-ը շրջափակելու, 1990 թ. Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ Ազրբեջանի կողմից շահյալարարված պատերազմական իրավիճակի և զինված բնդհարումների դրեթե սահմանամերձ բոլոր գոտիներում (Նախիջևան, Երասխ, Գորիս, Մեղրի, Կապան, Նոյեմբերյան, Շահումյան, Գետաշեն, Ազատ, Կամո, ԼՂԻՄ և այլն): Դրությունը փրկեցին ինքնապաշտպանություն ջոկատները՝ արժանանալով կենտրոնական իշխանությունների ավելորդ պարսավանքին:

Գեմոկրատիան չի կարող խորանալ ու երկար ճանապարհ կտրել օրենքներն ու օրինականությունները ոտնահարելու միջոցով: Մինչև օրս գրված ու չգրված այդ ո՞ր օրենքով է, որ մեկ ազգի ներկայացուցիչը կարող է մեկ այլ ազգի նկատմամբ բռնություններ գործադրել, հոշոտել, տնից վաղել, թալանել, անգամ սպանել, իսկ հոշոտվողը ինքնապաշտպանու-

թյան փորձ անգամ կատարելու իրավունք չունի: Եվ եթե նման պարագաներում ինքնապաշտպանությունը բնազդը մարդու մեջ գլուխ է բարձրացնում և անձը փրկելու համար հարկադրված «զանցանք» է գործում, դառնում է մեղավոր, պատժի ենթակա: Օրենքների ու օրինականության ինտատուտը չի բացառում ինքնապաշտպանությունը: Դա թելադրվում է կենդանական, անգամ բուսական աշխարհի բնազդով, էլ ուր մնաց, որ բացառվի համամարդկային օրենքներով: Մինչդեռ մեր իրականության մեջ, ամեն մեկին իր գործած դանցների շարքով օրենքի առջև կանգնեցնելու փոխարեն, աշից ու ձախից, վերևից ու ներքևից գործի դնելով լրատվական բոլոր միջոցները, ստի է հանվում արդեն ֆանատիզմով բորբոքված զանգվածը՝ ինքնապաշտպանության դիմողի ցեղը արմատից պոկելու համար: Հենց այդպես եղավ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլուր Ազրբեջանում: Օրենքի առաջ բոլորը պետք է հավասար սյուսասխան տան: Իսկ երբ որևէ առիթով այն շրջանցվում է, որևէ մեկի, որևէ ազգի նկատմամբ կիրառվում է օրենքով չնախատեսված հովանավորչական, իսկ մեկ այլ ազգի նկատմամբ հանրապետության քաղաքականություն, դեմոկրատիայի ու վերակառուցման մասին բարձր ամբոխից հնչող ամեն մի կոչ լսել ճիշ է, դատարկ Ֆրբազ: Մինչ այսօր անբացատրելի է մնում պետակ: Ին սահմանը խախտող հրոսակախմբերի և Ազրբեջանում ցնդապանության կազմակերպիչների նկատմամբ ժամանակին պատեիծ չգործադրելու անհիմն մարդասիրական վարկածը: Մարդասպանի նկատմամբ նման կեղծ «մարդասիրական» վարքագիծը մարդասիրություն և, առավել նս, դեմոկրատի: շէ: Հենց այս կեղծ մարդասիրությունն ու շինծու դեմոկրատիզմը ժամանակին չկանխելու հետևանքով հագառավոր մարդիկ գաղանաբար հոշոտվեցին, զրկվեցին կյանքից, սրախաղսող եղան, թալանվեցին, գարձան փախուտական: Հենց այս պատճառով, ի տես աշխարհի, սումգայիթը երկնեց երկվորյակներ՝ գանձակ ու բաքու, ֆերգանա ու նոր ուզեն, թրխիսի ու զրվարթնոց, դուշանբե ու սամարղանդ... Չարի դեմ դուրս գալու նման անվճռականությունը նոր շարագործություններ է ձեռում և նույնքան դատապարտելի է, ինչպես բուն շարագործությունը:

կասկած չկա, որ օրերից մի օր ճշմարտության ուսմբը կզայթի և հրապարակավ կմերկացվեն ու կզատապարտվեն Ազրբեջանում հայ և այլ փոքրաթիվ ազգերի նկատմամբ նախապես պլանավորված եղեռնի կազմակերպիչներն ու ղեկավարները: Սումգայիթը, բաքուն, գանձակը սպասում են իրենց «նյուրենբերգին»:

Բռնագաղթ և արտագաղթ

Ազրբեջանում ոչ ոքի չի հետաքրքրում, թե ուր են Ազրբեջանում՝ իրենց բնօրրանում ապրող հարյուր հազարավոր հայերը: Թե՛ դա նրանք գիտում են որպես օրինակալի երևույթ: Այլապես պետք է հարց տալին, թե ինչու Ազրբեջանական ԽՍՀ-ում (ԼՂԽՄ-ը նկատի չառած) 1979 թ. մինչև 1988 թ. գեպտերը ապրում էր հարյուր հազարավոր, իսկ այսօր՝ բնգամենը մի քանի հազար հայ բնակչություն, այն էլ պաշարված ու արտաքին աշխարհից կտրված՝ զինված հարձակումների մշտական վտանգի տակ: Զմոռանանք, որ 1979 թ. մարդահամարի տվյալներով Բաքվում ապրում էին ավելի քան 216 հազար հայեր: Կիրովաբադի բնակչության թվակազմի 17,5 (ավելի քան 40,4 հազար մարդ), Շեքի քաղաքի բնակչության՝ 58,7, Շահումյան քաղաքի՝ ավելի քան 96, Վարդաշենի ողջ բնակչությունը, Նանլարի բնակչության նկատելի հատվածը, Մինգեչաուր քաղաքի բնակչության 8,7, Սումգայիթի բնակչության թվակազմի 7,2 տոկոսը հայ բնակչություն էր: Պատկերը գրեթե նույնն էր գլխուղական բնակավայրերում: 1979 թ. հայերը կազմում էին Շահումյանի շրջանի բնակչության 63,2, Գուշգեսանի՝ 23,9, Խանլարի շրջանի՝ 18,2, Վարդաշենի՝ 9,2 տոկոսը և այլն: Իհարկե, դա 1979 թ. մարդահամարով: Իսկ այսօր...

Բայց այս բոլորը չէր խանգարում, կեղծելով փաստերը և շքեղ տեսք ընդունելով, Ազրբեջանում ընդհանուր պատկերն այնպես ներկայացնել, որ 1988 թ. Ազրբեջանից իբր արտագաղթել են մի քանի տասնյակ հազար հայեր, որոնցից իբր թե մի մասը 1989 թ. վերադարձել և ապրում էին իրենց տեղում: Ինչպես միշտ, այս հարցում էլ, գլխիվայր շրջելով իրական պատմությունը, առանց փաստերը համադրելու, պատկերն այնպես էին ներկայացնում, որ Ազրբեջանական ԽՍՀ-ից

հայերի «արտագաղթը» տեղի է ունեցել Հայկական ԽՍՀ-ից ազրբեջանցիներին «արտաքսելուց», այն՝, «արտաքսելուց» հետո և ոչ ընդհակառակը: Օրինակ, Գ. Գլուշկովը 1989 թ. օգոստոսի 9-ին «Բակինսկի ութուշի» թերթի էջերում գրում է. «Հայաստանում իրենց մշտական բնակավայրերը լքեցին, ավելի ճիշտ՝ իրենց տներինց արտաքսվեցին 160 հասար ազրբեջանցիներ: Նման քախտ վիճակվեց Ազրբեջանում բնակվող ավելի քան հարյուր հազար հայերի»¹: Փակագծերում նկատենք, Ազրբեջանի պրեզիդենտ Ա. Մութալիբովը «Սոյուզ» շաբաթաթերթի թղթակից Գ. Խրապովեցկու հետ ունեցած հարցազրույցում (1990 թ. սեպտեմբեր № 38), նշում է, որ Հայաստանից արտաքսվել են 165 հազար ազրբեջանցիներ:

Որե՛ք բան չի խանգարում, որ որոշ ժամանակ անց, վկայակոչելով Ազրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի անհանգստությունը, կենտրոնական հեռուստատեսության մեկնարան Գ. Զուբկովը 1989 թ. սեպտեմբերի 21-ին «Ժամանակ» լինֆորմացիոն ծրագրով կազմակերպված հարցազրույցում այդ թիվը հասցնի 200 հազարի: Բաքվի հունվարյան արյունահեղությունից հետո Շուշիի 1990 թ. հունվարի 21-ին հեռուստահաղորդմամբ այդ թիվը ներկայացվեց 250 հազարից շատ ավելի: Որտեղից գումարվեց այդ ավելի քան 250 հազարը, չէ որ 1988 թ. Հայկական ԽՍՀ-ում ապրում էին 156759 ազրբեջանցիներ, որոնցից 147971-ը արտագաղթել են Ազրբեջան, մնացած 8788-ը մինչև 1989 թ. վերջերը բնակվում էին իրենց բնակավայրերում: Թե ինչպես է այդ թիվը ուռճացվել, դժվար է ասել: Գուցե նրանք նկատի ունեն ա՛յն վերաբնակիչներին, որոնց իրենք կազմակերպել են ԼՂԽՄ-ի շրջակայքում բնակեցնելու և մարզը ամբողջությամբ շրջափակելու համար: Այդ դեպքում՝ ո՞վ է մեղավորը: Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության ազատազրահան շարժումը ծնկի բերելու համար ինչո՞ւ են այդպիսի արհեստական վերաբնակեցումներ կազմակերպում:

Հենց այդ հաղորդմամբ Գ. Զուբկովի բերանով դժգոհություն արտահայտվեց «200 հազար» անտուն մարդկանց վերաբերյալ: Մինչև 1990 թ. Բաքվի դեպքերը Ազրբեջանից բռն-

¹ Բակինսկի ութուշի, 1989, 9 օգոստոսի:

նազաղթել են 1,9 անգամ ավելի շատ հայեր, քան Հայաստանից արտագաղթած ազրբեջանցիներն են: Բանն այն է, որ 1988—1990 թթ. Ազրբեջանից բռնագաղթած հարյուր հազարավոր փախուստականներից 368 հազարը մեկնել են Հայաստան, շուրջ 300 հազարը մնացել են հանրապետությունում, իսկ մնացածը տեղափոխվել են հանրապետության սահմաններից դուրս: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի առնել, որ հայկական ընտանիքները փոքր են, ազրբեջանականը՝ մեծ: Ուստի նույնիսկ մինչև Բաքվի ղեպքերը հայերը ավելի քան երկու անգամ շատ բնակարաններ են թողել Ազրբեջանում, քան ազրբեջանցիները՝ Հայկական ԽՍՀ-ում:

1990 թ. հունվարյան օրերին հայերի հետ մեկտեղ Բաքվում իրենց բնակարանները թողեցին տասնչակ հազար այլազգիներ: Ներկայումս Հայաստանից արտագաղթած ամեն մի ընտանիքի Ազրբեջանում ավելի քան մեկ բնակարան բաժին է բնկնում գյուղական և ավելի քան մեկ բնակարան քաղաքային վայրերում: Նրանց հոգսը և՛ գյուղում, և՛ քաղաքում լավից լավ բնակարան գալթելն է, ընտանիքները մի քանի մասերի բաժանելու միջոցով տարբեր բնակարանների տեղ գտնալու: Չնայած Հայաստանից արտագաղթածների 90 տոկոսից ավելին գյուղական բնակիչներ են, բայց ամեն ջանք գործադրում են քաղաքներում մի քանի բնակարաններ գալթելու համար: Էլ չենք խոսում այն մասին, որ քաղաքներում դատարկվող բնակարաններից շատերը տեղն ու տեղը զբաղեցնում էին ազրբեջանցի հարևանները: Բնակարանազրկության մասին ազրբեջանցիների «հարայ-հրոցները» շինծու են: Այստեղ են ասել՝ «սայլը չի ճոռում, սայլվորն է ճոռում»:

Ճավալին այն է, որ նման շինծու մտահոգությունը և կեղծված փաստերը առատորեն զետեղվում են Ազրբեջանի մամուլում, հեռուստատեսային և ռադիոհաղորդումներում, տեղ գտնում կուսակցական զեկավար աշխատողների ելույթներում: Նման առիթները ազրբեջանական պաշտոնատար անձինք բաց չեն թողնում նաև ԽՄԿԿ Կենտկոմի պլենումներում կամ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարների, Գերագույն խորհրդի նստաշրջաններում, բանվորների, պուլազացիների ու մտավորականության ներկայացուցիչների մոսկովյան խորհրդակցությունում բարձր ամբիոններից ունե-

ցած իրենց ելույթներում: Չարդի, անմեղ մարդկանց սպառնությունների, կազմակերպած շուրջկալների, հոտային վարչագծի մասին ոչ մի խոսք: Մերթ տուժածի, մերթ անմեղի, մերթ հերոսացածի և խրատ տվող խորհրդատուի և «ինտերնացիոնալիստի» կերպարանք ընդունած հավակնություններով, մեղադրում են տուժած կողմին, պարսավում նրանց: Զավեշտ է, չէ՞: Անամոթությունն էլ ինչ-որ շափով պետք է սահման ունենա: Մինչդեռ կենտրոնական հեռուստատեսությունը հայաստացին պաշտպանելու մղումով զրգոված հարցալրույց է կազմակերպում բանաստեղծ Խալիլ Ռզայի հետ: Վերջինս ամբիոնից ելույթ ունեցող իր եղբայրներին ընդօրինակելով «ինտերնացիոնալիզմ» է քարոզում: Նա չի ժխտում այդ օրերին Բաքվում իր ունեցած դերը. կոծկելով իրականությունը, մեղադրում է կենտրոնական իշխանություններին, զինվորական ուժով մարդասպաններին ճնշելու համար: Սահմանի վրա և Բաքվում ժողովրդական ճակատի ղեկավարությամբ հրոսակախմբերը չսթ որ անընդհատ գործեցին ազատ ու անարգել, իսկ զորքի առկայությունը ելուզակներին զրկեց գործելու ազատությունից: Խալիլ Ռզան ըթաքցնելով իր մասնակցությունը Բաքվի ղեպքերին որպես կազմակերպիչ, շրջանցում է հայերի, ռուսների շարքն ու կոտորածը, թալանվելն ու գլխապատառ փախուստը և «արդարանում» է, որ ինքը «մտահոգված» էր հայերի փրկությունը: Մարդասպանը բարոյականություն է քարոզում կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրարողով: Հայերին, ռուսներին՝ ավաղակաբար խոշտանգելու կոչ է արել, և հիմա «ինտերնացիոնալիստի» դիմակ հագած «բարեկամություն» է խաղում:

Իրականությունն հեռակայն է:

Ազրբեջանական սադրիչներն իրենց դիտավորություններն իրականացնելու համար, 1988 թ. կեսերից սկսած, շատ հեռու են գնացին, դիտավորություններ, որոնք ունեցան աննախպիսի հեռուանքներ: Բաքվում, Կիրովաբադում, Շամխորի, Խանյարի, Դաշքեսանի և հայաշատ այլ վայրերում 1988 թ. կեսերից կազմակերպվեց հայերի բռնագաղթը: Այն մեծ մասշտաբներ ընդունեց նոյեմբերին: Գործի գրվեցին բոլոր մեթոդները՝ ուղղակի զինված հարձակումներ, խաղաղ, անզին բնակչության, այդ թվում կանանց, երեխաների ու ծերերի

նկատմամբ կիրառվող անմարդկային Գալաժանքներ, ծեծ, բնակարանների հրկիզումներ և այդ բոլորը տեղ-տեղ էլ ուղեկցվում էր ջարդերով ու բռնաբարության դեպքերով: Լուրջ սպառնալիքի տակ դրվեց Ազրբեջանում հայ բնակչության ֆիզիկական գոյությունը: Ընդհարումներ տեղի ունեցան հայ բնակչությանը պաշտպանելու համար տեղերը ժամանած զինվորականների հետ: Հայ մարդկանց հետ զոհվեցին նաև իրենց պարտքը կատարող անմեղ զինվորականները:

Երևույթները դարձյալ նմանեցնելու շար դիտավորությանը 1988 թ. վերջերին և 1990 թ. հունվարին կենտրոնական մամուլում հրապարակված հոդվածներում գրվում էր այն մասին, որ իբր թե Հայկական ԽՍՀ-ում նույնպես եղել են զինվորների գահավիտե դեպքեր: Բարեբախտաբար ՀԽՍՀ-ում ոչ մի զինվորի «մազին կաշելու» փորձ անգամ չի եղել: Բայց ինչպես արդեն ասվել է, դա բնավ էլ չխանգարեց, որ բարձրատիճան ուսադիրներ կրող Պ. Ստուգենիկինը զրպարտիչ հոդված ապագրի «Կոմսոմոլսկայա պրավդայի» էջերում՝ Երևանում իբր թե խորհրդային զինվորներ սպանելու մասին: Բարեբախտաբար, այդ զրպարտությունն արժանի հակահարված ստացավ մամուլում: Բայց ի՞նչ արած, դա դաս չեղավ: Հետագայում «Սովետսկայա Ռոսիա» թերթի էջերում նա հանդես եկավ դարաբաղչան շարժմանը նոր պիտակներ կպցնելու բարբառանքներով: Ավելին, վկայակոչելով ՏԱՍՍ-ին, 1990 թ. կենտրոնական մամուլում և հեռուստատեսությանը զրպարտիչ հաղորդումներ եղան Հայկական ԽՍՀ-ում ոչ միայն զինվորականներ սպանելու, այլև զինվորականների ընտանիքներ արտաքսելու մասին: ՏԱՍՍ-ը հեռագայում այդ շինծու և ստահող հաղորդման համար ներողություն շնորհեց, ոչ ոքի չպատժեց, բայց ինչ-որ մի թեթև ակնարկ արեց այն մասին, որ Հայկական ԽՍՀ-ում զինվորների նկատմամբ լավ վերաբերմունք է ցույց տրվում:

Սադիստական բոլոր մեթոդների գործադրումը 1988 թ. նոյեմբերի վերջերին հանգեցրեց Բաքվից, Կիրովաբադից, Շամխորից, Խանլարից, Իսմայիլից, Դաշքեսանից և հալաչատ այլ վայրերից հայ բնակչության զանգվածային արտաքսմանը:

Հայկական ԽՍՀ ժողովրդական ղեկավարների տեղական խորհուրդների ավյալներով 1988 թ. նոյեմբերի 22-ից մինչև

1989 թ. հուլիսի վերջը հանրապետություն ժամանեցին ավելի քան 198898 հայ փախստականներ՝ դրանցից շուրջ 35 հազարը նախապես հանգրվանեցին Երևանում, 27 հազարը՝ Մասիսում, ավելի քան 10 հազարը՝ Արարատում, 11 հազարը՝ Վարդենիսում, 8 հազարը՝ Հրազդանում, 8 հազարը՝ Արովյանում, մոտ 5 հազարը՝ Կրասնոսելսկում, իսկ մնացածը հանրապետության գրեթե բոլոր շրջաններում, բացառությամբ աղետի գոտու: Սկզբում աղետի գոտում նույնպես հանգրվան գտան տասնյակ հազարավոր փախստականներ, սակայն ճակատագիրը այստեղ էլ նրանց չժպտաց: Փրկվածների որոշ մասը վերաբնակվեցին հանրապետության այլ շրջաններում: Եղան փախստական շատ ընտանիքներ, որոնք Հայկական ԽՍՀ-ից արտագաղթեցին Կովկաս, մասնավորապես Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասեր:

Վարդենիս ժամանած բազմաթիվ փախստականների հետ տարբեր առիթներով տեղի ունեցած զրույցներից պարզ դարձավ, թե 1988 թ. հայ բնակչության տեղահանությունը դրուխ բերելու հարկադրանքի ինչպիսի մեթոդներ են գործի դրվել:

Շամխորի շրջանի Լեոնային Զագիր գյուղի հայ ընտանիքները, որոնք մի կերպ փախուստի դիմելով՝ ապաստանել են Վարդենիսի շրջանի Շիշկայա գյուղում, պատմում էին (Սալադ Հարությունյան, Արայում Դարաղյան, Ղազար Պետրոսյան, Արսեն Սահակյան և ուրիշներ), որ փախուստից երկու օր առաջ գյուղ են ժամանել Շամխորի կուսըղիմի երկրորդ քարտուղարը և շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալը և առաջարկել երկու օրվա ընթացքում թողնել գյուղը: Երկու օր անց, 1988 թ. նոյեմբերի 22-ին նրանք նորից են գյուղ ժամանել և հրամայել երկու ժամվա ընթացքում ավտոբուսով անհապաղ ճանապարհվել: Այդ նպատակով նրանք իրենց հետ բերել էին ավտոբուսներ, Բայց նման առաջարկությունն ընդունվել է քար լուսնյամբ: Մարդիկ խնդրել են իրենց Հայաստան ուղարկել բեռնատար ավտոմեքենաներով՝ իրերը տեղափոխելու նպատակով: Այդ մասին կուսըղիմի երկրորդ քարտուղարը հեռախոսով տեղյակ է պահել առաջին քարտուղարին: Շրջկենտրոնից Լեոնային Զագիր են ժամանել 70 բեռնատար ավտոմեքենաներ, 3—4 ընտանիքներին տրամադրվել է

մեկ ավտոմեքենա, պայմանով, որ փախստականները իրենց հետ վերցնեն միայն երկու օրվա ուսելիք և անկողին: Մինչ մեքենա տրամադրելը առաջարկվում է դիմում գրել, իբր թե «կամոյին» գյուղը թողնելու մասին: Հրամարվողներին սպառնում են գրկել փոխադրամիջոցներից: Ավելին, դիմումը գրում են նախապես մշակված ձևին համապատասխան: Շրջանի ղեկավարությանն ուղղված դիմումում փախստականն անպայման պետք է պատրվակի, որ ինքը արտագաղթում է «կամավոր», և նրա այդ բայը թելադրված է ՂԴՄ-ում ստեղծված արտակարգ իրավիճակով: Այդ ընթացքում խորհունտեսուլթյան գիրեկտորից վերցրել են կնիքը: Այդպես են վարվում նաև կուսակազմակերպության քարտուղարի հետ:

Այնուամենայնիվ, վարորդներին կաշառելով հաշտվում է բարձել ունեցվածքի 30—40 տոկոսը, շնայած վարորդներին որպես փոխադրավարձ նրանք շատ թանկ էին վճարել: Ավտոմեքենայի թափքում փախստականների իրերը տեղավորել են իրենք՝ ազդեցական Վարորդները: Փախստականներին ուղարկել են ավտոբուսներով, նրանցից որևէ մեկին թույլ չտալով ուղեկցել իրենց իրերը փոխադրող ավտոմեքենաներին: Եվ ահա, բեռնատար ավտոմեքենաները գիշերը կանգնել են Չարդախլու գյուղից քիչ հեռու ընկած «Յասամանի» անտառում՝ պատրվակելով ճանապարհը շարունակելու վտանգավորու-

1 Ի գեպ, ԽՄԿԿ կենտրոնի օրգան «Գիալոգ» ամսագրի 1990 թ. 5-րդ համարում լույս է տեսել մի հոդված, որ բազմաթիվ այլ հորինված եզրակացությունների հետ տեղ է գտել ականջ ծակող մի բանասերկություն: Իբր թե Հայկական ԽՄԿ-ից արտագաղթած ազդեցականներից յուրաքանչյուրը որպես փոխադրավարձ հայ վարորդներին ամեն մի կիլոմետրի համար վճարել է 100 ուսլի գումար: Մարդ-կիրումները.— եզրակացնում է հոդվածագիրը,— բազմապատկելով արտագաղթողների թվով և փոխադրավարձով «կատարյալ միանգամայն պատկառելի մի գումար»՝ ավելի քան 3 մլրդ ուսլի: (ՏԿ՝Ն Նշված ամսագիրը, էջ 65): Ստացվում է, որ արտագաղթող բոլոր ընտանիքները անխտիր այնքան հարուստ են եղել, որ նրանցից յուրաքանչյուրը որպես փոխադրավարձ վճարել է 100 հազար ուսլի: Սուտն էլ իր սահմանը կունենա:

Մարդ ակամա վերհիշում է հայց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը, որտեղ մեկն ասում է, որ իր հայրը մի զագանուկ ուներ, որ սէտեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում: «Ի՞նչ պատն էլ մի շիրուխ ունեք.— ասում է թագավորը.— մի ձեռք բերանին էր դնում, մյուս ձեռք մեկնում, արեգակիցը վառում»:

Յյունը: Եվ քանի որ ավտոմեքենաներում իրերը բարձող վարորդները դիտեն՝ ո՞ր թանկարժեք իր մեքենայում որտե՞ղ են տեղավորվել, բոլորը թալանել և պահել են անտառում: Այդ մասին փախստականները իրազեկ են դարձել Ղազարխի և Իջևանի սահմանագլխին՝ մեքենաները բեռնաթափելիս: Արդեն ուշ էր և այլևս ոչինչ անել հնարավոր չէր: Ավելի անմարդկային է եղել վերաբերմունքը նույն շրջանի Սալեր գյուղի 536 շինց բաղկացած 236 ընտանիքներին նկատմամբ: Արտաքաղաքները գծող էին, որ այնտեղ թողել են սառնարան, հեռուստացույց, փեթակներ, կահ-կարասի: Չափազանց մշտահոգված էին գրքերի համար, որոնց սպասվում էր գաժան ճակատագիր: Չէ՞ որ դրանք հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով գրքեր էին: Միևնույն է, դրանք հայերի գրքերն էին և պետք է մուր ու մոխիր դառնային...

— Ինչ կլինի մեր գրքերի հետ,— ծանր հոգոցով մրմնջում էին ուսուցիչներ Իլիչ Սահակյանը, Սարգիս Բեկյանը և ուրիշները, որոնք ետյնպես իջևանել էին Վարդենիսի շրջանի Շիշկայա գյուղում:

Աննկարագրելի էր Իսմայիլիի շրջանի Կիբբ և Քյալբանդ գյուղերի բնակչության վիճակը: Ահա թե ինչ էր պատմում Կիբբ գյուղի բնակիչ, ուսուցիչ Վաչագան Գրիգորյանը: Նույնմբերի 22-ին ազդեցականները պաշարում են Կիբբ գյուղը: Այստեղ են հավաքվում նաև Քյալբանդ փոքրիկ գյուղի բնակիչները: Նրանք 5 օր անընդհատ ենթարկվում են հրազենային հարձակումների: Տեսնելով, որ ծանր իրավիճակից զուրս գալու էլք չկա, Վաչագան Գրիգորյանը հեռախոսով դիմում է Սրջոնիկիձեքի խորհանտեսության (որի մեջ մտնում են Կիբբ և Քյալբանդ գյուղերը) գիրեկտորին և հայտնում, որ եթե շարունակեն պաշարումը և հրազենային կրակոցները, ապա իրեք այս-տրատ են գյուղը հրկիզել և սարերով ճանապարհվել դեպի Հայաստան կամ Ռուսաստան: Գյուղի բնակչության մի զգալի մասը գիշերում էր անտառում: Այս բոլորից հետո միայն դալիս են ընդհանուր համաձայնության: Պայմանը նույնն է՝ «ընկ դիմում, իբր թե Վերենց կամքով» հեռանում են գյուղից: Միայն այդպիսի դիմումի առկայության դեպքում 2—3 ընտանիքի տրամադրվում է մեկ բեռնատար ավտոմեքենա և 1—2 ժամ ժամանակ:

Այդ նույն բախտին են արժանանում նաև Իսմայիլի շրջանի և այլ գյուղերի բնակիչները: Կոշաբենյ գյուղի բնակիչ Խարայել Գարաղյանը (այժմ բնակվում է Վարդենիսի շրջանի Կվքենդ գյուղում) պատմում է, որ նույնների սկզբներից սկսած 60—70 ադրբեջանցի երիտասարդներ մտել են գյուղ և արտագաղթելու սպառնալիք տվել: 1988 թ. նոյեմբերին դա սովորական բնույթ է ընդունել և հարկադրել Կոշաբենդ գյուղի բնակիչներին՝ դիմել փախուստի: Սկզբում փոխադրամիջոցները հազարավոր ընտանիքների տեղափոխել են մինչև Ղազախ՝ Հայկական և Ադրբեջանական հանրապետությունների սահմանագլուխ, որտեղից Հայկական ԽՍՀ-ի մեքենաներով ներքանք փոխադրվել են հանրապետության տարբեր շրջաններ:

Գաղջեսանի Զազլեկ գյուղի բնակիչներ Նիկոլայ Խոշոյանը, Գեորգի Գասպարյանը, Հովհաննես Անտոնյանը վկայում են, որ ադրբեջանցիների կատարած հարձակումներից պաշտպանվելու համար հայ երիտասարդությունը թեև օր ու դիշեր հերթապահում էր գյուղի շրջակայքում, բայց այլևս գյուղում մընալն անհնար էր: 1988 թ. նոյեմբերի 22-ին շրջաօրհորի գործկոմի նախագահը Զազլեկ գյուղի գյուղխորհրդի նախագահի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում սպառնալից առաջարկում է թողնել գյուղը, այլապես ոչ մի հայի կյանքի համար ոչ ոք պատասխանատվություն չի կրի: Չսպասելով պատասխանի, չուրաքանչյուր 2—3 ընտանիքի համար ուղարկվել է մեկ մեքենա, պատրվակելով, որ համաձայնություն կա Վարդենիսի շրջանի Փամբակ գյուղի ադրբեջանցիների հետ բնակարանները փոխանակելու համար: Գալով Փամբակ, հայտնի է դարձել, որ նման համաձայնություն չկա: Թեև մի քանի ընտանիքներ տեղն ու տեղը բնակարանները փոխանակելու վերաբերյալ համապատասխան պայմանագրեր են կնքել, այնուամենայնիվ երկար ժամանակ Փամբակի, ինչպես նաև Վարդենիսի շատ գյուղերում բնակություն հաստատածների մեծ մասը փշերի վրա էր: Օրը մի փախուստական էր հայտնվում, մի նոր պայմանագրով՝ արդեն վաղորոք պայմանագրով փոխանակված տան համար:

Մամուլի հրատարակումներից հայտնի է, որ 1988 թ. նոյեմբերին իրավիճակը շատ ավելի ահարկու էր Բաքվում, Կիրովարաղում, Նախիջևանում և այլ քաղաքներում, ուր եղել են

սպանությունների դեպքեր, զինված ընդհարումներ՝ խաղաղ հայ բնակչությանը պաշտպանող խորհրդային զինվորների և ադրբեջանցի խաժամուժի միջև:

1988 թ. նոյեմբերին և ապա 1989 թ. Բաքվում և Կիրովարաղում փողոց դուրս գալը զստում է անհնար: Օրերով մարդիկ մնում են առանց հացի, առանց սննդի: Խուժանք հետապնդում էր հայերին, տեղահան ու շարդուհշուր անելով ներանց տան դռները՝ մտնում էր տնից տուն, թաղամասից թաղամաս, հաճախակի են դառնում բնակարանների հրկիղումները, թալանը, հայ կանանց և աղջիկների առևանգման ու բռնաբարության դեպքերը: Երիտասարդ կանանց ու աղջիկների մերկացնելով, անարգելով քշում են քաղաքի փողոցներով: 1988 թ. նոյեմբերի երկրորդ կեսին, հայ թաղամասերի վրա զինված հարձակումների հետևանքով, Կիրովարաղում հայ կանայք, երեխաներ ու ծերունիներ հագիվ կարողանում են պատսպարվել հայկական եկեղեցում՝ օղտվելով զինվորականների պաշտպանությունից: Մի քանի օր եկեղեցում պաշարված մնալուց հետո նրանք զինվորների ուղեկցությամբ, Հայկական ԽՍՀ-ից ժամանած օդանավերով, փոխադրվում են Երևան:

Ահա թե ինչ է պատմում Կիրովարաղի բնակիչ (Ու. Հաջիրեկովի փողոց, տուն 15, բնակարան 5, թողակառու, 1955—1958 թթ. Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր) Զարուհի Ավետիսի Աղաջանյանը: Նոյեմբերի 21-ին (թի՞ 23-ին, լավ չի հիշում տարեց տատիկը) մի խումբ երիտասարդներ մուտք են գործում շենք՝ փնտրելով հայերի բրնակարանները: Այդ շենքում ապրում էր երեք հայ ընտանիք: Ադրբեջանցի հարեանուհիները Ազնիվ տատիկին ծայայալ հանձնում են զինվորներին: Նրան հաջողվում է օդանավով երիտանների հետ փոխադրվել Երևան, մեկ սեյականոց բնակարանում թողնելով հասարակ կահ-կարասի, շորս ձեռք անկողին, մեկ գորգ, 2000 ռուբլի դրամ և այլ իրեր: Բնակարանը փոխանակել չի կարողանում և բնավեր ապրում էր Վարդենիսի Սովետակերտ գյուղում, քոռ աղջկա տանը:

Ասել, թե Ադրբեջանում 1988 թ. ընթացքում բոլորն էին շահագրգռված հայ բնակչության արտագաղթով՝ ճիշտ չի լինի: Դիցուկ, 1988 թ. Խանլարում և մի շարք գյուղերում արտա-

գաղթի նյութակերպ հայ բնակչության նկատմամբ հալածանքի գեղեցիկ սուր բնույթ չեն ստացել, և բնակիչները շատ դեպքերում արտագաղթել են առանց արտառոց փաստերի առաջ կանգնելու: Խանյար և Զուռնաբաղ (Ոսկանաբաղ) գյուղերը երկար ժամանակ պաշտպանել են տեղի ազրբեջանցիները: Այնուամենայնիվ խուժանը, հարմար պահ որոնելով, անհանգիստ իրավիճակ էր ստեղծում, ջարդելով հայ բնակիչների տների ապակիները, դռները, քարկոծում մարդկանց:

1988 թ. Ազրբեջանից մաղապուրծ փախած և երկրով մեկ ցրված հարյուր հազարավոր փախստական ու անօթևան հայերի հետքերն իսպառ կորցնելու, դատարկ տներն ու նրանց ունեցվածքը տիրելու նպատակով ազրբեջանական սազրիչները կազմակերպեցին նաև Հայաստանից ազրբեջանցիների արտագաղթը: Այն սկզբում կրում էր ուղղակի պրոֆոկոնցիոն բնույթ և հետագայում էր այսպես կոչված «հավասարակշռվածություն» ստեղծելու նպատակ, Բայց, երբ Հայաստանն այլևս անկարող էր դիմակայել Ազրբեջանից արտաքսված հայ զաղթականների՝ ափերից հորդացող ալիքի առջև, կամասկամա ազրբեջանցիների արտագաղթը իրական կերպարանք ստացավ:

Ազրբեջանում տեղական իշխանությունների «կազմակերպչական» ակտիվ գործողությունների հետևանքով Վարդենիսի շրջանի տարբեր գյուղերի ազրբեջանցի բնակիչների ներկայացուցիչների առաջարկով Ազրբեջանի հայ բնակչության հետ կապացվում էր նախնական պայմանավորվածություն՝ երկու հանրապետությունների տարբեր գյուղերում բնակարանները փոխանակելու մասին: Այդպես են վարվել Կրասնոսելսկի, Մասիսի, Վայքի, Եղեղնաձորի, Վարդենիսի և այլ շրջանների ազրբեջանցի բնակիչների ներկայացուցիչները: Բայց քիչ չեն դեպքերը, երբ Վարդենիս մեկնած հայ բնակիչները օրերով մնացել են անօթևան՝ խարված լինելու պատճառով: Օրինակ, Շամխորի շրջանի նուղլար գյուղի 31 հայ բնտանիքներ կրկն օր ու գիշեր չէին կարողանում տեղավորվել Վարդենիսի շրջանի նարիմանյու գյուղում այն պատճառով, որ վերջինիս բնակիչները հաստատում էին, որ իրենց գյուղի ներկայացուցիչները նուղլարի հայերի հետ նման նախնական բաշխմանավորվածություն չունեն: Իսկ ովքե՞ր էին խաբել

նուղլարցիներին և տիրացել նրանց տուն ու տեղին, տարիների ընթացքում սեփական թրտինքով վաստակած ունեցվածքին՝ պարզելն անհնար էր:

Այսպիսով, Ազրբեջանից հայ բնակչությունն արտաքսվում էր, իսկ Հայաստանից ազրբեջանցիները արտագաղթում էին: Պետք է շեշտված ընդգծել, որ վերջինս տեղի ունեցավ միայն ու միայն Ազրբեջանից հայ բնակչության բռնի արտաքսման պատճառով. նրա ազդեցության տակ ազրբեջանցիների արտագաղթը կամավոր բնույթ կրեց:

Ուստի ազրբեջանցիների արտագաղթը Հայաստանից տեղի ունեցավ Ազրբեջանում լայն մասշտաբներ ընդունած հարյուր հազարավոր հայերի բռնագաղթից հետո: Հայաստանից ազրբեջանցիների արտագաղթը Ազրբեջանում ծավալվող երեվոյթների օրգանական շարունակությունն էր, դրանց անմիջական հետևանքը: Այդ արտագաղթը սկզբում հրահրում էին իրենք՝ կրոնական մոլեռանգություններ գործող սազրիչները Ազրբեջանից, որի համար հետագայում նրանք շատ զգալի:

Ի՞նչ նպատակամղումով էին Ազրբեջանից ժամանած և նրանց տեղական դրածո օգիտատորները ազրբեջանցիներին հրահրում հետանալ Հայաստանից:

Առաջին, Սումգայիթում հայկական եղեռնի կազմակերպիչներին շատ էր մտահոգում, որ աշխարհը իրազեկ է դառնում հայ ժողովրդի նկատմամբ մինչ այդ իրականացված սպիտակ ջարդին, իսկ մեր օրերում մերթ ընդ մերթ դրան ուղեկցող նախապես պլանավորված ու կազմակերպված կպանդի միջադեպին: Մինչդեռ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տեղի էին ունենում համամոլորդակառն խաղաղ միտինգներ՝ սահմանադրական իրավունքների շրջանակներում: Դրանք հակաազրբեջանական երանդ շրջանակներ:

Սակայն ազրբեջանական հրահրիչներին խիստ անհրաժեշտ էր ամեն գնով խաբել ու թշուրիմացության մեջ գցել խորհրդային ժողովրդին և համաշխարհային հասարակայնությանը: Եվ դա նրանց շատ դեպքերում հաջողվում էր: Ազրբեջանում կատարված եղեռնագործությունն ու վանդալիզմը ներկայացվում էին նենգափոխված ձևով: Ավելին, դրանցում մեղադրում էին Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Նրանց հարկավոր էր նաև ստվեր գցել Լեռնա-

յին Ղարաբաղում և Հայաստանում ծավալվող համաժողովրդային շարժման վրա:

Ազդեցանում սաղրիչներն իրենց առջև դնում էին նվազագույն և առավելագույն նպատակներ:

Նվազագույն նպատակն այն էր, որ բոլոր միջոցներով կարողանային երկու հանրապետություններում անդի ունեցող նրևույթների միջև առնվազն հավասարության նշան դնել և զրանով իսկ մեր երկրի և համաշխարհային հասարակայնությանը թշուրիմացության մեջ զցելու միջոցով արդարացնել Ազդեցանում իրականացվող հայազինջ քաղաքականությունը, նրա արյանարբու և անմարդկային մեթոդները: Հայաստանից ազդեցանցիների հեռանալն հրահրողները կարծում էին, թե զրանով կարագացնեն բռնազաղթը Ազդեցանից, փախստական ու անօթեան հայերի տներին բռնություններ տիրելը, Շուշում, Աղդամում, Խոջալուում հապտապ հ յայն մասշտաբներով բնակարանային շինարարության ծավալումը, Աննային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացմանը Հայկական ԽՍՀ մասնակցություն բռնի չեղորացումը և այլն: Նրանց առավելագույն նպատակն էր օրը ցերեկով ամբողջ մեղքը բարդել մի խումբ հայ «էքստրեմիստներին» վրա, պարսպվել հայ մտավորականությանը, նրան մեղադրել վերակառուցման քաղաքականությունը և ինտերնացիոնալիզմի սկզբունքները իբր թե սոսնահարելու, ազգամիջյան կրքեր բորբոքելու, սրիչ ժողովուրդների հողերի վրա աչք դնելու, Հայաստանից ազդեցանցիներին իբր թե «բռնություններ արտաբերելու», Աննային Ղարաբաղում ազդեցանցիների սրբավայրում՝ Փոփխանայում անտառը հատելու (թեև հող չէ, որ այնտեղ անտառ գոյություն չի ունեցել) և ալյումինի գործարան կառուցելու և բազում այլ հնարավոր մեղադրանքներ, որոնք մերթ ընդ մերթ, իրագրությունը համընթաց ձևափոխվում ու հրամցվում էին բանից անտեղյակ մարդկանց: Քանի որ զբրանք հնարավոր են, չի խանգարում և այն, որ հաճախ իրար հակասում են: Մտխաբը պարկում շես թաքցնի»: Մուճաչիթյան պատավարությունը թեև շատ բաներ ջրի երես էր հանում՝ պատռելով ցեղասպանության դիմակը, բայց շատ մուճ էչեր թաղվեցին:

Նեկուրդ, Ազդեցանի հրահրիչներին անհրաժեշտ էր կա-

րողանալ Հայաստանում ստեղծել մի այնպիսի իրավիճակ, որը պատրվակ դառնար Ազդեցանի հայաշատ վայրերում հայ բնակչության նկատմամբ հետագա խժոճությունների սանձազերծելուն: Հայաստանում այդպիսի իրավիճակ ստեղծելու բոլոր փորձերը ձախողվեցին: Նույնիսկ շոգնեց շար ու մութ ուժերի կողմից հենց այդ դիտավորությունները կազմակերպված «Մասիս» թունավորումը, «Ջվարթնոցը»: Հայ ժողովուրդը մերժեց պրովոկացիան: Նա մնաց քաղաքակիրթ ազգին հատուկ սկզբունքների վրա, սկզբունքների, որոնք նրա մեջ մարմնավորվել են զարերով և զարծել միս ու արյուն:

Հայ ժողովուրդը չհրաժարվեց նաև սահմանադրական նպատակների իրագործման համար իր ձեռնարկած խաղաղ պայքարից, զրանով իսկ սատար կանգնելով իր եղբայրակիցներին՝ ճնշման ու հալածանքի լուծը թոթափելու համար:

Համաշխարհային հասարակայնության աչքին թող փչելու, երևույթները քողարկելու և լրիվ գլխիվայր շրջված ներկայացնելու նպատակով 1988 թ. ազդեցանական սաղրիչներին մնում էր միայն մի ելք. փոքր մասշտաբներով (բայց ատանապատիկ ավելի ներկայացնելով) կազմակերպել Հայկական ԽՍՀ-ից իրենց հայրենակիցների արտագաղթը: Չանում էին ստեղծել և այժմ էլ ստեղծում են պատրանք, թե անսեր, իրենց հայրենակիցները լքել են տունտեղը և զարծել փախուստական՝ Հայաստանում նրանց նկատմամբ ցուցաբերվող հալածանքի և վատ վերաբերմունքի պատճառով: Տարածում էին կեղծ լուրեր այն մասին, թե Հայաստանում նույնպես հրկիզում են ազդեցանցիների տները, հալածում, ծեծում, խոշտանգում նրանց և այլն: Պրովոկացիոն փորձեր կատարվեցին հրկիզելու ազդեցանցիների լրած տները, շարդելու նրանց բնակարանների պատուհանները և այլն: 1988 թ. նույնների երկրորդ կեսին Վարդենիսի շրջաօրհանի գործկոմի նախագահը միտումնավոր կազմակերպում և ոտքի է հանում Վարդենիս-Սրենտն ճանապարհի եզրին գտնվող Շաֆակ զյուդի (նախագահի հայրենի գյուղն է) 16—18 տարեկան մի խումբ անչափահասաների: Նրանք որսորդական հրացաններով և սառը զենքով սկսում են անհասպտացնել Սրենտնից Վարդենիս մեկնող ավտոմեքենաների ուղևորներին, վնասվածներ պատճառում մի բանիսին: Միջադեպը միլիցիայի օգնությամբ կանխ-

վում է: Իրողութեանը դրամատիկ տեսք տալու նպատակով նրանք հրկիզում են գյուղի եզրին գտնվող լքված տնակի առաստաղը (տնակի սեփականատերը արդեն երրորդ տարին է, ինչ բնակվում է Կիրովաբազում):

Մի քանի օր անց ունկնդիր եղա մի հեռախոսազրույցի, որը տեղի էր ունենում այդ դեպքից հետո Ադրբեջան մեկնած շրջխորհրդի գործկոմի նախագահի և Վարդենիսի կուսընկերոջի առաջին քարտուղարի միջև: Նախագահը անհանգստանում էր իր բնատանիքի բախտով, որը դեռ գտնվում էր Շաֆակ գյուղում, Առաջին քարտուղարը կշտամբում էր շրջխորհրդի գործկոմի նախագահին նրա սաղորիչ գործողությունների համար, և հավաստիացնում, որ ոչ ոք նրա բնատանիքի և, առհասարակ, ոչ մի աղբբեջանցու «քնֆին չի կպչել ու չի կպչի»: Անհանգստանալու պատճառ իրոք չկար: Եվ երկու օր անց նրա բնատանիքը երկու մեծ բեռնատարով փոխադրվեց Ադրբեջան:

Այդ օրերին հենց Շաֆակ գյուղում, Ադրբեջանական ԽՍՀ-ից եկած ուղղաթիռի անձնակազմը նկարահանում էր հրկիզված առաստաղով տարիներ առաջ լքվալ տնակը: Արհեստականորեն ստեղծվել էր մի տեսարան, որը զարմանք էր պատճառում: Հեռուստատեսային կինոխցիկը նկարահանում էր դեպի ուղղաթիռը վազող, իբր թե հալածված կանանց, բուկոտն երեխաների, ծեր մարդկանց: Ուվքե՞ր էին հայածում նրանց, ինչո՞ւ էին վազում դեպի ուղղաթիռը՝ պարզ չէր: Անձնակազմից մի երկու հոգու գրկախառնության արարողությունը տեղացի մի քանի երիտասարդների հետ (որոնք հավանաբար, զիտեին և սպասում էին ուղղաթիռի վայրէջքին) վկանայում էր նրանց նախնական ծանոթության մասին: Այդ ժամանակ, 2 օր անընդհատ, Ադրբեջանական ԽՍՀ-ից եկող ուղղաթիռների վայրէջքները ՀԽՍՀ-ի աղբբեջանցիներով բռնակեցված գյուղերում կրկնվեցին մի քանի անգամ:

Վարդենիսի շրջանի համապատասխան մարմինները այդ անսովոր միջադեպի մասին տեղյակ պահեցին հանրապետության վերադաս մարմիններին: Այնուամենայնիվ, դարձանալի էր, որ նշված առիթը «լուսթյան» մատնեց կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը, թեև միջադեպից տեղյակ մարդիկ այդ օրերին սպասում էին դրան: Ասել, թե 1988 թ. նոյեմբերին, Ադրբեջանում տիրող իրա-

զրույթյան պայմաններում, Հայկական ԽՍՀ-ում հայ բնակչության կողմից արտակարգ բնույթի արարք չի գրսևորվել, սխալ կլինի: Եղել են մարդասպանության մի քանի դեպքեր, բայց դրանք թույլ են տրվել առանձին մարդկանց կողմից, որոնք դատարանի միջոցով քրեական պատասխանատվության են ենթարկվել: Տեղի են ունեցել նաև տեղական բնույթի միջադեպեր տարբեր շրջանների (Մասիս, Եղեգնաձոր, Վայք, Ամասիա, Վարդենիս) առանձին գյուղերում, որոնք տեղն ու տեղը կասեցվել են: Ըստ որում, Ադրբեջանական ԽՍՀ-ում հայ բռնակչության նկատմամբ կատարված փաստերի հարկադրանքով Հայկական ԽՍՀ-ում առանձին մարդկանց տնհարկի վերաբերմունքը ադրբեջանցիների նկատմամբ նախ՝ ոչ մի պաշտպանություն չէր գտնում հայ բնակչության կողմից, երկրորդ՝ նման առանձին դեպքերը երբեք, ոչ մի առիթով չվերածվեցին ադրբեջանական ժողովրդի նկատմամբ հակակրանքի գրսևորումների: Մինչդեռ, 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միտինգներում, մամուլում, գրավոր և բանավոր հաղորդումներում ժողովուրդների «եղբայրության», «բարեկամության», «ինտերնացիոնալիզմի» մասին լուրջ-լուրջ ուղեկցվում էին «հայերին խոշտանգելու», «սպանելու» կոչերով: Դրանց ուղեկցող սպառնալիքը, ահ ու սարսափ ներազդող կոչերը ունեցան իրենց ողբերգական հետևանքները:

1989 թ. հուլիս-սեպտեմբերին վայրագություններն Ադրբեջանում դառնում են մոլեգին

Երկխոսության ճանապարհով սեզիոնում յարվածությունը թուլացնելու հայ ժողովրդի բոլոր փորձերը ի դերև եղան: Ադրբեջանում 1989 թ. աստիճանաբար աճող յարվածությամբ կրքերը սկսվեցին բորբոքվել ժողովրդական պատգամավորների առաջին համագումարից և այնտեղ ընտրված հանձնախումբը ԼՂԻՄ այցելելուց հետո: Սկզբում նշանակետ դարձան Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից համագումարում հանդես եկած պատգամավորները: Ցինիկաբար նշավակելով նրանց էությունը, տեղական, երբեմն նաև կենտրոնական մամուլի էջերում զիաբունիաթովյան ուղղվածությամբ հողվածները ալեկոծ կեղտաչրի նման հեղհեղեցին բացարձակ ճշմարտու-

թյունները, գործի գրվեցին պատմությունը հազարապատիկ կեղծելու հին մեթոդները՝ «տեսական» մարզանքներով նշավակելով հայերի կողմից Ադրբեջանի հողերին տեր դառնալու «ստանդարտները»: Նրանք չէին խորշում «հայրենասիրական» կրքով բորբոքված խառնամբուխի ուղղակի զենքի կոչելու մարտահրավերից: Եվ այն տվեց իր պտուղները: 1989 թ. Ադրբեջանի սահմաններում կազմակերպվեցին ծեծ ու շարքոցներ, հուլիսից սկսած մինչև 1990 թ. հունվար ամիսներին գրանք կազմակերպվեցին նաև Հայաստանի հետ սահմանամերձ շրջաններում:

Ադրբեջանում վերստին ակտիվացած մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն, միտինգային հրապարակներում ազգայնամտական թույնով հագեցված ելույթներն ու կոչերը, մրթադներով պատմությունից և իրենց շուրջ կատարվող երեվելյաներից անտեղյակ մարդկանց ուղեղները, շիկացնելով առանց այդ էլ պայթյունի պատրաստ մթնոլորտը, «հայրենասիրական» կրքով բորբոքված խառնամբուխի 1989 թ. օգոստոսին հրահրեցին նոր վայրագությունների: Բաքվում, դերասանի տանը, օգոստոսի 15-ին հանրապետության մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ հրահրված ժողովում ընդունվում է Ադրբեջանի ժողովրդին ուղղված հայտնի դիմումը, որից ոչ ավել, ոչ պակաս մուսավաթական նացիոնալիզմի հոտ է փչում: Հիշենք նրա տողերը. «Թանկագին քույրեր և եղբայրներ, Ադրբեջանի սքանչելի անկյունը, հանճարների հայրենիք Ղարաբաղը, ուր յուրաքանչյուր քալ հիշողություն է պահում հազարամյակների մասին, ահա արդեն մեկուկես տարի կորցրել է հանգրստությունը: Մեծ Հայաստանի» համար երազանք փայփայող, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը խախտել ձգտող հայ ազգայնամուտները և ԼՂԻՄ-ի նրանց կամակատարները օրեցօր ուժեղացնում են պրոպագանդան հանրապետության ազգային ինքնուրույնության դեմ, ձգտում են ադրբեջանական ժողովրդին, որը հայտնի է իր ազնվությամբ, մեծ համբերատարությամբ, ինտերնացիոնալիզմով, ներթաշել կոնֆլիկտների մեջ, նրա հեղինակությունը պղծել ամբողջ աշխարհում:

Կատաղի ազգայնամտականները, որ այս հարյուրամյա-

կում մի քանի անգամ ադրբեջանցիներին քշել են իրենց հողերից, այժմ նպատակ են գրել կենսագործել իրենց անմարդկային ծրագիրը Լեռնային Ղարաբաղում, Շահումյանի (զյուղական) շրջանում, Նախիջևանում¹: «Մենք մեկընդմիջտ հայտարարում ենք բոլորին,— ասված է այդ դիմումում,— որ Լեռնային Ղարաբաղն ադրբեջանական հող է: Մենք նրա մի թիզն անգամ շենք գիջի ոչ ոքի...»: Իսկ այդ «կատաղի ազգայնամտականները», «սև ուժերը» հայերն են, «նրանք, ովքեր գիտենալով, որ Լեռնային Ղարաբաղի հողը պատկանել է և հավերժորեն պետք է պատկանի Ադրբեջանին, թունավորում են սեփական ժողովրդի գիտակցությունը...»²:

Տեսեք, թե բանն ուր է հասել, որ Ադրբեջանի մտավորականությունն է մեղադրում հայ մտավորականին «սեփական ժողովրդի գիտակցությունը թունավորելու» համար: Այդ ո՞ր հայ մտավորականն է կամ մտավորականների հավաքը, որ իրեն թույլ է տվել նման «մարտակոչում» թունավորել իր ժողովրդի գիտակցությունը, ինչպես արվում է Ադրբեջանում: «Մտեղծված արտակարգ իրավիճակում ադրբեջանական ժողովրդի համար միակ ճանապարհը իր բոլոր քաղաքական, ֆիզիկական ուժերը մոբիլիզացնելու և այդ սև ուժերին վճարաբար խանդարելու մեջ է»³: Մարդու հավատը չի գալիս, թե մտավորականությունն ինչ աստիճան պետք է իջնի, որ կարողանար թույն թափելով՝ սուտ ու կեղծիք հորինել, հարևան ժողովրդին «կատաղի ազգայնամտականներ», «սև ուժեր» պիտակը կպցնել: Եվ դա՛ «ազնվություն», «մեծ համբերություն», «ինտերնացիոնալիզմ» մասին շողում խոսքերի հրավառություններ:

Ադրբեջանում «վալ» մտավորականության կողմից պատմությունը խեղաթյուրելու միջոցով իրենց ժողովրդի գիտակցությունը մթադներու վարվելակերպը հայ մտավորականությանը վերագրելը դարձել է սովորական: Մնում է զարթին թող փչելու՝ այդ եղանակով գործից անտեղյակ մարդկանց թյուրիմացություն մեջ պցել: Ադրբեջանում լայնորեն պրոպա-

1 Բակինսկի ռաբոտի, 1989, 17 օգոստոսի
2 Նույն տեղում
3 Նույն տեղում

դանդվող այս փրուն «եղբայրության» և փարիսեցիական «ինտերնացիոնալիզմին» հավատալով էր, որ տասնամյակներ շարունակ քաղաքակիրթ մի ժողովուրդ, համբերատար դիմացի է գործադրված ամեն կարգի բռնություն, մի կերպ համակերպվել մուսուլմանական կրոնական ֆանատիզմի մուլոցքին: Իսկ այժմ այդ կեղծ կոչիրին ուղեկցող սպանոր, ահն ու սարսափը՝ «եղբայր» ժողովրդի կեզբերումը հավերժացնելու մի մարտակոչ է, նրա սահմանազրակա ինքնորոշման իրավունքի ամեն մի կարգի ստնահարում՝ բարբարոսական աստիճանի բարձրացված մեթոդներով:

Այդ ցինիկ գիմումը հենց դրա հեղինակներին և միտինգի մասնակից ամբոխին մերկացնող փաստաթուղթ է: Դա վկայում է դրանց «հանձարեղության» մասին: Այո՛, հանձար որ քիսեին, ինչպես կարող էին «չքմեղ» կեցվածք ընդունելով իրենց բարբարոսական արարքները օրը ցերեկով ուրիշներին վերագրել: Ցեղասպան սաղորդները ուզում են աշխարհին հավատ ներշնչել, թե «ամոթի» զգացում էլ ունեն և այդ «անմեղները» պիտի «ենթադրվեն կոնֆլիկտի մեջ», «հեղինակությունը պղծեն ամբողջ աշխարհում»⁴:

Այդ ի՞նչ հեղինակության մասին է խոսքը: Սաղորդն էլ է հեղինակության մասին մտածում: Նախքան որևէ բան կորցնելու մասին մտածելը, նախ և առաջ պետք է այն ունենալ: Խղճահարության աստիճան անմեղ տեսք ընդունելը խայտառակությունից փրկվելու միջոց չէ: Իհարկե, նման սաղորդ մտավորականին պետք է, իրոք, խղճալ քաղաքակրթության այս դարում վայրենության մակարդակի վրա մնալու համար: Վայրենություն, որ իր ժողովրդին «ղենքի» դիմելու կոչ է անում: Թույլ ավելք հարցնել, իսկ այդ ո՞վ էր, որ իր ժողովրդին կոչեց ցեղասպանության: Այդ ո՞ր մտավորականն էր, որ «Շուշի» շրջանային թերթի 1989 թ. օգոստոսի 12-ի համարում, դիմելով հայրենակիցներին, կոչ արեց. եկեք մեկ մարդու պես կանգնենք մեր պապենական հողերի պաշտպանության համար, կտրենք այն կեղտոտ ձեռքերը, որոնք խլելում են մեր հողերը: Թերթը մի այլ հողվածով կոչ արեց յոթ միլիոնանոց Ազրբեջանին՝ հարձակվել և ոչնչացնել «այդ տա-

կանքներին»: Նույն թերթը շատ ավելի այլանդակ մարտակոչով հանդես եկավ 1988 թվականին, «ղենքը ձեռքին ոտքի էլնելը» պաշտպանելու վտանգի մեջ հայանված իրենց հայրենիքը:

Չարմանալու ոչինչ չկա, որ այսքանից հետո Սուվգայիթում սկիզբ առած ցեղասպանությունն ավելի այլանդակ ձեվեր բնդունեց հետագայում:

Վաղը, մյուս օրը, ավելի հանգիստ իրավիճակում (դա բացառված չէ, այդ օրն էլ կգա, առայժմ պետք է նորից ու նորից զինվել համբերությանը ու շնթարկվել պրովոկացիաների) հնարավոր կդառնա մեկ առ մեկ պարզել և ի մի բերել հայ ժողովրդի նկատմամբ հենց այս օրերին դրսևորվող վայրագությունները: Այն ժամանակ, համոզված եմ, փրփուրի պես ջրի երես կբարձրանա «ինտերնացիոնալիզմը», «ազնվությունը» ու «համբերությունը», որի մասին մեծազորը հորջորջվում է Բաքվի մտավորականների դիմումում: Բայց շարունակենք:

1989 թ. հուլիս-օգոստոսյան օրերին նորից սկիզբ առավ մեծ բռնադադլթ: Ազրբեջանում նորից սովորական դարձան հայ բնակչության սովորական զանգվածներին հալածելու, մինչև ուշագնացության աստիճան ծեծելու, դանակահարելու, թալանելու, խոշտանգելու դեպքերը: Սովորական դարձան երիտասարդ կանանց ու ղեռատի աղջիկներին անարգելու, բռնաբարելուց հետո մերկ ու տկոթ քաղաքի փողոցներում քարշ տալով ծաղր ու ծանակի ենթարկելու բարբարոսական մեթոդները: Այդ օրերին Բաքվում, հենց իր տան բակում գաղանաբար ծեծում են քաղ. Ավանեսովին և ծանր վիճակում փոխադրում Բաքվի հիվանդանոցներից մեկը: Տեսնելով, որ նրա դրությունը դառնում է կրիտիկական, գիտակցությունը կորցրած հիվանդին դուրս են դրում և հանձնում ինչ-որ մայրոթ՝ Հայաստան տեղափոխելու համար: Գլխուղեղի ծանր վնասվածքից նա մահանում է հենց ֆնայքի մեջ՝ Արտաշատ կայառանում⁵: Պատահական չէր, որ 1989 թ. սեպտեմբերին Հայկական ԽՍՀ դատախազական կոլեգիան հատուկ դիմում է հղում ԽՍՀՄ դիտավոր դատախազ Ա. Յա. Սուխարևին հետևյալ բովանդա-

⁴ Բակինսկի ութուրի, 1989, 17 օգոստոսի:

⁵ Խորհրդային Հայաստան, 1989, 6 հոկտեմբերի:

կուսից մեր. Հայկական ԽՍՀ դատախազութիւնում քաղաքացի-
ներից ստացվում են մեծաթիվ տազնապարի ահազանգում-
ներ և դիմումներ, որոնք վկայում են Բարվում և Ազրբեջանա-
կան ԽՍՀ-ի այլ քաղաքներում ու բնակավայրերում հայերի
կյանքին սպառնացող ռեալ վտանգի առկայութիւնը: Նկատ-
վում են բացահայտ հալածանքի, հետապնդման ու հաշիւ-
հարդար տեսնելու սպառնալիքի փաստեր: Հաճախ մարդիկ
զրկված են իրենց կյանքի համար անվտանգ ռեզիդենտներ տե-
ղափոխվելու հնարավորութիւններից:

Հաղորդելով այս մասին, խնդրում ենք անհապաղ գործունե
միջոցներ ձեռնարկել մարդկանց փրկման, նրանց կյանքի ու
սահմանադրական իրավունքների պահպանման համար:

«Բնավեր ու տնավեր» փախստականների նոր զանգված-
ներ, հալածված, տանջահար, մահվան սպառնալիքներից ահա-
բեկված ու ծեծված մտան Հայաստան: Քիչ չէին դեպքերը, երբ
Հայկական ԽՍՀ-ից արտագաղթած որոշ ազրբեջանցի ավա-
զակներ խմբովի ներխուժում էին հայերի տները, ծեծ ու շար-
դոցով, գանակահարութիւններ ստիպում ստորագրել բնակա-
րանափոխութեան պայմանագրեր:

Ահա թե այդ մասին սարսուռով ինչ պատմեցին Խանլարի
Սեանի փողոցի 87 տան բնակիչներ (քույրեր) Հայկուշ և Մա-
րուշա Անզրեասյանները:

Սպառնալիքներով նրանց տուն են ներխուժում մի խումբ
ավազակաբարո մարդիկ: Վարդենիսի գլուղերից մեկի նախ-
կին բնակիչ Ահմեդ Ալիեւ պահանջում է Անզրեասյանների
տան բանալին: Տանտիրուհին մերժում է: Ի վերջո՝ ծեծի ու
սպառնալիքի տակ ստորագրում է փոխանակութեան պայմա-
նագիրը: Չանցած մեկ օր, նույն մարդիկ պայմանագիրը շեղ-
յալ են հայտարարում, քանի որ գտնվում է Փառանծեմ անու-
նով մի տիկնոջ շատ ավելի լավ տուն, և նույն հարկադիր մե-
թոզներով, նրա հետ արդեն նոր պայմանագիր է կնքվում:

Որոշ ժամանակ անց (1989 թ. օգոստոսի 14-ին, թե
15-ին, լավ չեն հիշում) Հ. Անզրեասյանի բնակարանն է մուտք
գործում խուժաններից բաղկացած մի նոր «չքաղաքացի» նը-
բանք պահանջում են բնակարանը փոխանակել Վարդենիսի
ջրջանի նարիմանլու գլուղի նախկին բնակիչ Ամիր Վալի օղլի
Ամիրովի բնակարանի հետ: Մերժում ստանալով, Ամիրի եղ-

բայրները և փեսան 70-ամյա այդ սպիտակահեր կնոջը ու-
քերի տակ են գցում, ջարդ ու փշուր անում և արյունլիվիկ վի-
ճակում պայմանագիրը ստորագրել տալիս: Քույրը հեռախո-
սով այդ մասին տեղյակ է պահում գինվորական պարետային
բաժին: Այնտեղից ոչ ոք չի ներկայանում: Քրոջ օգնութեամբ
տեղից տեղ թաքնվելով ու փախչելով, մի քանի օրվա ըն-
թացքում, ծեծված ու շարդված, գանակահարված վիճակում
նրանք դալիս են Վարդենիսի նարիմանլու գլուղը: Մի քանի
շաբաթում Վարդենիս են ժամանել հարյուրավոր փախստա-
կաններ, որոնք նույնպես արհամիրքից են փրկվել:

Համանման միջադեպ պատմում է կիրովաբազցի Բասինա
փողոցի առաջին նրբանցքի 2-րդ տան բնակիչ էլմիրա Մե-
լիբյանը: Բնակարան է ներխուժում մի հոծ խումբ: Ստիպում
են բնակարանը փոխանակելու մասին պայմանագիր կնքել
Վարդենիսի շրջանի նարիմանլու գլուղի նախկին բնակիչ Խա-
լի Կուբան օղլի Գարալովի հետ: Հարկադրանքի տակ «պայ-
մանագիրը» կնքելուց հետո, օգոստոսի 26-ին «ժամանում են»
նարիմանլու:

«Մինչ այդ, — շարունակում է էլմիրան, — ազրբեջանուհի
հարևաններիցս մեկը ինձ զգուշացրեց, թե աղջիկներդ ճարք
տես, ձեր գրութիւնը վատանալու է: Ոգոստոսի 4-ին երկու
աղջիկներին՝ Անահիտին և Սեղային, ուղարկեցի Քեռոսիս,
մեծ աղջկաս մտա: Ամուսինս տղայիս, հարսիս ու երկու թոռ-
ներիս հետ արդեն մայիսի 1-ին տեղափոխվել էր Սարատովի
մարդի Երջով քաղաքը, հիմա էլ այնտեղ են»:

Օգոստոսին Կիրովաբազում (Ոկտյաբրսկի, Կամոյի, Գիզու-
լի և այլ փողոցների հայկական թաղամասերում) հրկիզվել
են հարյուրավոր տներ: Փախստականները պատմում են, որ
հաճախ հրկիզում են բնակարանների որևէ մասը՝ պատըշ-
գամբ, նախամուտքը, շիֆերով ծածկված առաստաղը, բնա-
կարանի որևէ հատված: Գա արվում էր ոչ միայն ահ ու սար-
սափ ներազդելու, այլև բնակարանների գները իջեցնելու, փո-
խանակման պայմանագիր կնքելու նկատառումներով: Տները
հրկիզում են բենգինով: Հաճախ «տիկնիկ» խաղալիքները թա-
թախում են բենգինի մեջ և վառված վիճակում նետում ներս:
Այս և հայերին արտաքսելու մշակված այլ մեթոդներ կիրա-
ռելու գործում խուժանի հետ միասին պակաս դեր չեն խա-

դում նաև անային կառավարչության և միլիցիայի շատ աշխատակիցները: Տեսային կառավարչություններում այդ սաղորիչներին տրամադրում են հայ բնակիչների հասցեները, Իսկ միլիցիան ոչ միայն շնկատելու է տալիս այդ ամենը, այլև լրացիրը հայհոյանքներով, «ոսգներդ քաշեք» սպառնալիքով հրահրում թողնել քաղաքը:

Այսպիսով, 1989 թ. օգոստոսի վերջերին Հայկական ԽՍՀ եկած հայ փախստականների թիվն ավելացավ 18—20 հազարով, գերազանցելով 220 հազարը:

1989 թ. օգոստոսի 25-ին Կիրովաքաղցի վարդենիսի շերտանի Սովետակերտ գյուղ ժամանած փախստականներ Գևորգ, Մակիչ, Ոֆելյա, էմմա Մաղաքյանները (Կամոյի փող. № 10), Մուշեղ Խոջայանը (Ֆեոդոտովի փող. տուն № 212) և ուրիշներ, (որոնք ականատես են եղել Կիրովաքաղում բնակարանների հրկիզումներին) Կիրովաքաղցի փախել են ՌՖՍՍՀ-ից այդ նրպատակի համար Կիրովաքաղում գտնվող մեծ ռեֆրեժերատորով: Ինձները փոխադրելու համար Մաղաքյանները վճարել են 1200 ռ., իսկ Խոջայանները՝ 1600: Մաղաքյանը պատմում է, որ Կիրովաքաղցի մինչև Հայկական ԽՍՀ-ի սահմանը, ընտանիքով թաքնվել են վարորդի հանգստանալու համար առանձնացված փոքրիկ խցիկում: Խոջայանների 8 հոգուց բաղկացած ընտանիքը թաքնվել է մեքենայի թափքում՝ իրերի մեջ: Ասյա Մակարովան որպես հեռախոսավարուհի աշխատելիս է եղել տաքսամոտորային հավաքակալանում: Հազարավոր հայ բնակիչների նման՝ հալածանքից, ահ ու սարսափից կծկված, օգոստոսի առաջին օրերից նա աշխատանքի դուրս չի գալիս: Երկու ամիս առաջ մի խումբ մարդիկ հարձակվել ու ջարդել են նրա բնակարանի դուրս: Այն թեև պատրաստել է տվել, բայց վախից ապրել է ոչ թե իր, այլ Մաղաքյանների տանը (քրոջ մոտ): Նա չի դիմել ավելորդ ռիսկի իր բնակարանի իրերը հետք վերցնելու համար (նա չգիտե, այդ իրերը մնացել են, թե՛ ոչ): Ինչպես բոլորը, նա ևս փախուստի է դիմել առանց վերջնահաշվի, առանց կենսաթոշակի հետ կապված հարցերը լուծելու:

Ռեզիդենտի և ՂԻՄ-ի ծայրահեղ իրավիճակի կապակցությամբ 1989 թ. սեպտեմբերին ԽՍՀ Կենտկոմի առաջարկությամբ, Մոսկվայում տեղի է ունենում Ադրբեջանի և Հայաստանի կոմունիստական կուսակցությունների Կենտկոմների բյուրոների անդամների հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկման առանցքային հարցը ի վերջո դառնում է ՂԻՄ-ի պրոբլեմը: Ի վերջո այն առումով, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները հենց սկզբից դեմ էին Լեոնային Ղարաբաղի պրոբլեմի քննարկմանը: Բայց իրական կյանքից խուսափելն անհնար էր: Ուստի, բուն խնդրի նկատմամբ ցուցաբերվում են տրամադծորեն տարբեր մոտեցումներ, լուծումների հիմքում դրվում իրարամերժ նկատառումներ: Հանդիպման ժամանակ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամները առաջարկություն են մտցնում ընդունել երկու հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինների համատեղ դեկլարացիա, որը պետք է ապահովեր բնակչության անվտանգությունը, դատապարտեր ցեղասպանությունը, վանդալիզմը և մարդկության դեմ ուղղված բռնության մշուս գործողությունները:

Իրարամերժ մոտեցումներն ու նկատառումներն իրենց ուղղակի արտահայտությունն ստացան նաև այն հարցազուլուցներում, որ կազմակերպվեցին հիշատակվող հանդիպումից հետո Բաքվի և Երևանի հեռուստատեսությունների թղթակիցների կողմից երկու հանրապետությունների կոմկուսների Կենտկոմների առաջին քարտուղարների հետ:

Արմենպրեսի թղթակցի հետ ունեցած հարցազուլուցում ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը պարզորոշ շեշտադրում էր Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման սահմանադրական խնդիրները լուծելու անհրաժեշտությունը: Դրա հետ մեկտեղ նա առաջադրում է Երկխոսության ճանապարհով երկու հանրապետությունների միջև ստեղծված վեճը վերացնելու և նորմալ հարաբերություններ սահմանելու մի շարք կոնստրուկտիվ առաջարկություններ:

Ս. Գ. Հարությունյանը իրավացիորեն գտնում էր, որ երկու

հանրապետությունների հարաբերությունների կարգավորումը հնարավոր է միմիայն ընդառաջ քայլեր կատարելու, փոխզիջումների համատեղ որոնման պայմանով: «Լեոնային Ղարաբաղի առթիվ մեր դիրքորոշումը,— ասում է նա,— հստակորեն և միանշանակ կերպով արտահայտվեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարում: Այդ դիրքորոշումը մեր ժողովրդի կամքի արտահայտությունն է, և մենք հայտարարեցինք, որ մտադիր չենք շեղվել դրանից: Միևնույն ժամանակ երկխոսության և ազգային հաշտեցման ուղիներ կորոնենք, մեզանից կախված ամեն ինչ կանենք, որպեսզի վերջ տրվի ազգամիջյան թշնամանքին, որպեսզի Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների միջև հաստատվեն նորմալ հարաբերություններ... Սրկու հանրապետությունների ղեկավարները պարտավոր են հանդես գալ առավել կշռադատված, կոնստրուկտիվ դիրքերից, համատեղ որոնել խելամիտ փոխզիջումներ: Թշնամանքը առհասարակ ոչ մեկին օգուտ չի բերել: Մենք ուզում ենք կամուրջներ գցել ազգային տարանջատվածության անդունդի վրայով»⁶:

Մինչդեռ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովը այդ օրերին հեռուստատեսային հարցազրույցում պնդում էր, որ Ադրբեջանի համար Լեոնային Ղարաբաղի պրոբլեմ գոյություն չի ունեցել և ունենալ չի կարող: Այսինքն նա մտնում է իր այն սխալ տեսակետին, ինչը պնդում էր կուսկենտկոմների բյուրոների անդամների հանդիպման ժամանակ: Իր սովորության համաձայն ԽՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում նա խույս տվեց ռեզիոնում ստեղծված իրավիճակը ներկայացնելուց: Դրա հետ մեկտեղ միտելով Լեոնային Ղարաբաղի տարածքային պրոբլեմի առկայությունը, Բաքվի թղթակցի հետ ունեցած հեռուստատեսային հարցազրույցում նա այն կարծիքն է արտահայտում, որ «...իր հողի, նրա բոլոր հարստությունների իսկական տերը ժողովուրդն է, և միայն նա իրավունք ունի լուծելու դրա հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում տարածքային հար-

ցերը»⁷: Խոսքի ու գործելակերպի բացահայտ հակասությունը թաքցնելու համար նա դիմում է միշտ այն կեզծիքին, ինչ իր հովանավորությունից օգտվող Ադրբեջանի վայ պատմաբանները: Ա. Վեզիրովը մեղանշելով պատմական ճշմարտությունների առջև և դիմելով աշխակապության, իր հովանավորությունից ու պաշտպանությունից օգտվող հակադիտական, հակաիրավական, հակադեմոկրատական և, ամենից առաջ, հակահայկական հիստերիայով բռնկված ադրբեջանցի վայ պատմաբանների ու ազգայնամուլ սադրիչների նման մարզը ներկայացնում է որպես Ադրբեջանի «ինքնիշխան հանրապետություն» կամակատարն ու գերին և առաջ քաշում ԼՂԻՄ-ը վերացնելու հարցը: ԶԷ՝ որ այդ կողը Ադրբեջանում հրավիրվող միտինգների լիցումոտիվն էր: Մնում էր եզրակացնել, որ ինքը՝ Ա. Վեզիրովը որոշակի ուղղություն և ընթացք էր տալիս հակահայկական հիստերիայով բռնկված խառնամարտին, վայ պատմաբաններին ու ազգայնամուլ սադրիչներին, որոնք խեղաթյուրելով պատմությունը, հենց մարզի քարտեզը վերածնելու կոչ են անում:

«...Սա ուզում եմ հայտարարել,— այդ հարցազրույցում պնդում է Ա. Վեզիրովը,— որ Ադրբեջանի ղեկավարությունը վճռականորեն դեմ է ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից անջատելու ամեն մի քայլին... Մենք առանց տատանվելու վճռական հակահարված կտանք նրանց, ովքեր սահմանները վերածնելու կոչ են անում»⁸: Նախ, նման կատեգորիկ հայտարարությամբ նա դեմ է զուրս գալիս ամեն կարգի փոխզիջման, որի մասին հաճախ էր խոսում: Երկրորդ, Ա. Վեզիրովը հոգեհարազատ էր այն կոչին, որ արտահայտվեց 1989 թ. օգոստոսի 15-ին Բաքվում մտավորականության ներկայացուցիչների կողմից ժողովրդին ուղղված դիմումում, որը ոչ ավել, ոչ պակաս ներծծված էր սեփական ժողովրդի գիտակցությունը թունավորող նացիոնալիզմի թուլումով: Նման հարցազրույցներն անհետևանք մնալ չէին կարող: Եվ անհետևանք չմնացին...

⁷ Բակինսկի ուարդի, 1989, 6 սեպտեմբերի

⁸ Նույն տեղում:

⁶ Երեւոյի Հայաստան, 1989, 6 սեպտեմբերի

1989 թ. հուլիս-օգոստոս-սեպտեմբերյան դեպքերը ուղեկցվեցին ինչպես ԱՂԲ-ի, այնպես էլ Հայկական ԽՍՀ երկրորդ երկարատև շրջափակմամբ՝ ստեղծելով պայլյուննի պատրաստ պատերազմական իրավիճակ՝ ամբողջ սահմանի երկայնքով: Եվ, իրոք, այն պայթեց: Պայթյունը սկսվեց 1989 թ. դեկտեմբերին խորհրդա-իրանական սահմանի խախտումներով և 1990 թ. Բաքվի դեպքերով: 1990 թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատը Ադրբեջանի կառավարող իշխանությունների հետ մեկ բուռն կազմած ձեռնարկեց մի նոր ցեղատարանություն, որը դարձավ Ադրբեջանում հայերի ցեղասպանությունը ավարտին մոտեցնելու ամենավճռական փուլը:

Ճեղատարանության հետևանքով իր թվով այս շորթորդ մեծ բռնագաղթի ընթացքում Բաքվից արտաքսվեցին մի քանի տասնյակ հազար հայեր:

Մյուսնարթու գազանի նման ոճմակ կազմած հրոսակախմբերը յոթ օր անընդհատ անցնելով թաղից թաղ, հրիկում էին հայերի տները, զենքի բոլոր տեսակների գործադրմամբ սպանում էին, կրակի բոցերի մեջ խորովում երեխաների ու կանանց, խոշտանգում, առանց տարիքը նկատի առնելու գազանաբար բռնաբարում ու հալածվածների աչքի առջև բաժան-բաժան էր արվում նրանց ունեցվածքը իրենց իսկ քրքրեհոգի հարևանների ու խուժանի միջև: Ում բախտ վիճակվեց հրաշքով հրի ճարակ շղանալ, դանակահարված կամ գնդակով խոցված, շանթահար ու գլխապատառ, շոր գլուխը հազիվ փրկելու բնագործ, որը կիսամերկ, որը միայն տնային շապիկով ու շրջազգեստով, որը ոտաբոթիկ ճողոպրում էր այդ դժոխային կոտորածից: Ոչ ոքի այլևս չէր հետաքրքրում արդար քրտինքով տարիների ընթացքում վաստակած տուն ու տեղ, ապրուստ, կաշք, հանդերձանք: Մթնոլորտը թունավորված էր, օդը հեղձուցիչ ու ապականված: Գարշահոտություն ու անբարոյականության միջավայրը գառնում է անտանելի: Ադրբեջանցի հորից սերված զավակը հրաժարվում է մորից, գնդակով խոցում նրան՝ հայ լինելու համար: Այդպես են նրան ներարկել կրոնի սպասավորն ու մտավորականությունը:

Բաքվում օրեր տեղ գանգվածային շարդը մեկ շաբաթ անց գործադրվեց առաջնախիթների, կանանց ու երեխաների նրկատմամբ: Այս օրերին Բաքվից արտաքսվեցին և փախստական դարձան տասնյակ հազարավոր հայ, առաջ հրեա ընտանիքներ: Միջնադարյան բարբարոսական այդ բիրտ մեթոդները, Ադրբեջանի տարածքում խորհրդա-իրանական, խորհրդա-թուրքական պետական սահմանի ամբողջ երկայնքով մինչև ատամները զինված բանդիտական հարձակումներ կազմակերպելու միջոցով սահմանախախտումները, սահմանապահների ընտանիքների նկատմամբ գործադրված գազանությունները արդարացնելու աստիճան խիստ շափավոր ու մեղմ ներկայացնելու հատուկ դիտավորությամբ ու մտահոգությամբ՝ Ադրբեջանի ղեկավարությունը, կենտրոնական թերթերն ու հեռուստատեսությունը պիտի փորձեին այդ բուլթը բացատրել, իբր թե վրիժառույթյամբ լցված այն բանտուն փախուսակունների՝ ծայրահեղ վրդովմունքով ու զայրույթի պրոֆուլումով, որոնք արտագաղթել են Հայաստանից (իրենց արտահայտությամբ արտաքսվել) և մինչև օրս «հանգրվան շունեն» ու «թափառում են» անտուն: Պիտի փորձեին բացատրել նաև Իրանում ադրբեջանցի «հայրենակիցներին» հետ հաղորդակցվելու ցանկությունը (թեև մինչև այդ նման ցանկություն էր արտահայտել միայն մեկ ընտանիք), պիտի փորձեին բացատրել սահմանամերձ գոտում խոտհարքները օգտագործելու անհնարինությունը: Եվ վերջապես, որպես ամենագլխավոր դրդապատճառը, պիտի փորձեին բացատրել Ղարաբաղյան շարժմամբ՝ հանիրավի մեղադրելով Ղարաբաղյան ազգային ազատագրական պայքարը, այն դիտելով որպես ադրբեջանցիների կողմից իրականացվող գազանությունների նախահիմք:

Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնական իշխանությունները ոչ միայն անտարբեր չէին, այլև հրահրում և ընթացք էին տալիս արյունահեղություններին: Միլիցիան համագործակցում էր ժողովրդական ճակատի հետ:

Իսկ միութենական իշխանությունները ֆեդերացիայի ըսկըդրունքները պաշտպանելու, դրանցով նախատեսվող պատուականությունները կատարելու վճռական միջոցներ ձեռնարկելու փախարեն, գործից ու երևույթներից անտեղյակ անվանի

ու ոչ անվանի մարդկանց միջոցով հականե-հավանե խթանակա՞ն դասեր են տալիս, բարոզներ կարգում թե՛ աղբրե-ջանցիներին, թե՛ հայերի գլխին, կարգախոս ճառերով «կարգի հրավիրում» և՛ գազանին, և՛ նրա երաթում արդեն կուլ զնացող անմեղ որսին:

Ինչ կա որ, Մեկ շաբաթ Բաքվում արյուն է հեղվում, բայց ՏԱՍՍ-ի հեռագրական ժապավենից հորդացող լուրերը ազդարարում են Ավանեսովների ընտանիքում երկու (°) աղբրեջանցիների կացնով սպանելու մասին, Բաքվում գազանացած ամբոխին ոտքի հանելու մեղքը բարդում բանդիտների հարձակումներին դիմակայելու բնագրով ինքնապաշտպանություն գիժած Ա. Ավանեսովի վրա:

Դեպքերի հետագա ընթացքը այդ շապացուցեցին: Հայտնի դարձավ, որ բանդիտները լավ էին նախապատրաստվել: Պարզ դարձավ, որ 1990 թ. հունվարյան «բաբուն» Ավանեսովների ընտանիքի վրա բարդելը ծանոթ ձեռագիր է, թուրքական նենգադավ քաղաքականության շարունակությունը, այն է՝ թաքցնելով իրականությունը, անմեղ ձևանալ, մարդկանց ուշադրությունը շեղել ոճրագործության բուն նախապատճառից ու նպատակակետից, մեղքը բարդել տուժողի վրա: Բայց չէ՛ որ բանդիտները Ավանեսովների տուն են սողոսկել ոչ թե «ուսել-խմելու», այլ եղկելի նպատակով: Անմեղ ջուժակահար: Դու փորձեցիր դիմադրել ատրճանակով զինված քո տունը ներխուժած ելուզակներին: Մի՞թե այդ ձևով կարող էիր խույս տալ քո և քո ազգի նկատմամբ հրոսակախմբերի ձեռնարկած համընդհանուր բնույթ կրող սազիզմից: Քո քույրերն ու եղբայրները տասնյակ հազարներով աչքիդ առջև մորթվել ու քշվել էին իրենց օջախներից: Նրանցից շատերը քեզ նման դիմադրել էին: Բայց ի՞նչ օգուտ: Վիթխարի հոսանքի դեմ պետք է պատենչ կանգնեցնել, գործել միասնաբար, թե չէ մարդակերների ոճմակը ձեզ կուլ կտա, կխեղդի ոլորապտույտի մեջ... Ինչը կատարվեց իրականում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի համագումարներում, ԽՄԿԿ Կենտկոմի պլենումներում ալիևների, բաղիբովների, վեզիրովների փաբիսեցի հավաստիացումներին հավատալով էր, որ ութսունն անց հայրդ, յոթանասունն անց մայրդ և 36-ը բուրբած հաշմանդամ քույրդ ու դու, ահ ու զոչի մեջ շարունակում էիք

ապրել Բաբու քաղաքում, թեև ազգային պատկանելիության համար շարունակաբար արժանապատվության ոտնահարումը, ստրկական վիճակը, հանապազօրյա հետապնդումներն ու հալածանքը՝ ձեր շուրջը տիրող մղձավանջը դարձնում էր սովորական երևույթ:

...Ավանեսովների ընտանիքը, չէինք ասի խաղաղ ու հանգիստ, այլ ահ ու սարսափի մեջ, բնակվում էր Բաբու քաղաքի Խանլարի փողոցի 24-րդ տան առաջին հարկի 31 բնակարանում: Իսկ այժմ ...27-ամյա Ալեքսանդրը Բաքվի բանտախցիկներից մեկում յավագույն դեպքում որպես ամբաստանյալ պետք է հետաքննության տակ լինի: Ութսունամյա հայրը թե որտե՞ղ էր, երկար ժամանակ չգիտեին: Դեպքից հետո, որպես որդու գործած «մարդասպանության» վկայի, նրան պահել են Բաքվում:

Բաքվից մազապուրծ փախած մայրը և քույրը, տասնյակ հազարավոր այլ հայերի հետ մի կերպ հասցվում են Կրասնովոդսկ, այստեղից Սրևան, և ապա՝ Վարդենիսի շրջանի Զարբենդ գյուղը:

Վարդենիսում իմանալով այդ մասին, մեկնեցի Զարբենդ: Վախվորած մայր ու աղջիկ, ահ ու սարսափը սրտներում ծվարել էին Սերգեյի (ազգանունը չիմացա) հյուրընկալ տանը: Սերգեյը ընտանիքով շորս ամիս առաջ բռնազաղթել էր Կիրովաբադից: Վարդենիսում իրենց օջախներում շատերը մարդասիրաբար պատսպարել էին Բաքվից արտաքսված հայերին: Ոմանք հիվանդ՝ վիրավոր ու հոգեկան ծանր կացությանը, բուժում էին իրենց վերքերը և ապաքինվում շրջանի հիվանդանոցներում, ոմանք ժամանակավոր հանգրվանել են հանգստյան տներում:

Իր գոհունակությունն ու շնորհակալական խոսքը ներդամտաբար ուղղելով տանտերերին՝ Սերգեյին, նրա տիկնոջն ու օրիորդ աղջկան, արդեն գրեթե լրիվ ցամաքած, կծկված ու մի բուռ դարձած տիկին Անժելան, վախվորած հայացքը սահեցնելով խիստ մելամաղձոտ ու շոկային վիճակում ապրող աղջկա կողմը, մի կերպ պատասխանեց իմ հարցին.

— Դժոխքից փախել ենք միմիայն շրջազգեստով, աղջիկս առանց ոտնամանի, նույնիսկ առանց հողաթափի: Մեր կամքից անկախ բեռ ենք դարձել այս հյուրընկալ ընտանիքի վրա:

Տանտերն ու տանտիրուհին, գրեթե միաժամանակ, շփոթ կշտամբանքով, նախատելով տիկին Անժելային, պատրաստակամութուն հայտնեցին նրանց պատուպարել իրենց տանը՝ մինչև վարնան բացվելը և հարևան ազատված որևէ բնակարանում նրանց տեղավորելը:

Որդուն կորցրած, ամուսնուց՝ ոչ մի լուր չունեցող տիկին Անժելան, սրբելով արտասուքները, նորից վերապրեց 1990 թ. հունվարի 13-ի այդ դժոխային մղձավանջը, երբ իրենց բնակարան ներխուժեցին մոտ 30—31 տարեկան երկու ագրեսիվ զանցիներ: Նրանք զինված էին ատրճանակներով: Երկուսն էլ ատրճանակները պարզած հրամայում էին կատարել իրենց կամքը:

Ավազակներից մեկը կարում է հեռախոսալարը, փակում գուռը, մյուսը՝ ատրճանակը պարզած, պահանջում է.

— Հանձնել փողը, թանկարժեք իրերը:

— Անձնագրերը և այլ փաստաթղթեր:

— Կես ժամվա ընթացքում առանց աղմուկի ու ավելորդությունների թողնել բնակարանը:

Ինչ կա որ: «Անձեղ» առաջարկությունն է: Տանտերերը չէին հասցրել իրար երես նայել համաձայնություն նշան տալու համար, սրիկան ատրճանակը զեմ է անում Ալեքսանդրի ջուրհին: Վերջինս խույս տալով, պոկվում է նրա ձեռքից և փախչում խոհանոց, նրան հետևում է ավազակը: Խոհանոցում Ալեքսանդրի ձեռքն է ընկնում սեղանին դրված միս կտորոց փոքրիկ կացինը: Կյանքը փրկելու համար նա այլ ելք չունի: Կացնով հարվածում է իր վրա հարձակվող էլուզակին: Վերջինս, ատրճանակը ձեռքին, արյունաթաթախ տապալվում է դետնին: Այդ պահին Ալեքսանդրը նկատում է, որ մյուս բանդիտը պատշգամբում տանջում է հորը: Ծա նետվում է պատշգամբ: Երկուսի միջև սկսվում է մենաճարտ՝ Ալեքսանդրի ձեռքից կացինը խլելու համար: Այդ պահին Ալեքսանդրին հաջողվում է կացնով թեթև հարվածել նաև երկրորդ բանդիտին: Հարվածի ուժը թույլ է լինում, քանի որ կացնից բռնած է եղել նաև անկող «հյուրը»: Վերջինս թեթև վիրավորված, անցնում է սենյակ: Մինչ այդ ուխտունամյա տան-

* Հետագայում պարզվում է, որ նույն ճանապարհով, ինչ շատերը, հայրը՝ Սուրեն Ավանեսովը, նույնպես Երևան է հասնում Կրասնոդարից:

տերը պատշգամբից մի կերպ գուրս է գալիս և շտապ օգնություն հայցում: Բնակարանը առաջին հարկում էր, բարեբախտաբար ծեղրուտն բան չի պատահում: Տանտիրուհին լուսամուտի՞ց, թե՛ պատշգամբից, լավ չի հիշում, ինքն իրեն կորցրած վիճակում ազազակելով, հարևաններին նույնպես աղերսում է շտապ օգնություն հրավիրելու մասին: Մինչդեռ ամուսինը դիպրի մասին արդեն տեղյակ էր պահել թաղային լիագորին, որը ապրում էր դիմացի շենքում: Դեպքի վայրից անմիջապես միլիցիայի բաժանմունք է մեկնել Ալեքսանդրը: Միլիցիաներն էլ Ավանեսովների տանը գտան բանդիտներից միայն մեկին: Մյուս բանդիտը արդեն փախել էր՝ ո՞վ դիտել ինչ ուղղությամբ և ո՞ր հայի բնակարանը ներխուժելու մտադրությամբ:

Մայր ու աղջիկ պատուպարվում են ազդուությամբ ուս մի տիկնոջ բնակարանում, նրան հանձնելով թողալի գրքույկները (36 տարեկան աղջիկը հաշմանդամության թոշակ է ստանում), անձնագրերը և որոշ գումար: Թաղային Հասանովը արդեն շենք ներխուժած և զազանացած ամբոխից մի հնարքով փախցնում է տանտիկնոջն ու աղջկան: Հունվարի 14-ին Ավանեսովների ընտանիքի երեք անդամները միլիցիայի բաժանմունքում են: Հարցաքննությունից հետո ամուսնուն պահում են բաժանմունքում, տղան կալանքի տակ է, իսկ իրենց՝ մորն ու աղջկան, այդպես կիսամերկ, տեղից տեղ փոխադրելով, ծեծկոտված ու շարդուփշուր, երբուհ, հայ կանանց ու երեխաների հետ լաստանավով տեղափոխում են Կրասնոդարի:

Ահա եղելությունը:

Անշուշտ, այլ պարագաներում մարդասպանության համար խիստ պատժի պետք է ենթարկել: Բայց արվեստագետ Ալեքսանդր Ավանեսովի մտքովն անգամ չէր անցնի, թե երբևէ ինքը կարող է չութակի փոխարեն ձեռքը կացին վերցնել, մարդկանց հաճույք պատճառելու փոխարեն մարդ սպանել: Նա ավարտել է Բաքվի երաժշտական ուսումնարանը, ապա՝ կոնսերվատորիան:

Միամիտ չի ենք...

Բաքվում տեղի ունեցող սպանող իրադարձից նախապես մշակված եղկնի ծրագրով:

Ազրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարությանը նախապես պլանավորված կարգով ոտքի ելան հոծ զանգվածներ՝ հայ, օրեր անց ոուս, հրեա ու փոքրամասնություն կազմող այլ ազգությունների Բաքվում և այլ վայրերում ոտնակոխ անելու համար: Որ Բաքուն լավ նախապատրաստված էր, պարզ երևում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանում 1990 թ. փետրվարի 19-ին երկու պալատների համատեղ նիստում Վ. Վ. Բակատինի և ուրիշ պատգամավորների ելույթներից: Վ. Վ. Բակատինը նշում է, որ Բաքվի շարժերը սկսվեցին հունվարի 13-ի «...միտինգից հետո: Ըստ նախապես բաժանված հասցեների, մինչև 5 հազար մարդուց բաղկացած ամբոխները գնացին թալանելու և սպանելու հայ բնակչությանը»: Այստեղ ամեն ինչ պարզ ասված է:

Բաքվիցի մի ուսուցչուհի ոուս փախստական «Ուշիտելսկայա գազետա» թերթում (1990 թ., հունվար, № 5) տպագրած հոդվածում գրում է. «Էքստրեմիստները շատ լավ կազմակերպված էին, որը չես կարող ասել տեղական իշխանությունների մասին: Անցյալ տարվա վերջին ամբողջ քաղաքում, իբր թե մթերքների տալոնները բաշխելու նպատակով տնային կառավարչության գրասենյակները բոլոր բնակիչներից պահանջում էին լրացուցիչ անկետաներու Գրանցում հարկավոր կր հիշատակել նաև ազգությունը: Երբ սկսվեցին շարժերը, էքստրեմիստներն ունեին ճիշտ հասցեներ, թե որտեղ են ապրում հայերը, որտեղ՝ ուսաները, որտեղ խառը ընտանիքներ են և այլն: Դա մտածված ազգայնամոլական ակցիա էր»:

Բաքվի արյունահեղությունները սկսվել են հունվարի 13-ի միտինգից հետո, երբ Ազրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Վեդիրովը հանդիպում է ժողովրդական ճակատի ներկայացուցիչներին և իր համերաշխությունն է հայտնում նրանց պլանների կենսագործման առթիվ: Այդ հանդիպման ժամանակ նրա ելույթը հեռարձակվեց հեռուստատեսությանը: Նա ամբողջ ժողովրդին միաբանվելու և Լեռնային Ղարաբաղի ժողովրդին պատժելու կոչ է անում, հիշատակելով, որ բոլոր շարիքների ակունքը Լեռնային Ղարաբաղն է, ուստի պետք է հիմնահատակ ոչնչացնել շարիքի այդ որջը: Այդ նպատակով Վեդիրովը հիմնավորում է «մեկ բրուունցք» կազմելու անհրաժեշտության գաղափարը, քանի որ

առանձին մատներ իրարից անջատ գործելիս կարող են շարժվել, իսկ բռունցք դարձած՝ ոչ: Ոգևորիչ, շաղակրատ տոնով դիմելով ժողովրդին, Վեդիրովը կոչ է անում, որ «մեր թշնամուն ռադ պետք է անենք մեր ճանապարհից, ինչպես ռադ արեցինք կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարդկանց, հատուկ կառավարման կոմիտեն և շատ շատերին: Մեր ճանապարհը ոչ ոք չի կարող փակել: Լավ իմացեք, կենտրոնը մեր ձեռքում է»:

Այդպես շեղավ՝ Սումգայիթում, Աղզամում: 1988 թ. Սումգայիթյան ցեղասպանությունը և Աղզամի խժոժությունները սկսվեցին այն բանից հետո, երբ Բաղիրովը այցի էր եկել այդ քաղաքները և մեկնել՝ դեպից մի քանի ժամ առաջ:

1990 թ. հունվարի 13-ին Բաքվում գումարված միտինգում Վեդիրովի ելույթից հետո զազանացած ամբոխը դատվ երեք հայի, այդ թվում մի հղի կնոջ, բնիզին լցրեց նրանց վրա և ողջ-ողջ այրեց բոլորի աչքի առջև (Զ. Բալայան, Երեկոյան Երևան, 1990, հունվար):

«Ազրբեջանի ազգային ճակատի և մտավորականության մեղքն է նաև Բաքվի կոտորածը, — պատմում է իր կյանքը մի կերպ փրկած Հոփիսիմե Գյանջումյանը: — Նրանք այնքան անխղճություն արեցին և վայրահալեցին, որ դիտահան անելով, փշացրին իրենց հարազատ ժողովրդին: Պատկերացնում եք, արդեն ութերորդ տասնամյակն ապրող կնոջս մերկացրին հենց հացի խանութում, ծաղրածանակի ենթարկեցին, ջարդեցին կողերս: Բախտավոր եմ, որ իմ ժողովուրդը չի իջել իր բարձունքից: Քառասունութ տարի աշխատում եմ Բաքվի թատրոններում, այն հայերից մեկն եմ, որ նպաստել եմ Ազրբեջանի արվեստի առաջընթացին: ...Մի լաթի կտորով ծածկված, ինձ շարտեցին լատստանովի վրա: Այս շորերս Կրասնոդոսկի գթասիրտ մարդիկ տվեցին: Շնորհակալ եմ, հին է, բայց ծածկված ու տաք է մարմինս:

— Մայրս ութսուններեք տարեկան է, անկողնային հիվանդ, ես և Աննա քույրս՝ թոշակառուներ ենք, — պատմում է Մնացական Կաղակչյանցը: — Քուրբերը շարդեցին դուռը, ներս խոժեցին տուն, առաջարկելով տասը բուպեում «չհանդամվել»: Մայրս ընդդիմացավ: Այս անասունները դուրս հանեցին գառամյալ կնոջը, կողերն ու մատները շարդեցին և նետեցին

բակ: Թույլ տվեցին վերցնել միայն անձնագրեր և աճա աչգ-
պես դափ-դատարի հասել ենք Իջևան»¹: Մի խումբ կանայք
վկայում են, որ հարևանուհիները «Սումգայիթից հետո մեզ
լիքն բարևում, երեսները շուտ էին տալիս և հաճախ վիրավո-
րում ու հարցնում էին. «Դեռ չե՞ք կորել ձեր սիրելի Հայաս-
տան, մնացել եք, որ լրտեսություն անե՞ք»: Վատն այն է, որ
ազդրեչանցի կանայք էլ են կորցրել իրենց մայրական էու-
թյունը, արյան կարոտ գազան են դարձել շատերը»²:

Բարձր մարտակարգ դրություն հայտարարվեց և զորք
մտցվեց միայն այն բանից հետո, երբ սպառնալիքի տակ էր
գրված Ադրբեջանում խորհրդային իշխանության գոյությու-
նը, երբ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերա-
զույն խորհրդի նստաշրջանը Միութայն կազմից դուրս գալու
որոշում էր ընդունել: Նման քայլեր էին կատարվել և խոր-
հրդային իշխանությունը գավթել էին Նախիջևանի Ինքնա-
վար Հանրապետությունում, Կիրովաբադում, Շուշիում, Մին-
գեչաուրում և մի շարք այլ շրջաններում: Տեղական մամուլը,
ուսուցիչները, հեռուստատեսությունը դուրս էին եկել ափերից և
երկար ժամանակ հանդես էին գալիս հակամարդկային ելույթ-
ներով: Մինգեչաուր քաղաքում կուսակցության քաղկոմի
շենքի առջև տեղի ունեցած զանգվածային միտինգում քաղ-
կոմի առաջին քարտուղարը, քաղխորհրդի նախագահը, ներ-
քին զործերի և անվտանգության կոմիտեի տեղական մար-
միներնրի պետերը հրապարակավ այրեցին իրենց կուսակցա-
կան տոմսերը, որը, ի տես աշխարհի, ցուցադրվեց կենտրո-
նական հեռուստատեսությամբ «Ժամանակ» ինֆորմացիոն
ծրագրով: Բարձրում և ամբողջ Ադրբեջանում դրությունը վե-
րահսկվում և կառավարվում էր Ադրբեջանի Ժողովրդական
ճակատի կողմից:

Մի կողմ թողնենք՝ ինչու արտակարգ դրությունը հուն-
վարի 20-ից և ոչ 13-ից է հայտարարվում: Այո՛, մի կողմ
թողնենք այն, որ հրոսակախմբերի նկատմամբ զենք գոր-
ծադրվեց ո՛չ թե հայասպանության կամ մարդասպանների
պատժելու, այլ այն բանի համար, որ սպառնալիքի տակ

զրվեց խորհրդային իշխանության գոյությունը Ադրբեջանում
և երբ ցեղասպանության ալիքը ուրապատույտի մեջ ներքաշեց
ուսս և ուսսայեզու բնակչությանը: Այդ պահից հետո մի-
այն, Ավանեստվեդիան պարսավոր լրատվական հեղեղը շր-
ջեց իր երգապանակի երեսը, փոխեց շեշտագրությունը, ըմբոս-
նալով Ադրբեջանում զինվորականների և նրանց ընտանիքնե-
րի նկատմամբ գրսևորվող իրոք հակամարդկային և բարբա-
րոսական վերաբերմունքի մեջ հավասարապես մեղադրել
նաև հայերին, մաղաչափ անգամ չլեղվելով Ադրբեջանում և
ադրբեջանցիների կողմից գործադրված արարքներից Հայաս-
տանին և հայերին անպայման բաժին հանելու և պիտակներ
կպցնելու նախկին իններցիոն ընթացքից:

Ադրբեջանում զորք մտցնելու մասին ԽՍՀՄ Գերագույն
խորհրդի ուշացած որոշումը սվիններով գիմավորեցին ժո-
ղովրդական ճակատը, նրանց հրամանատարության տակ գոր-
ծող բանդիտները և նույնիսկ Ադրբեջանի Գերագույն խոր-
հրդի նստաշրջանը: Նրանք աշխարհով մեկ ազդարարեցին,
որ իբր զորքը գրոհում է խաղաղ բնակչության վրա, որ կան
շատ սպանվածներ: Օրինակ, Մոսկվայում Ադրբեջանական ԽՍՀ
ներկայացուցչության աշխատակից Մ. Աղաևը հունվարի 20-ին
Ռեյասեր գործակալության թղթակցին հաղորդում է, որ
«փողոցներում շա՛տ-շա՛տ սպանվածներ կան», որ իբր «զոր-
քը գրոհում է խաղաղ բնակչության վրա»:

Նման ստահոգ յուրերով ողողվեց արտասահմանյան մա-
մուլը: Բայց վերջը պարզ դարձավ, թե բանն ինչու մն է:

Ադրբեջանցիները լուծում են այն մասին, որ մինչ զորքի
մուտքը Բաքու, իրենք ստեղծել էին մի այնպիսի իրավիճակ,
որը հանգեցրել էր տասնյակ մարդկային զոհերի, տասնյակ
հազարավոր հայերի, ուսանողների, հրեաների հանրապետու-
թյունից արտագաղթմանը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի եր-
րորդ նստաշրջանի 1990 թ. փետրվարի 19-ին կայացած երկու
պալատների համատեղ լիազումար նիստում Ե. Մ. Պրիմակովը
իր ելույթում ընդգծեց, որ «...մենք Ադրբեջանում բախվեցինք
կոնկրետ իրավիճակի՝ ոճրագործ հայկական ջարդեր Բաք-
վում, որոնք հանգեցրին տասնյակ մարդկային զոհերի և
հաշված օրերի ընթացքում տասնյակ հազարավոր հայերի

¹ Խորհրդային Հայաստան, 1990, 26 հունվարի

² Նույն տեղում:

Հանրապետությունից արտազաղթեցման... Ազդրեջանում մենք բախվեցինք այնպիսի իրադրություն, երբ օգտվելով տեղական իշխանությունների կաթվածահարությունից, Ազդրեջանի ժողովրդական ճակատն ստեղծեց ռազմական միավորում և զինված խմբեր, որոնք շրջափակեցին բանակը, ՆԳՄ զորամասերը, զավթեցին դեմք, այդ թվում նաև՝ բանակային ստորաբաժանումներից, Մենք բախվեցինք սահմանամերձ տեխնիկական համակարգի ավերման և երկու հարյուր կիլոմետրից ավելի երկայնքով Իրանի հետ սահմանի բռնի բացման իրադրություն: Այս ամենը նույնպես արվել է Ազդրեջանի ժողովրդական ճակատի հրամանով...

...Բանակային զորամասերի առջև խնդիր էր դրվել վերատեղաբաշխել և իրենց ներկայությամբ ապահովել բնակչությունն անվտանգությունը: Սակայն ճանապարհները շրջափակված էին, երկաթուղում շրջափակված էր նաև ՆԳՄ այն հատուկ զորքերի տեխնիկան, որոնք արգեն իսկ Բաքվում էին: Առանց այդ տեխնիկայի, ինչպես նաև այդ զորքերին ավտոբուսներ, միկրոավտոբուսներ տրամադրելու մասին խնդրանքների զործնական նենգադուլի պայմաններում՝ ՆԳՄ զորամասերը գրկված էին շարժունակությունից: Այս ամենը կատարվում էր մի քաղաքում, որտեղ բառացիորեն նախօրինակն տեղ էին ունեցել սարսափելի ջարդեր և որտեղ տակավին հայտնաբերվում էին ճանաչված ու չճանաչված դիակներ: Այս ամենը կատարվում էր Բաքվում, որտեղ Ազդրեջանի ժողովրդական ճակատի հրամանով պաշարվել էին պետական շենքերը, փականապատնեղվել քաղաք տանող ու բուն քաղաքի մայրուղիներն ու փողոցները... Պետական սահմանը բացելը հարկավոր էր նրանց, ովքեր ցանկանում էին խոշոր զինված ուժեր ունենալ՝ նախապատրաստվող լայն ծավալի զինված գործողությունների պայմաններում... Ազդրեջանի ժողովրդական ճակատը որոշեց այս կերպ ցույց տալ իր ուժը, ստուգել իշխանությունների ամրությունն ու կայունությունը... գրոհայինների ձեռքով բնկած զինվորների ու սպաների կյանքերի գնով փրկվել են հազարավոր խաղաղ բնակիչների կյանքեր: Մի՞թե սա սրբապղծություն չէ: Այո՛, զոհվել են ոչ միայն գրոհայիններ, այլև անմեղ մարդիկ: Բայց ո՞ւմ խղճի վրա է նրանց մահը: Արդյոք գնդակոծմանը կրակով պատասխա-

նած զինվորների՞ խղճի վրա, թե՞ այդ հրոսակների, որոնք թաքնվել էին բնակելի տներում»³:

Լայնորեն տարածվեցին սուտ լուրեր այն մասին, որ Բաքվում, տանկերի թրթուրների տակ զոհվել են հազարավոր մարդիկ, կանայք ու երեխաներ: Մինչդեռ Գ. Տ. Յազովի տրվյալներով «ամենակրտսեր տարիքով մարդը, որը զոհվել է առաջին հերթ օրերի բնթաքցում, 14-ամյա մի տղա էր, որը գտնվում էր գրոհայինների շարքերում... Իսկ ամենատարիքավոր կինը՝ ծնված 1915 թվականին, մահացել էր ինֆարկտից, բայց թաղվել էր որպես թրթուրների տակ զոհվածի: Յուրաքանչյուր քայլում՝ զրույցարություն, կեղծիք»⁴:

Բաքվում ազդրեջանցիներին բարբոթելու և ոտքի հանելու համար ժողովրդական ճակատը դիմում է ամեն մի պրոֆոկացիոն քայլի: Հունվարի 19-ի—20-ի դեպքերից հետո հանրապետությունում ստեղծված այնպես կոչված շարաքերական դադարից հետո Ազդրեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում 12 պատգամավորներ հայտարարում են, որ Բաքվում ծովայինների ուսումնարանում մարտ է գնում բանակի հետ: Ուսումնարան մեկնած հատուկ հանձնախումբը պարզում է, որ դա պրոֆոկացիոն հայտարարություն է: Կամ ինչով բացատրել, որ զոհված 49 մարդկանց թաղելու համար Բաքվում փորել են 150 գերեզման:

Ազդրեջանի ժողովրդական ճակատը լավ նախապատրաստվել էր ոչ միայն զանգվածային ջարդեր և բռնադատվելու կազմակերպելու, այլև զինվորականներին դիմակայելու, նրանց հետ հաշվհարդար տեսնելու, ՆԳՄ ուժերը չեզոքացնելու, Ազդրեջանի ՆԳՄ հետ հնարավորությունները լիովին օգտագործելու համար: Այդ նպատակով նրանք գործի դրեցին նորագույն տեխնիկայով և զենքի բոլոր տեսակներով զինվելու շատ միջոցներ: Զինվորական ստորաբաժանումներից և ՆԳՄ պահեստներից զենք ու տեխնիկա զավթելու հետ մեկտեղ օգտագործվեցին ազատորեն Իրանից բերված սպառազինության տեսակները: Օրեր շարունակ խախտելով Իրանի հետ պետական սահմանը, երկու կողմից էլ ազատ էլ ու մուտ էր

³ Ավանգարդ, 1990, ? մարտի:

⁴ Նույն տեղում:

կատարվում: Իրանցիները զենքի առևտուր էին կազմակերպել Ադրբեջանում՝ Պոլշիկինայում և Զալալաբադում: Մոլդորական էին դարձել զենքի հափշտակումները, ուղիղակցիտն կալանները շարքից հանելը, կապի միջոցներին բռնություններ տիրելը և այլն: Այլապես, Բաքվում տեղի ունեցող ջարդի օրերին Ադրբեջանի ժողովրդական ճակատը ինչ հնարքներով կարող էր իր տրամադրությունն առկա ունենալ առաջամեքենայի հավաքակալանի այնպիսի միջոցներ, որոնք սարքավորված էին սահմանափակումներով, շրջում էին քաղաքով մեկ և հազորդույններ վարում յուրաքանչյուր վայրում⁵: Ըստ Գ. Տ. Յազովի տվյալների սահմանի 200 կմ երկարությամբ և Բաքվում 60 կմ ընդհանուր երկարությամբ, մեկ շաբաթ շարունակ ամբողջություններ էին պատրաստվում, որոնք կապվում էին «...նոր կրԱԶ-ներով կամ կամԱԶ-ներով, զրանց արանքներում պարտադիր կերպով բևեռատար մեքենաներ էին դրնում: Այս ամենը եռակցվում էր, ամրացվում, պատրաստվել էին հրկիզող խառնուրդներով շշեր և այս ամբողջը պահպանվում էր գործաչինների կողմից: Ամեն մի այսպիսի բարիկազում կամ արգելակուտակում 70-ից մինչև 700 մարդ էր գտնվում»⁶:

Գ. Յազովը իր ելույթում բերում է փաստեր, որոնք վերկայում են այն մասին, որ ժողովրդական ճակատը լավ գիտենալով, որ զինվորները մանկական հիվանդանոցի վրա շեն կրակի, այնտեղ տեղավորել են զիպուկահարներին, տեղաբաշխել գրոհայիններին, բացի դրանից, տեղադրել են հզոր լուսարձակներ՝ զինվորական ավանը լուսավորելու համար: «Եվ դեռ զինվորները ներս չէին թափել,— շարունակում է իր ելույթը Գ. Տ. Յազովը,— երբ նրանց հրամանով լուսարձակները միացվեցին, և սկսվեց դաժան հրաձգություն այն զինվորների վրա, որոնք տեխնիկական վարելու համար զինակազմվել էին Ռոստովի մարզից և Կրասնոդարի երկրամասից: Այստեղ առաջինը զոհվեց շոքս մարդ, և առաջինը վիրավորվեցին դեսանտայինները: Եվ, բնականաբար, երբ շարասյունները քաղաք մտան, բոլոր պատուհաններից կրակ էին տե-

լում, և ես նույնիսկ կասկածում եմ, թե արդյոք դեսանտայինները՝ կրակոցներից են զոհվել խաղաղ բնակիչները: Ռոստովում այս կողմից կրակում են, այն կողմից կրակում են, ո՞ր է թռչում զնդակը, ո՞ր զնդակից է վիրավորվել մարդը, ի՞նչ իմանաս⁷: Ավելին «...մի կին դիմել է ՆԳՄ սերժանտներից մեկին խնդրելով՝ «օգնիր, ես վախենում եմ մտնել մոթ նրբանցք»: Նա գնում է ուղեկցելու, հենց առաջին իսկ անկյունում նրան շշմեցնում են, բարձր տալիս բնակարան, աչքերը կապում, մերկացնում և ի վերջո տանում են, վզին օղակ գցում և նետում գերեզմանոց: Այս սերժանտը կենդանի մնաց, իր մեջ ուժ գտավ, կարողացավ դուրս պրծնել այդ օղակից»⁸:

Այս և նման կարգի երևույթները Ադրբեջանում ներկայացվում է շատ պարզեցված տեսքով: Մինչդեռ ժողովրդական ճակատի և նրա հետևից զնացողների ու ճակատը ղեկավարողներից շատերի բարոյական նորմերը գնահատելու միակ շափանիշը դարձել է սադիզմը: Թեև նրանք սովոր են իրենց մեղքերը բարդել ուրիշների վրա և գրանով մեղադրել հենց նրանց, ում նկատմամբ գործադրում են ոճիրը: Այդ մասին է վկայում այն վայնասուներ, որ բարձրացավ Ադրբեջանում՝ Բաքվում արտակարգ դրություն հայտարարվելուց հետո:

Բաքվում կատարվածի համար ոչ ոք զղջումի պահ չապրեց: Ավելին, ամենուրեք անպակաս էին բողոքի ցույցերն ու ամեն ինչ աակն ու վրա անելու սյուտրաստակամություն դրսևնորումները, իրենց իսկ գործադրած վանդալիզմը ուրիշների վրա բարդելու կոչները:

Ադրբեջանի Շեքի բաղաբում 1990 թ. հունվարի 21-ին տեղի ունեցած «օգո» միտինգի մասնակիցները ՆՄԿԿ Կենտկոմին և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին հղած հեռագիր կոչով իրենց բողոքն են արտահայտում Բաքու քաղաքում արտակարգ դրություն հաստատելու առթիվ, իրավիճակը կարգավորելու նպատակով կառավարության կողմից ձևանարկվող հարկադիր, բայց ճիշտ քայլերը որակավորում որպես «վանդալիզմ», «բռնություն»: Այդ հեռագրում մասնավորապես

⁵ Ավանգարդ, 1990, 7 մարտի:

⁶ Նույն տեղում:

⁷ Ավանգարդ, 1990, 7 մարտի:

⁸ Նույն տեղում:

անվում է, «Շեքի համաքաղաքային միտինգի մասնակիցներն և Շեքի հուսկազմակերպության անդամներն անսրող առևտրային ընդունեցինք Քաջու քաղաքում արտակարգ դրուժյուն հայտարարելու լուրը, ժողովրդի համար սրբազան զինվորատական շարժումը հնչելու նպատակով հանրապետության մայրաքաղաք զորքեր մտցնելը, անթիվ անմեղ քաղաքացիների արյուն հեղելը Ամբողջ տեղի ունեցածը գնահատում ենք որպես վանդալիզմ, խառնիվ դատապարտում ենք հումանիզմի բարձր իդեալներին հակասող զործողությունները և պահանջում ենք վերջ գնել այդ անեղին: Մենք պահանջում ենք շուտափույց կերպով վերացնել արտակարգ դրուժյունը Քաջու քաղաքում»:

Հավանաբար անհրաժեշտություն չկա քաղվածաբար մեջ բերել Ազրբեյջանի մամուլում և լրատվական այլ միջոցների կողմից այդ օրերին Քաջու զորք մտցնելու գեմ բարձրացված վայնասունին, մոպեդված հերյուրանքին, իրենց մեղքը զորքի և հայ ժողովրդի վրա բարդելուն և այլ լպիքը բանասերություններին: Բավարարվեք միայն 1990 թ. հունվարի 21-ին Եուլիի հեռուստատեսությանը հեռարձակվող տեքստից կատարված մեջբերումներով: Եուլիի հեռուստատեսային հաղորդումները այդ օրերին լսում էր ամբողջ Ազրբեյջանը: քանի որ Բաքվում հեռուստատեսության կայանը չէր գործում: Ահա այդ հեռարձակվող նյութերից մի քանի շարք կցկատուր մեջբերումներ. «...տանկերով, ավտոմատներով մեզ ոչնչացնելու հրաման տվող Մոսկվայում նստած մեր ղեկավարը ինչու՞ այդ օրերը Հայաստանում չկիրառնու:

Այս միջոցառումը Հայաստանում պետք է գործադրվեր: Երբ այնտեղ, պետության դեմ ելնելով, 250 հազար ազրբեյջանցիներին ջրում էին Ազրբեյջան, այն ժամանակ էլ զա հրաշալի կերպով կարելի էր կատարել»:

«...Հարց է ծագում՝ ո՞րն է պետության ղեկավարության կողմից ազրբեյջանական ժողովրդի նկատմամբ ցեղասպանության քաղաքականություն կիրառելու պատճառը: Պատասխանը միայն մեկն է: Հայերին դուր գալու համար վերացնել Ազրբեյջանը որպես պետություն, և ժողովրդին էլ՝ որպես ժողովուրդ: Այսօր մեզ ամբողջ Ազրբեյջանն է լսում: Եթե մենք

այսօր հետ կանգնենք մեր պայքարից, ապա կհանգենք իսպառ ոչնչացման փաստի առաջ»¹⁰:

Ինչ է, հայերին դուր գալու համար է, որ առ այսօր կենտրոնը չի դատապարտում և քաղաքական գնահատական չի տալիս Ազրբեյջանում իրականացվող ցեղասպանությունը:

Չէր խանգարում և այն, որ հաղորդումներում հորինվեին հազարավոր ստեր և, առանց ամսթի, հայտարարվեք, որ հատուկ նպատակով Քաջու ուղարկված զինվորները հայեր են: Հեռարձակվող տեքստում ուղղակի ասվում է. «Եթե մի հանձնաժողով ստուգեր այդ զինվորների կազմը, կպարզեր, որ նրանք Հայաստանից, Ազրբեյջանից գնացած և Ստամբուլում, Կրասնոդարի երկրամասում ապրող հայեր են: Նրանց հատուկ հանձնարարություն է տրված, նրանք մեր հանդեպ վայրագություններ անելու առաջադրանք ունենալ»¹¹:

Ազրբեյջանի ժողովրդական ձեռագրեր, նրա ղեկավարությունը այդ օրերին հրահրում էին ժողովրդին, հակահայկական թույնով բորբոքում բուրդին՝ իրենց պայքարը մինչև «հաղթական վախճան» հասցնելու համար: Նրանք ուղղակի կոչ են անում. «Մենք այս պայքարը պետք է շարունակենք մինչև մահ, մինչև այն օրը, որ աստված գուցե մեր ձայնը լսի: մեզ օգնության հասնի: Ծա հույս ունեմ, որ կհասնի»¹²:

Այս գեռ բուրդը չէ: Զարմանալի այն է, որ Ազրբեյջանի Գերագույն խորհրդի նախագահությունը բողոք է հայտնում Բաքվում արտակարգ դրուժյուն մտցնելու կապակցությանը: Ըստ Վ. Վ. Բակատինի «...Սա այնպիսի դիրքորոշման արտահայտություն է, որ լիովին համընկնում է ժողովրդական ձեռագրի այդ ծայրահեղականների դիրքորոշմանը: Եվ անհասկանալի է անձամբ ինձ համար, թե օրինակ ինչու՞ բողոք չհայտնվեց ավելի շուտ, երբ խորհրդային իջեանությունը բացահայտորեն տապալվել էր, օրինակ, Լեննորանում, Բաքվում և այլ վայրերում: Անհասկանալի է, թե ինչու՞ հանրապետության կառավարությունն ու Գերագույն խորհրդը բողոք չհայտնեցին, երբ Բաքվում շարժվեք էին տեղի ունենում»¹³:

¹⁰ Կրական թերթ, 1990, 3 փետրվարի
¹¹ Նույն տեղում:
¹² Նույն տեղում:
¹³ Ավանգարդ, 1990, 7 փետրվարի:

⁹ Կրական թերթ, 1990, 2 փետրվարի
164

Ազրբեջանում բնավ չի հիշատակվում հունվարի 13-ից 19-ի ընթացքում հանրապետությունում տիրող հակամարդկային մթնոլորտի, եղկելի վարքագծի մասին: Նրանք իրենց հատուկ դիվանագիտությանը նախահարձակ են լինում նախորդ օրերի բարբարոսություններն ու ոճիրները ստվերում թողնելու համար: Ըստ որում նման դիվանագիտական քայլի են դիմում ոչ միայն ժողովրդական ճակատը, այլև կառավարությունը, Գերագույն խորհուրդը, Մոսկվայում Ազրբեջանի մշտական ներկայացուցչությունը և այլ կազմակերպություններ:

Այս կապակցությամբ նրանք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Լրկրորդ նստաշրջանի փետրվարի 19-ի երկու պալատների համատեղ լիազուցմամբ նիստում, ինչպես նաև պատգամավորների շրջանում տարածում են ոչ միայն Ազրբեջանի Գերագույն խորհրդի մակարդակով կազմակերպված հատուկ հանձնաժողովի հայտարարությունը, այլև զանազան փաստաթղթեր, նյութեր, տեսաֆիլմեր: Իրանցում շրջանցվում են հունվարի 13-ից 19-ի դրամատիկ դեպքերը: Այդ առումով հենց նույն նիստում Մ. Ս. Պետրուշենկոն դիպուկ նկատում է, թե «...ինչո՞ւ չցուցադրել ՊԱԿ-ի տեսաֆիլմը: Ինչո՞ւ չբազմացնել ամսի 13-ից 18-ը ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած բոլոր հանրահավաքների սղագրությունները, հանրահավաքներ, որտեղ կախաղաններ էին տեղադրված՝ ոչ թե խոհրդանշական, այլ իսկական...» (ընդգծումը մերն է — Վ. Խ.):

Նկատի առնելով այն, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամները տեղավորված էին «Մոսկվա» հյուրանոցում, փետրվարին, նստաշրջանի օրերին, ազրբեջանցիները պատգամավորներին թյուրիմացության մեջ պցնելու նկատառումներով՝ առիթը բաց չթողնելով, հյուրանոցի նախասրահում բացել են լուսանկարների և այլ փաստաթղթերի ցուցահանդես: Հյուրանոցի մուտքի մոտ մի խումբ ազրբեջանցի երիտասարդներ պատգամավորներին դիմավորում են «Պահանջում ենք դատապարտել Բաքու դորքեր մտցնելը», «Պատասխանատվության կանչել արտակարգ դրության նախաձեռնողներին», «Բանակը տեղորոշում է» և նման կարգի պլակատներով: Նույն հյուրանոցի մուտքի՝ մոտ ազրբեջանցի երիտասարդների զեմ-դիմաց կանգնած էին մի խումբ ուսու փախստական

կանայք՝ Բաքվի զոհերը, որոնք տրանսպորանտները ձեռքներին հայցում էին՝ «Ռուսներ, օգնեցե՛ք Բաքվի ուսաներին», «Մենք փախել ենք դժոխքից»¹⁴:

Ի՞նչ ասել, զահիճն էլ է արգարություն հայցում, զոհն էլ: Նույն կարգով այդ օրերին Մոսկվայում Ազրբեջանական Հանրապետության մշտական ներկայացուցչությունը դարձել էր Ազրբեջանի ժողովրդական ճակատի մասնաճյուղը: Այդ կազմակերպությունը գործադրում էր ամեն ջանք, նպաստելու Մոսկվայում ազրբեջանցիների հակահասարակական և հակաիրավական ուժերի միավորման համար: Այդ է վկայում «Եղվիստիա» թերթի 1990 թ. հունվարի 30-ի համարում զետեղված հետևյալ հաղորդումը.

«Մոսկվայում Ազրբեջանական ԽՍՀ մշտական ներկայացուցչությունը, տարածելով լուրեր ու հնարքներ, կարողացել է ոչ միայն կեղծել հանրապետությունում գործերի իսկական վիճակի մասին տվյալները, Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այն, հակառակ իր ստատուսի, դարձել է Ազրբեջանի ազգային ճակատի մասնաճյուղը Մոսկվայում: Նրա շնքը տրամադրվում է զանազան հանդիպումների, միտինգների և ասուլիսների համար, որոնցում միտումնավոր, ոչ ճիշտ տեղեկություններ են տրվում հանրապետության իրադարձությունների մասին: Այդ ամենը նպաստել է Մոսկվայում բնակվող կամ այնտեղ գտնված ազրբեջանցիներին հակահասարակական և հակաիրավական արարքների ներգրավելուն»¹⁵:

Ավելին, այդ ներկայացուցչությունը դարձել էր Ազրբեջանի ժողովրդական ճակատի անդամների, քրեական հանցագործ տարրերի թաքստարան:

Ազրբեջանի ժողովրդական ճակատը, մտավորականության ջատ ներկայացուցիչներ, օգտվելով հանրապետության կառավարող մարմինների հովանավորությունից, չբավարարվեցին իրենց հանրապետության սահմաններից հայ բնակչության բռնի արտաքսումով, նրա նկատմամբ գործադրած վանդալիզմի վայրագ դրսևորումներով: Նրանք ամեն ինչ արեցին, որպեսզի խժգժություն կազմակերպեն Սամարղան-

14. Երևիդան Օբևան, 1990, 16 փետրվարի:

15. Եղվիստիա, 1990, 30 հունվարի:

դում, Գուշանքեում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Զանազան հնարքներով այդ ուղիներում սկսեցին տարածել հակահայկական լուրեր և տեղի բնակիչներին զրգռել հայերի դեմ:

Սաղիստական արնախում բնազդով հետամուտ եղան Բաքվի սպանդից մի կերպ մաղապուրծ փախած հայ կանանց, մանուկներին ու ծեղերին, որոնք կողմարային վիճակով հանգրվանել էին Գուշանքե քաղաքում: Այստեղ Ազգրբեջանի ժողովրդական ճակատի ներկայացուցիչները կողմից տարածված անհեթեթ լուրերի ազդեցության տակ հայերի դեմ ոտքի ելան շատ տաքաղուխներ, նրանց հավատացրին, որ փախտական հայերը պիտի զբաղեցնեն Գուշանքեում շուտով շահագործման հանձնվող բնակարանները: Հակահայկական հիստերիայով բորբոքված խառնամբուրը ոչնչի առջև չկանգնեց. ջարդուփշուր արվեցին բնակարաններ ու խանութներ, կատարվեցին հրկիզումներ, բռնություններ, ծեծ ու ջարդ գործադրվեցին անմեղ մարդկանց հկատմամբ:

Հակահայկական խմորումները թե էլ ինչի կհասցնեին, դժվար է ասել, եթև այդ խժողժությունների դեմ հանրապետությունում միջոցներ չձեռնարկվեին: Բարեբախտաբար Տաշիկստանի իշխանությունները, մտավորականությունը, բուն ինքը ժողովուրդը աներկբայորեն հասկացան և ըմբռնեցին ազրբեջանցիների ձեռնարկած պրովոկացիայի ողջ իմաստը: Կատարվածի, խարված լինելու համար զայրույթի ու վրդովմունքի հետ միասին ամոթի զգացում է արտահայտված այդ օրերին տաջիկ մտավորականության ներկայացուցիչների կողմից հայ ժողովրդին հղված ուղերձում, ուր մասնավորապես հիշատակվում է. «...Մենք՝ տաջիկ մտավորականություն ներկայացուցիչներս, ներողություն ենք խնդրում և խորին ափսոսանք ենք հայտնում եղբայրական, պսոտականորեն խորապես հարգելի, բազմաշարք հայ ժողովրդին... Վերջին ժամանակներս որոշ տարրեր, օգտվելով մեզանում առկա գովարտություններից և տարածելով կեղծ լուրեր՝ խաբեցին մարդկանց և արամադրեցին նրանց ջնդղեմ մեր եղբայր հայերի: Եվ մենք էլ պատրաստ չլինելով դրան՝ չգտնվեցինք բարձրության վրա: Մենք ի վիճակի չեղանք հևնց սկզբից խափանել մեր ժողովրդի համար այնքան անցանկալի երևույթը

և հետևաբար չկարողացանք գծրախտության մեջ գտնվող ցեղակից մեր եղբայրներին պատասպարելու և գուրգուրելու, ինչ որ մեզանից պահանջում էին մեր ժողովրդի դարավոր համահավաք խիղճը և հայրենասիրական մեր բազմադարյա ավանդույթները:

Եվ մենք ամոթով մնացինք:

...Տաջիկ բազմաշարքար ժողովուրդը իր հազարամյա պատմության ընթացքում երբեք չի ձգտել ճնշելու ուրիշներին, ուրիշի հողը չի գրավել, չի թալանել ուրիշի բնակավայրերը, այլ հավատարիմ իր մարդասիրական ավանդույթներին, մշտապես մնացել է հյուրասեր ու բարի: Տաջիկների հյուրասիրությունից օգտվել են վաղիատուն և քուլդր ցեղերը, գաշտերի բնակիչները, որոնք բռնագրավել են մեր հայրենիքի մեծ մասը:

Մենք՝ տաջիկ մտավորականության ներկայացուցիչներս, հավատարիմ ենք տաջիկ և հայ ժողովրդի իմաստնությունը և հուսով ենք, որ այսուհետև մեր սուրբ բարեկամությունը անխոցելի կլինի տարրեր սաղրիչների և հրահրողների խայթերից: Մեր՝ տաջիկներին համար, նույն ճակատագիրն ունեցող մեր սիրելի և տաղանդավոր հայ ժողովրդին նեղացնելը իսկապես ցավալի է: Բարեբախտաբար, մեզ հաջողվեց ժամանակին կասեցնել այդ խլրտումները և այդ պատճառով մեր հայ եղբայրներից որևէ մեկը չտուժեց»:

Ազրբեջանի սաղրիչները ոչնչի առաջ չեն կանգնում: Հյուսիսային Կովկասում հայերի նկատմամբ թշնամանք սերմանելու, ուռաների և այլ ազգությունների հետ դարեր ի վեր կողք կողքի հաշտ ու համերաշխ ապրող հայերի միջև սեպ խրելու շարանենք նպատակով 1990 թ. փետրվարի կեսերին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անունից թուուցիկներ են տարածվում Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում: Այդ անհեթեթ հորինվածքի հեղինակները Վազգեն Առաջինի անունից հայերին կոչ են անում՝ ուսաներից մաքրել և Մեծ Հայաստանին միացնել Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի տարածքը:

Տեսեք, թե լկտիությունը ուր է հասել: Ամենայն հայոց կաթողիկոսը «Սովետական Կուրան» թերթի խմբագրին, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասային և Ռոստովի մար-

զային խորհրդային ղեկավարներին հեռագրով իր զայրույթն է արտահայտել այդ բանասարկու թուլացիկի և նրա հեղինակների գեմ՝ հերքելով իր հեղինակությունը նման թուլացիկի առկայությունը: Ամենայն հայոց կաթողիկոսի հեռագիրը տրււմ պարզվել է Կրասնոդարի, Ստավրոպոլի, Ռոստովի կենտրոնական թերթերում, հեռարձակվել է հեռուստատեսությունում:

Դոնեցկի ածխահանքերի թյուրիմացության մեջ պցելու ու հատուկ խժողովուրդներ ստեղծելու նպատակով Ազրբեջանական ԽՍՀ Ֆիզուլի քաղաքի «ժողովրդական ճակատի» ներկայացուցիչները 1990 թ. հունվարի վերջին իրենց հայրենակիցների անունից համերաշխության կոչով հեռագիր են հղում Դոնեցկի մարզի Շախտյորսկ քաղաքի բոլոր ածխահանքերի գործադուլային կոմիտեներին: Այդ հեռագրով պահանջ կոչ են անում շահագրգռել... Ազրբեջանի գրություն մասին ամեն կարգի զրպարտչական հերյուրանքներին և այդ հիման վրա իրենց զայրույթի խոսքն ասեն Մոսկվայի, կենտրոնի հասցեին»¹⁶:

Դոնեցկի հանքագործները Ֆիզուլիից ստացված հեռագիրը որակեցին որպես պրովոկացիա: Այն զայրույթից բացի այլ արձագանք չգտավ: Ածխահանքերի համար հեռագրի պրովոկացիոն բնույթը պարզ է դառնում հենց այն երևույթով, որ այդ օրերին Դոնեցկի օդանավակայան ժամանած բազմաթիվ ինքնաթիռներ փոխադրում էին Բաքվի ջարդերից մազապուրծ փախած զինծառայողների ընտանիքների անդամներին: Նրանք արդեն տեղյակ էին Բաքվի զանգվածային ջարդերին ու մարդակերության դեպքերին:

Տաշքենդում ՏԱՍՍ-ի թղթակից Վ. Պրուզբը այդ հարցին նվիրված իր հոդվածում նշում է, որ Ազրբեջանի ժողովրդական ճակատի առանձին լիդերներ թշնամանքի ու անվտանգության սերմեր են ցանում նաև երկրի մյուս ռեզիտներին ժողովուրդների միջև: Եվ վկայակոչում է նրանց սարքած սադրանքը, որը օպերատիվորեն բացահայտել են Ուզբեկստանի զինվորական օկրուգի «Ֆրունզովեց» թերթի լրագրողները:

«Ուզբեկական ԽՍՀ զինվորական կոմիսարի հասցեով

Ազրբեջանի ժողովրդական ճակատի Ուշարիի շրջանային բաժանմունքի ստորագրությունը հեռագիր էր ստացվել (գրաֆոտոպատճենը վերատպվել է թերթում) այն մասին, թե Բաքվի կայազորի Սալյանիի զորանոցներում ուսուսուցողի զինվորների փոխհրաձգության հետևանքով իբր զոհվել է 58 ուզբեկ:

Նմաբարության հանձնարարությունը Բաքվում «Ֆրունզովեցի» հատուկ թղթակից կապիտան Ա. Վելիչըր եղավ Սալյանիի զորանոցներում, հանդիպեց զինվորների և սպաների հետ: Եվ ահա թե ինչ պարզվեց:

Իրադրությունն այդ շրջանում լարված է եղել: Ռազմիկների վրա (նրանց մեջ կան թե՛ ազրբեջանցիներ, թե՛ ուզբեկներ) քանիցս կրակ են բացել ազրբեջանական ժողովրդական ճակատի գրոհայինները: Ուզբեկ շարքային Խ. Սալիգովը, որը զորակոչված է Բուխարայի մարզից, պատմել է, որ իր և իր ընկերների վրա սկսել են կրակել մոտակա տների կրտուրներից: Մարտական տեխնիկայի զրոսայգում ծայրահեղականների գնդակոծության տակ է հայտնվել նաև մեկ ուրիշ ուզբեկ ռազմիկ՝ շարքային Շ. Էգամանազարովը: Հրամանի համաձայն զինվորները ինքնապաշտպանության նպատակով ստիպված են եղել պատասխան կրակ բացել: Իսկ ինչ վերաբերում է հենց ռազմիկների միջև ազգային հողի վրա եղած թշնամանքին և, իբր տեղի ունեցած փոխհրաձգության հետևանքով ինչ-որ «զոհերի» առկայությանը, ապա դա բացարձակ հերյուրանք է, որի մասին հայտարարեցին բոլոր նրանք, ում հետ զրուցեց լրագրողը՝ սպաներ Վ. Բոչուկը, Ա. Բերեստը, ապա Ա. Նարչենկոյի ստորաբաժանման ռազմիկները և շատ ուրիշներ:

Դե ինչ, ծայրահեղականների հերթական սադրանքը պայթեց օճառի պղպղակի պես: Բայց դրան չհան հաջորդի արդյոք ուրիշները:

Թղթակցի անհանգստությունը զուր չէ: Նման բանասրկություններով նրանք հաճախ են հաջողությունների հասնում:

Ինչևիցե, հենց այս բոլորի հետևանքով Ազրբեջանից բրուկազաղթած փախստականների ընդհանուր թիվը ավելացավ նաև Դուշանբեից և Տաշկանական ԽՍՀ-ի այլ քաղաքներից, Տյումենից, Դոնեցկից, Աշխաբադից, Տաշքենդից - արտա-

¹⁶ Խորհրդային Հայաստան, 1990, 1 փետրվարի:

զաղթած հայ բնակչությանը Գրանց մի մասը ակամա ուղե-
վորվեց Հայաստան, մյուս մասը՝ Խորհրդային Միության այլ
վայրեր:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկայումս հանրապետությունը լեփ-լեցուն է փախըս-
տականներով: Երեք տարվա ընթացքում դրանց ընդհանուր
թիվը հասավ շուրջ 300 հազարի: Նրանց մեծ մասը շունի
տուն ու տեղ, գրադմուկ, օրվա ապրուստ վաստակելու որևէ
հնար: Երեք տարի է, ինչ կանգնել ենք փաստի առջև, բայց
կենտրոնական մարմինները զարմանալիորեն չեն ուզում
մտցնել «փախստական» կարգավիճակը: Թեև 1990 թ. ինչ-
պես ԽՍՀՄ, այնպես էլ Հայկական ԽՍՀ մի շարք որոշումնե-
րով փախստականներին միանվազ նպաստ հատկացնելու,
վերնազդեցատ, կոշիկ, առաջին անհրաժեշտության այլ ապ-
րանքներ ձեռք բերելու համար դրամական օգնություն
ցույց տալու հետ միասին առաջ են քաշվում փախստական-
ների բնակեցման, տնտեսական, սոցիալական, իրավական
և այլ բնույթի խնդիրները լուծելու ծրագրեր: Այդ որոշումնե-
րով միջոցներ են ձեռնարկվում փախստականների բնակա-
րանների փոխանակման, պետական բնակֆոնդից նրանց
բնակարաններ առանձնացնելու, անհատական և կոոպերատիվ
հիմունքներով բնակարանաշինարարության նպատակով հողա-
մասեր առանձնացնելու, նրանց անհատական և կոոպերատիվ
բնակարանաշինարարության աշխատանքներում ընդգրկելու,
արտոնյալ պայմաններով վարկ տրամադրելու, անձնական
ունեցվածքի պատճառած վնասները փոխհատուցելու, թոշա-
կավորման, երեխաների ուսուցման, առողջապահության,
կենցաղային ծառայության և բազմաբարդ այլ հարցեր կար-
գավորելու համար:

Այդուհանդերձ, հոգսերը լուծում են ստանում դանդաղու-
րեն, 1988—1990 թթ. ընթացքում հանրապետության և Միու-
թյան մի շարք վայրերի առողջարաններում, հանգստյան տը-
ներում, քաղաքներում, հարազատների մոտ ժամանակավոր

ապաստան զտած փախստականների թիվը ավելանում էր
ժամ առ ժամ:

Փախստականների առանց այն էլ ծանր վիճակը շատ ավե-
լի վատթարացավ և կատարյալ անմխիթար դարձավ 1988 թ.
դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդի գլխին պայթած անասելի
աղետի հետևանքով:

Ի՛նչ զուգահեռություն...!

Հայ ժողովրդի սրտի խորքում, վերստին, և այն էլ որերորդ
անգամ, բացվեց մի նոր մեծ ու խոր վերք: Հազիվ սկսել էին
սպիանալ առաջին և երկրորդ աշխարհամարտերի տարիներ-
ին ամեն մի ընտանիքին հասած վերքերը, հազիվ էր որդե-
կորույս մայրը գերեզման մտնելով՝ աչքը կտրել ճանապար-
հից, այրին՝ հաշտվել անժառանգ մնալու և կամ էլ որդուն
առանց հոր մեծացնելու մորմոքին և ահա... առժամանակ
խաղաղված ու ստեղծագործ կյանքի պտուղները վայելելու
կարոտակեզ հայը ակամա կանգնեց անհավատալի արհավիր-
քի առջև: Ծակատադրին հավատալ, թե շահավատալ, դա
ամեն մեկի խզճի և հավատի գործն է, բայց որ հայ ժողո-
վրդին, այն էլ հաճախ կյանքի ժողովման պահերին, բաժին
է ընկնում իր հետևանքներով հեռուն գնացող դաժան ու
դառը ճակատադիր, դա արդեն անժխտելի իրողություն է:

Այս անգամ էլ ճակատադրի բերումով նրան բաժին ըն-
կավ համաշխարհային պատմության մեջ նմանը չունեցող
մեծ ողբերգություն: Երկրաշարժի ավերիչ ուժն ընդգրկեց
ավելի քան 1 մլն 130 հազար բնակչություն ունեցող որոշակի
կոլորիտով օժտված Շիրակի և Գուգարայ աշխարհը: Նրա
էպիկենտրոնում էին (ենթեականը՝ ավելի քան 230 հազար,
Կիրովականը՝ ավելի քան 176 հազար բնակչությամբ): Մեկ
ակնթարթում լրիվ կամ մասնակիորեն գետնի երեսից շնչ-
վեցին Սպիտակ և Ստեփանավան քաղաքները, հարյուրից
ավելի գյուղեր: Դաժանորեն կյանքից զրկվեցին ու խեղվեցին
տասնյակ հազարավոր մարդիկ, շարն ու բարին շոկած ան-
մեղ երեխաներ: Պաշտոնական տվյալներով ավելի քան 530
հազար մարդ օթևանազրկվեցին և մնացին առանց տանիքի:
Ներկայումս հանրապետությունում անօթևան է 700 հազար
մարդ: Շատերը թողեցին իրենց բնակավայրերը և ցրվեցին
հանրապետությունով մեկ (շուրջ 350 հազար մարդ) և 170

Քաղաք մարդ էվակուացիայի և հանգրվան գտավ Կովկասի ծովափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասի և երկրի այլ վայրերում, առողջարաններում, հանգստյան տներում և այլուր։ Հազարավոր խեղճած երեխաներ, պատանիներ ու աղջիկներ բուժման նպատակով առաքվեցին Միութայան և արտասահմանյան տարբեր երկրների քաղաքներ։

Երկրաշարժը հանրապետությունում սոցիալ-տնտեսական զարգացման ու տեղաբաշխման նախապես մտադրված շատ պլանների հետ մեկտեղ ի չիք դարձրեց Ադրբեջանից հայրենիք արտաքսված տարաբախտ փախստականների բնակեցման, զբաղվածության, ապրուստով ապահովելու, հոգևոր պահանջմունքների հետ կապված հույժ կարևոր խնդիրներին գորավիչ կանգնելու, բոլոր հարցերի անհապաղ լուծումը։

Այս պարագաներում առժամանակ մոռացվեց, հետին պլան մղվեց այն ժամանակ հանրապետությունով մեկ ցրված ավելի քան 200 հազար փախստականների նկատմամբ դեթ տարրական հոգատարություն և հասարակ վերաբերմունք ցուցաբերելու խնդիրը։ Ավելին, փախստականներն իրենք, ԼՂԻՄ-ի հայ բնակչության հետ միասին, գործադրելով գերմարդկային ճիգեր՝ փլատակների տակ կյանքի ու մահվան հետ գոտեմարտի բռնված մարդկանց դժոխային կացությունից մի կերպ փրկելու համամարդկային գործի էին ընդգրկվել։

1988 թ. դեկտեմբերյան դաժան ու սառնաշունչ օրերին մեկ բաժին հասած խոր վերքը կսկիծ պատճառեց ոչ միայն հայ ժողովրդին, Սև բոթը ակնթարթում տարածվեց աշխարհով մեկ, Երկրագնդի քարտեզի վրա հազիվ գնդասեղի ծայրի մեծություն ունեցող Հայաստանը իր վրա սեռեց մեր մոլորակի ողջ մարդկության ուշադրությունը։

Անկախ ազգային, կրոնական, սոցիալական, քաղաքական, կուսակցական ու դասային պատկանելության, պետական կառուցվածքի, երկրի բոլոր ժողովուրդների հետ միասին «դեպքի վայր» շտապեցին աշխարհի բոլոր ծայրերից։ Մարդիկ գալիս էին մեր խորք և ցավատանջ վերքը բուժելու, փրկատակների տակ մահի ու կենաց համար պայքարի մեջ մերտած մարդկանց կյանքը փրկելու, Ֆիդելկապես ու հոգեպես

խեղճածների անհետաձգելի բուժման գործը կազմակերպելու, ցրտաշունչ ձմռանը բաց երկնքի տակ մնացած մարդկանց ժամանակավոր օթևան տրամադրելու և հնարավոր ու անհնարին այլ կարգի օգնություն ցույց տալու ակնկալությամբ։

Գեպի Հայաստան, հողագնդի այդ փոքրիկ լեռնաշխարհն են հաղորդվում հազարավոր, տասնյակ հազարավոր ոչ միայն սոսկ ցավակցական հեռագրեր, այլ դեպի Հայաստան են թռչում տարբեր երկրների գրողներ կրող օդանավեր, գրեցքներ ու ավտոմեքենաների անթիվ ու անհամար շարասյուններ։ Գերբեռնված են օդանավայանները, երկաթուղիները, ավտոխճուղիները։ Վերացել են տարբեր երկրները միմյանցից բաժանող սահմանները։ Աշխարհը դարձել էր մեկ քնտանիք, մեկ շունչ, մեկ հոգի և շտապում էր դեպի Հայաստան։ Գալիս են տարբեր մասնագիտությունների ու զբաղմունքների տեր մարդիկ, իրենց հետ բերելով փրկարար շներին «չոկատներ», առաջին անհրաժեշտության իրեր՝ տնակներ, հանգերձանք, սնունդ, դեղորայք, բժշկական սարքավորումներ։ Օդային ուղերթով աշխարհի և երկրի տարբեր մասերից արյուն առաքվեց Հայաստան։ Տեխնիկայի կուտակում, մարդկային աշխատող ձեռքերի և փրկարար ջոկատների կենտրոնացում՝ մարդկանց փրկելու, հող ու մոխիր դարձած փլատակները մաքրելու, նորը վերստին կառուցելու և կյանքը վերականգնելու համար։

Ոտքի է կանգնել երկիրն ու աշխարհը՝ աղետյալ ժողովրդին փրկության ձեռք մեկնելու ակնկալությամբ։

Հայ ժողովուրդը ընդամենը մեկ ակնթարթում կանգնել էր ողբերգության առջև։ Դա բնության ներքին օրենքներով հարուցված դաժան խաղ էր, թե նրա քմահաճույցի դրսևորում, խնդրի բուն էության հետ բնավ էլ առնչություն չունի։ Բնության համար հող չէ, որ վերջին հարյուրամյակի ընթացքում հայ ժողովրդի համար ստեղծվում են ճակատագրական պահեր։ Հենց այս հարյուրամյակում նա ենթարկվել է եղեռնի, տեսել է սուր ու հուր, եղկելի հալածանք, սադիզմ ու զրկանք, կորցրել է հող ու հայրենիք, վերագտել այն։ Քանի՞ քանի՞ անգամ է ավերված երկիրը շենացել, բայց նորից կանգնել է բարդ ճակատագրի առջև, Կորցրել է Անի, Դվին, Կարին, Ար-

տաշատ, Զվարթնոց, Գառնի և այլ բերդեր ու քաղաքներ, միլիոնավոր մարդիկ, Բայց կրկին հառնել ու շինացրել է իր քաղաքներն ու ավանները:

Տարակույս չկա, որ հայ ժողովուրդը իր մեջ կգտնի ուժ ու կորով և վիշաբ սրտում վերստին կարարի երկիրը Նախրյան, նոր ոգով կվերստեղծի կորցրած քաղաքները, գյուղերն ու ավանները: Եվ թեև շի վերագործնի կորսված վազմենիկ կյանքերը՝ իրենց անհատականություններով, բայց կավելացնի ծնվող երեխաների թիվը և դրանով իսկ կյանք կտա նոր անհատականությունների ու տաղանդների: Կյանքը վերակերտելու և առաջադիմության շնորհիվ միայն հնարավոր կդառնա հավերժացնել զոհերի հիշատակը:

Ինչպե՞ս էլ կասկած չի հարուցում, որ հայ ժողովուրդը, մեր երկրի բոլոր ժողովուրդների և համաշխարհային հասարակության բարի կամքի տեր մարդկանց անշահախնդիր օգնություններով, բռնի մեծ լարումով այս անգամ էլ կհառնի մոխիրներից, կստեղծագործի ու կարարի: Ժամանակի ընթացքում այս վերքը նույնպես կսպիանա, և ցավը հուշ կդառնա...

Ժամանակը, այդ տարողունակ ժամանակը, ինչքան դառը և ուրախ հուշեր է ծալք-ծալք ամբարել և դարձրել պատմություն՝ «լավ» կամ «վատ» պատմություն: Եվ ամեն մի պատմություն, թեև դառնում է անցյալ, բայց նա պարունակում է ներկան և ապագան: Այն ներկա է այնքանով, որ դրանից դասեր են քաղվում, ապագա՝ այնքանով, որ այդ դասերի հիման վրա մշակվում է որոշակի քաղաքականություն՝ անցյալի դառնություններից խուսափելու, անցյալը կրկնվելու դեմ պատենչ կանգնեցնելու համար:

Հասկանալի է, որ առաջնահերթ ու հույժ կարևոր մտահոգությունն ու ժամ առ ժամ լուծում պահանջող խնդիրը ազետից անմիջապես հետո՝ ավելի կամ պակաս տուժած ու կործանված քաղաքների ու գյուղերի վերականգնումն էր: Բայց այդ հանգամանքն այժմ արդեն լպետք է ստվեր գցի փախրստականների նկատմամբ հոգատար վերաբերմունքի վրա: Այդ առումով հարկավոր է մտահոգվել ընդհանրապես տարարնակեցման և մասնավորապես փախստականներին բռնակեցնելու մտածված քաղաքականություն մշակելու և կիրառելու մասին:

Որտե՞ղ բնակեցնել ազետից տուժած և անտուն մնացած մարդկանց, որտե՞ղ և ինչպե՞ս բնակեցնել փախստականներին, որ միաժամանակ լուծում ստանան նրանց բանական պարզվածությունն ապահովելու հարցերը: Բավական է ասել, որ 1989 թ. դեկտեմբերին աշխատանքային տարիքի շուրջ 50 հազար փախստականներ ներդրված չէին հանրօգուտ աշխատանքում: 100 հազար մարդ ընդհանրապես տեղավորված չէր, 52 հազարը գրանցում չունեին: Զմուռանաք, որ դրան ավելացան 1990 թ. Բարձրից բռնազաղթված և Միջին Ասիայից հեռացած գաղթականները: Ինչպես նկատեցինք, այդ թիվը ժամ առ ժամ ավելանում էր: Իհարկե, այդ նպատակի համար որոշ հնարավորություններ ընձեռեցին հանրապետությունն այն շրջանները, որտեղից արտագաղթել են աղբրեջանները: Մագում են որոշակի ղեկավարություններ կապված այն բանի հետ, որ արտագաղթածները գրեթե ամբողջությամբ գյուղական բնակիչներ էին, հիմնականում ունեին գյուղատնտեսական դրավուներ: Մինչդեռ փախստականների մեծ մասը արդյունաբերական դրավուների տեր քաղաքաբնակներ են: Այդ պատճառով էլ փախստականների մեծ մասը առայժմ հանգրվանել է հանրապետության տուժած այն էլ գերբնակեցված քաղաքներում՝ մասնավորապես Երեվանում, Աբովյանում, Զարենյավանում, Աշտարակում, Հրազդանում և այլուր: Այս քաղաքներում նրանք հանգրվանել են իրենց հարազատների մոտ, որոնք Աղբրեջանական ՍՍՀ-ից արտագաղթել և բնակություն են հաստատել տասնամյակներ ու տարիներ առաջ: Հանրապետության կառավարող շրջաններում տիրում էր մտայնություն դրանց հենց նրանում, Հրազդանում, Զարենյավանում, Աբովյանում գերտնցելու մասին: Նման մտայնությունը բաժանել չի կարելի: Ինչ նշանակում է այսուհետև նույնպես շարունակել այն վերտանգավոր քաղաքականությունը, որ հանգեցնում է նրանի և նրա արբանյակ քաղաքների հիպերտոնիկ աճին: Դրանով իսկ մենք ավելի ու ավելի ենք ծանրարեանում Արարատյան հարթավայրի (այդ թվում Երևանի) և Աբովյան, Զարենյա-

՝ Այդ մասին մանրամասն տե՛ս Վ. Ե. Խոջաբեկյան, Ազետ և մտահոգություն, Ե., 1989, էջ 7—19:

վան, Աշտարակ, Հրազդան ատանց այդ էլ գերբեռնված արդունարբերական հանգույցները: Ոչ միայն երկրաշարժի հետևանքները վերացնելու, փախստականների բնակեցման ու զբաղմունքով ապահովելու խնդիրները լուծելու, այլ ընդհանրապես տարաբնակեցման և քաղաքաշինության հարցերը վճռելիս հարկավոր է մշակել մի այնպիսի քաղաքականություն, որն ըստ ամենայնի նպաստի դեպի Երևան միգրացիոն հոսքերը կարգավորելու, խիստ կրճատելու, նրա բնական անի հետևանքով ավելացող բնակչությունը հանրապետության այլ ռեգիոններ տարաբնակեցնելու, ինչպես նաև սահմանամերձ գոտիների հետագա ամրապնդման հարցերի լուծմանը: Այս անշուշտամբ, փոքր քաղաքների հետագա շափավոր զարգացման հետ, կենսական նշանակություն են ստանում հանրապետության սահմաններում մի քանի միջին մեծության քաղաքների ստեղծման և դրանց տեղադրվածության ճիշտ վայրերի ընտրության հարցերը:

Երևան քաղաքը բեռնաթափելու անշուշտամբ որոշ հույսեր պետք է կապել Եվրոպոլիսի ճիշտ վայրն ընտրելու հետ: Այդ հարցի առթիվ շահագրգիռ կազմակերպությունների կողմից կազմակերպված ջննարկումների ժամանակ և մամուլում արտահայտվում են իրարամերժ, բայց ուշադրության արժանի տեսակետներ: Հարցի շուրջ բանավեճի մասնակիցների ճնշող գերակշռությունը գտնում էր, որ Եվրոպոլիսը պետք է համնադրել Երասխավանից դեպի արևելք՝ Պարույր Սևակի տեղանք կրող ավանի հարավարևելյան բլրաշարքերի և դաշտադատարկների վրա:

Ոչ այնքան շատ կողմնակիցներ ունեցող երկրորդ տեսակետի հեղինակները գտնում էին, որ Եվրոպոլիսը նպատակահարմար է կառուցել Երևանից 30—35 կմ դեպի հարավարևելք, հորհրդակերտ ավանից մինչև Երասխավան ընկած բլրազանդվածների վրա: Նման տեսակետի հիմքում ընկած է Երևանի բեռնաթափմանը նպաստելը և, ընդհանուր առմամբ, ի տարբերություն առաջին և հաջորդ տեսակետների, որևէ առանձին տնտեսական շրջանի գյուղական բնակավայրերը հետագա ամայացման վտանգից զերծ պահելը:

Ըստ երրորդ տեսակետի (Երևանի բեռնաթափման և գյուղական բնակավայրերի հետագա ամայացման վտանգ չըս-

տեղծելու առումով), Եվրոպոլիսը կառուցելու հավանություն կարող է ներկայացնել Եզվարդից դեպի հյուսիս բնկած տարածքը, այն լեռնալանջերը, որոնք մեծ մասամբ գյուղատնտեսության համար օգտակար դեր խաղալ չեն կարող:

Չորրորդ տեսակետը հանգում էր Եվրոպոլիսը Քալինի շրջանում, Արապած երկաթուղային կայարանից հյուսիս, Մաստարա պետակի աջ ափին կառուցելու հարցադրմանը:

Շատերը հիմնավորում են Եվրոպոլիսը Զանգեզուրի հյուսիսում՝ Սիսիանի կամ Գորիսի համեմատաբար հարթ հատվածներում կառուցելու նպատակահարմարությունը:

Չխորանալով մամուլում հրապարակված ամեն մի տեսակետի մանրամասների մեջ, կարծում եմ, Եվրոպոլիսի տեղադրման վայրը վճռելիս պետք է նկատի առնվեն մի շարք շափանիշներ: Նախ, Եվրոպոլիսը պետք է կառուցել այս փոքրիկ հանրապետության մի այնպիսի տարածքում, որ նրա բնակչությունը շահավայրի միմիայն մեկ առանձին վերցրած տնտեսական շրջանի բնակչությամբ: Եա կարող է նախապայման դառնալ հենց այդ տնտեսական շրջանի գյուղական բնակավայրերի ամայացման համար: Եվրոպոլիսի բնակչությունը պետք է համայնել բոլոր տնտեսական շրջանների բնակչության և մասնավորապես Երևանի հաշվին: Ուստի՝ 150—200 հազարահոց այդ քաղաքը չպետք է կառուցել ո՛չ Զանգեզուրում և ո՛չ էլ Քալինում:

Երկրորդ, Եվրոպոլիսը պետք է նպաստի Երևան քաղաքի բեռնաթափմանը:

Երրորդ, նոր քաղաքը պետք է ապահովված լինի խմելու և կենցաղային ու արտադրական նպատակների համար անհրաժեշտ այնպիսի ջրային պաշարներով, որ որևէ շափով չվնասի Սևանին: Հետևաբար, բացառվում է այդ քաղաքի տեղադրումը Սևանի ավազանում և Հրազդան գետի հոսանքն ի վար ընկած տարածքում: Այդ տեսակետից քննության չի դիմանում Քալինի ջրազուրկ տարածքը: Ինչ վերաբերում է Զանգեզուրի տարբերակին, ապա շոտոսնանք, որ Սևանի ապագան այս կամ այն շափով կապվում է նաև Որոտանի հետ: Խմելու ջրի հարցը բաց է մնում նաև Սևակավանի տարբերակի դեպքում:

Չորրորդ, քաղաքը պետք է հիմնել մի այնպիսի տարած-

քում, որը տրանսպորտային ակտիվ կապերով էլք ունենա դեպի արտաքին աշխարհ կամ օժտված լինի նման հնարավորություններով:

Հինգերորդ, քաղաքը պետք է կառուցվի սահմանամերձ գոտում՝ ունենալով պաշտպանական նշանակություն:

Վեցերորդ, առավելագույնս պետք է խուսափել հանրապետությունում մշակելի հողային զանգվածներին վնաս պատճառելուց:

Ինչևէ, քաղաքը պետք է կառուցվի, և այն էլ որոշակի պայմանով. քաղաքից տեսանելի լինի Արարատ լեռը, Երևանից գտնվի մինչև 50 կմ հեռավորություն վրա:

Վերահիշյալ բոլոր պայմաններն ինչ-որ շահով (ոչ բացարձակ) կարող են բավարարել Երասխավանից Սևակաշեն և Նուբարաշենից Երասխավան ձգվող տարածքներում նոր քաղաքի տեղադրման տարրերակները, որոնք, սակայն, շատ քիչ կողմնակիցներ ունեն: Սևակաշենում նոր քաղաք կառուցելու թերի կողմը խմելու ջրի պակասն է ու շոգ կլիման, որոնք հավանաբար քիչ շահով կարող են նպաստել Երևանի բնակավայրի մասին: Ինչ վերաբերում է Նուբարաշեն-Երասխավան տարածքի տարբերակին, որը գտնվում է բոլոր տեսակի հողորդակցության ուղիների հանգույցում, բացի այդ ունի պաշտպանական նշանակություն, ջրի որոշակի պաշար, ապա այս տարբերակը «չարյաց փոքրագույնն է»:

Առաջարկվող տարբերակի առավելությունը նաև նոր քաղաքը գերազանցապես Երևանի և մասնավորապես մյուս տնտեսական շրջանների բնակչության համալրելու հնարավորությունն է: Այս տարբերակի թերի կողմը Արարատյան հարթավայրին մոտիկությունը և շոգ կլիման է: Ուստի պետք է խստագույնս խուսափել քաղաքը մաղաչափ անզամ դեպի հարթավայր թեքելուց, այլապես ոչ թե անաշինություն, այլ տնաքանդություն կլինի: «Չարյաց փոքրագույն» պետք է համարել նաև Եղվարդից դեպի հյուսիս ընկած տարբերակը: Ջրից բացի, այն բավարարում է վերը շարադրված մնացած բոլոր պահանջներին, նաև օժտված է զով կլիմայով:

Ճիշտ է այն կարծիքը, որ Արարատյան հարթավայրի համար մի նոր բնակավայր կգառնա Աշտարակի շրջանի Արուճ գյուղի մոտ, ասենք, 100 հազարանոց մի նոր քաղաքի

կառուցումը: Այդ քաղաքը, ոչ թե 100, այլ 35—40 հազար բնակչությամբ, հավանաբար նպատակահարմար է կառուցել հենց Թալինի շրջանում, ուր տաջարկվում է հիմնադրել Եվրոպոլիսը: Մի բան է 100—200 հազարանոց, մի այլ բան՝ 85—40 հազարանոց քաղաք կառուցելը: Թեև երկու դեպքում էլ ջրի հարցը մնում է պրոբլեմ:

Հատկապես Երևան քաղաքի աճն ըստ ամենայնի սահմանափակելու քաղաքականությունը նպատակահարմար է զուգակցել փոքր քաղաքների այնպիսի զարգացման հետ, որոնցում բնակչության զբաղվածությունը նպաստի գյուղական բնակչությանը իր նախկին բնակավայրերում պահելուն: Նըպատակահարմար է, օրինակ, խորհել հանրապետության ամեն մի տնտեսական շրջանում 60—70 հազարանոց մի քաղաք ստեղծելու, կամ ներկա քաղաքներից որևէ մեկին նման գեր բնակչություն մասին: Այդպիսի քաղաքը, միջշրջանային տրանսպորտային նորմալ ցանցի պայմաններում, տվյալ տնտեսական շրջանի բնակչության կենտրոնաձիգ պրոցեսը կդուրակցի կենտրոնախույսի հետ: Դրանով իսկ քաղաքի ազդեցությանը ավելի ապրող գյուղական բնակչությունը կապահովվի ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատանքով: Գյուղական բնակչից, աշխատելով քաղաքում, հոծարություններ կապրի իր նախկին բնակավայրում, իր տանը, որն ունի տրանսմերձ հողամաս, ուր կան լավ պայմաններ հանգստի, գյուղատնտեսական բնույթի աշխատանքը ոչ գյուղատնտեսականների հետ զուգակցելու համար: Բացառությամբ Արարատյանի, այդպիսի քաղաքներ կարելի կլինի ստեղծել հանրապետության մնացած բոլոր տնտեսական շրջաններում (Շիրակի, Գուգարքի, Սևանի, Աղստևի, Սյունիքի): Ինչ վերաբերում է Արարատյան տնտեսական շրջանին, ապա այստեղ նման դերը, որ առավել քան անհրաժեշտ է, ստանձնել են դրա խոշոր, միջին և փոքր քաղաքները: Երկրաշարժից առաջ նման քաղաքներ էին կենդանական և կիրովականը: Ժամանակի ընթացքում նրանք իրենց այդ դերը նորից կստանձնեն: Եվրոպոլիսի և նոր հիմնադրվող քաղաքների հետ կապված մի շահագրգիռ կարևոր նկատառում է:

Անբնդունելի է այն հարցադրումը, որ Եվրոպոլիսի բնակիչներին պետք է ճեղքել ո՛չ Երևանից, ո՛չ էլ Հայաստանի

այլ վայրերից», այլ այն պետք է բնակեցնել Ադրբեջանի փախըստական հայերով: Գործում եմ, պետք է մեկընդմիշտ հրաժարվել փախստական հայերի համար առանձին, քիչ թե շատ խոշոր բնակավայրեր կառուցելու վերաբերյալ անընդունելի հարցադրումներից: Նման ոչ պրոֆեսիոնալ մտայնման օգտին չեն խոսում հետևյալ մի շարք նկատառումները.

Առաջին. ցանկացած քաղաք. այն էլ 150—200 հազար բնակչությամբ, ոչ երկու-երեք, այլ էլ հինգ-վեց տարում չի կառուցվի: Գա նշանակում է, որ մեր փախստականները 5—10 տարի պետք է ընկնեն ղոնեղուտ, Անկասկած, նրանցից ջատակրը մինչ այդ կանավորվեն: Հետևաբար, մի նոր տեղահանությունը այնքան էլ դյուրին ու բարեկիրթ չի լինի:

Երկրորդ. առաջարկվող կարգով խնդիրները լուծելիս տարիներ ի վեր թերի կմնա աշխատունակ բնակչության, մասնավորապես աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության գրավունքի հարցը: Իսկ դա հարցերի հարցն է: Մարդիկ կզրկվեն նաև ըստ իրենց մասնագիտությամբ աշխատելու հնարավորություններից: Ծիջտ է, շինարարության և տրանսպորտի գծով մասնագետները, մասամբ երիտասարդները, կարող են ընդգրկվել ծավալվող շինարարական աշխատանքներում, շինարարությանը և աշխատավորությանը սպասարկող տրանսպորտում: Իսկ ինչ՞ով պետք է զբաղվեն այլ մասնագիտությունների տեր մարդիկ, հատկապես կանայք:

Յրրաջ. կովանը հայերեն սովորելն է: Փախստականները մեծ մասամբ հայերեն լավ չեն խոսում, իսկ գրել-կարդալ քչերը գիտեն: Եթե 200-հազարանոց քաղաքը միմիայն փախըստականներով համարվի, ուրեմն նրանց սերունդները նույնպես կդատապարտվեն այն ճակատագրին՝ ինչ վիճակվել է նրանց ծնողներին: Փախստականների հետ հանդիպելու նպատակով հաճախ եմ ավտոբուսով Երևանից ուղևորվում Վարդենիս: Հիմա Վարդենիս ուղևորվող ավտոբուսների ուղեվորների կեսը փախստական է: Միմյանց հետ նրանք բացառապես խոսում են ռուսերեն՝ հավանաբար զգուշանալով «չարդված» հայերենով հաղորդակցվելուց: Բազմիցս ուշադրությամբ հետևել եմ ավտոբուսում ուղևորների ընթացքի թերթերին. դրանք «Պրավդա», «Իզվեստիա», «Ուլխտելսկայա գազետա», «Սովետսկայա Ռոսիա» և ռուսատառ այլ լճ-

րագրեր են, հայերեն թերթեր ընթերցողներ գրեթե չկան:

Չորրորդ. տարբեր տեղերից բռնագաղթված փախստականների մոտ հարյուրավոր տարիների ընթացքում մշակվել են կենցաղի, նիստուկացի, վարք ու բարքի, սովորական վարքագծի և հոգեբանության յուրահատուկ նորմեր: Իրա հետ մեկտեղ, նրանք աննկատ ընդօրինակել ու յուրացրել են հայ ժողովրդի սովորությունների հետ առնչություն չունեցող և մեր հարևաններին հատուկ վարվեցողություն, առօրյա նիստի կաց: Ինչ խոսք, լավ սովորությունները, որ ժողովրդին էլ հատուկ լինի, ընդօրինակելով և փոխառնելով, հարստացնում ես քոնը: Իսկ վա՞րը: Զէ՞ որ դա ևս բացառված չէ: Ուստի շատ լավ կլինի, որ իրենց լավ սովորությունները շարունակելու հետ մեկտեղ, փախստականները յուրացնեն նաև տեղիներ, և, ընդհակառակը, տեղացի բնակչությունը, ընդօրինակելով նրանց լավ սովորություններն ու հոգեբանական գծերը, ավելի հարստացնի հայ ժողովրդին հատուկ ընդհանուր ավանդական յուրօրինակությունները: Այս ճանապարհով ասպարեզը կգիշեն ձեռքբերովի և մեր ժողովրդին անհարիր սովորություններ:

Խորհելու տեղիք է տալիս նաև մի կարևոր նկատառում: Յոթնասուն տարուց ի վեր Ադրբեջանի հայ ժողովրդի մեջ արդեն մարմնավորվել է մարդկային արժանապատվության օտնահարման և ազգային հալածանքին դիմազրավելու ինքնապաշտպանության և ներքին խոռվք ապրելու զգացումը (որը հաճախ պոռթկում է): Մայր հայրենիքում, իր ժողովրդի հետ զոյապայքարի ընդհանուր միջավայրում նման խռովքի առիթ չկա, թեև ազգային արժանապատվությունը բարձր պահելը ամեն մեկի սուրբ գործն է, ինչ միջավայրում էլ նա ապրելիս լինի:

Ձեռքբերովի շատ սովորություններ ասպարեզից շատ արագորեն կարող են դուրս գալ խառը բնակչությամբ, որը ավելի բնական է: Այս առումով, անշուշտ, որոշակի դժվարություններ են հանդես գալիս այն պատճառով, որ փախստականների մեծ մասը, ինչպես ասվեց, քաղաքի բնակիչներ են եղել, մինչդեռ հանրապետությունում բնակվելու հնարավորություններ կան գյուղական բնակավայրերում: Արարատի, Մախի, Եղեգնաձորի, Վայքի և Վարդենիսի շրջաններում շատ

փախստական քաղաքարնակներ բնակութիւնն են հաստատել գյուղական վայրերում և հարմարվելով տեղի պայմաններին, իրենց շատ լավ են գգում: Ինչու՞ չէ, բնակարանի հետ միասին կա ընդարձակ տնամերձ հողամաս, ուստի և աշխատանքով վաստակելու հնարավորութիւն: Առաջին դժվար քայլը գյուղում ապրելու մտքի հետ հաշտվելն է, թե չէ հողը ինքք հեշտութեամբ, առանց ադիտացիայի, մարդուն կապում է իր հետ: Արի՞՜ չէ հողից բարիք ստանալու բերկրանքը: Գյուղում ապրելու լուրջ հեռանկար է բացվում հողասեփականութեան ձևերի փոփոխութեան կապակցութեամբ:

Աղբրեշանից բնագաղթված քաղաքային բնակիչները իրականում ծանր վիճակ են ստեղծել ոչ միայն Սրեանում, այլև Արարատյան հարթավայրի քաղաքներում, մասումբ արդեն նրա գյուղերում, Աբովյանում, Չարենցավանում, Հըրաղզանում: Ծանր կացութիւնն է ստեղծվել Քաթիլի բարբարոսական զեպերից հետո: Բռնագաղթվածների մեծ մասը թողնակառուներ են՝ գազանաբար հողատուներ ու հաշմանդամ դարձած, որոնք գերազանցապես ժամանակավոր ապաստանել են հանրապետութեան առողջարաններում, հանգստյան տներում, հիվանդանոցներում, բնակիչների մոտ:

Այդ իմաստով հարկավոր է, ընդհանուր առմամբ, ավելի մեծ ուշադրութիւն դարձնել արդյունաբերութեանը հանրապետութեան փոքր քաղաքներում և դյուղական շրջաններում սեղաբաշխելու, դրանցում (հատկապես յեռնային շրջաններում) բնակչութեան սպասարկման ոլորտի ճշուդերը առավել բարձր տեմպերով զարգացնելու հարցերին: Հիշյալ քաղաքներում անհրաժեշտ է ստեղծել աշխատանքի և բնակվելու այնպիսի բարենպաստ պայմաններ, որոնք դեպի իրենց ձգեն ոչ միայն խոշոր քաղաքների աշխատանքային տարիք մանող երիտասարդութեան որոշ մասը, այլև պատրաստաբեկ հարեան հանրապետութեան քաղաքային փայրերից բնագաղթված հայերին: Այս հարցը կարելի է լուծել ոչ թե փախստականների համար նոր քաղաքներ կառուցելով, այլ ներկայումս գերազանցապես փոքր քաղաքներում և քաղաքատիպ ավաններում քիչ չափերով բնակչութիւնն ավելացնելու միջոցով: Մեր հաշվարկներով, հանրապետութեան 58 քաղաքներից ու քաղաքատիպ ավաններից 28-ում (բացա-

ռութեամբ Արարատյան տնտեսական շրջանի և մի շարք այլ քաղաքների) բնակչութիւնը 1000-ից մինչև 5000-ով (նայած քաղաք) ավելացնելու պայմաններում, առանց նոր քաղաքներ հիմնելու, հնարավոր կլինի բնակեցնել շուրջ 120—130 հազար մարդ: Նման մոտեցումը նպաստավոր է նաև վերջ հիշատակվող նկատառումներով. մի քանի տարում հնարավոր կլինի բնագաղթված բնակչութեանը ապահովել բնակարանով, իրականացնել խառը բնակեցում, որով իսկ կլուծվեն նրանց լեզվի, նիստ ու կացի շատ հարցեր: Այս ճանապարհով կթեթևանա նաև զբաղմունքի խնդիրը: Փոքր քաղաքներում դյուրութեամբ կլուծվի աշխատանքի հարցը: Նախ երիտասարդութեանը, համապատասխան մասնագետներին և բանվորական աշխատող ձեռքերին, համապատասխան վարձատրութեամբ, կարելի է ընդգրկել հենց կառուցվող բնակարանների շինարարութեան մեջ և տրանսպորտում: Այդ զբաղմունքի սեր մարդիկ կարող են ընդգրկվել փոքր քաղաքի հասարակական արտադրութեան որևէ ոլորտում, որը, համեմատաբար քիչ միջոցներ ներդնելով, կարելի է ընդարձակել ավելի կարճ ժամանակամիջոցում, քան նոր աշխատատեղերի ստեղծումն է 150—200 հազարանոց նոր կառուցվող քաղաքում: Այդ առումով մեծ դեր է պատկանում փոքր ձեռնարկութիւնների ստեղծմանը, ասոցիացիաների և ակցիոներական ընկերութիւնների կազմակերպմանը, անհատական աշխատանքային գործունեութեան ծավալմանը:

Փախստականներ բնակեցնելու բարի մտահոգութեամբ ոմունք առաջ են քաշում նաև այսպիսի հարց՝ երկրորդ եվրոպոլիսը (կամ մեկ այլ անունով քաղաք) «ստեղծել Արարատյան դաշտի արևմուտքում, այսօրվա Հոկտեմբերյանի և Բաղրամյանի շրջանների մեջտեղում, Արաքսի ձախափնյա կիսանապատում: Զխոսելով Արարատյան հարթավայրում քաղաքային բնակչութեան գերհագեցվածութեան մասին, այդ քաղաքը առաջարկվում է բնակեցնել փախստական նավթագործներով և զազագործներով:

Նման առաջարկութիւնը հիմնավորում են, իբր թե նավթի ու գազի պաշարների առկայութեամբ: Այդ ի՞նչ պաշարներ են: Զարմանալի է, ինչպես շատ զեպքերում, մենք ինչու՞ ենք օչուր շտեսած բորկանում»: Այդ նույն «հիմնավորվածու-

թյամբ» կառուցեցինք Հրազդանի լեռնաքիմիականը՝ անթափոն արտադրություն ստեղծելու եղանակով քառասուն տեսակի արտադրանք ստանալու երազանքով:

Ստացանք միմիայն ցեմենտ՝ կարծես բնաշխարհը շարքից հանելու, էկոլոգիան թունավորելու համար:

Այսօր էլ նավթի ու գազի մտացածին «պաշարներով» Արարատյան մի բուռ հարթավայրն ենք շարքից հանելու Մյուս կողմից, եթե Արարատյան հարթավայրում քաղաքաշինությունը շարունակենք հենց այս ոգով, ապա ժամանակի ընթացքում ողջ հարթավայրը Երևանի, Արովյանի հետ միասին, կզանա մեկ մեծ քաղաք: Ավելորդ չեմ համարում նորից հիշատակել իմ այն մտավախությունը, որը հրապարակվել է երկրաշարժից տարիներ առաջ և վերաբերում է Երևանի հեռանկարին, ուր բառացի ասվում է. «Եկեք մտածենք նաև պաշտպանական նկատառումներով: Հապա բնության աղետնե՞րը: Չե՞նք վախենում արդյոք բնության վրիժառու-թյունից: Մեզ ոչինչ չե՞ն հուշում Վրաստանի հեղեղները, ոչինչ չի՞ հուշում Չերնոբիլը: Ի՞նչ կասեն գալիք սերունդները: Մեզ կզամեն անարգանքի սյունի՞ն, թե՞ կխորհեն, կհարինեն ու կգտնեն «արդարացուցիչ» փաստեր, ինչպես այժմ Սևանի հարցում ենք հորինում: Իսկ արդյո՞ք թույլ չենք տալիս այնպիսի մի նոր սխալ, ինչպես եղավ Սևանի հարցում: Այնինչ նրա ջրերի դարեր կուտակված սաշարները սպառվեցին ընդամենը մեկ տասնամյակում»:

Այո՞, երբ քննադատական խոսքեր էին լինում կամ մի տարակուսանք, գտնվում էին մարդիկ, որոնք արդարացնում էին Սևանի ջրերի դարավոր պաշարները մեկ տասնամյակում սպառելու փաստերը, պատրվակ բերելով Հայաստանի գարգացող արդյունաբերությունն անհրաժեշտ էլեկտրաէներգիայով ապահովելը: Չմոռանանք հիշատակել, որ այդ նույն տասնամյակում հանրապետությունում էլեկտրաէներգիայի գերակշռող մասը սպառում էր քիմիական արդյունաբերու-թյունը: Ուրեմն՝ Սևանի ջրերը մեծ մասամբ դարձան «քիմիական արտադրանք»: Բայց մի՞թե Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքը այնքան ծավալ ունեւր միութենական միջինի ընդհանուր հաշվեկշռում, որի համար հարկ էր գոհել Սևանը:

Ո՞ւմ մեղադրել: Միութենական, թե՛ հանրապետական ղեկավար մարմիններին, գիտություն մարդկանց: Մեղադրել հանցավոր անհետատեսություն ու անտարբերություն, լին՝ գիտավորության և անմիտ մոլեռանդության համար: Նույն այդ մեղսագործություններ, առանց ինքնիրս մեզ հաշիվ տալու, Արարատյան հարթավայրի սրտում, հույժ վտանգավոր սեյսմիկ գոտում բարձրացրինք ատոմային էլեկտրակայանի աշտարակները, վախի ներքին զգացումը ցրելու համար նախապես տարածելով նրա «անվտանգության» մասին վարկածը: Նույն այդ անհիմն վարկածի հետևանք չէի՞ն բարձրահարկ շինությունները՝ կառուցման իրենց որակով, որի համար այնքան թանկ վճարեց հայ ժողովուրդը: Վճարեց և՛ անմեղ մարդկանց ու նրանց սերունդների, և՛ նյութական արժեքների կորստով: Չէ՞, հայ ժողովուրդը այլևս սխալվելու իրավունք չունի:

Հիմա է պարզվում, որ Հայաստանի ատոմակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի 40 տոկոսն սպառում էր Աղբյուրեջանը, 35 տոկոսը՝ Վրաստանը և միայն 25 տոկոսը՝ Հայաստանը: Կարիք կա՞ր, արդյոք, տնտեսագիտական բարդ հաշվարկներին հետևից ընկնել՝ պարզելու համար այդ անտնտեսվար քաղաքականության հետևանքները: Օրական տասնյակ ու հարյուրավոր վազոններ մազութ էր առաքվում Աղբյուրեջանից Հայաստան (Հրազդանի պէ՛կ) Աղբյուրեջանի համար էլեկտրաէներգիա արտադրելու համար: Տնտեսական իմաստով դա անմտություն էր, թե՛ հանցագործություն, ասել հնարավոր չէ: Չէ՞ր կարելի այդ ջերմակայանը կառուցել Աղբյուրեջանում, օգտագործել Աղբյուրեջանի մագութը կամ, ավելի ճիշտն ասած, գազը և Հայաստան մազութ առաքելու նպատակներին տրամադրված վազոններն ու մարդկային կենդանի աշխատանքը ծառայիցնել ժողովրդատնտեսական այլ կարիքների համար: Իսկ այդ կարիքը շատ մեծ է: Այո՞, այդ բոլորի համար Աղբյուրեջանն այսօր «վարձահատույց» է լինում:

Այն քաղաքը, որ առաջարկվում է կառուցել Բաղրամյանի և Հոկտեմբերյանի միջև ընկած տարածքում, կարելի է կառուցել մեկ այլ, ավելի նպատասավոր վայրում, որ վնաս չտա ոչ մեր հողերին, ոչ էլ Սևանի ջրերին և ունենա հարևան հան-

բապտիստներից պաշտպանվելու անտրեկ բերդի նշանակու-
թյուն: Այդ քաղաքը կարելի է կառուցել Իջևան-Նույնբերյան
սահմանագծում, բլրակների վրա Զանգեզուրում էլ կարելի
է կառուցել: Բայց, ինչպես նկատեցինք, Որոտանը ապագայում
պետք է վերանկենդանացնի Սևանը: Մինչդեռ Գիլիշանից
դեպի Հարևան հանրապետություն հասող գետը մեզ համաց
որևէ նպատակի դեռ չի ծառայում, Մեր բարձրավանդակում
այն սանձել և օգտագործել հնարավոր է միայն քաղաքազ-
նությամբ:

Հայկական ԽՍՀ «Հող և օջախ» կամավոր ընկերությունը
հանրապետության նախարարների խորհուրդ էր ներկայացրել
առաջարկ՝ Սևանի հյուսիսարևելյան ափին, շատ գեղատեսիլ
մի վայրում, փախստականների համար առաջիկայում հինգ,
մոտ ապագայում՝ քսան հազար բնակչությամբ մի քաղաք
կառուցելու մասին: Մի կողմ թողնենք փախստականների հա-
մար առանձին քաղաք կառուցելու վերը հիշատակվող նկա-
տառումները: Հապա լճի առասպելական գեղեցկությունը խա-
թարելու բոլորիս պատած անհանգստությունը:

Պատկերացնենք հենց այդ տարածքը, որպես թե ամֆի-
թատրոնից քո առջև բացվում է հեքիաթային մի հրաշք տե-
սարան... Լերկ լեռներից դեպի բլրակներ ու ձորեր գալարվող,
ալպյան մշտադալար ու կուսական արտաներին ու երկներանդ
ծաղիկներին զրկախառնված, երբեմն մուգ կանաչին տվող,
երբեմն բոսորագույն (նայած տարվա ժամանակին) հացա-
հատիկի պլանտացիաներն ու եղևինների երիտասարդ ան-
տանները, կարծես արծաթագործի ձեռքերով հավասար մտ-
սերի բաժանված գորշ ու կապույտին տվող մանրաճատիկ
ավազաշերտերը՝ բնական ներդաշնակությամբ իրար փաթաթ-
ված և որպես իրար լրացնող ամբողջական մի դոտի երկդում
են հաճախ խոզվահույզ, հաճախ ծփացող և, ինքն իր ծը-
փանքից ինքնագոհ, հաճախ արևի, լուսնի, Մեր կաթիլի և
տիեզերքի անհունության մեջ ընկղմված բազմասփյուռ սատ-
ղերի ցուլին անզրադարձ լճի խաղաղ ու հանգիստ երկնա-
գույն թավիշը, որը հրճվանք է սպրում ակնթարթում այդ
թավիշը մերթ ընդ մերթ պատռող և մեռելային անզորք
խախտող ձկների խայտանքից: Ի՞նչ հրաշք: Հենց այդ տա-

բաժնում՝ Սևանի ափին խնձորի, տանձի, սալորի հետ միասին
պաղպակավում և բերք է տալիս ծիրանենին:

Բնության այս անկրկնելի գեղեցկությունը խաթարելը պի-
տի դառնա հանցագործություն: Բայց թողնենք նաև այս, թեև
շատ կարևոր, հանգամանքը: Սևանը ոչ միայն բնության ան-
կրկնելի հրաշք է, բնատուր-աստվածային գեղեցկություն,
այլև առաջին հերթին, հայ բնաշխարհիկ ժողովրդի գոյա-
պահպանության ամենաէական երաշխիքներից մեկը: Նրա-
նով է սնվում ոչ միայն Սևանի ավազանը, Հրազդան-Արով-
յան-Արարատ հարթավայրի ու նրան հարող նախալեռնային
չրջանների գյուղատնտեսությունը, այլև բնակչությունը:

Ուտի, այսօր մեզ բոլորիս առավել քան երբեք պետք է
անհանգստացնի ուժասպառվող Սևանի ճակատագիրը: Լիճը
ուժասպառվում է ոչ միայն այն պատճառով, որ Հրազդանով
հոսող ջրերի նկատմամբ ժողովրդատնտեսական պահանջը
անհատնում է, ոչ միայն այն պատճառով, որ սոսոգող ու
անձրևային ջրերը ողողելով իրենց հետ լիճ են բերում քի-
միական ու բնական պարարտանյութեր ու թունաքիմիկատ-
ներ, այլև այն պատճառով, որ ավազանի բնակչությունն
ավելանալու հետևանքով օրեցօր պակասում են լիճ թափվող
ջրերը, քաղաքներում նոր արդյունաբերական օբյեկտների
կառուցումով ավելանում են լիճ թափվող արդյունաբերական
կեղտաջրերը: Տասնամյակներ առաջ, երբ ջրի մակարդակը
դեռ չէր իջել և լիճ էին թափվում ավազանի բոլոր գետերի
և աղբյուրների ջրերը՝ իրենց բնական մաքրությամբ, մասնա-
գետների վկայությամբ պահպանվում էր լճի ջրերի ֆոսֆորի
և ազոտի հաշվեկշռվածությունը: Լիճ էր թափվում ավելի շատ
ֆոսֆոր, Հրազդանով հոսում էր ավելի շատ ազոտ: Ներկա-
յումս, ընդհակառակը, լիճ թափվող ջրերի հետ մուտք են գոր-
ծում ավելի քիչ ֆոսֆոր, ավելի շատ ազոտ, Հրազդանով ար-
տահոսում է ավելի շատ ֆոսֆոր, քան ազոտ: Ուտի որոշա-
կիրեն խաթարվել է լճի ինքնավերարտադրության նորմալ
պրոցեսը և խախտվել ֆոսֆորի ու ազոտի հաշվեկշիռը: Մինչ-
դեռ ֆոսֆորը կյանք է, ազոտը՝ մահ: Արդյո՞ք նաև դրանով
չի բացատրվում լճում կենդանական աշխարհի կորուստը:

Այսօր լիճը ինքնավերարտադրության լիարժեք բնական
պրոցես չի սպրում: Լիճ՝ թափվող կեղտաջրերի անընդհատ

ավելացումը մոտ ապագայում Սեանը կկանգնեցնի ինքնավար տարածքային խաթարման ու թթվածնային սովի փաստիառելու։ Առայժմ Սեանի օդակածն կոլեկտորի հետ կապված հույսերը քիչ են։ Այն թերի է ինչպես ինժեներական մտահոգացման, այնպես էլ տեխնոլոգիական տեսակետից։

Նախ, մետաղե օդակածն ջրատարը շունի հակակոռզիոն (հակածանցողություն) հատկությունն։ Ուստի ժամանակի ընթացքում նրա շարքից դուրս գալը անխուսափելի է։

Երկրորդ, օդակածն կոլեկտորը ամբողջական համալիր խողովակ է և մասերի բաժանված չէ։ Ուստի վթարի դեպքում կոլեկտորի կեղտաջրերը ամբողջությամբ կհոսեն լիճ։ Գրանից խուսափելու համար օդակը կարելի է բաժանել 12—15 մասերի, իրենց պոմպակայաններով։ Այս պայմաններում ամեն մի վթար տեղային (լոկալ) բնույթ կկրի և արտանետվող կեղտաջուրը թափվելով լիճ՝ քիչ վնաս կպատճառի։

Այո, պակասել են լիճ թափվող ջրերը։ Հաճախ ոմանք իմ Պարցին պատասխանում են, որ այդ նոր քաղաքը կմատակարարվի ոչ թե Սեանի, այլ Վարդենիսի հարուստ աղբյուրների հաշվին։ Ինչ է, այդ աղբյուրները Սեան շեն թափվում։ Առանց այդ էլ անգնն աչքի համար էլ է նկատելի, թե ինչքան են սրահասել գետերով Սեան թափվող ջրերը։ Գրանք դեռևս կշարունակեն նվազել ավազանի բնակչության, մասնավորապես քաղաքային բնակչության աճի հետևանքով։

Սեան են հոսում Վարդենիսի շրջանում Մասրիկ գետի (Ակունքի, Զոդի, Եործայի և այլ գյուղերի գետերի խառնուրդով), Ակունքի, Խորհրդակերտի, Կարճաղբյուրի, Մարտունու ջրջանում՝ Գետաշենի, մասամբ՝ Վարդենիկի, Կամոյի անվան ջրջանում՝ Գավառագետի և մի քանի փոքր առվակների ջրերը՝ Սեանում ու Կրասնոսելսկում։ Պակասել են ոչ թե ակունքներից գուրս եկող ջրերը, այլ ավելացել են կենցաղային, գյուղատնտեսական ու արդյունաբերական նպատակներով այդ ջրերի օգտագործման շափերը։ Մինչև այժմ գրությունը ինչ-որ շափով մեղմացրել է Արփա-Սեան ջրատարը։ Այժմ, ապագայում առավել ևս, դա էլ չի օգնի։ Կյանքը առաջ է դնում, գյուղատնտեսության մեջ ոռոգելի հողատարածությունների ավելացման հետ միասին, շատանում է ավազանի քաղաքային բնակչությանը՝ իրեն հատուկ կենցաղով ու զբաղ-

մունքով, լրացուցիչ ջրային պահուսնները օգտագործելու պահանջով։ Ուստի քաղաքային ապրելակերպը հանդեցնում է կենցաղային ու արտադրական նպատակներով ջրային պահուսնների օգտագործման շափերի ավելացմանը։ Թեև այսօրվա գյուղը, իր հերթին, նկատելիորեն ջրի սպառումն ավելացնելու միտում է դրսևորում, բայց այնուամենայնիվ բնակչության 1000 շնչի հաշվով ցանկացած գյուղ շատ ավելի քիչ ջուր է սպառում, քան որևէ քաղաքատիպ ավան։

Չարգացման մեծ հնունկարով են օժտված Սեանի ավազանի բոլոր քաղաքներն ու քաղաքատիպ ավանները (Սեան, Կամո, Մարտունի, Վարդենիս, Կրասնոսելսկ)։ Այդ քաղաքների բնակչության բնական աճի հետ մեկտեղ, ավազանի որոշ մեծ գյուղեր բացառված չէ, որ ժամանակի ընթացքում վերանվանվեն քաղաքային ավանների։ Եվ այսօրանից հետո էլ ավազանի բնակչության զարգացման բնական ընթացքը մենք ուզում ենք արագացնել լճի ափին նոր քաղաքներ հիմնելով։ Հիմնադրվող քաղաքները, ճիշտ է, ներկայացվում են որպես «կուրորտային, էկոլոգիապես մաքուր արտադրություններով» քաղաքներ, բայց դրանք որոշակիորեն ծանրաբեռնում են Սեանը։ Ուրիշ է Սեանի ավազանում, մասնավորապես Վարդենիսի և Կրասնոսելսկի շրջաններում, գյուղական բնակչությունը ինչ-որ շափերով ներգաղթող բնակչության մեծ լացնելը, ինչպես նաև Սեանի հյուսիսարևելյան և արևմտյան ափերին մի քանի առողջարաններ ու հանգստյան տներ կառուցելը՝ չխաթարելով մեզ պարզեցած հրաշք բնությունը։

Թեև փախստականների գերակշիռ մասը քաղաքային բնակիչներ են և ունեն քաղաքային զբաղմունք, սակայն անհշքնար է նրանց բոլորին բնակեցնել քաղաքներում և բնականորեն լուծել զբաղմունքի հարցերը։

Մինչդեռ հանրապետությունում պատշաճ ուշադրություն չի դարձվում Սեանի ավազանի հյուսիսարևելյան և հարավային շրջանների, մասնավորապես Զանգեզուրի գյուղական բնակավայրերը փախստականներով բնակեցնելու խնդիրներին։ Զէ՛ որ բնակեցման հնարավորություններ կան Վարդենիսի, Կրասնոսելսկի, Վայքի, Գորիսի, Սիսիանի, Եղեգնաձորի, Ամասիայի, Կապանի, Նոյեմբերյանի շրջաններում։ Անհրաժեշտության դեպքում կարելի է մտահոգվել նաև նոր

բնակավայրեր հիմնելու խնդրով: Թեև նոր բնակավայրեր հիմնելը սակավաճող մի այնպիսի հանրապետությունում, ինչպիսին Հայաստանն է, բնավ էլ խելամիտ քայլ չէ: Ինչ վերաբերում է Արարատյան հարթավայրը փախստականներով բնակեցնելուն, ապա այդ խնդիրը Մասիսում լուծվել է փախուստականների ու արտագաղթածների միջև բնակարանափոխանակությամբ: Ըստ որում այստեղ բնակություն են հաստատել նաև քաղաքարնակ փախստականներ, որոնց մի զգալի մասը արգեն դրադում են գյուղատնտեսությունում, որոշ մասն էլ ընդգրկվել է արանսպորտում, շինարարության, արդյունաբերության և ժողովրդական տնտեսության ոչ արտագրական ոլորտի ճյուղերում: Անհատական բնակարանաշինարարության համար հող է առանձնացվել, վարկ է տրամադրվել Բաղրամյանի, Արովյանի, Աշտարակի ազատ հոգատարածություններում՝ նոր գյուղեր հիմնելու, հենքը ընդարձակելու նպատակով: Դրանով իսկ շրջանառության մեջ ընդգրկվող հողերը կդառնան գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման կարևոր աղբյուր:

Նպատակահամար է Արարատյան տնտեսական շրջանի համար առանձնացվող միջոցների մի մասը հատկացնել հանրապետության հարավային, ինչպես նաև Սևանի ավազանի հյուսիսարևելյան շրջանների գյուղական բնակավայրերը (մասամբ նաև քաղաքները) բարեկարգելու և փախստականներով բնակեցնելու հույժ կարևոր խնդիրների կենսագործմանը:

Կացություն բարգոծությունը բացատրվում է նաև նրանով, որ գյուղական վայրերում հանգրվան գտած փախստականների վերջնական բնակության հարցը լուծում չի ստանում բնակարանների պատճառով, թեև հիշատակվող բոլոր շրջանների գյուղերում, երկար ժամանակ, արտագաղթող ազոր բեջանցիների շատ բնակարաններ ազատ էին և ոչ ոք չէր ապրում: Բանն այն է, որ այդ բնակարանները մասնավոր սեփականություն էին և կարող են բնակեցվել փոխանակման կամ էլ սեփականատերերից գնելու ճանապարհով: Դա ստեղծել էր անկայուն իրավիճակ ոչ միայն գյուղերը բնակեցնելու և հանրային գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպելու, այլև տնամերձ տնտեսության տակ գտնվող հողամասերը մշակելու իմաստով: Մարդկանց տանջում էր այն

մտահոգությունը, թե տնամերձ հողամասում անձեզվող բարիքը ո՞ւմ բաժին կդառնա, ի՞նչքը, թե՛ մեկ ուրիշը կվայելի: Այդ առումով շատ ավելի անկայուն վիճակ էր ստեղծվել արգեն փոխանակված տների հարցում: Բանն այն է, որ բնակարանները փոխանակելու վերաբերյալ գործող օրենսդրությամբ, այդ մասին համապատասխան պայմանագիրը ստորագրելու օրվանից հաշված վեց ամսվա ընթացքում, կողմերից որևէ մեկի մտափոխության դեպքում փոխանակության նախապես կնքված ակտը չեղյալ էր հայտարարվում: Օգտվելով օրենքի այդ կետից արտագաղթած ազոր բեջանցիների մեծ մասը Հայաստանում ունեցած իր սեփական տան փոխանակության պայմանագիրն անընդհատ նորացնում էր: Փախստականը դեռ չէր հասցրել հարմարվել փոխանակված բնակարանին, փոխանակության մի նոր պայմանագրով այդ նույն տան համար գալիս է երկրորդ, քիչ չանցած երրորդ և նույնիսկ չորրորդ փախստականը: Արտագաղթած ազոր բեջանցիները Ազրբեջանում ունեն բնակարաններ ընտրելու ավելի մեծ հնարավորություններ՝ ավելի լավ պայմաններով: Ինչպես հիշատակվեց, Հայաստանի գյուղական բնակավայրերի բնակարանները ազրբեջանցիները փոխանակեցին Ազրբեջանի քաղաքային վայրերի հայ փախստականների բնակարանների հետ: Շատերը քաղաքների պետական բնակարանները փոխանակեցին Հայաստանում գյուղական մասնավոր բնակարանների հետ: Ուստի, Ազրբեջանից եկած փախստական քաղաքարնակ հայը չի կարողանում Հայաստանի Հանրապետության քաղաքներում բնակություն հաստատել ոչ միայն հանրապետությունում համապատասխան հնարավորությունների բացակայության, այլև այստեղի քաղաքների բնակարանների հետ փոխանակելու ոչ մի հնարավորություն չունենալու պատճառով:

Օրելի Կտիվորեն ստեղծվել է նաև մարդկանց զբաղմունքով ապահովելու բարդ իրավիճակ, որը բխում է ոչ միայն վերջ հիշատակվող պայմաններից, այլև փախստական ու արտագաղթած բնակչության տարիքային կազմի տարբերություններից և, ինչպես ակնարկվեց, նրանց զբաղմունքի բնույթից: Եթե Հայաստանից արտագաղթածների մեջ համեմատաբար բարձր տոկոս էին կազմում մինչև 16 տարեկանները, ապա

հայ փախստականների մեջ՝ աշխատունակ տարիք ունեցողներն ու տարեց մարդիկ:

Հարկավոր է նկատի առնել, որ տարերային աղետի հետևանքով հանրապետության աշխատանքային պետությունները նվազեցին և ապագայում կշարունակվեն նվազել հաշորդաբար աշխատանքային տարիք թևակոխող բնակչության կորուստի և խեղանդամ դառնալու պատճառով, բայց Ադրբեջանից փախստական հայերի հաշվին նրանք կավելանան: Հանրապետությունում աշխատանքային պետությունները ավելանում են ոչ միայն այն պատճառով, որ հայ փախստականների ընդհանուր թվակազմում մեծ էր աշխատունակ տարիքի (հատկապես ծեր աշխատունակ տարիքի), իսկ արտագաղթած ադրբեջանցիների թվակազմում անշափահաս երեխաների տեսակարար կշիռը, այլև այն պատճառով, որ Հայաստանում բնակություն հաստատած փախստականները ավելի քան 130 հազար մարդով գերազանցում են Հայաստանից արտագաղթածների թվին: Արտաքուտ այն ապավորությունն է ստեղծվում, թե դրանով իսկ հանրապետության բնակչության ծննդաբերության բացարձակ աճի համար ավելի բարենպաստ իրավիճակ է ստեղծվել: Սակայն իրականում այդպես չէ: Նախ, արտագաղթած ադրբեջանուհիները բնութագրվում էին ծննդաբերության շատ ավելի բարձր ցուցանիշով, քան Ադրբեջանից բռնադադթված հայուհիները: Սովորույթի, հոգեբանական գործոնի, կրոնի հետ մասին դա բացատրվում է նաև բնակավայրով, զբաղմունքի բնույթով, կրթական մակարդակով և բազմաբնույթ այլ գործոններով: Ներգաղթած հայերի մեծ մասը քաղաքաբնակներ են և բնութագրվում են կուլտուր-կրթական բարձր մակարդակով, քաղաքային բնույթի զբաղմունքներով: Մինչդեռ արտագաղթած ադրբեջանուհիները հիմնականում (90 տոկոս) գյուղերի բնակիչներ էին, շունչին մասնագիտական որակավորում և ընդգրկված էին որակավորում չպահանջող գյուղատնտեսական աշխատանքներում, անձնական օժանդակ և տնային տնտեսություններում: Երկրորդ, ներգաղթած հայուհիների ընդհանուր թվակազմում գերակշռում են ծննդաբերության տարիքից դուրս եկած և ծեր տարիքի կանայք: Մինչդեռ արտագաղթածների մոտ մեծ տոկոս էին կազմում ինչպես երեխաները,

այնպես էլ ակտիվ ծննդաբերության տարիքում գտնվող կանայք: Շատ երեխաների առկայությունը ադրբեջանուհիների մոտ պայմանավորվում էր ապագայում նույնպես ծննդի բավականին բարձր, իսկ հայ բնակչության մոտ, ընդհակառակը, նախկինի նման՝ ցածր մակարդակ: Այդուհանդերձ, ներկայումս, թեև աշխատանքային տարիքի բնակչությունն ավելացել է, բայց ապագայում այն համեմատաբար ավելի քիչ կլինի, քան կանխատեսվում էր մինչև 1988—1990 թթ. դեպքերը:

Աշխատունակ տարիքի մարդկանց համապատասխան աշխատանքով ապահովելու հետ մեկտեղ ղեկավարություններ են ծագում սոցիալական բազմաբարդ խնդիրներ լուծելու իմաստով: Դա առաջին հերթին վերաբերում է երեխաների ուսումնառության գործի կազմակերպմանը: Համապատասխան տարիքի շատ ավելի քիչ երեխաների առկայության պայմաններում շատ գյուղերում չեն կոմպլեկտավորվում դասարանները: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում մի բանի գյուղերի համար գյուղերից սրե՛լ մեկում մեկ դպրոց ունենալը: Իսկ դա, իր հերթին, պայմանավորում է երեխաներին գյուղից դուրս դպրոց տանել-բերելու համար փոխադրամիջոցների մտահոգությունը, որն այսօր մեզ պետք է անհանդուստանքի և դառնա անհետաձգելի ու անհապաղ լուծման խնդիր:

Լուրջ ղեկավարությունների հետ է կապված նաև փախստականների աշխատանքային զբաղվածության ապահովումը: Շատերը գյուղատնտեսական աշխատանքներում չեն ընդգրկվում ոչ միայն այդ զբաղմունքին անծանոթ լինելու, այլև հենց գյուղատնտեսության մեջ համապատասխան աշխատանքի ասպարեզ չլինելու պատճառով: 1989 թ. ընթացքում որոշակի բարդություններ ստեղծվեցին փախստականների վարձատրությունը կազմակերպելու առնչությամբ: Նրանք սմիսներով չէին ստանում իրենց հասանելիք աշխատավարձը այն պատճառով, որ հանրային տնտեսությունը ժամանակին չի մարել նախորդ տարիներին պետությունից վերցրած վարկը: Բանն այն է, որ այդ վարկը վերցրել էին նախկին բնակիչները, որ պետք է մարեին 1988 թ. գյուղատնտեսական առեկտրի արդյունքներով, բայց 1988 թ. տարեկիցին նրանք արդեն արտագաղթում էին, և վարկը մարելու մասին խոսք անգամ չի եղ չէր կարող:

Արտագաղթողներն իրենց հետ տարան կուտնտեսությունների կամ խորհրդային տնտեսությունների ավտոմեքենաների որոշ մասը: Շատ շանքեր են պետք հանրապետության տնտեսությունները ոտքի կանգնեցնելու համար: Արտագաղթից հետո երկար ժամանակ անխնամ էր հանրային հոտը, թեև հոտի խնամքը ուշադրությունից դուրս էր նաև արտագաղթին նախորդող 5—6 ամիսների ընթացքում:

Աղետից տուժած բնակչության և փախստականների սոցիալական պահանջմունքները բավարարելու նպատակամղումով պետք է խստագույնս մտահոգվել գյուղական բնակչության սպասարկման մակարդակի բարելավման հարցերով: Դա առավել ևս թելադրում է գյուղական վայրերում ստեղծել արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների համապատասխան ոլորտ, որը բնակչությանը կապահովի զբաղմունքի նոր բնագավառներով և դրանով իսկ կկասեցնի գյուղատնտեսությունից ազատվող աշխատանքային ռեսուրսների արտահոսքը դեպի քաղաքներ:

Գյուղական վայրերում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի ձևավորման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն իրենց հերթին կներառվեն գյուղական բնակչության համակեցության բոլոր կողմերի վրա: Դա կընկապատի մարդկանց կուլտուրական մակարդակի բարձրացմանը, պահանջմունքների աճին, գյուղում աշխատող մասնագետների թվի ավելացմանը, քաղաքային կյանքին հատուկ գծերի ձևավորմանը:

Ուստի անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել գյուղական և քաղաքային վայրերում փախստականներին բնակեցնելու հարցում, ստեղծել համապատասխան շահագրգռվածություն գյուղական վայրերում բնակություն հաստատելու համար:

Այդ առումով հավանաբար ճիշտ կլինի.

— Գյուղական վայրերում կոոպերատիվ կամ անհատական բնակարանաշինություն իրականացնելու նպատակով փախստականներին վարկ տրամադրել ավելի արտոնյալ պայմաններով, այսինքն այն հատկացնել ավելի երկար ժամկետով և մարման ավելի ցածր տոկոսադրույքով: Գյուղական

վայրերում փախստականներին վարկ տրամադրել աղետի գոտու համար սահմանված պայմաններով:

— Լեռնային շրջաններում, հարթավայրայինների համամատությամբ, օժանդակ տնտեսություն վարելու համար հատկացնել իր շահերով կրկնակի անգամ ավելի շատ հողակլտոր, անկախ հողի նկատմամբ սեփականության ձևավորման հետագա ընթացքից: Կոոպերացիայի մեջ ընդգրկված և անհատական աշխատանքային զործուներությամբ զբաղվողներին վարձակալության համար հող տրամադրել ավելի արտոնյալ պայմաններով, այսինքն հողը օգտագործելու, անասնաբուծությամբ զբաղվելու համար սահմանել վարձավճար և եկամբտահարկ նվազագույն նորմաներով:

— Գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվողներին օգնել գյուղատնտեսական մեքենաներով, դրանց պահեստամասերով, վառելիքով, սերմացուով, տնկանյութով, անասունների մատղաշով, անասնակերով և անհրաժեշտ այլ արտադրամիջոցներով:

— Փախստականներով բնակեցված գյուղական վայրերում կենսազործել յուրահատուկ ժողովրդագրական քաղաքականություն.

ա) ավելացնել և երկու տարի դարձնել հետծննդյան շրջանում կանանց տրվող արձակուրդների տևողությունը, բարձրացնել նպաստի տոկոսադրույքը՝ այն հասցնելով միջին աշխատավարձի 80—85 տոկոսին,

բ) այն կանանց, որոնք ֆիզիոլոգիական արձակուրդը համատեղում են վարձու աշխատանքը շարունակելու հետ, լրիվ շահով վճարել և՛ նպաստը, և՛ աշխատավարձը:

գ) մի քանի անգամ բարձրացնել յուրաքանչյուր երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ հատկացվող նպաստի շահերը, այն սահմանել աճող տոկոսադրույքով՝ յուրաքանչյուր հաջորդ ծնված երեխայի համար,

դ) ծովի մակարդակից 1500 մետրից ավելի բարձրություններում բնակվող կանանց ծննդաբերած յուրաքանչյուր երեխայի համար սահմանված նպաստի շահերն ավելացնել 25—30 տոկոսով (խոսքը վերաբերում է ինչպես երկու տարվա ֆիզիոլոգիական արձակուրդի, այնպես էլ միանվագ նպաստի շահերին),

ե) ծովի մակարդակից 1500 մետրից ավելի բարձրություններում բնակվող 3 և ավելի երեխա մեծացրած կանանց արտոնյալ պայմաններում թոշակի իրավունք ընձեռել 50 տարեկանից,

զ) նոր կազմավորվող բնտանիքներին հատկացնել տնամեծ հողամաս, անկախ այն բանից, նրանք կշարունակեն համատեղ ապրել ծնողների հետ, թե կառանձնանան: Ցանկության դեպքում բնակարանաշինության համար նման ընտանիքներին բնակարան կառուցելու նպատակով տրամադրել համապատասխան վարկ և շինանյութ՝ ավելի արտոնյալ պայմաններով, քան նշված էր վերևում:

Փոքր գյուղական բնակավայրերում լուրջ դժվարություններ են առաջանում սոցիալական խնդիրները լուծելու բնագավառում: Դա առաջին հերթին վերաբերում է դպրոցների բարձր դասարաններում համապատասխան քանակությամբ աշակերտների պակաս թվին, զբաղմունքի ոլորտին, արտագրական և սոցիալական ենթակառուցվածքին, բնակչության սպասարկման ծառայությունների կազմակերպմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է առաջնահերթ ուղղորդություն դարձնել տրանսպորտային ցանցի և կապի զարգացմանը: Կրանով իսկ հնարավոր կլինի ապահովել:

— մի քանի գյուղերի դպրոցական տարիքի երեխաների ուսումնառությունը՝ գյուղերից որևէ մեկի դպրոցում,

— զբաղմունքի անհրաժեշտ ոլորտ մի շարք գյուղերի բնակիչների համար,

— շրջկենտրոնների սպասարկման օջախներից օգտվելու հնարավորություններ և այլն:

...Փախստական հայության 250—300 հազարանոց բազմություն և աշխարհավեր երկրաշարժ, գրեթե կիսով չափ քարուքանդ դարձած հանրապետություն, մի քանի տասնյակ հազար զոհեր, հազարավոր վիրավորներ և խեղանդամներ, օթևանը կորցրած ավելի քան կես միլիոն մարդ...

Ասել է, թե հայ ժողովրդի համար առաջացել է մի վիճակ, որի սոսկալի զուգահեռները, թերևս, 1915 թվականի սահմակեցուցիչ եղեռնի դժնդակ ժամանակներն էին: Մանր ու աննախադեպ այս վիճակը անհատի պաշտամունքի և լծացման տարիներից փոխանցված դժվարություններն ու

պրորենմները ոչ միայն խորացրեց, այլև դրանց ավելացրեց սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոցեկոր ավելի մեծամեծ հոգսեր ու խնդիրներ, որոնց լուծումը մեր ժողովրդից պահանջում է ֆիզիկական և հոգեկոր ուժերի աներևակալելի լարում և մորթիլիզացում: Եվ ցավալին այն է, որ այդ խնդիրները, որոնցից ամեն մեկն էլ անհետաձգելի լուծում է պահանջում, գնալով բարդանում և ավելանում են կապված կուկային Ղարաբաղի հայության բարձրացրած հարցերի լուծումը անգթորեն և ոչնչով չհիմնավորված ձգձգելու հետ:

Նույնիսկ աշխարհացունց երկրաշարժը գթության նշույլ շառաչացրեց կենտրոնական և ադրբեջանական հանրապետական մարմինների այդօրինակ դիրքորոշման՝ զարաբաղյան հարցը օրինակահետևության և ճշմարտության սահմաններում արագորեն լուծելու առումով: Նրանք չհասկացան, ավելի շատ շեն ուզում հասկանալ, որ զարաբաղյան հայ բնակչության արդարացի պահանջների բավարարումը մեծապես կօգնեի նաև երկրաշարժից ծնված շատ ու շատ հարցերի լուծմանը, սպեղանի կլինեի մեր ժողովրդի թարմ վերքի վրա: Ընդհակառակը, սե ուժերը Ազգրեջանում, շարաշահելով Հայաստանում երկրաշարժից առաջացած ծանր դրությունը, ավելի են սրում վիճակը, սեղմում բլոկադան Ղարաբաղի շուրջը և պլանավորված կարգով ու հետևողականորեն անում ամեն ինչ հարցի լուծումը ձախողելու համար:

Մակայն նրանք չեն ըմբռնում մեր ժողովրդի՝ հազարամյակներով կոփված դիմացկանության ոգին, այն ոգին, որը ուժ ու կորով է տալիս նրան՝ համբերատարությամբ, քաղաքակիրթ ազգին վայել արժանապատվությամբ քայլ առ քայլ լուծել իր առջև ծառայած խնդիրները:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՑԻՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Ղարաբաղյան շարժումը խանձարուրի մեջ խեղդելու, հայ ժողովրդին անհարկի անարգելու, ԼՂԻՄ-ում և Հայաստանում խուճապային իրավիճակ ստեղծելու նպատակային քաղաքականությունը չի ավարտվում Ադրբեջանի մասնակի հայթափությունը:

Հայաստանը շրջափակելու հետ միասին 1989 թ. հուլիս-

օգոստոս ամիսներից սկսած Ազրբեջանում հայերի նկատմամբ ծեծ ու ջարդի, սպանությունների, նրանց թալանելու անզուսպ վարքագիծը դրսևորվեց նաև Հայաստանի սահմանամերձ գոտիներում բնակվող բնակչության նկատմամբ:

Ազրբեջանի տեղական իշխանությունները, միլիցիայի և զինված խաժամովի օդնւթյամբ Հայաստանի տարածքում աշխատավոր մարդկանց սպանությունների և ունեցվածքը թալանելու շատ ուտիմներ էին ստեղծում: Այդ կապակցությամբ ահա թե ինչ են գրում «Խորհրդային Հայաստան» և «Կոմունիստ» թերթերը:

Հայտնի է, որ Կուպան քաղաքը և շրջանի մի շարք գյուղեր Հայաստանի հետ կապվում են Ազրբեջանական ԽՍՀ Զանգիլանի շրջանի տարածքով անցնող բնդամներ 2—3 կմ երկարություն ունեցող խճուղով:

Զանգիլանի շրջանի ղեկավարության ցուցումով (այլ կերպ լինել չէր կարող), այդ կարճ խճուղու եղրերին զրվում են իրար հաջորդող երեք ուղեփակոցներ, որոնցում գիշեր-ցերեկ հերթապահում են Զանգիլանի շրջանի ներքին գործերի բաժնի աշխատակիցները: «Ճվ ոչ միայն գրանք,— գրում է հոդվածի հեղինակը:— Գյուղում և մոտակայքում փամփուշտակալները հաղած-կապած, կազմ ու պատրաստ սպասում են ազրբեջանցի «քաջամարտիկները»: Սպասում են դարանակալ «հերթապահ հսկիչները»,— շարունակում է հեղինակը,— իրենց իրավունք են վերապահում (ցուցում կա երևի) կանգնեցնել և ստուգել խճուղով երթևեկող ավտոմեքենաները և նույնիսկ մարդկանց»¹:

Այդպիսի «հարմար» պահ ոտեղծվեց 1989 թ. օգոստոսի 1-ին: Որք ցերեկով, ժամը 13-ի սահմաններում, միլիցիայի հերթապահ աշխատակիցների ներկայությամբ շուրջ 30 հոգուց բաղկացած ազրբեջանական խաժամովը քարերով ու մահակներով կանգնեցրեց և հարձակվեց Սյունիք բանավանի բնակիչ, ծերունագարգ Օնիկ Անաչյանի անձնական օգտագործման «ծիգուլի» ավտոմեքենայի վրա: Մերեման ջարդել-փշրելուց հետո հերթը հասավ մարդկանց: Սեաչյանի հետ էին նաև երկու կին²: նրանց մոտ եղած 5000 ուրլի գումարը

հափշտակելուց հետո նրանց բաց են թողնում, քանի որ այդ ավազակներից մեկը ճանաչում է բուժակ Օ. Սեաչյանին, որը շատ լավություններ է արել իրենց՝ ազրբեջանցիներին:

Այդ գիշեր նույն տեղում հսկիչները ձերբակալում են ու Զանգիլան տանում վեց երիտասարդների և հաղվեհարգար տեսնում նրանց հետ: Անտանելի ծանր ընթացք ունեցավ Սեյիդար գյուղում Ազրբեջանի միլիցիայի աշխատողների կողմից առևանգված հինգ երիտասարդների (Կարեն Ղաղարյան, Սերժիկ Մկրտչյան, Արսեն Աբրահամյան, Մարտա Մուսայելյան, Համլետ Փոշարյան) ճակատագիրը, որոնք 1989 թ. օգոստոսի 2-ին մարդատար մեքենայով Կապանից գնում էին Աղարակ:

Որևէ հանցանք չգործած տղաներին ձեռնելով, նվաստացնելով և անարգելով հասցնում են Բաքու: Մեկին երկար ժամանակ պահում են ՊԱԿ-ի նկուղում, մյուս չորսին նետում Բայիլովի բանալ: Հետաքննության և Ազրբեջանի գերազույն դատարանի Լրևք ամիս տևող դատաքննության ընթացքում, ընայած զործադրում են ահաբեկելու, տանջելու, նվաստացնելու շահադանց բիրտ մեթոդներ, ներկայացվում իրարամերձ բազմաթիվ հնարավոր մեղադրանքներ, հրապարակ բերում կեղծ վկաներ, բայց կոնկրետ որևէ հանցանքի մեջ գերազույն դատարանը նրանց չ' կարողանում մեղադրել: Իհարկե, դա բնավ էլ չիանգարեց, որ գերազույն դատարանը նրանց դատապարտի 5, 6, 8, 9-ական տարվա ազատազրկման: Այսպիսով, հինգ ամիս տանջելուց հետո հիվանդ վիճակում նրանք տեղափոխվում են Երևան և բուժվում հիվանդանոցում³:

Ազոստոսի 6-ին Կապանի ճակատների կոյտնտեսության խոզաբուծական ֆերմայի վարիչ Սերոբ Ավագյանին ֆերմայի բակից առևանգում են երկու ազրբեջանցիներ, որոնք ֆերմա են եկել իբր թե կորցրած կովը փնտրելու պատրվակով: Նրանք հարձակվում են ֆերմայի վարիչի վրա՝ «Թիկ-նեղ երիտասարդը հաջողությամբ պաշտպանվում էր բռունցքներով, երբ, ասես գետնի տակից, հայտնվեցին ևս վեց «կոժատերեր»: Չորս հոգով Սերոբի թևերը ծալեցին մեջքին:

— Չորսով բռնել էին թևերս: Երկուսը ածելիներով ուզում

¹ Խորհրդային Հայաստան, 19 օգոստոսի, 1989 թ.

² Նույն տեղում:

³ Խորհրդային Հայաստան, 19 օգոստոսի:

էին երակս կտրել, շտապվեցի Սկսեցին վերից վար կտրտել թե-
վերս: Մեկը փորձում էր ժանգոտած մեխը խրել մկաններիս
մեջ: Տեսնելով, որ թուլանում եմ, բաց թողին: Ընկա: Քա-
րերով ու ոտքերով սկսեցին հարվածել: Ձևացրի, թե կորցրել
եմ գիտակցութիւնս:

— Սատկել է, փախանք»⁴:

1989 թ. օգոստոսի 8-ին Միսիանի ամառային արտավայ-
րերում աղբբեջանցի ավազակների շարագործ ձեռքերով
սպանվում է Գորիսի շրջանի Հարժիսի պետտնտեսութիւնի հո-
վիվ Լեոնիդ Ղուկասյանը, օգոստոսի 18-ին՝ Միսիանի շրջ-
անի Վազուգի գյուղացի, 60-ամյա հովիվ Ալեքսանդր Շափա-
ղաթյանը: Այդ գիշեր մի խումբ աղբբեջանցի ավազակներ
կալտնտեսութիւն ոչխարների հոտը մասնատում և բշտմ են
Աղբբեջանի արոտավայրերը: Հովիվը դիմադրութիւն փորձ է
անում: Բայց նրան բռնում են և ջարդում ոտքն ու թևերը,
փշրում կողերը: «Ուշքի գալով,— գրում է «Խորհրդային Հա-
յաստան» թերթը,— վարպետը (մինչ հովիվ դառնալը Ալեք-
սանդրը բազմաբնաս մարդ է եղել—Վ. Խ.) ճանաչեց ավա-
զակներից մեկին. ախր սարից այն կողմ նրանց գյուղում
ինքն էր կառուցել նրա երկհարկանի տունը: Ճանաչեց ու
ասաց այդ մասին: Որոտաց հրացանը: Եվ այդ մասին նա
պատմեց հիվանդանոցի ճանապարհին»⁵:

Եվ այս բոլորը մեր սեփական տան մեջ, մեր հոգում:

1989 թ. օգոստոսի 29-ին, ժամը 17-ի սահմաններում,⁶
ունկնդրում էի մի ազդեցազորում Երևանից: Հաղորդվում
էր, որ շուրջ մեկ շաբաթ առաջ, Իջևանի շրջադրճրդի նախա-
գահը ամերիկացի երկու հյուրերի շրջագայութիւնն է տանում:
Բայց արի ու տես, որ Իջևանի շրջանի որոշ գյուղեր մեկնելու
համար պետք է անցնել Աղբբեջանի սահմանային կայանով:
Բանն այն էր, որ տարիներ առաջ, ՀԽՍՀ «բարեհոգի» ու
շատ «հեռատես» տնօրենների համաձայնութիւնով, Իջևանի
սահմանամերձ տարածքից չոթ հեկտար հող, առանց փոխ-
հատուցման, հատկացվում է հարևան հանրապետութիւնը՝
սահմանային կայանը տեղադրելու համար: Եվ հուլիս-օգոս-
տոսին, Իջևանի շրջանի հաւկական մի քանի գյուղեր մեկնող

մեր հանրապետութիւն համարանիշը կրող ամեն մի մեքենա
սահմանային այդ կայանում պետք է ստուգման ենթարկվի,
որը շատ ավելորդ միջազեպերի և անախորժութիւնների տե-
ղիք է տալիս: Ի դեպ, այդ նույն բախտին էին արժանանում
ընդհանրապես Հայկական ԽՍՀ-ից, որն է սահմանային կա-
յանով, Աղբբեջան մուտք գործող ավտոմեքենաները: Այդ
տահմանախորժութիւններից չիուսափեցին նաև Իջևանի
շրջադրճի մի նախագահը և ամերիկյան հյուրերը: Ըստ ա-
դիոհաղորդման, սահմանային կայանի աշխատակիցները,
Աղբբեջանի կոմկուսի Ղազարի կուսըրջի մի առաջին քար-
տուղարի ներկայութիւնով ծեծում են նրանց տեղափոխող
ավտոմեքենայի վարորդին, ստուգում ավտոմեքենան, կո-
ղպատում ու անհարկի արտահայտութիւններով վիրավորում
նախագահին և ամերիկացի հյուրերին:

Ռադիոհաղորդմամբ ներկայացնելով միջազեպը, տրտուել
էր արտահայտվում, որ այդ առիթով Մոսկվա համապատաս-
խան կազմակերպութիւններին հղած հեռագիրը անուշադրու-
թյան է մատնված:

Ինչ արած, շուրջ քառորդ դար առաջ, մեր հանրապետու-
թյան «մեծազոգի» ղեկավարները, Իջևանի և Ղազարի սահ-
մանամերձ գոտում 32 հեկտար մշակելի հողատարածքը,
առանց փոխհատուցման՝ «բարեհոգարար» նվիրեցին հարե-
վան հանրապետութիւնը՝ ջրամբար կառուցելու նպատակով:
Մի քանի տարի անց Բերդում օդանավակայան կառուցելու
համար Հայաստանի ղեկավարութիւնը Աղբբեջանի ղեկա-
վարութիւնից խնդրել է քնդամենը 2—3 հեկտար հողատա-
րածութիւն և մերժում ստացել:

Մեր շատ «հեռատես ղեկավարները» 1929 թ. հարևան
հանրապետութիւնը նվիրեցին վարդենիս սարից դեպի արե-
վելք ձգվող Ալազուլլար արոտավայրերը: Դա մի վիթխարի
տարածութիւն է, որ սեպի պես խրվել է Վարդենիսի և Զեր-
մուկի արանքում՝ զովարեցնելով Զող-Զերմուկ ուղիղ պծով
երկաթղծի կառուցումը: Այստեղ, ծովի մակարդակից ավելի
քան 2,5 հազար մետր բարձրութիւն վրա, ծիւրմ է կարծես
Սևանից սղոված մի փոքրիկ պատառիկ, Ալազուլլար (հը-
նում Արուիճք) լիճը՝ կապույտին տվող իր քաղցրահամ ջը-
րերով: Աստվածային ի՛նչ գեղեցկութիւն: Ալազուլլար այս հա-

⁴ Խորհրդային Հայաստան, 1989, 23 օգոստոսի:

⁵ նույն տեղում:

բուստ արտադրելու: ամառային ամիսներին հարչուր հազարավոր ոչխարներ են արածեցնում: Խնդիրը միայն դա չէ: Ազդրբեջանցի հովիվները, համախ հարմար պահ բնորոշումը, քչում-տանում են Հայաստանի հետ սահմանամերձ շրջանների հազարավոր գյուղի անասուններ: Միայն 1990 թ. ազդրբեջանցիները զոդացել են 4000 գլուխ անասուն:

Այդուհանդերձ, սահմանամերձ զոտիներում անջատ-անջատ զործող ավազակային հարձակումները շրավարարեցին հարևան հանրապետության սպառնալուծներին: Անճարժեղտ էր իրականացնել մեծամասշտաբ այնպիսի ձեռնարկում, որը ճակատագրական դառնար ինչպես Արցախյան շարժման, այնպես էլ հայ ժողովրդի համար: Շրջափակման պայմաններում, Երկրաշարժի վերքերը գետնը շրուժած, հանրապետությանը հանդեպ Քաթվից ու Եզրբեջանի այլ վայրերից բնակչությանը մերկ ու տկուր փախուստականների նորանոր զանգվածներ բնագունելու և տեղավերելու փաստի առջև: Սրտաբով ամենատարբար պահը, Ազրբեջանի ժողովրդական ճակատը զոտայինների գյուղ անցած գինիված հարձակումներ ձեռնարկեց: Ազրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանի ամբողջ երկայնքով: Հայաստանը դարձավ անցում հարևանյան թիրախ: Այսօրվելով Կենտրոնական իշխանությունների «մեծահոգությունը»: ԽՍՀՄ պետական սահմանը ավերելու հետ մեկտեղ, Ազրբեջանում տնտեսական և սոցիալական գրունայինների համադրվածները միաժամանակ նախահորձակ եղան Արցախում, Շահումյանի, Գետաշենի շրջաններում: Նշկարը համանակ Արցախը լրիվ կզոհացավ: Առանց այդ էլ առգնառայի վիճակը ավելի սրվելու երկու տարի տևող շրջափակումը լիովին բայցայել էր Արցախի անստեղծությունը: Այդ օրերին երբևէն խափանվում և բնդնատումներով զործում էր սգային երթուղին: Մինչ այդ կարվել էր երկաթուղային և ավատարանապարտային կապը: Գրան ավելացավ Մոսկվայի և Երևանի ռազիոհետազոտականության հաղորդումների կախողումը: Սակփանակերար և մարզը ամբողջությամբ կտրվեցին արտաքին աշխարհից: Ազրբեջանցիները պայթիկարին Ստեփանակերտի ջրատարը: Զինված ավազակախմբերը օր օրի սեղմում էին օղակը Շահումյանում, Գետաշենում, Կամոյում, Իրա-

վիճակը էլ ավելի բարդացավ, երբ դարձյալ «հավատարակը-տուխյան» մղումով Քաթվի հետ միասին արտակարգ զրուխյուն հայտարարվեց նաև այդ վայրերում: Գրանով իսկ Արցախը զրկեցին դիմազրելու նարավորությունից: Հետագա դեպքերը վկայեցին, որ Ազրբեջանի իշխանությունները կարողացան շատ ճատրեն օդտադործել գինվորական պարետությունը ոչ միայն մարզում, Շահումյանում, Գետաշենում և հայկական այլ բնակավայրերում սեպրեփաներ ու անօրինականություններ, այլև Արցախի ազրբեջանական բնակավայրերում անարգել բնակարանաշենարարություն իրականացնելու գործում: Հետագայում, արտակարգ զրուխյան պայմաններում ազրբեջանական իշխանությունների անարգվածան գահ դարձան բաղմաթիվ խաղաղ բնակիչներ: 1990 թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում ԽՍՀՄ ԿԿՄ-ի սարքաբանականների գինվորները գինը են պարձապել խաղաղ սրահակայության դեմ, սրի հետանքով գունվել և մեկ մարդ, վիրավորվել են: Մինգր: Նվ կարմանալի չէ, որ այդ սարկելու լրուները հավաքվելով են գինվորական իշխանությունների անարգվածան, ավելին՝ գինվորական իշխանությունները իրենք բնակայիններ են գործադրում մարդի խաղաղ բնակչությունը կտրվում: Զինը սրանելու անվան առկ կաղվածիկը գամ են ավելորդ անձնագրային ստուգումներ, հետազոտում մամուլի աշխատակիցներին: Մինչդեռ ազրբեջանական պարտում բացենրաց գինված զոտաները գործում են սպառնքել:

Այդ ժամանակ հորինվել և պարպագանալիք համար թեմա է դարձել այն, որ իր թև Ազրբեջանի անջատումը և անկաղվում Հայաստանի տարածքի գերակշռ գոտում: Երկրի գուրը, Երարատյան հարթավայրը, Սևանի ավազանը, անգուտեի նովյուր և այլն:

1990 թ. հունվար-փետրվարին Ազրբեջանի Եզրվորական ճակատը հարձակուղական ակտիվ գործողությունների անցավ և բնդհարումների լարը ճակատ ստեղծեց նաև այդ սահմանամերձ զոտիներում: Այստեղ նրանք հանդեպեցին հայ աշխարհազորային ինքնապաշտպանական ջակատների դիմազրուխյանը: Նրանք անձնվիրուրար կատելին Երատխումանի, Վայրի, Մեղրու, Կապանի, նույնբերյանի, Շամշադինի, Իջևվանի, ինչպես նաև Շահումյանի ու Գետաշենի շրջանների

վրա կատարված ավագակային հարձակումները, Հակառակորդների զավադիր զնդակից զոհվեցին ինքնապաշտպանության մի քանի աշխարհազորայիններ (էդիկ Մնացականյան, Երվանդ Սողոմոնյան, Մովսես Գորգիսյան և ուրիշներ)։

Բացառված չէր, որ ինքնապաշտպանության ջոկատները բացակայության պայմաններում Հայաստանի այս շրջաններում, Շահումյանում և Գետաշենում, ԼՂԻՄ-ում երևույթները պիտի ունենային այն ընթացքը, ինչ եղավ Ազրբեջանում ամենուրեք, կամ ինչին ականատես եղանք Աղատում ու Կամոյում։ Ռուս զինվորների օգնությամբ հայ բնակիչները լքեցին իրենց հայրենի օջախը։ Այս անգամ էլ պիտի խոշտանգվեի, անարդվեի ու տեղահան արվեի բազում անմեղ հայ բրնակչություն։ Այս անգամ նրանք ո՞ր պիտի փախչեին, ո՞ւմ ապավինեին, որտեղ ապաստան գտնեին։ Աղատ էր մնալու միայն երկրաշարժի գոտին... Քանի՞ օր պիտի անցներ, որ արդեն կատարված փաստը կենտրոնական իշխանությունները հաստատագրեին, հանդես գային «փոխադարձ» վիրավորանքները մոռանալու «քարի» խորհրդատուի առաքելությամբ։ Օրինակ «Սումգայիթին» հաջորդող զեպրեբը ոմանք բացատրում են նրանով, որ հայերը շղիմեցին «փոխզիջման», լմոռացան սումգայիթը⁶։

Կամ՝ Բաբլում քանի ղեռ ռուս մարդկանց, զինվորականների բնտանիքների ջարդի լուրը ղեռ չէր տարածվել, անգամ նրանից հետո էլ, կենտրոնական իշխանությունները, երկրում շատ անվանի մարդիկ, հասարակական կազմակերպություններ, կոլեկտիվներ, կանանց և այլ խորհուրդներ դիմում են թե՛ հայերին, թե՛ ազրբեջանցիներին, երկու ազգություններին էլ համասարապես զատապարտում են, երկուսից էլ պահանջում զազարեցնել արյունահեղությունը։ Երկու տարվա փորձը ցույց տվեց, որ կենտրոնը իրադարձություններին միջամտում է այն քանից հետո, երբ ազրբեջանցիները ուժի գործադրումով ամեն ինչ արել-պրծել են։

Չմոռանանք, որ հայ աշխարհազորայինների խմբերը հանդես եկան միայն ու միայն ինքնապաշտպանության մեղումով։ Նրանք զենքի դիմեցին համբերության բաժակը լըջ-

վելուց հետո։ Գրանք, ինչպես հայտնի է, հանդես եկան տարերայնորեն՝ Սումգայիթի և Գանձակի զեպրեբից հետո։ Նըրանց ինքնապաշտպանական գործողությունները աստիճանաբար կազմակերպված բնույթ ստացան։ Բաբլի զեպրեբը և ամբողջ սահմանի երկայնքով ազրբեջանցի գրոհայինների նախահարձակումը հայ աշխարհազորայիններին ստիպեցին գիտակցել պահի կարևորությունը և կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանության սուրբ գործը, դիմել զենքի։

Ուստի աշխարհազորայինների ինքնապաշտպանական ջոկատների հանդես գալը օրվա հրամայականն էր, հարկազիր, բայց ոչ նախապես կանխադժված քայլ։ Այն թելադրվում էր ակամա ստեղծված պատերազմական իրավիճակով։ Այլ պարագաներում հետևանքը պիտի լիներ այն, ինչին ականատես եղանք երկու տարվա ընթացքում։ Ընդամին, այդ ընթացքում և դրանից հետո կենտրոնական իշխանությունները կողմից Սումգայիթը աստիճանաբար մոռացության տրվեց, իսկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը դարձավ պարսավանքի նյութ։

Մինչդեռ ինքնապաշտպանության դիմած հայ աշխարհազորի, նրա բոլոր ջոկատների առջև, որտեղ էլ նրանք գործելիս լինեին, դրված էր մեկ զերազույն նպատակ՝ ազրբեջանցի ահաբեկիչներից պաշտպանել հայրենի հողը և անօգնական ժողովրդին, անձնազոհության, սեփական կյանքի զեռով կասեցնել հակառակ կողմի առաջխաղացումը, սպառնացող վտանգից փրկել մայրերի ու քույրերի պատիվը, անպաշտպան երեխաներին ու ծնողներին։ Միաժամանակ խնդիր էր դրվում ոչ մի տեղ, ոչ մի թեժ կետում շարձակել առաջին զնդակը, նախահարձակ չլինել։

Շենց իրենք՝ աշխարհազորայինները, լայն աշխատանք ծավալեցին սահմանամերձ շրջաններում ազրբեջանցիների կողմից սանձազերծվող պրոպագանդաներին շենթարկվելու համար։ Նրանք լավ օրինակ ցույց սվեցին Շահումյանում։ 1990 թ. հունվարի 18-ին շահումյանցիները առանց որևէ պայմանի ազատ են արձակել մինչ այդ պատանդ վերցրած վեց ազրբեջանուհու և երեք երեխայի։ Հավանաբար, ի պատասխան, հունվարի 19-ին ազրբեջանցիները ազատ են արձակել իրենց մոտ պահվող երեանցի հայ կանանց։ Այդ զեպ-

⁶ Դիպլոմ, 1990, № 5, էջ 56։

քից հետո, հավանաբար, սկիզբ առավ պատանդների փոխանակութունը։ Մի քանի օր անց փոխանակվում են նաև տղամարդ պատանդներ՝ երեք հայ պատանդների փոխարեն (Շահումյանի շրջտրհրդի նախագահ Արման Սատուրյանը, վերահսկողութան կոմիտեի նախագահի տեղակալ Շահեն Մելոյանը, Մանաշիզ գյուղի կոլտնտեսութան վարչության նախագահ Բենիկ Վարդանյանը) հայկական կողմը հանձնում է չորս ադրբեջանցիների։ Երկար ժամանակ որպես պատանդ պահեցին և շատ տանջեցին Շահումյանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Ազաջանյանին, նրա հետ հանլարի շրջանում ադրբեջանցիները պատանդ էին տարել 20 հայ երիտասարդների, որի փոխարեն հայկական կողմը կայանավորել էր 40 սպորիչների։ Մուշաղի գյուղում միլիցիոներների զգեստ հագած ադրբեջանցի բանդիտներին հաջողվում է պատանդ վերցնել զինվորների մի խումբ, որոնք հաջորդ օրը, ինչ-որ հնարքով, փախչում են, ահաբեկիչներին ձեռքին թողնելով զրահամեքենան։

1990 թ. փետրվարի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկու պալատների համատեղ լիազուցված նիստում Ծ. Մ. Պրիմակովը միանշանակ ղևահատական ավելի վանդալիզմով տողորված ադրբեջանական գրոհախիչներին և ինքնապաշտպանութան դուրս եկած հայ կամավորներին։ Ահա նրա խոսքերը. «Թե՛ Ադրբեջանում և թե՛ Հայաստանում տեղական իշխանությունների գիտությունը ու թողտվությունը ստեղծվեցին զինված կազմավորումներ, որոնք անօրինական ճանապարհով ձեռք էին բերել զենք՝ բնիկների և ծանրապարսկական անհատներին և այլն»։ Դա այդպես էր, բայց ոչ այդքանը։ Ինչու ենք մոռանում ասել ճշմարտությունն այն մասին, թե ո՞վ, ո՞ւմ վրա նախահարձակ եղավ, ո՞վ դիմեց վայրագությունների, ո՞վ էր ճանապարհները փակում և ականանետում, ո՞վ էր ամբողջ Ադրբեջանում և նախիջևանում անարգել ջարդեր, խժոժություններ, պետական սահմանախախտումներ և այլ վայրագություններ կատարում և հետո՝ անպատիժ մընում, ո՞վքեր կազմակերպեցին ահաբեկիչների մեծ հրոսա-

կախմբեր և զավթողական պատերազմի դուրս եկան հարեվան ժողովրդի դեմ։

Շատերը, երկրում իրերի ընթացքին լավատեղյակ չլինելու պատճառով, անտարբեր են ոչ միայն զարբաղյան պրոբլեմի, այլ Ադրբեջանում փոքրաթիվ ազգությունների նրկատամբ իրականացվող քաղաքականության հարցում։ Ի՞նչ ցեղասպանություն. սպանվել են հատ ու կենտ մարդիկ՝ երկու ազգություններից էլ։ Բաքվի հունվարյան օրերին սպանվել են 148 զինվոր՝ երկու հանրապետություններում։ Ցավն էլ այն է, որ նույն է ասվում ՏԱՍՍ-ի հաղորդագրություններում։ Բանից անտեղյակ մարդիկ ինչպե՛ս շահվառան այդ «հեղինակավոր» մարմնի հաղորդումների հավաստությանը։ Ի՞նչ իմանան, որտեղ է սկսվում ճշմարտությունն ու արդարությունը, և որտեղ վերջանում խաբուսությունը, կեղծիքը, ամեն ինչ «հավասարակշռելու», բարոյական նորմերը խեղաթյուրելու, հաճախ սուտը ճշմարտության տեղ սաղացնելու ՏԱՍՍ-ի հաղորդումների միտումնավորությունը։ Դրանք է՛լ ավելի սրելով ռեգիոնում պայթուցիկ իրավիճակը, ապակողմնորոշում են խորհրդային ժողովրդին և նրան տրամադրում հայ ժողովրդի դեմ։

Հիշենք դրանցից միայն մի քանիսը.

— 1990 թ. հունվարի 22-ին կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրով հեռարձակվեց և հունվարի 23-ին «Կոմսոմոլսկայա պրավդայի» էջերում գետեղվեց զրպարտչական հաղորդում այն մասին, որ իբր Հայաստանում անհանգստացնում, սպառնում են քրդերին, որ հայերի ու քրդերի միջև տեղի են ունեցել խժոժություններ, որ Հայաստանի Մասիսի, Հրազդանի և Սևանի շրջաններում հայերը հաճախակի սպառնում և հետապնդում են քրդերին։ Այդ հաղորդումը քուրդ ժողովուրդն ընդունեց զայրույթով ու վրդովմունքով։ Քուրդ ազգաբնակչության և մտավորականների ներկայացուցիչների համաժողովը դատապարտելով ՏԱՍՍ-ին և նման լուրեր հորինողներին, քուրդ ազգաբնակչության անունից ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Ս. Գորբաշովին, ՏԱՍՍ-ի գլխավոր զիբեկտոր Լ. Պ. Կրավչենկոյին և ԽՍՀՄ գատախաղ Ա. Յա. Սուխարևին հղած դիմումում կեղծ տեղեկության հե-

զինակներին խիստ պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացնում:

— «Իզվեստիա» թերթը 1990 թ. հունվարի 22-ի համարում լուսանք է թափում Վարդենիսի շրջանի երիտասարդների հասցեին, որոնք իբր թե բռնի տնով տիրացել են ՄԲ-21 մարտական մեքենայի, ականանոտի, խելի հարյուրավոր ատրճանակներ և իբր շրջանի ՆԳ բաժնին հաղողվել է զբրանք հետ ստանալ: Վարդենիսի շրջանում բնակչության կողմից հրազեն և ականանոտ զբռնագրավելու մասին» մինչ այդ հաղորդվել էր նաև «Յոթ օր» հեռուստատեսության ծրագրով: Այդ թխված լուրը զայրույթով ընդունվեց Վարդենիսի աշխատավորության շրջանում, որոնք առանց այդ էլ վրդովված էին Բաքվի դեպքերից և շափազանց լարված իրավիճակում ընդունում ու տեղավորում էին Բաքվից բռնագողթվածներին: Օրիոր անց «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրով այդ փաստի ստահողությունն էր արտահայտվում Վարդենիսի ՆԳ բաժնի պետի հետ կազմակերպված հարցազրույցում: Այդ մասին իրենց զայրույթն արտահայտեցին տեղական թերթերն ու հեռուստատեսության հեռարձակումները, պաշտոնական հերքմամբ հանդես եկավ ՆԳ նախարարը*:

— ՏԱՍՍ-ը օգտագործելով լրատվական բուրք միջոցները՝ վարպետորեն կոծկում է Ադրբեջանում կամ ադրբեջանցիների կողմից կատարված հակամարդկային և հակահրավական արարքների աշխարհագրությունը և ազգային պատկանելությունը կամ էլ դրանք վերագրում է Հայաստանին ու հայ մարդ-

* Հանրապետությունում եղել են զենք, զինամթերք թռնագրավելու, հափշտակելու, քաղաքացիներից ավտոմեքենաներ խլելու զեպքեր: Նման անձանց մի մասը ենթարկվել է քրեական պատասխանատվության և կրում է իր արգաս պատիժը: Բայց կան երիտասարդներ, որոնք թաքնվելով «ինքնապաշտպան» ջոկատների դիմակի տակ՝ զբաղվում են քրեական հանցագործության և կարողանում են ճարպկորեն խուսափել օրենքի առջև պատասխան տալուց: Դրանք ընդհանուր ոչինչ չունեն «ինքնապաշտպան» ջոկատների և, ընդհանրապես, հայ ժողովրդի շահերի, նրա իրական խրդիրների լուծման հետ, խնդիրներ, որոնց համար պետք են միայն անձնուրաց մարտիկներ: Հանրապետության իրավապահ մարմինները, ֆորմալ և ոչ ֆորմալ կազմակերպությունները, ինքը՝ ժողովուրդը՝ չունեն պտորոշող այդ բախտախնդիրների դեմ իրենց անհաշտ ու ամենօրյա պայքարով միայն կարողանան անաղարտորեն կենսագործել այն առաքելությունը, որ դրված է հայ ժողովրդի առջև:

կանց: Օրինակ՝ «Իզվեստիա» թերթի հունվարի 22-ի համարում ՏԱՍՍ-ի հաղորդագրությունում նշվում է այն մասին, որ Կրասնոսելսկի շրջանում ավտոմատներով ու զրահամեքենաներով զինված ջոկատներ (մինչև 50 մարդ) ամբողջ օրվա ընթացքում շրջափակել են Արծվաշեն գյուղը, որտեղ ապրում են ադրբեջանցիներ: Ուրեմն ստացվում է, որ զինված ջոկատները հայեր են: Բայց չէ՛ որ Արծվաշենը հայկական գյուղ է, և այն իրոք շրջափակել են, բայց ոչ թե հայերը, այլ ադրբեջանցիները:

— 1990 թ. հունվարի 17-ի համարում «Իզվեստիան» գրում է. «Հունվարի 14-ի լույս 15-ի գիշերը Կապանի շրջանից զնդակոծվել է Ադրբեջանական ԽՍՀ Զանգելանի շրջանի Սեյիդաբ գյուղը»: Հանրապետական մամուլը արձագանքելով այդ հաղորդմանը՝ նշում է, որ նման բան չի եղել: Ընդհակառակը, Զանգելանի շրջանից զնդակոծվել է Կապանի օդանավակայանի ուղղիչկայանի կայանը, որի մասին «Իզվեստիան» լուում է: Միուժեհական լրատվական միջոցները շրջանցեցին նաև այն իրողությունը, որ Զանգելանի շրջանի ադրբեջանական Խաշտափ գյուղից հունվարի 26-ին, առավոտյան փնդակոծվել է Կապանի շրջանի Եղվարդ գյուղը: Դրա հետևանքով վիրավորվել են կուլտուրայի նախագահ Ա. Օհանջանյանը և նրան օգնության հասած ապարանցի երիտասարդ ներսիսյանը:

— Կենտրոնական հեռուստատեսության «Յոթ օր» ծրագրով 1990 թ. հունվարի 21-ին և «Իզվեստիա» թերթի հունվարի 22-ի համարում զետեղված հոդվածում հաղորդվում է, որ Հայաստանի տարածքում հարձակում են գործել խորհրդային բանակի զորամասերի վրա: Այդ կապակցությամբ բողոքի հայտարարությամբ հանդես եկավ Երևանի կայազորի քաղաքացի պետ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ գեներալ-մայոր Մ. Սուրիովը: Արտակարգ իրադրության հանրապետական խորհրդի օպերատիվ շտաբի նիստում նա հայտարարեց, որ «խորհրդային Հայաստանի տարածքում խորհրդային բանակի զորամասերի վրա ոչ ոք և ոչ մի տեղ հարձակում չի գործել, չի խանգարվել նրա տեղաշարժերը, առավել ևս՝ զենք և զինամթերք խլել»:

Բայց դա բնավ էլ չխանգարեց, որ Բաքվի 1990 թ. իրա-

գարծուբյուռների հետ «հավասարակշռություն» ստեղծելու նպատակով, որոշ ժամանակ անց, 1990 թ. մայիսի 27-ին Երևանի երկաթուղային կայարանում և նուրբարաշենում ինչ-որ մի դորավոր ձեռքով կազմակերպվի մի նոր սաղարանը: Գո փորձ էր հավաստելու, որ Հայկական ԽՍՀ-ում գործում են խորհրդային բանակի դեմ տրամադրված «ահաբեկչական» խմբեր: Առանց դեղքերի էությունը բացահայտելու, առանց դատական մեղադրանքի կայացնելու, լրտաժական միջոցները շատուցյին ուղղություն տալ՝ երկրի բոլոր ժողովուրդներին նորից վշտերիմացություն մեջ գցելու և երկրում հակահայկական տրամադրություններ ստեղծելու համար:

Ինչպես հաճախ, այս փորձով նույնպես, պետք է հաստատվեր Զիտ Բունիսթովի «մարգարեական» գուշակությունը՝ Հայաստանում անարեկչական խմբերի առկայության մասին:

Որ մայիսի 27-ի սաղարիչ միջադեպը պրոպագանդա է, շատ հիմնավոր մեկնարանվեց հանրասրտական մամուլի էջերում: Որպես կախան, մամուլը ելնում էր հետևյալ նկատառումներից.

Առաջին. Հայաստանում «ահաբեկչություն» խմբերի ստեղծության մասին ի՞նչ տվյալների հիման վրա էին ավելորդ ենթադրություններ արվում: Նման ենթադրությամբ հանդես էր եկել նաև Մ. Ս. Գորբաչովը:

Կամ, ի՞նչ հավաստի վկայակոչումներով էր կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը գուշակում երևանում մայիսի 27-ին սպասվելիք «ահաբեկչություններ», իսկ «Մայակ» ռադիոկայանը՝ կառավարական «հեղաշրջման» և Վ. Ի. Լենինի արձանը պայթեցնելու մասին: Եթե այդ գուշակությունները ինչ-որ շահով հավաստի էին, ապա ինչո՞ւ ոչինչ չձեռնարկեցին իրավապահ մարմինները:

Երկրորդ. այդ ի՞նչ ահաբեկիչներ էին, որոնք լինելով նախահարձակ, զոհվեցին գլխովին, նրանցից փրկվեց անհայտ մեկը, տեղն ու տեղը անհետանալով, իսկ միջադեպից անտեղյակ, հանկարծակի եկած և այդ պահին պաշտպանության դիմող կողմը՝ չտվեց ոչ մի զոհ:

Երրորդ. ինչպես պատահեց, որ Երևանի երկաթուղային կայարանից տասնյակ կիլոմետրեր հեռու գտնվող զինվորական ստորաբաժանումները կազմ ու պատրաստ վիճակում արշավեցին դեպի քաղաք՝ կրակ բացելով նուբարաշենի փողոց-

ների տնակների վրա: Եթե նախահարձակ կողմը «ահաբեկիչներ» էին, ինչու դարձյալ ոչ մի զինվորական չզոհվեց (և շատ լավ է, որ չի զոհվել), բայց խաղաղ բնակիչներից եղան զոհեր, հարյուրավոր վիրավորներ, այդ թվում տանք նստած մարդիկ, անչափահաս երեխաներ: Այդ ի՞նչ «ահաբեկիչներ» էին, որոնք իրենց կյանքը վտանգի ենթարկելու գնով կազմակերպեցին շեղբացնելու ինչպես խաղաղ բնակչությունը, այնպես էլ զինվորական ստորաբաժանումների ենթադրյալ վտանգը: Այդ ի՞նչ «ահաբեկիչներ» էին, որոնք անձնազոհության գնով մտահոգվեցին կանխել զինվորական ստորաբաժանումների շարժը դեպի քաղաք, պատահած ինքնաթիռի մեքենաներով ու քաղաքացիական այլ տեխնիկայով փակել զրահամեքենաների ճանապարհը, խոհեմաբար բանակցությունների մեջ մտնել զինվորական հրամանատարության հետ և այլն:

Այս առիթով ավելորդ չէր լինի մեջ բերել ուս հասարակայնությանը Հայաստանի ստեղծագործական միությունների հղած դիմումից հետևյալ հատվածը. «Զանաչով իրենց պետերի զգաստացնող խոսքերին, ինքնապաշտպանության ջոկատների մի քանի անդամներ, հայտնի չէ, թե ո՞ւմ սաղարիչ զրգումով, փորձեցին զինաթափ անել Երևանի երկաթուղային կայարանում զինվորական պահակախմբին և հանդիպեցին, թերևս ուղղակի օրենքներով նախատեսված, բայց ծայրահեղորեն դաժան գատաստանի Զինաթափվել պահանջող 10—15 երիտասարդներից 6-ը տեղնուտեղը սպանվեցին: Գնալից հետո գա ցավալի ընթացքի հետևանքով զոհվածների թվին ավելացան ևս 18 հոգի, որոնցից մեկը՝ խորհրդային Միության ներքին գործերի սպա, զոհ գնաց ինքնապաշտպանական ջոկատի կողմից արձակված գնդակին, իսկ մնացյալները, որ երևանցիներ էին, իրենց մահը գտան զորքերի ծավալած անխնա գործողություններից:

Մենք մեր խորունկ վիշտն ենք հայտնում ուս սպայի ցավալի վախճանի համար և դատապարտում բռնության ամեն մի արտահայտություն, ում կողմից էլ որ գործադրվի այն: Միևնույն ժամանակ մենք շնք կարող զգաստ վերածություն շնթարկել կատարվածը, շնք կարող շմտածել, թե ինչպես ծագեց և ում էր ձեռնտու այս եղեռնական իրադար-

ձուլվումը: Կարծում ենք, որ դատարանը կպարզի այդ ամենը: Տարօրինակն այն է, որ մեր միութենական համապատասխան մարմինները, հեռուստատեսությունը, մամուլը, շապահելով դատարանի եզրակացությունը, հայտարարում են, որ դա հայ տեղորոշումների զագրելի գործն է, եղածը միակողմանի ներկայացնելով՝ բորբոքում են լայն զանգվածների վրդովմունքը հայերի նկատմամբ, ընդհանրացնում առանձին միջազեպերը՝ հանգեցնելով այն հետևողական տեղորոշողական ակտերի: Պակասը լրացրեց մայիսի 28-ին Բաքվում, «ամենահին տերնացիոնալ այդ քաղաքում», կայացած գինժառայողների ժողովի գիմունը պրեզիդենտ Գորբաչովին, որտեղ պահանջվում է միջոցներ ձեռնարկել կանխելու համար հայ տեղորոշումների հետագա հարձակումները ներքին գործերի ստորաբաժանումների վրա: Ակամա ուզում ես հարցնել՝ ինչու՞ այդ ժողովը չգումարվեց և Մոսկվա բողոք շառաքվեց ա՛յն օրերին, երբ Սումգայիթում, Կիրովաբադում մոլեգնած բանդաները սպանում էին հայերին պաշտպանող զինվորականներին, ա՛յն օրերին, երբ պետական սահմանը հարյուրավոր կիրմետրերով ավերող սանձազերծ խուժանը կաթվածահար էր արել խորհրդային սահմանապահներին, ա՛յն օրերին, երբ Բաքվի թաղամասերում նույն այդ բանդաները հրով ու սրով բռնանում, իրենց բնակարաններից դուրս էին շարտում ուս զինվորականների ընտանիքները: Մենք ինչքան գիտենք, այդ ավազակներից ոչ մեկը շարժանացավ «ադրբեջանական տեղորոշում» հորջորջմանը: Իսկ իրենց հանրապետության սահմանները, իրենց մայրերի ու քույրերի կյանքն ու պատիվը պաշտպանող աշխարհազորայիններին իսկույն հագցրին «հայ տեղորոշում» պիտակը: Շատ է կասկածելի այս նախօրոք բնորոշ կնքանունը և, մանավանդ, շատ է ձեռնտու ադրբեջանական կողմին: Ըստ երևույթին Գորբաչովի և Բուշի հանդիպման օրերին հարկավոր էր հիմնովին արատավորել զարբաբաղյան պահանջատիրությունը և խորապես դեմոկրատական, ազգային ինքնորոշումն ու մարդու իրավունքները հետապնդող շարժումը որակավորելով որպես տեղորոշողական գործողություն, նրա դեմ ուղղել միջազգային տեղորոշմի գեմ պայքարող մարդկության հասարակական կարծիքը: Միևնույն ժամանակ այդ որա-

կումների հետևանքով լայնորեն ծավալվող հակահայկական հիստերիան նպատակ ունի նոր լիցք տալ այն հայատյաց տրամադրություններին, որ շարունակաբար հրահրում են խորհրդային երկրով մեկ անվերջորեն ճամփորդող մանր ու մեծ էմիսարները»⁷:

ԾՐՋԱՓԱԿՈՒՄ

Հայաստանում կացությունն ավելի լարված ու դրամատիկ դարձնելու համար Ադրբեջանում խորհեցին և գործադրեցին հակամարդկային հնարավոր ու անհնարին շատ մեթոդներ: Առանձնապես գործի գրեցին այն փորձված մեթոդը, ինչը մեկուկես տարի կիրառվում էր ԼՂԻՄ-ում. շրջափակել Հայկական Հանրապետությունը: Չէ՛ որ նրա բեռների 85 տոկոսը փոխադրվում են Ադրբեջանի երկաթուղու նախիջևան-Ծրեան, Ղափան-Իջևան կայարաններով: Հենց դրանով իսկ նրանք մտադրվեցին Հայկական Հանրապետությունում ստեղծել մի իրավիճակ, որ արտասահմանյան երկրներից և Խորհրդրդային Միության այլ հանրապետություններից աղետի գոտի առաքվող և, ընդհանրապես, հանրապետության կենսազործունեությունն ապահովող ուղեբեռները տեղ չհասնեն, զաղարեցվեն նաև հետադարձ հոսանքով բեռների, զբլխավորապես կոմպլեկտավորման արդյունաբերական ապրանքների, մեքենաների առաքումը: Նպատակը՝ ճախողել շինարարությունը աղետի գոտում, ստեղծել սննդի, արդյունաբերական ապրանքների սով, որի կարիքը զգում են ոչ միայն ազնայունները, այլև փախստականներն ու շատ ուրիշներ: Ավելին, ճախողել նավթամթերքների ու գազի առաքումը Ադրբեջանից Հայաստան, որի շնորհիվ այլևս չեն գործի ջերմակայանները, կկազմալուծվի ողջ տնտեսությունը: Ավելի քան երեք տարի մայր հայրենիքից մեկուսացված վիճակի մեջ էր հայտնվում ԼՂԻՄ-ը: Հայաստանի Հանրապետությունից Ստեփանակերտ տանող ճանապարհին (Հյուսիսից՝ Իջևան-Ղազախ-Կիրովաբադ-Աղղամ-Ստեփանակերտ, հարավից՝ Գորիս-Լաչին-Շուշի-Ստեփանակերտ) ավազակային

7 Խորհրդային Հայաստան, 1990, 9 հունիսի:

գինված հարձակումներ էին կատարվում բեռնատար ու մարշ-
քատար ավտոմեքենաների ու ուղևորների վրա, շարդում
էին մեքենաները, ծեծում ու մարմնական վնասվածքներ
պատճառում ուղևորներին՝ ծեծումներին, կանանց ու երե-
խաներին, անարգում ու թալանում նրանց: Ո՞վ էր դրա հա-
մար պատասխանատուություն ու պատիժ կրում: Կամ ո՞վ էր
դրանով հետաքրքրվում:

1989 թ. հուլիսի 21-ից սկսած Ադրբեջանի կողմից Հայ-
կական ԽՍՀ-ն ենթարկվեց տնտեսական ու քաղաքական շրջ-
ջափակման: Ադրբեջանից ԼՂԻՄ և Հայկական ԽՍՀ տանող
երկաթուղագծերն ու ավտոխճուղային ճանապարհները փակ-
վեցին:

Ադրբեջանի տարածքում, մասնավորապես Նախիջևանի
երկաթուղային գոտում ադրբեջանցիները քանդում էին եր-
կաթգծերը, ղինված հարձակումներ գործում հայ ուղևորների
վրա, շարդում վագոնների լուսամուտները, թալանում մարդ-
կանց և ուղեբեռներով առաքվող վագոնները: Ծղան հայ
ուղևորների սպանության դեպքեր, շատերը ծանր վիճակում
տեղափոխվեցին հիվանդանոցներ: 1989 թ. օգոստոսի 13-ին
Մեղրիում երկաթգծի կամրջի պայթյունից սպանվեց 1 մարդ:
Սովորական դարձան երկրի տարբեր մասերից և արտասահ-
մանից շինանյութերով բեռնված վագոնների առաքումը խա-
փանելը (երկաթգծեր քանդելը, կամուրջներ պայթեցնելն ու
ուղևորների ծեծն ու չարգը), արտասահմանից աղետալիներին
որպես օգնություն առաքվող ուղեբեռների թալանն ու կողո-
պուտը: Այդ օրերին Նախիջևանում և Ղազախում առևանգ-
վելու պատճառով աղետի գոտի չհասան շինանյութերով բեռ-
նրված տասնյակ հազարավոր վագոններ: Չախողվեցին շի-
նարարական աշխատանքները:

Տնտեսական շրջափակումը որոշակի վտանգի տակ դրեց
ոչ միայն աղետի գոտում շինարարության ընթացքը, աղետ-
յալների ու շինարարների սննդի մատակարարումը, այլև
հանրապետության նորմալ կենսազործունեությունը:

Վառելիքի և սննդի մատակարարումը ձախողելու պատ-
ճառով հանրապետությունում և մարզում 1989 թ. ամռանը
լիաթոք էին գործում բոլոր արդյունաբերական ձեռնարկու-
թյուններն ու շինարարական կազմակերպությունները: Մյուս

կողմից էլ ժողովրդական տնտեսության մեջ արտադրված ու
ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող շատ
արժեքավոր ապրանքներ, որին սպասում էին երկրի տարբեր
ծայրերում, թափված էին ձեռնարկությունների պահեստնե-
րում, հանրապետության երկաթգծի կայարաններում: Բնե-
զին չլինելու պատճառով կազմալուծվեց գյուղատնտեսական
մթերքների բերքահավաքը և առաքումը հանրապետությու-
նում և մարզում: Այդ մթերքների մեծ մասը հնարավոր չէ
ձեռքով հավաքել, իսկ հավաքած բերքը, իր Ներթին, փշանում
է հանրապետության ու մարզի ներսում և երկրի տարբեր
մասերում գտնվող սպառողներին ու վերամշակող կետերին
լառաքելու պատճառով: Իսկ այդ վնասները հասնում են մի-
լիարդների:

Նվ այսպես, շրջափակումով Ադրբեջանը չհայտարարված
պատերազմի սկիզբ գրեց: Շրջափակումից երկու ամիս անց
ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդգծեց, որ «Իր
մասշտաբներով և դաժանությամբ անհասկազեպ այդ շրջա-
փակումը փաստորեն արգելակում է երկրաշարժի հետևանք-
ների վերացմանն ուղղված երկրի բոլոր հանրապետությու-
նների, երկրամասերի ու մարզերի, արտասահմանյան պետու-
թյունների, միջազգային կարմիր խաչի և մյուս կազմակեր-
պությունների կողմից միջոցառումների իրականացումը,
խարխում է խորհրդային ֆեդերացիայի հիմքերը, անուղե-
լի վնաս հասցնում մեր երկրի միջազգային հեղինակությանը:

Շրջափակումը զգալի հարված է հասցրել նախ և առաջ
երկրաշարժից տուժած շրջանների բնակչությանը, երեխանե-
րին, ծեծերին, կարիքավոր քաղաքացիներին և փախստական-
ներին, Հայաստանում կա ավելի քան 700 հազար անօթևան
մարդ, տասնյակ հազարները զոհվեցին երկրաշարժի ժամա-
նակ, ավելի քան 3 հազար մարդ հաշմանդամ դարձավ, 957 երե-
խա լրիվ որբացավ, իսկ 5271-ը զրկվեց ծնողներից որևէ
մեկից:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը նշում
է, որ արդի միջազգային հարաբերություններում շրջափակ-
ման իրականացումը դիտվում է որպես պատերազմի ակտու:

Արտասահմանից և հարևան հանրապետություններից շի-
նանյութերով բեռնված վագոնները տեղ չհասնելու պատճա-

ուով ազետի գոտում ամիսներով անգործութեան մատնվեցին շենարարները, Կիսատ թողնելով գործը, շատերը մեկնեցին իրենց հայրենիքը՝ արտասահման կամ երկրի այլ հանրապետություններ:

1989 թ. սեպտեմբերի վերջերին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի օրերին Ադրբեջանի կողմից օկուպացված դնացքները վերջապես մեկնեցին Հայաստան: Երանի շմեկնեին... արտասահմանից ազետի գոտի առաջվող հազարավոր շարժուփշուր եղած տնակներ, դուռ ու լուսամուտ, բենզինի փոխարեն ջրով բեռնված, կամ դատարկ, կամ ջրով քարացրած ցեմենտ, ինչպես նաև թալանված վագոններ: Մենդամթերքներով բեռնված վագոնների որոշ մասը առևանգելուց հետո անջատել են սառնարանները և թողել արևի տակ: Չափազանց մեծ հոգս դարձավ հոտած ու նեխած սննդամթերքների բեռնաթափումը (հոտած ձուկ, նեխած կարտոֆիլ): Կայարաններում սուր տարածվող գարշահոտը ստեղծել էր մի անտանելի և հակասահիտարական վիճակ: Մարդիկ աշխատում էին հակազազեր հագած: Այս բոլորից բացի բեռնաթափելու համար ավելորդ տեղը գործադրվեց մարդկային շատ աշխատանք: Որոշ ժամանակ անց՝ հոկտեմբերին շրջափակումը վերսկսվեց:

Շրջափակման պատճառով մեծ վտանգի տակ դրվեց հիվանդանոցներին ղեղորայքով ապահովելը, միլիտանտոր ուրբիների ղեղորայքներ թալանվեցին ու փչացան պաշարված վագոններում: Բենզին չլինելու պատճառով շտապ օգնության մեքենաները չէին աշխատում, բժիշկները չէին կարողանում գրազվել ծանր հիվանդներին բուժելու գործով: Բուժումը և կոնսուլտացիաները կատարվում էին հեռախոսով: Ազետի գոտում դադարեցվեցին նաև բուժօժիմնարկների կառուցման ու վերականգնման աշխատանքները...

Շրջափակումն ընդգրկեց կյանքի բոլոր կողմերը...

Հանրապետությունում լուրջ մտահոգության տեղիք տվեց կենտրոնական հեռուստատեսության և մամուլի քար անտարբերությունը: Նրանց կողմից, նախկինի նման, այս առիթով հազորովող կցկտուր լուրերից դարձյալ գլուխ հանելը և որևէ բան հասկանալը շատ դժվար էր: Այդ հազորումներում, շրջանցելով շրջափակումը, Ադրբեջանից Հայկական ԽՍՀ և

մարդ մեկնող գնացքների երկարատև դադարը սկսեցին բացատրել հարևան հանրապետությունում երկաթգծի աշխատողների գործադուլով: Նախ, պետք է ասել, որ շրջափակումը և տրանսպորտային ուղիների և միջոցների օկուպացումը սկսվել էր շատ ավելի վաղ, քան գործադուլը: Իսկ մյուս կողմից, գործադուլավորների աշխատանքը վերսկսելուց հետո էլ շրջափակման և օկուպացման պրոցեսը դեռ երկար ժամանակ շարունակվում էր: Բայց դա չէր խանգարում, որ լրատվական միջոցները շարունակեին լուրեր հաղորդել Հայաստան և ԼՂԻՄ մեկնող տրանսպորտային միջոցների գործունեությունը վերսկսվելու մասին:

Չմոտանաք, որ այդ դեպքերից մեկ տարի առաջ կենտրոնը նշավակում էր Հայկական ԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում տեղի ունեցող գործադուլները, որի հետևանքով աշխատանքները իբր թե ամբողջ երկրում կազմալուծվել էին: Երկրով մեկ աշխատավորությունը դժգոհում էր, որ Հայաստանից կամ ԼՂԻՄ-ից կոմպլեկտավորման համապատասխան մասերի առաքումը ստեպ-ստեպ խաթարվելու պատճառով խախտվում է հազարավոր ձեռնարկությունների աշխատանքային ռիթմը, իսկ աշխատավորական մեծ զանգվածներ զրկվում են նորմալ աշխատելու և վաստակելու հնարավորությունից: Այդ օրերին, երբ շրջափակումը համընդհանուր է և տևում է ամիսներ, իսկ տրանսպորտի կազմալուծմամբ դադարել է ներմուծումն ու արտահանումը, շեն աշխատում արդյունաբերական ձեռնարկությունները, շինարարական կազմակերպությունները, գյուղատնտեսությունը և արտադրական այլ օղակներ, իրենց հետ բերելով միլիարդների հասնող վնասներ, Միտոլյան որևէ անկյունում ոչ մի բանվորի դժգոհության փաստ հրապարակ չեկավ: Պատրաստի արտադրանքը առաքել կարողանալու պատճառով պահեստներում, բակիրում տեղ չկա: Միլիոնների հասնող կոմպլեկտավորման առարկաներ չառաքվելու պատճառով երկրում լիաթոք չէին գործում շտաբարդյունաբերական ձեռնարկություններ: Բայց, միևնույն է, սուգանքը մուծում են Հայաստանի ձեռնարկությունները, մամուլը պարսավում է հայ ժողովրդին:

Հանրապետությունը շրջափակելու, խճուղիները և երկաթուղագծերը օկուպացնելու հարևան հանրապետության կող-

մից ստեղծված և վտանգավոր հետևանքներով հղի մթնոլորտի, ինչպես նաև ԼՂԻՄ-ի հարցի արդարացի լուծման առիթով իր բողոքն ու վրդովմունքն արտահայտեց Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի տասներորդ արտահերթ նստաշրջանը (1989 թ. սեպտեմբեր): Նստաշրջանը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը.

«1. Վճռականորեն դատապարտել Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման կազմակերպումը, նշել, որ այն ոչ թե տեսեսական, այլ քաղաքական նպատակամետ ակտ է դեմոկրատական ճանապարհով ԼՂԻՄ-ի պրոբլեմի արդարացի լուծմանը ուժի օգնությունը խանգարելու համար:

2. Հաշվի առնելով, որ ադրբեջանական երկաթուղադիժը, ինչպես և մյուս ճանապարհները, օգտվում են անձնակազմի փոխությունից, պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանից և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդից՝ դրանք հայտարարել ռազմական զբաղման մեջ, ապահովելով Հայկական ԽՍՀ, ԼՂԻՄ եկող տրանսպորտի բոլոր տեսակների ազատ և անվտանգ երթևեկությունը:

3. Պահանջել ԽՍՀՄ սահմանադրությանը համապատասխան, հրավիրել ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների արտահերթ համագումար՝ շրջափակումը վերացնելու նպատակով արտակարգ միջոցառումներ ընդունելու համար:

4. Հաշվի առնելով շրջափակման հետևանքով ժողովրդատնտեսական բեռների առաքման ասպարեզում թույլ տրված ճեղքվածքը և գյուղատնտեսության ու արդյունաբերության ասպարեզում առաջացած կորուստները, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի առջև հարց բարձրացնել խոշոր մասշտաբներով ժողովրդատնտեսական բեռներ Հայաստան փոխադրելու նպատակով քաղաքացիական և ռազմատրանսպորտային ավիացիան ներգրավելու մասին՝ շրջափակման հետևանքով առաջացած պարենային և նյութական մյուս ռեսուրսների ֆոնդերն ու կորուստները համալրելու համար:

5. Արտակարգ միջոցներ ձևակերպել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից տուժածներին հատկացված 31 հազար վազոն-տնակները և մյուս ապրանքներն ու նյութերը աղետի գոտի հասցնելու համար:

6. Հարց բարձրացնել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի առջև՝ որոշում ընդունել տրանսպորտի միջոցներին և հանրապետության ուղարկվող բեռներին ու ապրանքներին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում հասցված վնասը ադրբեջանական հանրապետության բյուջեից փոխհատուցելու մասին:

7. Գիմել ԽՍՀՄ դիւրավոր դատախազին՝ պահանջելով խիստ պատասխանավության ենթարկել Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման կազմակերպիչներին և իրականացնողներին, ճանապարհներին սանձարձակ արարքներ կատարողներին:

8. ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ուղարկությանը հրավիրել այն բանին, որ կենտրոնական մամուլի հրապարակումները, ռադիոհեռուստատեսային հաղորդումներն իրենց հաճախ կողմնակալ, անիրազեկ և միտումնավոր հրապարակումներով ապակողմնորոշում են երկրի բնակչությանը, ավելի են սրում և բարդացնում առանց այն էլ պայթյունավտանգ իրադրությունը «եզդիտնում»¹:

Բայց ինչ օգուտ:

Ավելին: Այդ արտահերթ նստաշրջանի մասին Արմենպրեսի օբյեկտիվ ինֆորմացիան ՏԱՍՍ-ի կողմից հատուկ սրբագրման ենթարկվեց: Շարադրանքում բաց թողնվեց ռեզիտնում իրադրության սրման իրական պատճառները և շրջանցվեց Ադրբեջանի կողմից Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակման հարցը:

Արմենպրեսը հարկադրված էր պաշտոնական բողոքով դիմել ՏԱՍՍ-ի ղեկավարությանը՝ գործակալության կողմից «նյութի աղավաղման, Հայկական ԽՍՀ-ում տիրող իրավիճակի ոչ օբյեկտիվ լուսաբանման առթիվ, ինչպես նաև այժև կապակցությունը, որ երկրի լայն հասարակայնությանը տեղյակ չի պահվում այն մասին, որ Ադրբեջանի ղեկավարության մեղքով Հայաստանն ու ԼՂԻՄ-ը երկար ժամանակ է, ինչ գտնվում են շրջափակման մեջ, իսկ սահմանամերձ շրջաններում հանրապետության ղեմ չհայտարարված պատերազմ է մղվում»²

Մինչդեռ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ.

1 Խորհրդային Հայաստան, 1989, 23 սեպտեմբերի:

2 Երեկոյան Երևան, 1989, 19 սեպտեմբերի:

հոկտեմբերին տեղի ունեցած նստաշրջանում էլույթ ունեցողները հանրապետությունով մեկ մտեղանող վայրագությունները դատապարտելու և սաղորդելուն հակահայկական սանձարձակություններից ետ պահելու կոչ անելու փոխարեն, վերստին շարացած են և Ղարաբաղյան շարժման դեմ սուր են ճռճում:

Նստաշրջանի մասնակիցների միահամուռ հավանությունը ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակումը խստացնելու կոչ է արվում: Ի դեպ, թեև կենտրոնական հեռուստատեսությամբ «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագիրը երեք անգամ անդրադարձավ այդ նստաշրջանին, բայց ոչ մի անգամ չնշտվակեց սաղորդելուն: Ավելին, այդ նույն ինֆորմացիոն ծրագրով 1989 թ. սեպտեմբերի 17-ին, ազգային հարցերին նվիրված ԽՄԿԿ Կենտկոմի պլենումի նախօրյակին, հարցազրույց է կազմակերպվում Ազրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեդրովի հետ: Ինքնագոհ կեցվածք ընդունելով, նա ոչ մի պատասխան չի տալիս Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում Ազրբեջանի նկատմամբ հարուցված մեղադրանքներին: Լուսվածք շրջանցում է հայ ժողովրդի նկատմամբ կազմակերպվող վանդալիզմը, Հայկական ԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ի շրջափակումը:

Ցավոք, շրջափակման հարցի գրեթե համանման դիրքորոշում գրսևորվեց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի առաջին նիստում: Նստաշրջանում շրջափակումը արտակարգ երևույթ դիտելու և անմիջականորեն քննարկման հարց դարձնելու փոխարեն մերժվում է Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջարկությունը: Մ. Ս. Գորբաշովի առաջարկությամբ՝ մեկ-երկու օր ժամանակ է տրվում շրջափակումը վերացնելու և ամիսներ շարունակվող պարզից էլ պարզ հարցը նորեն «պարզելու» համար: Ավելին, նստաշրջանում հայտարարվում է, որ իբր թե շրջափակումը երկկողմանի բնույթ է կրում: Նույնիսկ Ազրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահը դիմում է իրենց համար սովորական դարձած հերթական զրպարտությունը՝ որ իբր ԼՂԻՄ-ի և Հայաստանի շրջափակման հիմնական շարժառիթը Հայաստանից ԼՂԻՄ զենքի տեղափոխումը կասեցնելն է: Ի՞նչ զենքի մասին է խոսքը: Հետագայում նույն-

պես եղան հաղորդումներ, ըստ որի, իբր Մեղրին շրջափակել է նախիջևանը, և այդ պատճառով էլ զնացքները Հայաստան չեն մեկնում: Բայց երկրի տարբեր վայրերից նախիջևանի և Ղազախի երկաթուղային կայարաններում կանգնած տասնյակ հազարավոր վագոնները, որոնք ժամ առաջ պետք է աղետի գոտի հասնեն, ամիսներով շրջափակված են: Այդ վագոններն էլ ղե՞նք են տեղափոխում:

Գիվային նենգություն, դժոխային շարախնդություն... Մարդ արարածը ինչքան շար ու ցազանաբարո հոգի ունենա, որ ուրախանա մի ամբողջ ժողովրդին հասած դժբախտությունը, այլև գործադրի բոլոր միջոցները ուրիշ ժողովուրդների կողմից օգնության մեկնած ձեռքը կտրելու, նման վայրենի արարքից հաճույք ապրելու համար:

Շրջափակման կազմակերպիչների մոտ երբեք չշարժվեց մարտկաջին գուլթն առ այն, որ ձեռքեր տասնյակ հազարավոր երեխաներ, կանայք ու ծերունիներ, այդ թվում աղետի գոտում, չունեն տուն ու տեղ և մի կերպ ծվարել են ցուրտ վրաններում՝ մնալով աստժո հույսին:

Նստաշրջանում «շրջափակում» արտահայտությունը նենդափոխվեց և փորձ արվեց դրա մեղքը հավասարապես բաժանել երկու կողմերի վրա: Հիշե՛ք Ե. Մ. Պրիմակովի կուլթը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջաններից մեկում. «...մի կողմը թույլ չի տալիս զնացքներն անցնեն Հայաստան, մյուս կողմը՝ նախիջևան»: Անհասկանալի է, թե ինչու, ինչ նպատակամղվածությունից դրդված Հայաստանը պետք է թույլ շտար, որ զնացքները մտնեն նախիջևան, չէ որ դա ոչ ալեկ, ոչ պակաս ինքնաշրջափակում է: Նախիջևանի կայարանով Հայաստանը արտաքին աշխարհից ոչ միայն շատ կարևոր ուղեբեռներ է ստանում, այլև առաքում է:

Ակնհայտ է, որ նստաշրջանում դրսևորվող նման վերաբերմունքը ինչ-որ ձևով արդարացնում է շրջափակումը, ազատություն ընձեռում և գործելու որոշակի ուղղություն տալիս շրջափակման կազմակերպիչներին: Այլապես ինչու՞վ րացատրել, որ նստաշրջանից հետո շարունակվում էր շրջափակումը, նորից Հայաստան էին մտնում դատարկ ու թալանված վագոններ, ջարդ ու փշուր եղած տնակներ, հուսած սննդամթերք...

Նստաշրջանում ոչ միայն նենգափոխվեց շրջափակման կոմիտեան ու այն իրականացնող լծակները, այլև այն շրջափակման, քաղաքական գնահատական շտաբացավ, շրջափակման պարտվեց, քաղաքական գնահատական շտաբացավ, շրջափակման պարտվեց որպես ագրեսիա, պատերազմական իրավիճակ ձևավորվեց անսովոր քայլ՝ երբ Ֆեդերացիայի մեջ մտնող մեկ հանրապետություն, ոտնահարելով հենց իր երկրի և միջազգային օրենքներն ու նորմերը, ագրեսիա է ձևավորում մեկ այլ հանրապետության նկատմամբ: Հասկանալի է, եթե երևութիւնը ստանալով քաղաքական գնահատական, դատապարտվել էր և դիտվել որպես երկրում գործող օրենքների ու միջազգային նորմերի իրավախախտում, ապա դրան պետք է հետևեր շրջափակման կազմակերպիչների նկատմամբ միջազգային գործող իրավական նորմերով պատասխանատվության և պատիժ հարուցելու հարցը: Ուստի որքան շատ է խոսվում դեմոկրատիայի և հրապարակայնության մասին, այնքան ցցուն են դառնում լծացման շրջանին հատուկ գործելակերպի ձևերն ու մեթոդները: Իրականությունը թաքցվում է ժողովրդից, շրջանցվում Սումգայիթը, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շարժման ազատագրական բնույթը, թաքցվում է Ադրբեյջանական ԽՍՀ-ում հայ բնակչության շարժի ու բռնազավթի իրական դրդապատճառները, ինչպես նաև խրատական դասեր տրվում Հայաստանին՝ «Ադրբեյջանը շրջափակման ենթարկելու համար»:

Իրոք, շրջափակմանը քաղաքական գնահատական շտաբ ունեցավ այն հետևանքները, ինչ սումգայիթին քաղաքական գնահատական շտաբը: Այդ կապակցությամբ ինչպես չհիշել պրոֆեսոր Վ. Պետրովսկու արտահայտած հետևյալ միտքը. «...Օթի վճռական միջոցներ չձեռնարկվեցին, ապա շրջափակման «մետաստազները»՝ Ադրբեյջանի երկաթուղայինների ամոթալի գավակներին կտարածեն ամբողջ աշխարհով մեկ, ինչպես տարածվեցին սումգայիթի արմատապես լվիքահատված մետաստազները»:

Չարմանալին այն է, որ հարևան հանրապետության կողմից ՀԽՍՀ-ի երկարատև շրջափակումը պարբերաբար ապաշրջափակվում է, վերսկսվում են արտաքուստ նորմալ թվա-

ցող ուղերթերը: Այդ կարճատև ապաշրջափակումը, որ խարուհի բնույթ էր կրում, բացատրվում է երկու նկատառումով:

Առաջին, ապաշրջափակումը համընկնում է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարների, Գերագույն խորհրդի նստաշրջանների կամ ԽՄԿԿ Կենտկոմի պլենումների հրավիրման պահերի հետ: Իրանով իսկ հարևան հանրապետության ղեկավարությունը հատուկ նպատակադրվածությամբ շեղում է շրջափակման նկատմամբ այդ պլենումների, նստաշրջանների մասնակիցների ուշադրությունը, մասնակիցներ, որոնց մի զգալի մասը առանց այդ էլ հարցի նկատմամբ անտարբեր վերաբերմունք է դրսևորում:

Երկրորդ, Միություն տարբեր մասերից և աշխարհի տարբեր երկրներից առաքվող ուղերեւոները երկու-երեք ամսվա ընթացքում թալանվում են և հարկավոր է ապահովել նոր ուղերեւոներով շարժակազմի մուտքը Ադրբեյջան: Ուստի վաղօրոք թալանված շարժակազմը պետք է առաքել Հայկական ԽՍՀ՝ հասցեատերերին, ուղերեւոներով բռնված նոր շարժակազմի համար տեղ ազատել Ադրբեյջանի նախիջևանի և Աղստև կայարաններում: Այդ նպատակով պետք է ժամանակավորապես երկաթգծերում ստեղծել անդորր, թողնելով այնպիսի տպավորություն, որ կյանքը մտել է նորմալ հունի մեջ, Ադրբեյջանի սահմաններում լրիվ ապահովված են գնացքների երթևեկությունը: Որոշ ժամանակ անց, երբ Ադրբեյջանի տարբեր կայարաններ են ժամանում արդեն նոր ուղերեւոնված վագոններ, սկսվում է մի նոր շրջափակում: Եվ այսպես անընդհատ:

Եվ իրոք, առաջին շրջափակումը դադարեցրեց, երբ դատարկ կամ փռացած մթերքներով վագոնները տուրքվել էին Հայաստան, սկսվեց երկրորդ շրջափակումը, 1990 թ. հունվարի 11-ից սկսվեց Հայկական ԽՍՀ-ի շրջափակման երրորդ փուլը՝ 46 ցր տեղություններ, որը դադարեցվում է փետրվարի 26-ից: Ուղիղ մեկ ամիս անց սկսվում է շրջափակման չորրորդ փուլը, որը շարունակվում է մինչև ապրիլի վերջը:

Հանրապետության վիճակտկոմի տվյալներով արդյունաբերությունը աշխատածամանակի ավելի քան 60 տոկոսով ընթացքում գործել է շրջափակման պայմաններում:

Ըստ Արմենպրեսի հաղորդման, շրջափակումը հանգեցրեց

8 Կոմունիստ, 1990, 15 հոկտեմբերի

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման անմպերի կտրուկ դանդաղեցման, արդյունաբերական շատ ձեռնարկությունների աշխատանքի լրիվ կամ մասնակի դադարեցման, աղետի գոտում շինվերականգնողական աշխատանքների բնդհատման, տրանսպորտի աշխատանքի կազմալուծման: Խոտաշունչ ձմռան պայմաններում շրջափակումը էներգետիկ բազց առաջացրեց, խաթարվեց Հանրապետության կենսագործունեությունն ապահովող բազմաթիվ օբյեկտների աշխատանքը: Զեռուցում չլինելու պատճառով փակվեցին շատ դպրոցներ ու նախադպրոցական հիմնարկներ, մեծ ընդհատումներով էր աշխատում քաղաքային տրանսպորտը, հետաձգվեցին և հանվեցին օդային շատ ուղիքներ, արդյունաբերական ձեռնարկությունները փոխադրվել էին սահուն գրաֆիկով աշխատանքի, որոնցից շատերը աշխատում էին ջաբթ ու հանդսության օբեքին և գիշերային հերթափոխերով: Երկարատե շրջափակման պատճառով Հանրապետության տնտեսությունն ու սոցիալական կյանքը այսօր էլ գտնվում են ճգնաժամային լարված վիճակում: Լեռնաձնապեռ լարված իրավիճակ ստեղծվեց 1990 թ. քնթացքում ԽՍՀՄ-ից Հայաստան եկող գազատարը Ադրբեջանի սահմաններում Ադրբեջանի իշխանությունների կողմից ամիսներով պարբերաբար փակելու հետևանքով: Երկարատե դադարեցին գործելուց ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունները, այլև գազով շինված մատակարարվում հանրապետության բոլոր բնակավայրերը՝ դադարեցվել էր կենցաղային նպատակներով գազի օգտագործումը:

**ՀԱՅԱՍՏԱՓՈԻԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
ՀԱՍՑՎԵԼ Է ՄՎԱՐՏԻ: ՀԵՐԹԻ Է ԴՐՎԱԾ ԱՐՑԱՍԽՈ**

Եվ այսպես... ի հեճուկս ադրբեջանական սադրիչներին նախամարդկային վայրենի կրքերի և Միության կենտրոնի, աշխարհի ժողովուրդներին ակնառու դարձավ դարաբաղյան պրոբլեմի իրական լինելն ու դրա լուծման հրամայականը: Ադրբեջանում և կենտրոնում արատավորվում է այդ շարժումը, այն քամահարվում որպես վերակառուցման գեմ ուղղված մտացածին քայլ: Հակահայկական, հակամարդկային այդ

սադրիչները թելադրեցին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի 1988 թ. փետրվարի 21-ի հասցեեպ ու իրականությունից հեռու որոշումը (կարող է մի ժողովուրդ ամբողջությամբ «էքստրեմիստ» լինել), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշումը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը րնթացքում խեղելու և այն ԼՂԻՄ-ում 1990 թ. հունվարից արտակարգ գրություն մտցնելու որոշմամբ խստացնելը և այլ որոշումներ, որոնք պրոբլեմը կանգնեցրին փակուղու առջև: Կենտրոնը այս որոշումներով հետևողականորեն կոնցրունության շղթայի յուրաքանչյուր հաջորդ օղակ, որոնք ավելի ու ավելի սաստկացրին «ղարաբաղյան շարժումը» ծնկի բերելու սադրիստական մեթոդները: Նման վարվելակերպը դիտվում էր որպես հակավերակառուցման ուժերի գեմ մղվող պայքար:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշմամբ կանխանայվեց ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի ու նրա գործադիր կոմիտեի գործունեությունը, և հաստատվեց կառավարման հատուկ կոմիտե Ա. Վոլսկու ղեկավարությամբ: Վերացվեց նաև մարզի կուսակցական մարմինը՝ մարզկոմը: Դա փաստորեն հակասահմանադրական տկտ էր, քանզի ԽՍՀՄ սահմանադրության մեջ գոյություն չունի րնտրական մարմինը վերացնելու կամ նրա գործունեությունը դադարեցնելու մասին որևէ հոդված, թեև, ճշմարիտն ասած, մարդում ստեղծված կառավարման հատուկ կոմիտեն ինչ-որ բան տվեց և դրա օրոք բոլորս էլ ազգամիջյան հարաբերությունների մեխանիզմն մշակելու հույս էինք փափագում:

Բայց այդ կոմիտեն գործելով լճացման ժամանակաշրջանի ոգով՝ հաճախ դիտորդի և Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից Լեռնային Ղարաբաղում տարվող սխալ քաղաքականությունը հավանավորողի դեր էր աանում: Կառավարման հատուկ կոմիտեն, հավանաբար, իր կամքից անկախ, դարձավ Ադրբեջանի ղեկավարության կամքի արտահայտիչը: Մյուս կողմից այդ կոմիտեն իրավասու չէր շրջադրվելու մարզի տարածքում տիրող անօրինականությունների վերացնելու

Վարչերով, օժտված չէր առանց կենտրոնի և Ազրբեջանի որևէ սկզբունքային հարց օպերատիվ կարգով լուծելու լիազորություններով: Որքա՞ն ճշմարիտ հնչեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում Բորիս Իստոմյանի հաղորդումը՝ «Վերագրանելի խորհրդային իշխանությունը Ղարաբաղին»: Մինչդեռ հատուկ կոմիտեն սկզբունքային քաղաքական խնդիրների մեջ պարզություն մտցնելու և քաղաքական ճանապարհով ժողովրդի կողմից առաջադրվող հարցերը բարձրացնելու փորձ անգամ ձեռնարկել չէր կարող Ավելյին, ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ կոնսային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպատակամղված որոշումները դարձան կիսամիջոցներ ոչ միայն այն պատճառով, որ պատասխան չէր սրվում ազգերի ինքնորոշման իրավունքի կենսագործմանը, այլև այն պատճառով, որ հատուկ կոմիտեի անտարբեր աչքի առջև, կենտրոնի և Ազրբեջանի ղեկավարության ցուցումով մարզում իրականացվում էր կենտրոնական մարմինների կողմից բաց թողնված միլիոնավոր ուրյիլները մարզում բացառապես ազրբեջանցիներով բնակեցված բնակավայրերի տնտեսական, սոցիալական, մասնավորապես բնակարանաշինարարության զարգացման համար: Մարզում կառավարման հատուկ կոմիտեի պայմաններում անգամ մայր հայրենիքի հետ տնտեսական կապեր հաստատելու բոլոր փորձերը նախկինի նման ի չիք էին գառնում: Խարուժյուն չէր դրվում գործադրվող մեթոդների մեջ: Կառավարման հատուկ կոմիտեի և ղինվորական պարետային ժամի առկայության պայմաններում հաճախ էր կիրառվում ԼՂԻՄ-ը բոլոր կողմերից շրջափակման մեջ վերցնելու փորձված մեթոդը:

ԼՂԻՄ-ում և քաղաքական, և տնտեսական, և բարոյահոգեբանական ու աշխատանքային մթնոլորտը կայունացնելու, ազգային հողի վրա կոնֆլիկտներ թույլ չտալու և արյունահեղությունները դադարեցնելու մտահոգություններ ու վճռականություններ էր թիպադրվում 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում ԼՂԻՄ-ի լիազոր ներկայացուցիչների համագումարի հրավիրումը: Համագումարի հրապարակած հռչակագրում նշվում է, որ «կառավարման հատուկ ձև մտցնելը, ԼՂԻՄ-ին կուսակցության մարզային կոմիտեից և

ժողովրդական ղեկավարների մարզային խորհրդից զրկելը, փաստորեն, բռնատիրեցին ինքնավար կազմավորման առանց այն էլ ջնջին իրավունքները, հայ բնակչությանը հեռացրին իր ազգային շահերի պաշտպանության օրինական մասնակցությունից»:

Համագումարը գտավ, որ նախ՝ ընտրական համակարգի միջոցով մարզում պետք է վերականգնել տեղական խորհրդային իշխանությունը և կուսակցական մարզկոմը, վերագանալ մարզի կառավարման սահմանադրական ձևին:

Երկրորդ՝ մինչև կառավարման սահմանադրական ձևի վերականգնումը մարզի կառավարումը հանձնարարել Ազգային խորհրդին:

Նլնելով դրանից, ԼՂԻՄ-ի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը ընտրում է ինքնավար մարզի ղեկավարման Ազգային խորհուրդ: Ազգային խորհուրդը դիտվում է որպես մարզի գործունեությունը ղեկավարող ժամանակավոր բարձրագույն մարմին: Ուստի Ազգային խորհուրդը ղեկավարելու իրավունքներով պիտի օժտվեր մինչև դեմոկրատական հիմունքներով, ընտրությունների միջոցով տեղական խորհուրդների և մարզային կոմիտեի վերականգնումը: Այդ մարմինների վերականգնումից հետո Ազգային խորհուրդը իր լիազորությունները վար էր դնելու:

Ազգային խորհուրդն իր առաջնահերթ խնդիրն էր համարում «կայունացնել իրազրույթյունը ԼՂԻՄ-ում, դադարեցնել արյունահեղությունը, կոնֆլիկտներ թույլ չտալ ազգային հողի վրա»¹: Լիազոր ներկայացուցիչների համագումարը կոչ է անում գրեթե շուրջ ամիս շարունակվող գործադուլները վերացնելու միջոցով ըստ ամենայնի նպաստել մարզի տնտեսական և սոցիալական իրավիճակի կայունացմանը, աշխատանքի կազմակերպումը բարելավելու միջոցով այդ պոտենցիալի հետագա զարգացմանը, ստեղծել որոշակի պայմաններ երկրի տարբեր ռեգիոնների հետ ապրանքադրամական հարաբերությունների տնտեսական օրենքների պահանջներից բխող տնտեսական լիարժեք կապեր իրականաց-

1 Խորհրդային Հայաստան, 1989, 23 օգոստոսի
2 Խորհրդային Հայաստան, 1989, 23 օգոստոսի

նելու համար: Ազգային խորհրդի կոչով կարճ ժամանակա-
միջոցում քնակչութունը վերացրեց չորս ամիս տևած
գործադուրը և անցավ աշխատանքի:

Քայքայված Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհրդի առկայու-
թյունն անհարիր էր և՛ Ադրբեջանի, և՛ կենտրոնական իշխա-
նությունների ցանկությունների հետ: Դրա համար էլ «Լեո-
նային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը
ներմայացնող միջոցառումների մասին»⁸ ԽՍՀՄ Գերագույն
խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ նորից է հավաստ-
վում, որ Լեոնային Ղարաբաղը մնում է Ադրբեջանի կազմում:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի
որոշմամբ մարզում տնօրինելու էր այդ նպատակով ստեղծ-
վող հանրապետական կազմկոմիտեն: Դրա հետ մեկտեղ
վերականգնվելու էր ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավոր-
ների և նրա գործադիր կոմիտեի կանխակալված գործունեու-
թյունը: Իրականում վերջինս այդպես էլ չվերականգնվեց:
Երկրորդ, խնդիր էր դրվում «Ինքնավար մարզի պետական
իշխանության ու կառավարման մարմինները վերականգնե-
լիս հայ և ադրբեջանցի բնակչության ներկայացուցչու-
թյունը պահպանել նրանց թվակազմի համամասնու-
թյամբ»⁴, մի հանգամանք, որին Ադրբեջանի իշխանութուն-
ները ամեն կերպ ընդդիմադիր եղան և ոչ մի գնով թույլ
չտվեցին վերականգնելու մարզում պետական իշխանության
կառավարման մարմինները: Այն էլ նկատենք, որ այդ որո-
շումը մեկ-երկու ամիս ինչ-որ շափով նպաստեց ղեկի տնում
իրավիճակի կայունացմանը:

Ռոնահարվեց նաև հանրապետական կազմկոմիտեի թվա-
կազմի վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այդ որոշմամբ
առաջադրվող սկզբունքը: Որոշմամբ նախատեսվում էր այն
ստեղծել «ԼՂԻՄ-ի հետ կողմերի հավասարության հիմունք»
ներով»⁵: Մինչդեռ Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես
միշտ, անզավաճան մնաց իր սկզբունքներին: Հանրապետա-
կան կազմկոմիտեն կազմավորվեց հայտնի հայատյաց մարդ-

կանցից, ռոնահարվեց ԼՂԻՄ-ի հետ որոշմամբ նախատեսվող
հավասարության հիմունքների պահպանումը: Գա ոչ միայն
հակասում էր մարզի հայ բնակչության շահերին, այլև զրա-
նով իսկ Լեոնային Ղարաբաղում ակնհայտորեն հիմք դրվեց
հայահալած և հայաշինչ քաղաքականության մի նոր փուլի:
Փաստորեն ստեղծված իրավիճակը որոշակիորեն նահանջ էր
կառավարման նախկին հատուկ կոմիտեի համեմատությամբ:

Կանխազգալով դեպքերի հնարավոր զարգացման նման ըն-
թացքը Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեոնային Ղա-
րաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համա-
տեղ որոշմամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոյեմբերի
28-ի որոշումը որակավորվում է որպես «րոնահարված
ակտ»: Դրա հետ մեկտեղ, 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայկա-
կան ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեոնային Ղարաբաղի
Ազգային խորհուրդը հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեո-
նային Ղարաբաղի վերամիավորումը: Այդ հռչակագրով Հայ-
կական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է ԼՂԻՄ-ի
ինքնորոշման փաստը, նրա լիազոր ներկայացուցիչների
համագումարը և Ազգային խորհուրդը: Հանրապետության
Գերագույն խորհուրդը և Լեոնային Ղարաբաղի Ազգային
խորհուրդը միաժամանակ պարտավորվում են ներկայացնել
նաև Հյուսիսային Արցախի Շահումյանի և Գետաշենի ենթա-
շրջանի շահերը:

Մինչդեռ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը
1990 թ. հունվարի 10-ին շեղյալ հայտարարեց մայր Հայաս-
տանի հետ Ղարաբաղի հայ ժողովրդի վերամիավորման մա-
սին որոշումը: Այն որակվեց որպես հակասահմանադրական
ակտ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այդ որոշմամբ շեղյալ է
հայտարարվում նաև «Հայկական ԽՍՀ տնտեսական և սոցիա-
լական զարգացման 1990 թ. պետական պլանի մեջ ԼՂԻՄ-ի
նոցիալ-տնտեսական զարգացման 1990 թվականի պլանը
մտցնելու մասին» հանրապետության Գերագույն խորհրդի
1990 թ. հունվարի 9-ի որոշումը, պատրվակելով, որ իբր
դրանով խախտվել են Ադրբեջանական ԽՍՀ-ի սուվերեն իրա-
վունքները:

Պարզ է, որ պետք է կատարվի նաև հաջորդ քայլը. 1990 թ.
հունվարյան դեպքերի կապակցությամբ արտակարգ դրու-

8 Պրավդա, 1989, 29 նոյեմբերի:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

Յյուն է մտցվում նաև Լեոնային Ղարաբաղում, ինչպես նաև Ազրբեջանի հետ սահմանակից Հայկական ԽՍՀ-ի մի քանի շրջաններում: Նախ, դրանով իսկ հավասարության նշան է դրվում մի կողմից սուվերենության իր իրավունքները պաշտպանելու մղումով ազգային ազատագրական խաղաղ պայքարի և ինքնապաշտպանության դուրս եկած Լեոնային Ղարաբաղի, իսկ մյուս կողմից՝ Ազրբեջանում, մասնավորապես Բարձրում, Նախիջևանում, Լենքորանում կատարված վայրագությունների միջև: Բայց, սվլյալ ղեպքում, գլխավոր մղումը Լեոնային Ղարաբաղի հայ ժողովրդի ստրկական վիճակը հավերժացնելն է, հող չէ, թե այդ պայքարի ընթացքում նա խորհրդային ֆեդերացիայից իրեն դուրս հայտարարելու կամ որևէ քրեական քայլի գիմելու փորձ չի արել և չի անի:

Այսպիսով, Լեոնային Ղարաբաղը սկսմա հայտնվեց արցանի մեջ: Խիստ զրաքննություն սահմանելու և միմիայն զրոյության տերիթի կողմից առաջարկվող նյութերը տպագրելու (որն իբր թե թելադրվում է արտակարգ դրույթյամբ) պատճառով երկար ժամանակ գործելուց զազարեցին մարզային ու շրջանային թերթերը (հայկականը՝ Իհարկե), հեռուստատեսությունը, ռադիոն: Դադարեցին հաղորդումները Հայկական ԽՍՀ-ից, Մոսկվայից: Փակվեց մայր Հայաստանից, Միությունից և աշխարհի որևէ կետից լուրեր ստանալու նպատակով Արցախ այցելելու ցանկություն ունեցող թղթակիցների մուտքը: 1990 թ. հոկտեմբերի առաջին օրերին Լեոնային Ղարաբաղի իրավիճակին տեղում ծանոթանալու համար այնտեղ մեկնելու փորձ է կատարում Եվրախորհրդարանի պատվիրակությունը, որի կազմում էին խորհրդարանի անտեսական զարգացման հանձնաժողովի նախագահ Հենրի Սապին և Եվրոպական խորհրդարան— Խորհրդային Միության հարաբերությունների անդամ Գոմպա Մարթինզը և այլ անձինք ու լրագրողներ: Ստեփանակերտի օդանավակայանում գինավորականների կողմից երկու ժամ կալանք կրելուց հետո նրանք ետ ուղարկվեցին: Արվում էր ամեն ինչ գինավորական հսկողության միջոցով և Ազրբեջանի ճնշման ներքո ԼՂԻՄ-ը մեկուսի պահելու համար: Թադիոյով հաղորդվում էին նյութեր, որոնք ուղղված էին ժողովրդի արդարացի շարժման դեմ: Փորձում էին ժողովրդի և նրա շարժման ղեկավարներին

միջև սեպ խորդ այդ և այլ կարգի նյութեր տպագրել նաև «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Արտակարգ դրույթյան պայմաններում, օգտվելով գինավորականների հովանավորությունից, ազրբեջանցիների կողմից շարունակվում է հայահալած քաղաքականությունը: ԶԷ՝ որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ Ազրբեջանից Ստեփանակերտ էր ժամանել Ազրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոյի գլխավորած հանրապետական «կազմկոմիտեն»: Դա այն Պոլյանիչկոն է, որը օժտված է ազգային ազատագրական շարժումները իր խանձարուրի մեջ խնդդամահ անելու մեծ փորձով, որին շատ էր հմտացել Աֆղանստանում: Ազրբեջանի ղեկավարությունը հաճախ է իր սև գործերը ուս մարդկանց ձեռքով իրականացնում (Պոլյանիչկո, Սաֆոնով, Կովալյով, Զուբկով, Դադակ, Վասիլենկո, և ուրիշներ): Նրանք լավ գիտեն, թե դա ինչ է նշանակում, հայ ժողովրդին ո՛ւմ դեմ են գրգռում, և չէ որ գրանով իսկ «էքստրեմիստների» դեմ «ինտերնացիոնալ» պայքար են ապահովում:

Պոլյանիչկոյի հանձնախմբի և գեներալ-մայոր Սաֆոնովի համատեղ գործունեությունը հիմնականում նպատակամղված էր գինավորական ուժի օգնությամբ ճնշել հայ ժողովրդի ազատատենչ ոգին, ազրբեջանցիներով բնակեցված գյուղերում բնակչինարարություն կազմակերպելու, զբաղմունքի ոլորտն ընդլայնելու, միջդուրական ճանապարհները բարեկարգելու և նորերը կառուցելու միջոցով մարզի ժողովրդագրական իրավիճակը հօգուտ ազրբեջանցիների փոխելուն: Թրինակ, 1991 թ. պետք է ստեղծվեն 3399 նոր աշակերտական տեղեր միմիայն մարզի ազրբեջանական գյուղերում: Նոր կառուցվող գյուղերում բնակեցնում են մցխեթի թուրքերին և Հայկական ԽՍՀ-ից արտագաղթած իրենց հայրենակիցներին, թեև դա հակասում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմանը: Ելող որոշմամբ հայտարարվում է. «Ազրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, հանրապետության Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ-ի ժողովրդական ղեկուսատաների մարզային խորհրդի գործադիր կոմիտեին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզում գոյություն ունեցող ազգային կազմը խախտող ժողովրդա-

գրական իրավիճակի փոփոխությունն թույլ շտալու նպատակով⁶։

Այնինչ մարզի հայկական շրջաններում աղբրեղանական իշխանություն հաստատելու նպատակով գլխավորականների օգնությամբ կուսակցության շրջիտմանը և գործադիր կոմիտեները վերացնելու և իշխանությունը Բաքվից ուղարկված «կազմիտմաններին» հանձնելու փորձեր են կատարում։ Գրաօրինակը Մարտակերտի, Հաղործի շրջաններն են։ Գյուղերը միմյանցից մեկուսացնելու համար քանդում են միջշրջանային և միջգյուղական առանց այն էլ անմխիթար վիճակում գտնվող, բարձրիճի ճանապարհները, «...չի ապահովվում Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության անվտանգությունը, այնպիսի պայմաններում, երբ Աղբրեղանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունել է սահմանադրական օրենք, որը որպես նպատակ բացահայտորեն հռչակում է այդ հայ ազգային-պետական կազմավորման ոչնչացում»⁷։

Արցախում արտակարգ դրություն մտցնելը Աղբրեղանի կամքի արտահայտությունն էր։ Համոզվեցինք, և այն էլ բանիերորդ անգամ, որ Աղբրեղանը գործում է կենտրոնի ցուցումով։

Արյունահեղություններ եղան Բաքվում, ուր շարդից մազապուրծ փախած և բռնագաղթված բնակչությունը առայսօր էլ թափառում է ու հանգրվան չի գտնում, բայց արտակարգ դրությունը շարունակվում է և անընդհատ խտտացվում, ու բիրտ մեթոդներ է ընդունում ԼՂԽՄ-ում, Շահումյանում, Գետաշենում։

Արտակարգ դրության շրջանային պարեա գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆրոնովը գործում էր Աղբրեղանի իշխանությունների թելադրանքով։ Եվ պատահական չէ, որ Վ. Սաֆրոնովին, ինչպես նաև ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստր Ն. Ս. Կոնարեֆն, ՏԱՍՍ-ի գլխավոր գերեկտոր Կրավչենկոյին, ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների բաժնի վարիչ Միխայլովին և կենտրոնում ղեկավար

այլ պոստեր զբաղեցնող անձանց Աղբրեղանի կուսակցական կազմակերպություններն ընտրում են ԽՄԿԿ XXVIII համագումարի պատգամավորներ։ Հենց այդ պատճառով էլ Ն. Կոնարեֆը, որն իր ժամանակին դատապարտում էր Աղբրեղանի վարքագիծը Հայկական ԽՍՀ-ն շրջափակելու հարցում, համագումարի պատգամավոր ընտրվելուց և Աղբրեղանի կոմկուսի համագումարին մասնակցելուց հետո սկսեց նշավակել Հայկական ԽՍՀ-ին, իբր թե «գնացքների երթևեկությունը շրջափակելու», «տրանսպորտային նորմալ աշխատանքը խոչընդոտելու համար»։ Ավելին, 1990 թ. հունիսի 12-ին Աղբրեղանի թղթակիցների հետ ունեցած հարցազրույցում նա հայտարարում է, որ հայ ահաբեկիչները «շրջափակում էին գնացքների երթևեկությունը և այժմ էլ խոչընդոտում են տրանսպորտայինների նորմալ աշխատանքը... այդ հայ ահաբեկիչների սադրանքով էին կատարվում մանրակրկիտ, ծրագրված դիվերսիաները, պայթեցվում գնացքները, գնդակոծվում մեքենավարները աղբրեղանական երթուղու այն հատվածում, որն անցնում է Հայկական ԽՍՀ-ի Մեղրու շրջանի տարածքով»։ Մինիստրը կեղծում է, ստախոսում և այդ թուղթի համար ոչ մի պատասխանատվություն չի կրում։

Ուստի զարմանալու բան չկա, երբ կեղծիքի, սադրանքի, քրեական հանցանքի համար հանցազործը պատիժ չի կրում։ Այդպես էլ ոչ որ պատասխանատվություն չկրեց, թե ինչու։

— 1989 թ. հուլիսի 12-ին Մարտակերտ-Ստեփանակերտ ճանապարհին գնդակոծումից սպանվեց Ա. Տոնոյանը, 1989 թ. հուլիսի 14-ին Ասկերանի շրջանի Շոշ գյուղում՝ Լ. Լավսեֆյանը, նույն շրջանի Բաղարա գյուղում 1989 թ. օգոստոսի 16-ին հրազենով խոցվեց Ռ. Իսրայիլյանը, 1990 թ. հոկտեմբերի 12-ին Ստեփանակերտում՝ Սպարտակ Հակոբյանը, հոկտեմբերի 13-ին՝ Մարտակերտի շրջանի Զյզրան գյուղում Ա. Առուստամյանը, 1990 թ. հունվարի 2-ին Ստեփանակերտում զինվորները սպանեցին արվեստագետ Ա. Հակոբյանին, հրազենային կրակոցի զոհ զարձավ Յա. Գանիկյանը, Ա. Մկրտչյանը, 1990 թ. մայիսի 24-ին՝ Գ. Դավթյանը, մայիսի 28-ին՝ Կ. Մամադուրյանը, 1990 թ. հոկտեմբերի 4-ին՝ Նիկիտայ Բարսեղյանը, հոկտեմբերի 20-ին՝ Մ. Վերդյանը, հոկտեմբերի

6 Պրավդա, 1989, 29 նոյեմբերի

7 Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումից։

23-ին՝ Վ. Հայրապետյանը: Հրապարակված աղբյուրներում հիշատակվում է, որ 1990 թ. ընթացքում ԼՂԽՄ-ում սպանվել է 58 մարդ (41 հայ, 15 ադրբեջանցի, 2 զինծառայող):

— 1990 թ. հունվարին կայանավորեցին արցախյան շարժման մի քանի ակտիվ անդամներին,

— 1990 թ. ապրիլի 24-ին ձերբակալվեցին Մեծ եղևնի սզո միախնդի մասնակից մի շարք մտավորականներ,

— 1990 թ. ապրիլի 26-ին դեսանտայինները կազմակերպեցին խաղաղ, անզեն մարդկանց ձեռք (չխնայելով երեխաներին, կանանց, ծերունիներին), որոնք ցանկանում էին Վ. Սաֆոնովի միջոցով պարզել անմեղ մարդկանց կալանավորելու պատճառները: Զինվորներից քարերով պաշտպանվող ամբոխը ենթարկվում է հրազենային հարձակման, վիրավորվում և հիվանդանոց է տեղափոխվում 18-ամյա մի տղա:

ԼՂԽՄ-ում իբր թե «էքստրեմիստներ» հայտնաբերելու և դեմք «բռնագրավելու» պատրվակով զինվորները հայկական գյուղերում սովորական են դարձրել անհարկի և ստորացուցիչ խուզարկումներն ու «անձնագրային» ստուգումները: Ինչը գրեթե բացառվում է ադրբեջանական գյուղերում: 1990 թ. ընթացքում այդպիսի 160 օպերատիվ գործողություններից 97,5 տոկոսը բաժին է ընկել հայկական և միայն 2,7 տոկոսը ադրբեջանական գյուղերին: Մինչդեռ երկու կողմից առեւտրային է հավասար քանակությամբ զենք:

Մարտակերտի շրջանի Զանյաթաղ գյուղի տնտեսության Քաջավան կոլվոզ դաշտակայանում, ուր ապրում էին ընդամենը երկու տասնյակ բնտանիքներ, 1990 թ. հոկտեմբերի 24-ին անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակ զինվորները թալանում են ամեն ինչ, մաքրում խանութները, կանանց վրայից հանում թանկարժեք զարդերը: Զորի Քալայանի վկայությամբ, «Ավտոմատային կրակահերթեր են տեղացել պատերի և առաստաղների վրա: ...Սպանվել է 32-ամյա Այոշա Քեզլարյանը՝ շորս դուստրերի հայրը, ծանր վիրավորվել են երկուսը: ...Ձերբակալվել է 24 մարդ: Նրանցից շատերին նույնպես դաժանորեն ձեռն էին: Փշրված առամներով, չարոված կողերով նրանց հասցրել են Շուշիի բանտ»:

Զինվորներն իրենք էլ են զգացել, որ նրանք ուրիշ պարտք ունեն կատարելու, բայց այդ են հրամայում:

Մշտական բնույթ են կրում բնակչությանը հաճախ կեղծ լուրերով ահաբեկելը, զինվորական ստորաբաժանումների ձեռնարկած գործողությունների հետևանքով հայկական գյուղերի ներքին հաղորդակցությունը խեղելը, Հայաստանից պարենամթերքի առաքման ու բուժօգնության կազմակերպման գործի խափանումը: Հենց խորհրդային բանակի և ներքին գործերի ստորաբաժանումների հովանավորությամբ ադրբեջանական իշխանություններին և ժողովրդական ճակատի ներկայացուցիչները մտե՛ք գործարքների, տների կեղծ ստուծախի միջոցով կազմակերպեցին խանլարի շրջանի Ազատ և Կամոս գյուղերի տեղահանությունը, Քերգաձորի հայ բնակչության նկատմամբ գործադրած անմարդկային վերաբերմունքը: Մարդկային բանականությունն ունակ չէ ընկալելու, թե ինչու արտակարգ դրության շրջանային պարես գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի հրամանով Մսեփանակերտում կապից օգտվելու հատուկ կանոններ մտցվեցին: Ըստ հրամանի «Մասնանշված ժամկետում 1990 թ. մայիսի 28-ից անջատել արտակարգ գրության շրջանի տարածքում բնակվող առանձին անձանց տրանսպորտի և ծառայողական հեռախոսները»:

Այդ դեպքերում աղափոխ հեռախոսահամարներն օգտագործել նԱՀՄ ներքգործմիխտորության ստորաբաժանումները և արտակարգ դրության ռեժիմն ապահովող իշխանության ու կառավարման մյուս պետական մարմինները կապով ապահովելու համար:

Կապի ձեռնարկությունների բոլոր ղեկավարներին և պաշտոնատար անձանց՝ միջոցներ ձեռնարկել անշեղործն կատարելու սույն հրամանը»: Ծվ այլն և այլն:

Այս բոլորը կապել միայն Սաֆոնովի անձի հետ, հավանաբար ճիշտ չէ: Նույնը շատ ավելի վատթար և ստորացուցիչ ձեվերով շարունակվեց նաև նրանից հետո: Գնաքերի հետագա ընթացքն ավելի ու ավելի համոզեցին, որ այդ բոլորը կատարվում է ոչ միայն կենտրոնական մարմինների և իշխանությունների գիտություններ, այլև նրանց անմիջական ցուցումով ու ղեկավարությամբ: Պատահական էր «Ադրբեջանի համբերությունն էլ սահման ունի» արտահայտությունը, որն ընդգծեց Մ. Ս.

Փորբաշուքը ԽՄԿԿ XXVIII համագումարում, Ադրբեջանի պատվիրակության դիմումը ներկայացնելիս: Պատահակա՞ն էր, ո՞ր ՏԱՍՍ-ի զլխավոր դիրեկտոր Կրավչենկոն, այն Կրավչենկոն, որը ԽՄԿԿ XXVIII համագումարի պատգամավոր էր ընտրվել Ադրբեջանի կուսակցական կազմակերպության կողմից, կանաչ ճանապարհ է տալիս մամուլում Ադրբեջանի կողմից հայահալած և հայ ժողովրդին վարկաբեկելու նպատակներ հետապնդող քաղաքականության պրոպագանդան համար, պատահակա՞ն է, արդյոք, որ ադրբեջանցիների կողմից հակահայկական ամեն մի նոր ձեռնարկում՝ դա լինի սպանություն, հրկիզումներ, Ստեփանակերտում ջրատարի պայթեցում ու թունավորում, խաղաղ բնակչության վրա զենքի գործադրում, հայ բնակչությանը և հարեկելու կամ գյուղը լքելու համար վերջնազոր՝ մամուլը շուտ է տալիս ու բարգում հայերի վրա: Ավելին, կենտրոնական թերթերում, կենտրոնական հեռուստատեսային հաղորդումներում զնալով սխտեմատիկ բնույթ են ստանում Ադրբեջանի գործիչներին ամբիոն տրամադրելու, հարցազրույց կազմակերպելու փորձված պրակտիկան, երբ հիմնական նշանակետը հայ «էքստրեմիստներին», «ֆիդայիներին», «ահաբեկիչներին» հարձակումներին «անմեղ» ադրբեջանցիներին «փրկելու» մտապատկերի կերտումն է: Այդ հուզվածներում, հարցազրույցներում, հաղորդումներում նրանք կարողանում են պատրանք ստեղծել, որ հայերը նախահարձակ են լինում, թալանում ու սպանում են ադրբեջանցիներին: Եվ ինչո՞ւ զարմանալ: Չէ՞ որ այդ նույն ոգով էր տոգորված ԽՄԿԿ XXVIII համագումարին Ադրբեջանի պատվիրակության հղած դիմումը, որի տեքստը, ի զարմանս մեզ, ընթերցեց Կենտկոմի զլխավոր քարտուղարը, նույն ինքը՝ երկրի պրեզիդենտ Մ. Գորբաշովը:

Դա, ինքնին, նշանակում է, որ ազատություն է ընձեռվում Ադրբեջանի գործիչներին սուտն ու կեղծիքը ներկայացնելու որպես ճշմարտություն: Համագումարից անմիջապես հետո սնկի նման գլուխ բարձրացրին մուսթալիբովյան մեկ-նաքանությունները կենտրոնական բազմաթիվ թերթերում: 1990 թ. օգոստոսի 29-ին «Լիտերատուրնայա զազետա» շաբաթաթերթում զետեղվում է թերթի թղթակից Դադաշիձեի հարցազրույցը «Հուսահատության գիրկն ընկած» Ա. Մուսա-

լիբովի հետ: Վերջինս, սովորույթի համաձայն, շարամտորեն նենգափոխելով և զլխավոր շրջելով իրական երևույթները, հող է նախապատրաստում «Հուսահատությունից զրզված» իր հաշորդ քայլը կատարելու, և ազգային ազատագրական պայքարը, ոչ ավել, ոչ պակաս, նշավակելու որպես Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի կողմից սանձազերծված ագրեսիա: Դա այն Մուսթալիբովն է, որի ձեռքերը շաղախված են 1990 թ. Բաքվի շարդերի արշունով, այն Մուսթալիբովը, որը հենց Բաքվի դեպքերի նախօրյակին Անկարայում լուսանյութեր ֆափեց հայերի հասցեին: Դա այն Մուսթալիբովն է, որ հայերից «պաշտպանվելու» հարայ-հրոցներով հանդես է գալիս կենտրոնական այլ թերթերում, «ներկայացումներ» կազմակերպում կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրի միջոցով: Ո՞ր էր այդ Մուսթալիբովը Բաքվի, Կիրովաբադի բարբարոսությունների օրերին, նաև այն ժամանակ, երբ հողատում էին հայ երեխաների, կանանց ու ծերունիների: Մոռացության տրվեցին Գանձակում քարահանքերում հայտնաբերված 12 հայ անմեղ հաշմանդամների հողտված դիակները:

Օգոստոսի վերջերին էր, թե սեպտեմբերի առաջին օրերին, շեմ հիշում, կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» ինֆորմացիոն ծրագրով բեմադրվեց մի նոր ներկայացում: Մյուսին հետևյալն է՝ արտասովակալած աչքերով, զզզված զլխաշորերով մի խումբ կանայք, ինչ-որ բողոք են ներկայացնում Մուսթալիբովին: Երևույթին, իրոք դրամատիկ տեսք տալու և այդ «հալածվածներին» պաշտպանելու համար նրանք շրջապատված են զինված միլիցիոններներով: Կանայք լաց ու կոծով, միաբերան՝ միմյանց հերթ շտալով աղմկում ու դանդաղում են (այդպես է ներկայացնում հաղորդավարը), որ հայ «էքստրեմիստները» (այդ բառը լավ անգիր են արել Ադրբեջանում, ինչպես մի ժամանակ ցանկացած հայի նշավակում էին «դաշնակցական» կամ «նացիոնալիստ» սլոտակով: Դե ինչ արած, քանի որ իրենք «ինտերնացիոնալիստ են», պարզ է, որ հակառակ կողմը պիտի նացիոնալիստ լինի) հարձակվում են իրենց վրա և թույլ շեն տալիս բամբակ հավաքել, որի կարիքը շատ է զգում երկիրը: Թե ովքեր էին այդ հայ «էքստրեմիստները», կարևոր չէ:

1990 թ. սեպտեմբերի 15-ին Մոսկվայում կենտրոնական հեռուստատեսությունը ուղիղ գծով, երկրորդ ծրագրով, եթեր է տրամադրում Բաքվին: Եվ ամբողջ երկիրը դիտում է «ընկերակցություն» հակահայկական տրամադրություններ շարունակված հաղորդումը: Դա մի նողկալի, լպիրը ու սանձարձակ պատկեր է, որով հարձակվում են հայերի վրա և Աղբբեջանը ներկայացնում որպես հայ «հաբեկիրեների», «ագբեռոնների», «ֆիդայիների», «գրոհայիների» զոհը:

Բանը միայն մի խումբ հայ «էքստրեմիստներին» նշավակելով չի ավարտվում: Հայ ժողովրդի նկատմամբ հակակրանք սերմանելու հատուկ դիտավորություններ կենտրոնական մամուլ են ներթափանցում հնագույն և քաղաքակիրթ մի ժողովրդի ազգային բնավորությունը և հոգեկան կերտվածքը սև գծերով նենգորեն պիտակավորող հողվածներ, որոնցից սրտխառնության աստիճան կհզո ու լուռանք է ժայթքում: Դրա զգվելի օրինակն է «Ռազմապատմական հանդեսի» 1990 թ. օգոստոսյան համարում գետեղված «Դաշնակցականներ» վերտառությունը կրող «պատմական ակնարկը»:

Այդ ակնարկում, ավելի ճիշտ՝ հայտայացություններ տողոված լպիրը «մեկնարկում» հայ ժողովուրդը ներկայացվում է որպես «եսամուլ», «ստրկամիտ», «օտարին խոնարհվող», «չարանչնգ», «հոգեկան ստոր» գծերով օծված մի ժողովուրդ: Սեռով սպիտակի վրա գրված է, որ հայերի «հոգեկանին բնորոշ գծերն են ազգային պարփակվածությունը և դրանից բխող՝ այլ ժողովուրդների նկատմամբ նրանց արհամարհանքն ու ատելությունը, անհատի եսամոլությունն ու ինքնասիրությունը: Այդ հատկությունների հետ մեկտեղ որպես դարավոր ստրկության հետևանք մշակվել է նաև երկդիմությունը. ուժեղների առջև խոնարհվելն ու նրանց հաճոյանալը և միաժամանակ, այդ ուժեղներին ինչ-որ շափով վնաս պատճառելու ձգտումը: Նոր ժողովուրդների հետ մշտական հարաբերությունները զարգացրել է սերը առևտրի, և դրա հետ մեկտեղ խաբեություն և հարստություն շորթելու նկատմամբ, առավել ևս, որ հենց այդ պատմական հանգամանքների շնորհիվ, իրենց մոտ զարգացնելով դիտողականությունը, նրանք հասկացել են, թե ինչ հզոր ուժ է ներկայացնում կապիտալը ոչ միայն մարդու, այլև պետության առօրյա կյան-

քում... հայերը մասամբ նմանվել են թարեված և կծիկ դարձած օձի, որը պատեհ առիթ է սպասում շրջապատում որևէ մեկին խայթելու համար... Ժեժկվելով հայերը արագորեն ուղեցին իրենց թևերը և ցույց տվեցին իրենց սև հոգին»: Եվ այլ լուսանքներ...

Միայն կաշռված մամուլն է ունակ իր արխիվներից կորզել և կենդանություն պարզել ցարական ոստիկանության դեպարտամենտի ոմն փոսգնդապետի հաշվետվությանը, մի փոսգնդապետ, որի անունն ու ազգանունն անգամ չկա արխիվներում: Բնչ նպատակով, բարոյական ինչ իրավունքով ցարական մի ոմն անհայտ ոստիկանի հորինվածքը ընդհանրացվում և հրամցվում է միլիոնավոր ընթերցողներին: Զէ որ ցարական մամուլը, հավանաբար, նախ, ամոթի զացումից դրված և ապա՝ մեկ մարդու սուբյեկտիվ կարծիքը մի ամբողջ ժողովրդի նկատմամբ վաշրահաշույններ դիտելու մղումով, իր ժամանակին այն չի հրապարակել: Մինչդեռ խորհրդային մամուլը, այն էլ բորբոքված ազգամիջյան հարաբերությունների այս թեժ պահին, վաշրահաշույններ մեջտեղ է բերում ու ցավ արտահայտում ցարական ոստիկանի ազգանունը արխիվներում պահպանված շիինելու համար: Ավելին, «հաշվետվության» առթիվ խմբագրության կողմից գրված նախաբանում, շարաշահելով խորհրդային ընթերցողների համբերությունը, հայտարարվում է, որ ակնարկը «մենք կարծում ենք հետաքրքրություն է ներկայացնում ընթերցողների համար»: Այդ ո՞ր ընթերցողների, զժվար է ասել, մանավանդ, ո՞վ է ստուգողը և կեղծիքի համար մամուլի գործիչներին պատասխանատվության ենթարկողը: Խիղճն ուրանալու ճանապարհով հայտայացության մարտակառքին լծվելը՝ փող վաստակելու, ստամոքս հագեցնելու և երեսա պահելու լավ միջոց չէ:

Միթե պարզ չէ «ընկերակցության» հաղորդման և մամուլում տպագրված լուսանքների նողկալի, պրոպագանդիստ նպատակը: Այն է՝ շրջանցելով իրականությունը, անարգանքի սյունին զամիլ քաղաքակիրթ մի ժողովուրդ, ցեխ շարտել նրա երեսին այն բանի համար, որ ենթարկվել է ջարդի, տեղահանվել ու բռնազաղթել իր բնօրրանից, դարձել թափառաշրջիկ: Դրանով իսկ հովանավորվում ու պաշտպանություն

ասկ է աննվում սպանդի կազմակերպիչներին, հրահրվում մի նոր մեծամասշտաբ արյունահեղության Լեոնային Ղարաբաղում, Շահումյանում, Գետաշենի ենթաշրջանում:

Աղբբեջանում, ինչպես նկատել ենք, սույն շարադրանքի նախորդ բաժիններում, աղբբեջանցիների կողմից իրականացվող ամեն մի ջարդարարության բուն պրոցեսի ավարտից հետո սկսվում է հաջորդը նախապատրաստելու, հիմնավորելու և նախորդին սովորական տեսք տալու արարողությունը՝ օգտագործելով մամուլը, բարձրագիր ամբիոնները, հեռուստատեսությունը: Բայց ամեն մի նախորդ և հաջորդ պրոցեսիների արանքում, Աղբբեջանում տուժողի, անմեղի տեսք են ընդնենում և իրենց բարբարոսությունը, ոչ ավել ոչ պակաս, աշխարհով մեկ, հասցեագրում նրանց, ում նկատմամբ արդեն իրականացրել են իրենց հակամարդկային շարագործությունը: Առանց ամոթի շրջանցվում է Սումգայիթը, Կիրովաբադը, Բաքուն, Աղբբեջանի այլ վայրերում իրենց գործադրած մարդակերությունը՝ հաջորդ քայլը նախապատրաստելու և ձեռնարկելու համար: Այդ բնթացքում նրանք պատրանք են ստեղծում, թե տեսեք, իրենք զուլաները կախ, զբաղված են խաղաղ, ստեղծագործ աշխատանքով, տեսե՛ք՝ հայերից աղաւտում չկա: Եվ այն քայլը, որին դիմելու են՝ ուղղակի ստիպված են, հայերից պաշտպանվելու համար: Ուրիշ ելք չկա, «խեղճ» Աղբբեջանը պիտի պաշտպանվի:

Մութալիբովի հետ «Լիտերատուրնայա դագետայում» գետեղված հարցազրույցը հենց այդ մտահոգությունն է արտահայտում: Բավական է կարդալ միայն հարցադրույցի վերտառությունը՝ «Իմ քայլը արված է հուսահատությունից»: Այդ «Նուսահատ քայլը» դրդեց Բաղիրովին՝ Սումգայիթից և Աղդամից առաջ, Վեդիրովին՝ Կիրովաբադից ու Բաքլից և այլուր կատարված քսամենյի քայլերից առաջ:

Այս բոլորը Աղբբեջանի համար արդեն «հորով ու մորով» եղած պատմություն է: Հաջողվել է «անմեղ» կեցվածքի համար կարեկիցներ ու պաշտպաններ վաստակել:

Ամեն անգամ վանդալիզմի ավարտից հետո, հաջորդ սպասվելիք սպառնալիքից, վտանգից իբր թե ետ պահելու նպատակով, երկրի պրեզիդենտը, առիթը չի կորցնում, նախազգուշացնելու հայերին: Այո, միայն նախազգուշացնում

է ու ձեռքերը լվանում, մի կողմ է քաշվում: Կաթժեք դա իր երկրում չի կատարվում: Բայց խնդիրը միայն դա չէ: Նախ, դրանով հնարավորությունը իրականության վերածելու անխուսափելիությունը դարձնում է իրական, թեևավորելով աղբբեջանցիներին: Երկրորդ, նախապես հայտնի է գտնում պետության անկողմնակալությունը: Երրորդ, ջարդի ավարտից հետո հաշվված են իրականությունը քողարկելու բոլոր քայլերը: Ուստի հաջորդ քայլը նախապատրաստելու հարցում մեծ է երկրի պրեզիդենտի, նրա հովանավորությունը կենարոնական իշխանությունների և լրատվական միջոցների դերը Աղբբեջանին ուղղություն տալու և գործելու ազատությունն քննենելու հարցում:

Եթե դա, իրոք, մտահոգություն է, ապա պրեզիդենտը ինքը նախապես պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները: Ավելին, Տիրտ է նկատել հրապարակախոս Զորի Բալայանը, որ զենք հավաքելու պրեզիդենտի հրամանի ժամկետների երկարաձգմանը երկրում դեմ էին միայն Աղբբեջանի ղեկավարները: Չէ՞ որ հայերի հափշտակած զենքերը համարակալված են և բոլորը պիտի ետ վերադարձվեն: Իսկ Աղբբեջանում հափշտակված համարակալված զենքերը ոչինչ բան են Պարսկաստանից ու Թուրքիայից 1988 թ. գեկտեմբերին և 1990 թ. հունվարին բերած զենքերի դիմաց: Դրանք համարակալված չեն, և առաջնակարգ զինատեսակներ են: Հետևաբար, զինաթափության ցանկացած պայմանի դեպքում Աղբբեջանը էլի կմնա զինված, Հայաստանը՝ անզեն: Դե արի ու այդ հրոսակախմբերից պաշտպանվիր:

Այժմ ավարտվում է հոգեբանական գրոհի, Լեոնային Ղարաբաղը հայաթափ անելու նախապատրաստության փուլը: Հենց այսօր հայ ժողովրդին պարսավանքի ենթարկող հոգեբանական մարաթոնն արդեն ուղեկցվում է կոնկրետ վանդալիզմով: Արդեն խնդիր է դրվում.

— վերացնել Լեոնային Ղարաբաղում հայկական ինքնավար մարզը:

— շվերականզենել ԼՂԻՄ-ի խորհրդային իշխանության սահմանադրական մարմինները, ինչպես նաև մարզի կուսակցական կոմիտեները, որոնք փոխարինված են այսպես կոչված հանրապետական կազմկոմիտեով,

— շարունակել խստացնել արտակարգ դրութան սեփմը, երբ ԽՍՀՄ ՆԳՄ-ի ներքին գործերը իրականում ստանձնել են պատժիչ ուժի դեր՝ անառարկելիորեն կատարելով Ադրբեջանի իշխանությունների կամքը: Նրանց օգնությամբ ադրբեջանցիները մարզում ձեռնարկել են հակահայկական և խլամարդկային ակտիվ գործողություններ,

— ջատագնել ու ավելի ստվար դարձնել Ադրբեջանի այսպես կոչված հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները, որոնք վխտցւմ են մարզում և հաճախակի են ընդհարումներ կազմակերպում: Նրանք կոմպիեկտավորված են կասկածելի անցյալ ունեցող նախկին գրոհայիններով, զինված են նորագույն մակնիշի ավտոմատներով և զենքի այլ տեսակներով, այդ ուժերի միջոցով անել ամեն ինչ, որպեսզի շարունակեն հաստատվեն կազմակերպական բյուրոներ, որոնք ներկայացնելու են հանրապետական կազմկոմիտեի ստորաբաժանումները շրջաններում,

— շարունակել և սաստիկ բնույթ տալ ԼՂԻՄ-ի տնտեսական, սոցիալական, գաղափարական, վարչական շրջափակմանը, որը հանգեցրել է սոցիալ-տնտեսական խոր ճեղքնաժամի: Հայ բնակչության նկատմամբ կիրառվող տեռորի միջոցով օրավուր վատացնել նրա նյութական պայմանները, շարունակել տնտեսական շրջափակումը ուղեկցել տրանսպորտային, լրատվական, տպագրության և ընդհանրապես քաղաքական շրջափակմամբ: Մայր հայրենիքի և արտաքին աշխարհի հետ կենսապահովման միակ կապը մնում էր օդային հանգույցը, բայց բռնազրավված է նաև օդանավակայանը: Եարունակվում են անմեղ մարդկանց սպանությունները, ջրատարի, էլեկտրացանցի պայթեցումները: Այն էլ որբորդ անգամ,

— ժողովրդագրական ցանկալի փոփոխություններ իրականացնելու համար կազմակերպել, մի կողմից, հայերի բռնի տեղահանությունը, իսկ մյուս կողմից, մարզի ադրբեջանական գյուղերում ու քաղաքներում լայն թափով բնակարանաշինության միջոցով՝ դրանք ադրբեջանցիներով ու մսխեթցի թուրքերով վերաբնակեցումը,

— զինվորականների հովանավորությամբ և հիմնականում քրեական տարրերից կազմավորված ադրբեջանական միլի-

ցիայի զինված ջոկատների օգնությամբ զենքի ուժով ահ սարսափ ներազդող անվերապահ պահանջագրերով արտաքսել ԼՂԻՄ-ի, Եահուստյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչությանը:

Արցախը պաշտպանում է իր պատիվը: Ձի ընդունում հանրապետության կազմկոմիտեի ապօրինի զոյությունը: Հազարավոր խաղաղ բնակիչներ հաճախ են փակում մարզկոմի շենք տանող փողոցները, որտեղ իրենց զինվորական բռնապետական դիկտատուրայի հովանավորությամբ գաղութատիրական իշխանություն է հիմնել հանրապետական կազմկոմիտեն:

ՀԱՅԱԴՈՒՆ

Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության նկատմամբ իրականացվող անզուսպ կամայականությունները, հակահայկական սանձարժակությունները, ժողովրդի արժանապատվությունը ոտնահարող բիրտ մեթոդների գործադրումը, այդ բոլորի նկատմամբ կենտրոնի և նրա լրատվական միջոցների բարոյագուրկ վերաբերմունքը հարկադրեցին բողոքի ձայն բարձրացնել հանուն ճշմարտության, բարու և արդարության: Հայ ժողովրդի նվիրյալները, արդարության հաղթանակի համար մղվող պայքարի զավակները, այս անգամ էլ ԼՂԻՄ-ում խորհրդային իշխանությունը և մարզի կուսակցական մարմինները վերահաստատելու համար ստիպված էին դիմելու քաղաքական հացադուլի:

Դա ժողովրդի ձայնը աշխարհին, իրականությունը՝ նրա բոլոր ժողովուրդներին ու առաջադեմ մարդկանց արգաս դատավճռին ներկայացնելու հուսահատ, բայց վերջին ու հարկադիր քայլն էր: Դանակը հասել էր ոսկորին, քանզի դահիճը իր արարքների համար արժանանում է փառքի գափենպասակների և խրախուսանքների, իսկ նրա զոհը գատապարտվում ու հանիրավի պարտավանքի է ենթարկվում:

Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում քաղաքական հացազուլ հայտարարեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, անվանի գրող և հրապարակախոս Զորի Բալայանը: Մի քանի օր անց հաստատակամորեն նրան է միանում աշխարհահռո-

չակ գիտնական, դարձի խոշորագույն աստղագիտիկոս, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, սոցիալիստական աշխատանքի կրկնակի ճիշտ, աշխարհի բազում ակադեմիկաների խնայական ու պատվավոր անդամ, ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Նրանց հետ բողոքի ձայն են բարձրացնում և քաղաքական հասցադույի նստում ԽՍՀՄ ժողովրդական գերասան, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Սոս Սարգսյանը, Վաչագան Գրիգորյանը, ԼԳԽՄ-ի լուծարքի ենթարկված մարդասերճրդի զործկոմի նախագահ Սեմյոն Բարսյանը:

Դա քաղաքական բողոքի ընդվզում էր, ցատում՝ քնդգնմ պետական մասշտաբով իրականացվող կեղծքրքի ու անբարոյականության, հայ ժողովրդի, և առաջին հերթին, արցախահայտության իրավունքների ու արժանապատվության բիրտ ստնահարման: Հացադուլավորներին միացան նաև Մոսկվայում տաջիկ ժողովրդի մտավորական, պատմական գիտությունների ֆեկնածու Ռուսաամ Եուրուրովը, Տաշքենդում ուղբիկ ժողովրդի զավակ Սուրաբ Եարաֆուրիմովը:

Ի պաշտպանություն քաղաքական հացադուլավորների կերհայացքած հայցի, ոտքի են կանգնում նաև աշխարհի առաջադեմ մարդկության շատ ներկայացուցիչներ: Նրանք պահանջում են Լեոնային Ղարաբաղում վերականգնել խորհրդային իշխանությունը, հորգորում հայ երևելիներին՝ թողնել հացադուլը, որը վտանգ է սպանում մեկին՝ պատկառելի տարիքի, մյուսին՝ վիրահատված, արդեն իսկ տկար օրտի պատճառով:

Քաղաքական հացադուլավորներին սատար են կանգնում աշխարհի տարբեր երկրների համալսարանների, միջազգային աստղագիտիկական միությունների աշխարհահռչակ գիտնականներ, պետական ու հասարակական գործիչներ, իրենց վեճական բողոքի ձայնն են բարձրացնում ամերիկյան կենդրինակներ, այլ երկրների անվանի մարդիկ, ԽՍՀՄ և մի շարք միութենական հանրապետությունների ԳԱ նախագահություններ... Մոսկվա քաղաքի «Մոսկվա» հյուրանոց են հղվում անթիվ ու անհամար հեռագրեր աշխարհի տարբեր մասերից: Նրանց կյանքը փրկելու համար հյուրանոց են այցելում աշխարհում անվանի բժիշկներ և այլ մասնագետներ:

Բայց ի՞նչ օգուտ: Անդրգիտի է ԽՍՀՄ պրեզիդենտը՝ Նառնիչ չի նկատում, ոչինչ չի տեսնում: Տեղին կրկներ ասել, որ նա միշտ էլ հաներազմի շրջանցել է Ղարաբաղյան պրոբլեմը, կամ շատ հազվադեպ, խոսքով ինչ-որ շահով հանգրոտացրել, բայց գործել իր խոսքին հակառակ: Ո՞վ չէ ո՞վ, նա շատ լավ գիտե, թե ինչ է կատարվել Ադրբեջանում, Հայաստանում, Լեոնային Ղարաբաղում: Նա ամենից լավ գիտե, թե ով է ում հալածում, ո՞վ է իրականացրել ցեղասպանություն և Ադրբեջանում ավարտի հասցրել հայերի վերջնական, իսկ առանձերի ու հրեաների մասնակի բռնագաղթեցումը: Լավ գիտե, թե ում համբերության բաժակն է լցվել, բայց մտահոգություն է արտահայտում Ադրբեջանը հայ պրոհայիններին հետևողական հարձակումներից փրկելու և ադրբեջանցիների պահանջներին մատին: Այո՛, ինչպես կենտրոնական մամուլը, այնպես էլ կենտրոնական հեռուստատեսությունը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը անդրդվելի մեացին, չէ՛ որ նրանց հատուկ ճրահանգ էին ստանում «վերհից»:

Ռուսաստանի խորհրդարանում 1990 թ. սեպտեմբերի 21-ին մեծ ուղադրության արժանացավ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովին ուղղված դիմումը, որը ստորագրել էին պառլամենտի երեսուն անդամներ:

Այդ դիմումում մասնավորապես ասվում էր. «Թե՛ՅՍՀ Գերագույն խորհրդի անդամներս, լսելով այս հաղորդումը, անհանդստություն հայտնելով խորհրդարանի անդամների առողջական վիճակի համար, որոնք ստիպված են այդ ծայրահեղ միջոցին դիմել հանուն օրինական իշխանության վերականգնման ԼԳԽՄ-ում, որը հայտնվել է վիրացման սոհմանազծում, դիմում ենք ձեզ՝ պահանջելով սպահովել ԼԳԽՄ-ի քնաշիւթյան իրական անվտանգությունը, հնարավոր ամեն ինչ անելու, որ փրկվի ժողովրդական պատգամավորների կյանքը, ...խոսելով կիրառել ԽՍՀՄ սահմանադրությունը, պաշտպանել քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ինչպես այդ մասին դուք ասում էիք երկրի պրեզիդենտի ձեր երդման մեջ»:

Լա՛ն արձագանք դտավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված մի խումբ առա անվանի մարդկանց (Յ. Բուրջացի, Ա. Գելման, Ա. Գոնչարով, Գ. Գրանին, Ա. Փիլաուին, Մ.

Զախարով, Վ. Կարպով, Գ. Կուզալտինով, Վ. Կուդրյավցև, Լ. Կալչինսկի, Ա. Միխայլով, Վ. Ռասպուտին, Վ. Սուլոյին, Մ. Շատրով, Ի. Շկլյարևսկի) դիմումը, որ 1990 թ. սեպտեմբերի 26-ին հրապարակվեց «Լիտերատուրնայա զագետայի» էջերում: Այդ դիմումում անհանգստություն էր արտահայտվում հացաղուավորների սպառնացող վտանգի համար, որի հետևանքով «զոհվում է մարդկության մշակույթը, Զոհվում ենք մենք»:

Իսկ ի՞նչ են պահանջում հացաղուավորները, հարցնում են նրանք և պատասխանում. նրանց պահանջը ծայրահեղականների պահանջ չէ, նրանք միայն մի բան են ցանկանում՝ «որպեսզի իրագործվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այն որոշումը, որն ընդունվել է 10 ամիս առաջ»: Սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայել Գուդինի ղեկավարությամբ Զորի Քալաչանի կյանքը փրկելու համար ստեղծված կոմիտեն պրեզիդենտական խորհրդի անդամներին հղած հեռագրով, պաշտպանելով հացաղուավորի պահանջները, դատապարտելով Ղարաբաղում զինվորական բռնապետության պայմաններում իշխանությունների ստնձգությունները, իշխանություններ, որոնք ոտնահարում են Ղարաբաղի բնակչության ամենատարրական իրավունքները, Ղարաբաղի հիմնահարցը ցանկանում են լուծել՝ հենց նրա բնիկ ժողովուրդը բնաջնջելու ճանապարհով, պրեզիդենտական խորհրդի անդամներին խնդրում են զրսևորել ըմբռնում և մարդասիրություն: Այդ հեռագրում նրանք նշում են, որ և՛ Քալաչանի հայտարարած հացաղույն ողբերգական ավարտ ունենա, ասպ դա կզառնա... մի ամբողջ երկրի և առաջին հերթին պրեզիդենտ Գորբաչովի խայտառակությունը»:

Հացաղուավորները պայքարեցին երկար օրեր: Նրանք այդ ծայրահեղ, բայց հերոսական պայքարում «սուրը զրեցին պատյանը» երկրի և աշխարհի առաջագիմ մարդկության լավագույն գավակների խնդրանքով, մասնավորապես այն պահից հետո, երբ նրանց այցելեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն առաջինը՝ քրիստոնեական աշխարհի հոգևավոր աչքերից մեկը: Այնհեր հայրապետը ոչ միայն թախանձագին խնդրեց, այլև հայրաբար հորդորեց, որ «և՛ զուր հարկ չհամարեք անսալ մեր ձայնին, ասպ ես պատ-

րաստ եմ նույնպես հացաղու հայտարարել և մնալ ձեր կողքին այնքան ժամանակ, որքան կպահանջվի... ես եկեղ եմ կրկին իմ հարգանքը մատուցելու ձեզ, ձեր այդ խնկապես հերոսական արարքի համար: Մեր ամբողջ ժողովուրդը շատ բարձր է գնահատում ձեր քայլը և այստեղ, և արտերկրում: Ձեր արարքը, առանց շափազանցության, կարելի է ասել, աշխարհի խիզճը ցնցեց: Հացաղույնք անշուշտ եղած են, բայց, որ հացաղու անի ակադեմիկոս, աշխարհահռչակ մի գիտնական, այդպիսի բան չի պատահել: Այնպես որ, ողջ աշխարհը զննվեց: Եվ մենք շահեցինք, շահեցինք բարոյապես, ազգային իմաստով էլ շահեցինք: Եվ կարծում ենք, որ ինչ-որ շափով պիտի օգնի, որպեսզի մոտենանք արգարության դռներին, հուսով մոտենանք»:



Ճշմարտության, արգարության հաղթանակի համար հայ քաղաքիների մղած ծայրահեղ պայքարում խիզախեց նաև աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

Գորի այդ իմաստուն այլը անձնագոհ մարտի բռնվեց պատկանելի տարիքում:

Ջարմանալի է մարդկային հոգեբանությունը... Մարդու մեջ նիրհում են չբացահայտված, շարտահայտված բազմերանգ հատկանիշներ: Դրանց ամեն մի երանգ ի հայտ է գալիս մերթ այս, մերթ որևէ մի այլ պահի, նալած գրադրսևորման համար ստեղծված պայմաններին կամ ավելի ճիշտ՝ առաջադրված հասարակական պահանջներին:

Վ. Համբարձումյանը որպես անձնուրաց գիտնական աշխարհին և հանուր մարդկությանը հայտնի է իր մտքի թռիչքով, համաշխարհային գիտության պսոնասում գրաված մշտական և հաստատուն սեղով: Բայց առ այսօր չեն բացահայտվել Համբարձումյան մարդ բաղաբացու ամբողջական կերպարի երփներանգների առանձին գույները, քանզի դրա հասարակական անհրաժեշտությունը չի զգացվել: Թեև ասանամյակներ ի վեր բոլորին է հայտնի ժողովրդի ճակատագրական պահերին նրա դիրքորոշումը և դեպի ճշմարտություն մարդկանց կողմնորոշելու հաստատակամությունը: Այս ան-

գամ բացահայտվեց նրա մարդկային վառ անհատականու-
թյան բազմերանգ կողմերից նաև մեկը՝ անձը զոհելու, կյան-
քը իրական վտանգի ենթարկելու հատկանիշը՝ հանուն
ճշմարտության հաղթանակի:

Հայտնի ճշմարտություն է, որ ժողովրդի իրական հերոս-
ները, նրա նվիրյալները օժտված են ոչ միայն աստվածային
արարչազորություններով, շատերը նաև մտքի երկունքով, աչք
ընդվզումով, այնպիսի խիզախումով, երբ հարցականի տակ
է դրվում սեփական անձի գոյությունը: Վ. Համբարձումյանի
անձնագրոսությունը պետք է գնահատել ոչ միայն իր անձի
դիքերից, այլև համաշխարհային գիտական մտքի հետագա
առաջընթացի գործում նրա անգնահատելի դերով, քանզի
նա ոչ միայն իր, այլև հանուր մարդկության, համաշխարհա-
յին գիտության ու մշակույթի պատկանելությունն է:

Ով չգիտե, որ առանց Համբարձումյան գիտնականի արա-
րիչ գերի, հայտնի շափով խաթարվում է համաշխարհային
գիտատեխնիկական առաջընթացը, մասնավորապես աստղա-
գիտության հետագա զարգացման ընթացքը: Վկան, որ նա
աշխարհի 25 երկրների գիտության կաճառների իսկական,
պատվավոր կամ արտասահմանյան անդամն է, արտասահ-
մանյան տանյակ համալսարանների ղոկտորը, բազմաթիվ
բնագավառներ ներկայացնող գիտական ընկերությունների
անդամը: Չմոռանանք, որ Վ. Համբարձումյանը, հենց նա՝
երկու անգամ գլխավորեց միջազգային աստղագիտական
ընկերությունը՝ միաձայն ընտրվելով նրա պրեզիդենտը: Այդ
հայտը հիմն էր, որ տակավին երիտասարդ տարիքում Անգլիայի
թագավորական Աստղագիտական ընկերությունում արժանա-
ցել է նյուտոնի թիկնոցը կրելու պատվին, դարակազմիկ
գիտական սխրանքների համար դարձել բազմաթիվ երկրների
գիտական օջախների ու համալսարանների մեկ տանյակ
ոսկե մեդալների ասպետ, ԽՍՀՄ պետական և լենինյան մրց-
ցանակների դափնեկիր: Իրոք մեկ մարդու, հողածնի մեկ
կյանքի համար զարմանալի առատ, միլիարդների մեջ քչերին
հասանելի այդքան արժեքավոր վաստակ:

Այդ համաշխարհային պատկանելությունը հայ ժողովրդի
զավակն է, և առաջին հերթին, նրա պատկանելությունը, նրա
գիտական առաջընթացի վսեմ ջահակիրը: Հայ ժողովուրդը

լավ գիտե, որ XX դարը իր համար սկսվեց Թումանյանով
ու Կոմիտասով, ավարտը և XXII դարեմուտը՝ աշխարհահե-
շակ Վիկտոր Համբարձումյանով:

Վիկտոր Համբարձումյանը իր վառ անհատականությամբ
ամբողջացնում է դարերի խորքից ծնունդ առած հայ գիտու-
թյան ու մշակույթի եզակի դեմքերի այն երկնահույս համաս-
տեղությունը, որի շառավիղը Մաշտոց-Քորենացի-Շիրակացի-
Նարեկացի-Համբարձումյան հզոր կամարն է: Հազարամյակ-
ների պատմության մեջ այդ մշակույթն արարողների ծնունդը
եզակի երևույթ է: Նրանք իրենց հատուկ բնածին և հարուստ
նեքնաշխարհով լույս են սփռում իրենց բոլոր նրբերանգ-
ներով, փայլի ամբողջ գեղեցկությամբ, տաղանդի հզոր
մղումով՝ կերտելով ազգի ամբողջական դիմանկարը: Ում
հայտնի չէ, որ տիեզերքի անհունության մեջ ճառագայթող
ամենապայծառ լուսատուի նման երկնառաք մտքի զորու-
թյամբ Վ. Համբարձումյանը լուսավորեց մեր ժողովրդի գի-
տական բարձունքները միտող անտեսանելի ու անհասանելի
կածանները, ապահովեց համաշխարհային հեթին համահա-
վասար նրա վերընթացը, նրա անունն ու գործը աշխարհով
մեկ սփռված իր հայրենակիցներին բերեցին նոր փառք,
ապահովեցին նրա արժանի տեղն ու դերը արդի համաշխար-
հային գիտության պառնասում: Իզուր չէ, որ հայ ժողովուր-
դը ի դեմս Վ. Համբարձումյանի՝ իր փառապանծ դավակի,
փորձում է տեսնել ինքն իրեն, նրա երախտիքով ծանր ու
թեթև անել իր գիտական միտքը՝ համաշխարհային համե-
մատ: Նրա, որպես տաղանդավոր գիտնականի, ականավոր
հասարակական-քաղաքական գործչի, մանկավարժի, մարդ-
քաղաքացու և անկոտորում հայրենասերի ամբողջ փնտրյալ
ու գեղեցկությամբ վեր հանող հոյակերտ կերպարը բոլորիս
տողորել է բարի ու ազնիվ զգացմունքներով, տարբեր սերունդ-
ների պատկանող հազարավոր ուստրերի ու դուստրերի կողմ-
նորոշել դեպի գիտությունը, վարակել առաքինությամբ,
ներարկել աննկուն և ինքնամոռաց հայրենասիրություն:
Հավանաբար, հարկավոր է նորից ու նորից շեշտել, որ նրան
բնորոշ վառ հայրենասիրությունը հատկապես առկայծում,
կաղնու նման տոկոս կնցվածքը տեսանելի է դառնում հայ
ժողովրդի պատմության շրջադարձային պահերին:

Մենք՝ Վ. Համբարձումյանին հաջորդող սերնդի մարդիկ, հպարտ ենք, որ բախտ է վիճակվել աշխատել նրա հետ, լինել նրա ժամանակակիցը, կախարդվել այդ մեծ մարդու առիթնոց աստվածային հմայքից: Հավերժ գոյատևող գիտական արարչագործությունների հետ մեկտեղ նա, որպես ՀեՍձ ԳԱ անփոփոխ պրեզիդենտ, շուրջ կես դար ուղղություն և ընթացք է տալիս Հայաստանի գիտական մտքի զարգացմանը, կողմնորոշում այն համաշխարհային մակարդակ միտող շահավիզներով, գործադրում հնարավոր ու անհնարին բոլոր ջանքերը գիտության մարդկանց ստեղծագործական առաջընթացի ճանապարհին, անձնական օրինակով ու հորդորանքով հույս ու հավատ ներշնչում ժողովրդին անձնվիրաբար ծառայելու իր իսկ հավատարմագրված պատգամին: Ահա թե ինչու հայ ժողովրդի համար ճակատագրական այս պահին աշխարհի գիտական միավորումների, անվանի մարդկանց՝ գիտության, քաղաքական ու հասարակական գործիչների շատ ներկայացուցիչների հետ միասին, թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում համաժողովրդական հավաքներում, առանձին անհատներ դատապարտելով «կենտրոնական իշխանությունների և անձամբ պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովի՝ Արցախի հայ բնակչության նկատմամբ վարած քաղաքականությունը» հորդորում են հացաղուսավորներին, և առաջին հերթին Վ. Համբարձումյանին ու Զորի Բալայանին՝ խնայել իրենց առանց այդ էլ վտանգված առողջությունը և դադարեցնել հացաղուսը: Հացաղուսի օրերին Վ. Համբարձումյանը թևակոխեց իր տիեզերական կյանքի 83-րդ տարին: Տիեզերական, քանզի նրա աշխատանքային գործունեության ամեն մի տարի կշռում է հարյուրավոր տարիներ: Հայաստանի Հանրապետության խորհրդարանի, աշխատավորական կոլեկտիվների, միտինգների, ժողովների, պետական և հասարակական գործիչների առանձին քաղաքացիների կողմից Վ. Համբարձումյանին իր փառապանծ ծննդի առիթով հղված հեռագրերում մաղթում էին քաջ առողջություն, ցանկանում տոկունություն, «հայ ժողովրդի այն իղձերի իրականացում, որի համար իրենց ձայնն են բարձրացրել ծերունազարդ գիտնականը, ժողովրդի մյուս անձնուրաց զավակները»: Նրանք ցանկանում են Վ. Համբարձումյանին վերագարծ դեպի իր

պաշտոնավայրը, մտքի տոկունություն, նորանոր սխրանքներ՝ դեպի անհասանելի և անհայտ բարձունքները գիտության մարդկանց առաջնորդելու գործում՝ հանուն մեր ժողովրդի հուսալի և լուսավոր ապագայի:

Աշխարհի երկրների խորհրդարաններին, միութենական Կանրապետությունների Գերագույն խորհուրդներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին 1990 թ. սեպտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հղած դիմումում ուղղակի ասվում է. «Հայ ժողովրդի բնորոշների կյանքը վտանգի է ենթարկված: Նրանց միակ պահանջը միանգամայն սահմանադրական է՝ վերականգնել ԼՂԻՄ-ում օրինական իշխանությունների մարմինները: Այս պահանջի մերժումը ոչնչով չի կարող արդարացվել և միայն կավիայցնի ևս մի էջ երկրի արյունոտ պատմության մեջ, որի ողջ պատասխանատվությունը կբեկնի անձամբ ԽՍՀՄ պրեզիդենտի վրա:

Համարելով, որ դեռ չեն սպառված դեմոկրատական պայքարի այլ ձևերը, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն արդեն դիմել է Հայաստանից ընտրված ԽՍՀՄ պատգամավորներին և Ղարաբաղում նրանց միացած գործընկերներին և այժմ էլ՝ հայ ժողովրդի բարեկամներին՝ կոչ անելով դադարեցնել հացաղուսը, քանի որ հայ ժողովրդի պայքարն իր ինքնորոշման համար գոյատևման պայքար է, որի համար դեռ շատ են հարկավոր կյանքը, փորձն ու եռանդը յուրաքանչյուրի, ով իր վրա է վերցրել այդ պայքարի առաջին շարժերում լինելու ծանր պարտականությունը:

Հանուն ողբերգության կանխման, հանուն համամարդկային իդեալների, մարդու իրավունքների ու երկրի ազգային շարժումների հիմնական առանցք դարձած ազգերի ինքնորոշման գաղափարի հաստատման Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը դիմում է աշխարհի երկրների խորհրդարաններին, միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին, կոչ անելով բարձրացնել իրենց ձայնը ի պաշտպանու-

թյուն հայ ժողովրդի ընտրյալների և Ղարաբաղի օրինական պահանջներին»:

Ձարմանալու ոչինչ չկար, որ հայ ժողովրդի հետ միասին համայն մարդկությանը պատկանող էակի, նրա անգնահատելի գանձի ֆիզիկական անձին սպառնացող վտանգը չհզոքացնելու համար սատար կանգնեց ինքը՝ համայն մարդկությունը, նրա սերուցքի լավագույն ներկայացուցիչները: Ձայն բարձրացրեց մարդկության ծաղիկը՝ գիտական միտքը, երկրագունդն ու տիեզերքը՝ իր բոլոր լուսատուներով: Նրանք մտահոգված էին մարդկության ու տիեզերքի միջև, տիեզերքի անհունության մեջ սփռված աստղային գալակտիկաների լեզուն վերծանող և մեզ հասանելի դարձնող մեծ թարգմանիկյանքի համար:

Հավանաբար շատ ժողովուրդներ բարի կամեցողությամբ են գնահատում, որ համաշխարհային այդ պատկանելությունը ամենից առաջ հայ ժողովրդինն է, մի ժողովուրդ, որն ապրում և արարում է այս լեռնաշխարհում: Իսկ դա այն լեռնաշխարհն է, որն ավելի ու ավելի մոտիկ է աստվածային տիեզերքին, Միր կաթինի անմար աստղերին, հենց այդ լեռնաշխարհն էր, որ կապույտ երկնքի մեջ մխրճված իր սեզ ու վեհ Արարատով դարձավ մարդկային ցեղի ու ողջ կենդանական աշխարհի հարատևությունն ապահովող տապանը՝ մեծ ջրհեղեղից հետո... Հենց այս բարձրամանդակում է հայ ժողովուրդը կերտել քաղաքներ ու քերզեր, հուշարձաններ, մագաղաթների վրա գրել պատմություն, նրա այրուձին դիմակայել է օտար նվաճողներին ու վայրի ցեղերին: Գրանցից ջատեքը չկան, անհետացել են պատմության անդաստանում, բայց ինքը՝ հայ ժողովուրդը կանգուն է ու հարատև: Այս թոճն ու բոճն էլ կանցնի, թալանչի ու քոչվոր ցեղերը կգան ու կգնան, բայց հայ ժողովուրդը կզոմագրավի անառիկ բերդի նման, կզմագրավի իրեն հատուկ աշխարհըմբռնումով, ստեղծագործական ավյունով ու աշխատասիրությամբ, արարելու ոգով ու հմտությամբ, կամքի ուժով ու իր զավակների գիտական մտքի զորությամբ:

ԿԵՂԾՈՒՄ ԵՆ ԱՂՐԲԵՋԱՆԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Ազգրեջանում խիստ «մտահոգություն» է տիրում: Պատճառը ոչ միայն Հայաստանից իրենց հայրենակիցների արտագաղթն է, այլև, առաջին հերթին այն, որ Հայաստանը կա և գոյատևում է: Նրանք դժգոհ են, որ ավերիչ երկրաշարժը և Ազգրեջանից բռնագաղթեցված՝ խոշտանգված ու զլխապատառ մագապուրծ փախստականների մշտական ու շղաղարող գանգվածային հոսքը չկարողացան ընկճել: հայ ժողովրդի ազատատենչ ոգին, խամրել ապագայի նկատմամբ նրա լավատեսությունը: Գժգոհ են, որ փոքրիկ Հայաստանն իր վրա սևեռեց մեր մոլորակի ամբողջ մարդկության ուշադրությունը: Իր ուժերին ապավինելու և ապագայում գոյատևելու համար հայ ժողովրդի լավատեսությունը դուր չեկավ մեր հարեաններին: Նրանց համար քիչ էր, շատ քիչ, պատմական Հայաստանում գործադրված ցեղասպանությունների մեթոդներով Ազգրեջանը հայաթափ անելու և աղետի առիշով գոհություն, հրճվանքի և ուրախության պահեր ապրելը, թափոններով բեռնված կամ լրիվ դատարկ վագոններ աղետի դոտի առաքելը, այդ վագոնների վրա գրված «շնորհավորական» ցանկություններ հղելը¹:

Հայ ժողովրդին անհարկի անարգելու, լՂԽ-ում և Հայաստանում խուճապային իրավիճակ ստեղծելու և ընդհանրապես դարաբաղյան շարժումը խանձարուրի մեջ խեղդելու Ազգրեջանի կառավարող իշխանությունների քաղաքականությունը չի ավարտվում Ազգրեջանի մասնակի հայաթափությամբ ու Հայաստանի պարբերաբար շրջափակելով:

Ազգրեջանի անաբեկիչներին անհրաժեշտ է իրականացնել միաժամանակյա փոխկապակցված մի շարք ձեռնարկումներ: Նախ, Լեռնային Ղարաբաղից հայ բնակչությանը բռնագաղթեցնելու միջոցով հաղթական ավարտի հասցնել Ազգրեջա-

¹ Ոմանք մեղադրում են, որ իրր թև Հայաստանում ժերժել են Ազգրեջանի կողմից աղետի առիթով օղնություն ցույց տալու պատրաստակամությունը («Գիտլոգ», 1990, № 5, էջ 59): Ազգրեջանի կողմից նման պատրաստակամություն չի եղել:

նից ամբողջ հայ բնակչության արտաքսումը: Երկրորդ, մըշտական գարձնել շրջափակումը, գազատարի խափանումը, Հայաստանը կտրել արտաքին աշխարհից: Երրորդ, վերջնականապես ձախողել Ադրբեջանից բռնագաղթված հարյուր հազարավոր փախստականներին, երկրաշարժից տուժած 700 հազար մարդկանց բնակարանով, աշխատանքով և արուստով ապահովելու և երկրաշարժի հետևանքները վերացնելու աշխատանքները: Չորրորդ, Հայաստանի ներկա տարածքի նկատմամբ ազդեցիկ պահանջատիրական քաղաքականություն մեր գարձնել Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև հայ ժողովրդի իրավացի պահանջատիրությունը պատմական Հայաստանի այն հողերի նկատմամբ, որոնք զավթել է Ադրբեջանը: Հինգերորդ, հակահայկական ամեն կարգի պրոպագանդայով պետական քաղաքականությունից աստիճանի բարձրացնել պատմական փաստերն ու թվերը կեղծելը, իրականությունը գլխավոր շուռ տալը, ամենուրեք սերմանել հայտաչացություն, խլրտումներ առաջացնել Միության հայաբնակ ուղիներում:

Պատմական Հայաստանը հայաթափ անելու միջոցով նրա տարածքին վերջնականապես տեր դառնալու պրոցեսը հաղթական ավարտին հասցնելու հաջորդ քայլը Լեոնային Ղարաբաղի հայության բնաջնջումն է: Այժմ արդեն իսկ, ինչպես ցույց տրվեց, ավարտվում է վանդալիզմի այդ քայլին դիմելու հոգեբանական գրոհի շրջանը, խնդիրը այն իրականացնելն է: Այդ նպատակով նրանք գործադրում են բոլոր շանքերը թաղելու Ադրբեջանում հայ ժողովրդի նկատմամբ ոչ միայն վերջին երեք տարիների, այլև տասնամյակներ շարունակ իրականացվող ցեղասպանության հետքերը, կեղծել պատմական փաստերը, մեր շրջապատում և մեզ հետ տեղի ունեցող իրականությունը և կատարել հաջորդ քայլը: Հենց այդ ողով է սողորված «Հայաստանի ադրբեջանցի բնակչության բռնի արտաքսման մասին» Ադրբեջանական ԽՍՀ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընդունած դիմումը, որը հղել են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին: Այդ ծանակ փաստաթուղթը բաժանվել է երկրի Գերագույն խոր-

հրդի անդամներին և տեքստը հրատարակվել «Բակինսկի ութուշի» թերթում²:

Դիմումի հեղինակները կոկորդիլուսյան արցունքներ թափելով, օգտագործելով կեղծիքն ու սուտը, թուրքական դիվանագիտության ողջ դինանոցը, փրուն դեկլարացիաներով հայ ժողովրդին մեղադրում են ցեղասպանության մեջ, 1988 թ. սումգայիթյան և հետագա ղեպքերի արմատները որոնում մի խումբ «հայ էքստրեմիստների» կողմից 1988 թ. փետրվարին Լեոնային Ղարաբաղը Հայաստանին «բռնակցելու պահանջատիրության» մեջ: Այդ դիմումում ադրբեջանցիների կողմից 1918—1920 թթ. և 1988—1990 թթ. կազմակերպված հայ բնակչության ջարդերի, երեխաների, կանանց ու ծերունիների սպանությունների, շուրջկալների, հասույին վարբազի մասին ոչ մի խոսք: Ոչ մի խոսք այն մասին, որ XX դարի երկրորդ կեսից թեև փլուզվել է գաղութատիրության համակարգը համայն աշխարհում, բայց ոչ ռեժի հոգսը չէ, որ Լեոնային Ղարաբաղը կեղծբովում է գաղութատիրության ներաներում:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում տարածում է գտել շարանեղ նպատակներով փաստերը և երևույթները կեղծելու և խեղաթյուրված ձևով հրամցնելու մեթոդը: Նպատակը պարզ է՝ սվյալ պահին «էֆեկտ» ստեղծելու միջոցով մարդկանց ուշադրությունը շեղել բուն հարցի էությունից: Այդ մարդիկ լավ են յուրացրել սվյալ պահին ընդդիմադիր կողմերի հոգեբանությունը, այն, որ ընդդիմադիր կողմը նման ղեպքերում իր ուշադրությունը սեղում է խեղաթյուրված փաստը կամ թիվը ճշգրտելու վրա, իսկ բուն երևույթը մնում է շրջադաստված: Այդպես է եղել Ադրբեջանի վալ գլխնականների կողմից հայ ժողովրդի պատմությունը շարադրելիս, պատմական դանազան անցքեր և ժողովրդագրական պրոցեսներ կեղծված կամ թյուր ներկայացնելիս:

Հայ ժողովրդի նկատմամբ ավելի քան յոթնասուն տարիների ընթացքում Ադրբեջանի իշխանությունների կողմից պլանավորված կարգով կազմակերպված ջարդերը, բռնագաղ-

2 Այս և «դիմումից» բերված հաջորդ հղումները տե՛ս «Բակինսկի ութուշի», 1990, 7 հոկտեմբերի:

թը, սահմանափակ վարձեցանքը դիմումում ներկայացվում է որպես թե Հայաստանում ադրբեջանցի բնակչության նկատմամբ գործադրվող պրոցես: Այսինքն, դիմումում կատարված է ամի անմեղ» կերպարանափոխություն. փոփոխվում են գործողության վայրը և գործող անձինք: Եվ քանի որ դերակատարներն ու գործող հերոսները նույն մարդիկ են, հոյակապ աներկայացում» է ստացվում:

Այս անգամ էլ նրանք մեջտեղ բերեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի ժողովրդական պատգամավորների աչքին «Թող փչելու» այդ նենգամիտ փաստաթուղթը, որը ոտից գլուխ կեղծիք է ու զրպարտություն: Խեղաթյուրված են պատմական փաստերը ու հնարավոր չէ ամենայն մանրամասնությամբ անզրադանալ այդ դիմումում բացահայտորեն աչք ծակող ստիճ ու կեղծիքին: Սահմանափակվենք դրանց որոշ մասի հիշատակումով:

«Տասնամյակների ընթացքում, — ասվում է այդ խեղաթյուրանքում, — հայկական ազգայնամոլները և նրանց գաղափարախոսները, ամեն կերպ շահագործելով հայ ժողովրդի ցեղասպանության թեման, համառոտ լուծում են և թաքցրելով շատ տարիների ընթացքում Հայաստանում ադրբեջանական բնակչության նկատմամբ հարուցված իրավունքների կոպիտ խախտումները, ճնշումն ու բժիրը:

Դրա համոզիչ փաստաթղթային հաստատումը ծառայում է պաշտօնական անաչառ վիճակագրությանը: (Ընդգծումը մերն է — Վ. Խ.): XIX—XX դարի սահմանագլխին միայն Երևանի նահանգի տարածքում, որի մեծ մասը կազմում էր Հայկական ԽՍՀ-ն, ապրում էր 407,4 հազար մարդ, այդ թվում ավելի քան 250 հազար ադրբեջանցիներ: Հենց Երևանում ադրբեջանցիները կազմում էին քաղաքացիների ընդհանուր թվի զրեթե կեսը (49,2 տոկոսը):

Հետագայում ադրբեջանցիների թիվը Հայաստանի ներկա տարածքում զգալիորեն ավելացավ և 1918 թ. կազմեց 575 հազար (ընդգծումը մերն է — Վ. Խ.) մարդ, այսինքն նրա ընդհանուր բնակչության ավելի քան մեկ կրորդը:

Սակայն նպատակամղված ազգայնամոլական քաղաքականության շնորհիվ ավելի քան կեսմիլիոնանոց ադրբեջանցի բնակչության կեսը ոչնչացվել կամ արտաքսվել է»:

Կեղծիքը սկսվում է հենց առաջին քալից: Որքանով են համապատասխան իրականությանը այն թվերը, որոնք հիմք են հանդիսացել այդ պատգամավորների դիմումում կատարվող «գիտական» ընդհանրացումների, թույլ ու մուր պարունակող լկտի հարձակումների և ամպագողոտ եզրակացությունների համար, երևում են պաշտոնական անաչառ վիճակագրության» տվյալներից:

Դիմումում հիշատակված ժամանակահատվածում, այսինքն՝ XIX դարի և XX դարի սահմանագլխին ամբողջ Ռուսաստանում և հետևաբար, Երևանի նահանգում ժողովուրդների թվահազմի մասին հավաստի տվյալներ են տալիս միայն ու միայն ռուսական կայսրության 1897 թ. առաջին ընդհանուր մարդահամարի մի քանի տասնյակ հատորներով հրատարակված շատ հարուստ ու բազմակողմանի ընդգրկում ունեցող վիճակագրական նյութերը: 189 էջ ծավալ ունեցող նրա 71-րդ հատորը, որը 1905 թ. հրատարակվել է Պետերբուրգում, վերաբերում է Երևանի նահանգին: Բազմաթիվ էջեր ընդգրկող բոլոր 25 ազյուսակներում անով սպիտակի վրա գրված է, որ 1897 թ. Երևանի նահանգում բնակվում էին 829 հազար 556 մարդ³ և ոչ թե 407,4 հազար, ինչպես թիւի են պաշտոնական անաչառ վիճակագրության» «չատագով» և կեղծիքը որպես իրականություն ներկայացնող Ադրբեջանական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական ղեկուստաները: Կեղծիք էլ կա կեղծիք էլ: Մտացածին եզրակացություններ կատարելու համար թիվը կարելի⁴ է երկու անգամ պակաս ցույց առլ: Գուցե Երևանի նահանգը նրանք «թյուրիմացարար» շփոթում են Խորհրդային Հայաստանի ներկա տարածքի հետ: Միևնույն է, այդ դեպքում նույնպես թիվը կեղծված է: Ե՛լ որ 1897 թ. նույն մարդահամարի տվյալներով այնտեղ բնակվում էին 797893 մարդ⁴, Այսինքն դիմումում բերված թիվը երկու դեպքում էլ հորինված է: Կեղծված է նաև ադրբեջանցիների թվահազմը: Այն կեղծված է երկու առումով: Նախ, բացարձակ: 1897 թ. մարդահամարի տվյալներով Հայաստա-

³ Первая Всеобщая перепись населения российской империи, 1897 г., том 71, Эриванская губерния, Петербург, 1905, с. 2—3.

⁴ Գ. Կորկալյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1851—1931) և., 1934, էջ 183:

նի ներկա տարածքում ապրում էին ոչ թե «ավելի քան 250 հազար աղբրեջանցիներ», այլ «240328 մահմեդականներ»⁵։ Երկրորդ, հայտնի է, որ ուսական վիճակագրության մեջ բնակչությունը ընդհանրապես ներկայացվում է ըստ կրոնական պատկանելության։ Դիմումում Հայաստանում բնակվող բոլոր մահմեդականները ներկայացված են որպես աղբրեջանցիներ, անտեսելով այն, որ Հայաստանում աղբրեջանցիների (այն ժամանակ «թաթարների», «կովկասյան թաթարների») հետ միասին բնակվում էին նաև մուսուլմանական կրոնին պատկանող քրդեր, պարսիկներ, կարափափախներ (թուրքական ծագում ունեցող թուրքեր), թաթեր և այլն։ Բայց դրանք լինելով մահմեդականներ, երբեք էլ աղբրեջանցիներ չէին։ Ուստի կեղծիքը տվյալ զեպքում կազմում է ոչ թե ավելի քան 10 հազար մարդ, այլ մի քանի տասնյակ հազարներ։ Ի դեպ, նման կեղծիքի համար պատգամավորներին չի կարելի «մեղադրել», քանի որ Աղբրեջանում դա սովորական բան է։ Տասնամյակներ շարունակ, ինչպես նկատեցինք, ոչ միայն ձուլել, այլև մարդահամարների ժամանակ աղբրեջանցիներ են գրանցել քրդերին, թախչներին, պարսիկներին, լեզգիներին, ցախուրիներին, ավարներին, թաթերին և այլ ազգերի։

Այս նույն հիմունքներով «դիմումում» կեղծված են նաև Երևանի բնակչության թվակազմը։ Նրանք դիտակցաբար շին հիշատակում, որ 1897 թ. Երևանում ապրում էր ընդամենը 29 հազար 6 մարդ, որից «մահմեդականներ» էին 12516-ը⁶։ Այս հասարակ թվաբանությունից երևում է, որ մահմեդականները (բայց դարձյալ ոչ աղբրեջանցիները) կազմում էին Երևանի բնակչության 43,1 տոկոսը, որը դիմումում դարձել է 49,2, Աղբրեջանի ժողովրդագրիները, ի՞նչ է, թվաբանական հասարակ տոկոս հանելու գործողություններն էլ չգիտեն։ Իհարկե գիտեն, բայց կեղծիքը «հիմնավորելու» համար վարվում են ճիշտ այնպես, ինչպես խանութներում վաճառողները։ Վաճառքից դանձվող դումարը հաշվում են միշտ հօգուտ իրենց։ Ինչպես նահանգում, այնպես էլ Երևան քաղաքում

⁵ նույն տեղում։

⁶ Первая Всеобщая перепись населения российской империи, т. 71, с. 2—3.

43,1 տոկոսի մի զգալի մասը պարսիկներ, քրդեր, թաթեր, լեզգիներ և այլ ժողովուրդներ էին։ Ինչ արած, «ինչուկների, թուրք-թաթարների հետ միասին դարերի ընթացքում Հայաստանը զավթել էին նաև պարսիկները, որոնց հետքերը կային նաև Երևանում։ Աղբրեջանում շատերը, այդ թվում Աղբրեջանի պրեզիդենտ Ա. Մուխլիթովը, ինչպես նաև ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովը, Հայաստանում կիրառվող ազգային քաղաքականության նկատմամբ «հատուկ կշտամբանքներ» ներկայացնելու պատրվակով հաճախ են վկայակոչում և լուրջ մտահոգություն արտահայտում 1900-ական թվականների համեմատությամբ 1970-ական թվականներին Երևանի բնակչության թվակազմում աղբրեջանցիների տոկոսը խիստ նվազելու կապակցությամբ։ Բայց երբեք չեն խորանում այն փաստի մեջ, որ 1897 թ. Երևան քաղաքի ընդհանուր բնակչությունը ընդամենը հասնում էր 29 հազարի⁷, որը մինչև 1913 թ. գրեթե մնաց անփոփոխ, ավելացավ լոկ 300 մարդով։ Հետագայում մահմեդական բնակչության թիվը նվազեց առաջին աշխարհամարտի և 1918—1920 թթ. հրահրվող ազգամիջյան կոտորածների տարիներին։ 1979 թ. Երևանի բնակչությունը հասավ 1 մլն 19 հազարի։ Ուստի այս մեծ թվերի մեջ աղբրեջանցիների տոկոսը պիտի որ ցածր երևա։

Ինչ վերաբերում է ներկայիս Հայաստանի տարածքում 1918 թ. ապրող աղբրեջանցիների թվակազմի մասին դիմումում բերված տվյալներին, ապա դա ևս կեղծված է։ Հրապարակված վիճակագրական աղբյուրներում և արխիվային նյութերում ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում նախախորհրդային շրջանում, ցավոք, բնակչությունը երբեք չի հասել 1,75 միլիոնի, որի մեկ երրորդը՝ «575 հազարը» կազմելին մահմեդականները։ Որտեղից հորինվեց այդ թիվը։ Բավական է ասել, որ 1918 թ. Հայաստանի ներկայիս տարածքում ապրում էր մեկ միլիոն մարդ։ «Կովկասյան օրացույցի» (որը հրատարակվում էր ամեն տարի և հաճախ ժողովածուի ծավալը անցնում էր 1000 էջից) տրվյալների, 1914 թ. այն դարձավ 1 մլն 14 հազար, 1916 թ. 993782, 1919 թ.՝ 1 մլն-ից ընդամենը 677 մարդով ավելի։

⁷ Первая Всеобщая перепись населения Российской империи, Эриванская губерния, с. 1.

Դիմումում մի գրչի հարվածով 667 մարդու վրա ավելացրել են երեք զրո և 1000 անգամ ավելացնելով կտրաքված ներկայացնում են ավելի քան 700 հազար:

1920 թ. դեկտեմբերին խորհրդային կարգեր հաստատվելու պահին թուրքական բանդաների ու մուսավաթական իշխանությունների կազմակերպած զանգվածային ջարդերի հետևանքով Հայաստանի բնակչությունը խիստ նվազեց: Անկասկած, այդ ջարդերի ազդեցության տակ ստիպված էին Հայաստանից արտագաղթել նաև ազրբեջանցիներ ու պարսիկներ: Կովում «փլավ չեն բաժանում»: Զարդի ենթակա կողմը՝ հայերը դիմում էին ինքնապաշտպանության: Ուստի ազգամիջյան կռիվների բնթացքում զոհվում էին նաև ազրբեջանցիներ ու պարսիկներ: Հետևաբար, ոչ թե ինքնապաշտպանության դիմած Հայաստանի Հանրապետության մեղքով, այլ մուսավաթական իշխանությունների և թուրք օկուպանտների հայաչինջ քաղաքականության ու ազգամիջյան ջարդերի հետևանքով այդ տարիներին Հայաստանից արտագաղթեցին ավելի քան 200 հազար⁸ (բայց ոչ 575 հազար) ազրբեջանցիներ ու պարսիկներ:

Հայաստան ներխուժող թուրքական զինված բանակի ու մուսավաթական բանդաների դեմ ինքնապաշտպանության գուրս եկած և սովի ճիրաններում գտնվող ընդամենը 9 հազար քառ. կմ տարածություն զբաղեցրած Հայաստանը ի՞նչպես կարող էր կազմակերպել ազրբեջանցիների այն մասշտաբներն ունեցող ջարդը, ինչ վկայակոչվում է դիմումում: Ինչպես նկատեցինք սույն գրքի նախորդ էջերում, 1918—1920 թթ. թուրքական օկուպանտներն ու մուսավաթական բանդաները կազմակերպեցին Բաքվի, Շուշիի, Նախիջևանի և Ադրբեջանի այլ վայրերում բնակվող հայ բնակչության զանգվածային ջարդերը, որի հետևանքով բռնագաղթած հայերը այլևս չկարողացան վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը⁹: Ազրբեջանին բռնակցվեցին Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը:

Քանը հասել է նրան, որ Լեռնային Ղարաբաղի և Նախի-

⁸ Չ. Կուկուտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931) էջ 185:

⁹ 224ՊԱ, ք. 130, ց. 6, դ. 19, ք. 19, 40, 43, 48:

չևանի զավթիչները այդ դիմումում «ցավ» են արտահայտում, որ այդ նույն հիմունքներով չեն կարողացել բռնակցել նաև Դիլիջանը, Զանգեզուրը, Մեղրին: Առանց ամոթի նրանք հայտարարում են, որ հայերին, այդ «...յուրահատուկ «անըլլուսի» գաղափարների արտահայտիչներին, անհրաժեշտ էր տարածք՝ առանց նրա բնիկ բնակչության՝ առանց ազրբեջանցիների:

Կավ հայտնի է, և դա հավաստվում է փաստաթղթերով, որ Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո գաղնիկների զավթած ազրբեջանական հողերի զգալի մասը մնացել է ՆՍՄՀ-ի սահմաններում:

1920 թ. սկզբներին Ադրբեջանի Ղազախի գավառի հարավային մասից կազմավորվեց Հայաստանի Դիլիջանի գավառը: Հայաստանին անցավ նաև Զանգեզուրի գավառի մեծ մասը, որի բազայի վրա կազմակերպվեցին Մեղրու և Զանգեզուրի գավառները:

Պետք է նշել, որ Մեղրուն հարող տարածքը Հայաստանին հանձնելու հետևանքով, Նախիջևանի երկրամասը արհեստականորեն կտրվեց Ադրբեջանից:

Նախ, այդ ինչ բնիկ ժողովրդի մասին է խոսքը: Ո՞ւմ հայտնի չէ, որ թուրքական քոլովոր ցեղերը Զանգեզուրում, Լեռնային Ղարաբաղում բնակություն են հաստատել XVI—XVIII դարերում և այն էլ շատ փոքրաթիվ խմբերով: Հետագայում, պարսկական տիրապետության տարիներին, դրանց թիվը Զանգեզուրում ավելացավ: Ուստի նրանք այստեղ բնակություն են հաստատել որպես զավթիչներ: Զավթիչը բնիկ ժողովուրդ լինել չի կարող: Զմտուհանք, որ դա նույնպես ցեղասպանության արտահայտություն է: Զարմանալու ոչինչ չկա: Դիմումի հեղինակները շատ հարազատ են կեղծիքը պետական քաղաքականության աստիճանի բարձրացնելու զիբրունիաթովյան կամայական մեթոդին:

Սելվորդ, դիմումի հեղինակները Զանգեզուրը, ինչպես նաև Դիլիջանը հայտարարում են ազրբեջանական տարածք: Անտաբակույս հիմք են ընդունում այն, որ ցարական վարչական բաժանումով այդ գավառները մտնում էին Սիլվա-վետապոլի նահանգի կազմում: Վերջինս, իհարկե, ճիշտ է: Բայց ավյալ դեպքում նույնպես շրջանցվում է երկու կարևոր

հանգամանք: Գրանցից մեկն այն է, որ ինքը՝ Նիզամիետուլի նահանգը պատմական Հայաստանի տարածքն է: Մյուսը այն, որ ցարական վարչական բաժանումը չէր հիմնում տարածքը ըստ ազգային պատկանելության բաժանելու սկզբունքներից: Նահանգների վարչական բաժանումը պայմանական էր և որևէ կապ չկար թե պատմականորեն և կամ սովյալ պահին, որ ժողովրդին է պատկանում այս կամ այն նահանգի մեջ մտնող գավառը: Այդ նույն հիմունքներով Լոռին մտնում էր Թրիֆլիսի նահանգի կազմում: Իսկ եթե ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները ոտնահարում են այդ սկզբունքները և հիմքում դնում են ցարական վարչական բաժանումը, ապա ինչո՞ւ հետևողական չեն: Չէ՞ որ Նախիջևանի գավառը մտնում էր Երևանի նահանգի կազմում, որին այժմ տիրացել են ադրբեջանցիները:

Բանը, իհարկե, միայն դրանում չէր: Միծաղելի է, բայց, ինչևէ հարց է ծագում. կարո՞ղ էր հենց Հայաստանի կենտրոնում օտար քաղաքակրթություն գոյություն ունենալ, հենց հայ ժողովրդի սրտի մեջ ստեղծվել մի այլ ժողովրդի մշակույթ: Ի՞նչ տրամաբանություն է Նախիջևանի և Արցախի յուրօրինակ մշակույթը, հայոց ձեռագրերի կնիքը կրող անկրկնելի կոթող հուշարձանները, եկեղեցիները, խաչքարերը այսօր ներկայացվում որպես ադրբեջանական: Անտեսվում է այն ճշմարտությունը, որ Նախիջևանը Մեծ Հայքի կենտրոնական շրջաններից մեկն էր:

Գիմումում ի թիվս իրականությունը նենգափոխող բազմաթիվ այլ հնարովի փաստերի, ճիգ է գործադրվում «համոզելու», որ Հայաստանում ադրբեջանցիների նկատմամբ կիրառվել է արտաքսման քաղաքականություն:

«Հայրենական պատերազմի ավարտից հետո, — ասվում է այդ գիմում-հերյուրանքում, — 1948—1951 թթ. հայրենադարձ հայերի համար հողեր ազատելու լիազարգացված, Ստալինի ու Միկոյանի նախաձեռնությամբ, Հայաստանից բնությունամբ արտաքսվեցին ավելի քան 100 հազար ադրբեջանցիներ, որոնցից շատերը չգիմանալով ծանր փորձություններին, մեռան»:

Այլ նույն «նեյնիմն» են երգում նաև Ադրբեջանում իրենց «ժողովրդագիրները» ներկայացնող անձիք: Տվյալ գեպում

նույնպես ամեն ինչ շուտ է տրված գլխավայր: Ինչպես դիմումի հեղինակները, այնպես էլ որոշ «ժողովրդագիրներ» հարկ չեն համարում վկայակոչել 1970 թ. Բաքվում Ադրբեջանի ժողովրդագիրների հրատարակած գիրքը¹⁰, ուր իրենց իսկ ադրբեջանցի ժողովրդագիրների ղեկավարած հոդվածում խոսքը գնում է ոչ թե «հայրենադարձների համար Հայաստանում տարածք ազատելու մասին», այլ Ադրբեջանի կառավարության խնդրանքով Կուռ-Արաքս հովտում ջրովի հողերն ընդարձակելու և ջրաբքի դարձնելու հետ կապված նոր բնակավայրեր հիմնելու նպատակով վրացական, Միջինասիական և Հայկական հանրապետություններում բնակվող որոշ ադրբեջանցիների տեղափոխությունը գեպի Ադրբեջան կազմակերպելու մասին: Բացվում հրատարակված այդ նույն գրքում նշվում է, որ այդ տարիներին միայն Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջան են տեղափոխվել 58,5 հազար ադրբեջանցիներ¹¹: Բայց զա չի խանգարում, որ իրենց հիշատակած թիվը «գիմումում» ուռճացվի ու հասցվի 100 հազարի: Ավելին, այն ներկայացվում է որպես «ստալինյան բռնազաղթ» ոչ թե Միբիր, այլ Ադրբեջան՝ իրենց մայր հայրենիքը: Այդ «100 հազարի» և «բռնազաղթի» մասին հիշատակում են նաև Ադրբեջանի պրեզիդենտ Ա. Մուխալիբովը¹², ինչպես նաև մի շարք «ժողովրդագիրներ», որոնք շրջանցում են իրական փաստերը և կատարում միտումնավոր բնդհանրացումներ: Տեսեսագիրության թեկնածու Կ. Մամեդովը, ի թիվս իրականությունը նենգափոխող բազմաթիվ փաստերի, ճիգ է գործադրում համոզելու, որ ՀԽՍՀ-ում ադրբեջանցիների նրկատմամբ կիրառված արտաքսման քաղաքականության հետևանքով 1939 թ. և 1959 թ. մարդահամարների տվյալներով Հայկական ԽՍՀ-ում ադրբեջանցիների ընդհանուր թիվը նվազել է 17,7 տոկոսով¹³: Նվազումը, անշուշտ, իրականություն է: Բայց ինչո՞ւ է տեղի ունեցել: Այդ առումով, իրեն ժողովրդագիր համարող Մամեդովին, ինչպես նաև

¹⁰ Материалы по экономической истории Азербайджана к V международному Конгрессу экономической истории, Баку, 1970.

¹¹ Նույն տեղում, էջ 19:

¹² Սոյուզ, շաբաթաթերթ, 1990, սեպտեմբեր, № 38:

¹³ Մոլոդցով Ազերբայջանում, 1990, 27 մարտի:

հիշյալ դիմումի հեղինակներին, պետք է խորհուրդ տալ, որ որևէ բան շարադրելիս նախապես անհրաժեշտ է առնվազն ծանոթանալ քննարկվող խնդրի շուրջ հրապարակի վրա եղած գրականությունը: Զէ՛ որ, հավանաբար, նա կարդացել է և ծանոթ է իր գրչակից քննարկների վերը հիշատակված հրապարակումներին: Անկասկած, չէր կարող ծանոթ չլինել: Բայց հիշատակելը իրենց ձեռնտու չէ: Զէ՛ որ դրանով իսկ փուլ կգա խախուտ հիմքերի վրա բարձրացող շինծու բուրգը:

Զմոռանա՞ք հիշատակել ճշմարտությունն այն մասին, որ Հայաստանից Ադրբեջան արտագաղթած 58,5 հազար աղըրբեջանցիների մի մասը չհարմարվելով տեղի պայմաններին, կրկին վերադարձան Հայաստան: Նրանք Ադրբեջան տարան կուտնետությունների ունեցվածքի իրենց բաժինը: Շարժական ու անշարժ գույքը վերագնահատվեց անատուններով և նախիրն ու հոտը քվեց Ադրբեջան: Բայց վերադարձան ձեռնտունայն, նախկին իրավունքով փայտեր դարձան կուտնետության ունեցվածքին՝ առանց իրենց տարածք հետ բերելու: Նրանք ստացան տնամերձ հողամաս, կառուցեցին քարից հարմարավետ ընակարաններ, կարճ ժամանակում սկսեցին վարել բարեկեցիկ կյանք:

Դիմումում պիտիվայր շուտ տրված են ներկայացվում 1988—1990 թթ. իրադարձությունները:

«Եվ վերջապես, — հիշատակվում է դիմումում, — մեզ ժամանակներում 1988 թվին սկսվեց ադրբեջանական ժողովրդի գենոցիդի մի նոր փաթիլ: Իրականացվեց լավ պլանավորված անողորմ, ոճրագործ ակցիա: Խրախուսվելով հանրապետական և տեղական իշխանությունների կողմից, հայ ծայրահեղականների սանձազերծ հրոսակներն իրենց պատմական հողերից արտաքսեցին մոտ 200 հազար ադրբեջանցիների, նրանց թողնելով առանց բնակարանի և ունեցվածքի»:

Քանի որ ամեն ինչ հնարովի է, չի խանգարում, որ նույն դիմումում այդ 200 հազարը մի քայլ հետո դառնա «գրեթե երեք հարյուր հազար ադրբեջանցիներ, որոնք ապրում էին Հայաստանում մինչև 1988 թ. ...»:

Ի՞նչ կա որ: Ո՞վ է նրանցից հաշիվ պահանջում, թե մի քանի էջանոց նույն դիմումում ինչպես են կեղծվում և իրարամերձ թվեր վկայակոչվում: Միեկնույն տեքստի մեջ իրաց

հակասող տվյալների օգտագործումը Ադրբեջանում տարածված մեթոդ է: Դա հասկանալի է, քանի որ վկայակոչվում են ոչ թե իրական տվյալներ, վիճակագրական սկզբնաղբյուրներ, այլ այն, ինչ ցանկանում են:

Խնդիրը իհարկե արտագաղթածների թիվը չէ: Այլ առանց ամոթի նախահարձակ լինելն ու մեղադրանք ներկայացնելը: Կրթեք այդ պատգամավորները ամոթի զգացում չունեն: Նրանք իրենց հաշիվ չեն տալիս, թե 1988—1990 թթ. ո՞րտեղ կազմակերպվեց ցեղասպանությունը, ինչպես կյանք մտավ բռնագաղթը և այն քաղաքացիական իրավունք ստացավ: Այդ գաժան ակցիան ադրբեջանցիները պլանավորեցին ու կազմակերպեցին, թե՛ հայերը: Արդեն ասվել է, որ այն կյանք մտավ 1988 թ. փետրվարի 27-ից 29-ին՝ սոււմգայիթյան ցեղասպանությամբ, լայն մասշտաբներ ընդունեց 1988 թ. նոյեմբերի 21-ից սկսած, որն ընդգրկեց Գանձակի, Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Կասիմ-Իսմայիլովի, Իսմայիլիի, Բաքվի և այլ վայրերում հայ բնակչության խոշտանգումներով և բռնի արտաքսումով: Ադրբեջանցի ԽՍՀՄ պատգամավորները ի՞նչ շուտ մոռացություն տվին ամեն ինչ: Մոռացան, որ 1988 թ. նոյեմբերի 21-ից հայերը Գանձակում ստիպված անցան ինքնապաշտպանություն: Այստեղ հայկական Եկեղեցում որեք շարունակ շրջափակված արցանի մեջ էին կանայք, երեխաներ ու ծերունիներ: Նրանց մի կերպ փախցրեցին խորհրդային զինվորների զինված ջոկատները: Բայց դա դեռ փառք էր: Հետագայում գենքով, միայն գենքով կատարվեց բռնագաղթը: Եվ այսբանից հետո, 1988 թ. նոյեմբերի 27-ից, այսինքն Ադրբեջանում հայերի բռնագաղթը սկսվելուց շուրջ մեկ շաբաթ հետո, իսկ սոււմգայիթյան ղեկավարության ակտիվ քան ինչ ամիս անց, հենց Ադրբեջանի ղեկավարությունը կազմակերպեց իրենց հայրենակիցների արտագաղթը Հայաստանից: Ադրբեջանցիները արտագաղթեցին տանելով իրենց ունեցվածքը, մեծ մասամբ փոխանակելով բնակարաններ, միաշրջա Ադրբեջանի հայ բնակչությունը գալիս էր դանակահարված ու թալանված: Ուտի, 1988 թ. փետրվարի Սոււմգայիթի և 1988 թ. նոյեմբերյան ղեկավարի սկիզբը գրվել է Ադրբեջանում, երբ Հայկական ԽՍՀ-ից դեռևս ոչ մի ադրբեջանական ընտանիք տեղից չէր շարժվել: Բայց դա չի խանգարում այդ

ադրբեջանական բնակչության համար գործում էր ադրբեջանական 2 դպրոց, ադրբեջանական թատրոն, Խ. Արտվանի անվան մանկավարժական ինստիտուտում ադրբեջանական բանասիրական ֆակուլտետ, մանկավարժական ուսումնարան և այլն:

Ճշմարտության մոտիկ չէ նաև այն հարցադրումը, որ իրր թե հայկական բուհերում, միջնակարգ մասնագիտական հաստատություններում ուսուցումը տարվում էր հիմնականում հայերեն լեզվով, որի հեռանկարով էլ դրանցում ադրբեջանցի ուսանողները եզակի թիվ էին կազմում: Նախ, պետք է ասել, որ Հայաստանի բոլոր ուսումնական հաստատություններում կային ուսուսական բաժիններ, տասնամյակներ շարունակ գործում էին Բրյուսովի անվան ուսուսական և Խ. Արտվանի անվան մանկավարժական ինստիտուտները, Երևանի ադրբեջանական մանկավարժական ուսումնարանը: Մայրենի լեզվով Ադրբեջանում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ստացած շրջանավարտների ճնշող գերակշռությունը (մասամբ մանկավարժներ, բժիշկներ, դուրառատեսներ, անասնաբույժներ, բուժակներ և այլն) վերադառնում էին Հայաստան և աշխատանքի անցնում իրենց նախկին բնակավայրերում: Ահա թե ինչու 1959—1979 թթ. հանրապետությունում ադրբեջանցիների թիվը ավելացավ շուրջ 1,5 անգամ, որի մասին Ադրբեջանի ժողովրդագիրները լուրջ են: Ադրբեջանի հայ երիտասարդությունը նույնպես մայրենի լեզվով կրթությունը շարունակելու համար գալիս էր Հայաստան: Բայց ավարտելուց հետո, Ադրբեջանի իշխանությունների կողմից բազմաթիվ խոչընդոտներ հարուցվելու պատճառով, այլևս ոչ ոք իր բնակավայրը վերադառնալ չէր կարող:

Այդ տխրահույս գիմումում ժողովրդական պատգամավորները շատ են հոխորտում այն մասին, որ Ղարաբաղը թահա արդեն 70 տարի է, ինչ ունի իր ինքնուրույնությունը, ի դեպ, Միությունում սուվերեն միաթեմական հանրապետության ինքնորոշվող ազգին պատկանող միակ էթնիկական խումբը, որը ինքնորոշման իրավունք է ստացել:

Այդ ի՞նչ ինքնավար իրավունքի մասին է խոսքը, երբ դարբաղցի հայը տասնամյակներ շարունակ ենթարկվել է

բռնության, ազգային հալածանքի, սովի քան հրկու տարի է, ինչ պտնվում է ռազմական, տնտեսական, քաղաքական, գաղափարական, լրատվական և այլ շրջափակումների մեջ: Մարզում վերացվել է խորհրդային իշխանությունը, հանրապետական կազմկոմիտեն Պոլյանիշկոյի գլխավորությամբ, պննվորական խունտայի հովանավորության ներքո, ուղում է հաստատել իր իշխանությունը: Հապա գեմոգրաֆիկ փոփոխություններ կատարելու նպատակով պորթի և վտանգավոր առ հանցագործ տարրերից կազմված միլիցիայի ջոկատների փոխհամաձայնեցված գործողությունները, արհեստական միջադեպեր սարքելը, ջրատարի և գաղատարի պայթեցումները, սպանությունները և այլն և այլն:

Հոգևոր, մշակութային և մարզի հայ բնակչության ազգային շահերը ոտնահարող մինչև օրս կիրառվող քաղաքականությունը, ինչպես երևում է, չի բավարարում ադրբեջանցի ազգայնամոլականներին: Իսկ այդ քաղաքականությունը եղել է դաժան ու սադիստական:

Տարիների ու տասնամյակների ընթացքում վերալորելով հայ բնակչության արժանապատվությունը, առ ոչնչի են հասցրել նրա իրավունքները: Թանն այնտեղ է հասել, որ արգելվել էր հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդումը, սահմանափակվել էին հայերեն լեզվով դպրոցական դասազրքերի¹⁵, հայերեն և ուսերեն լեզուներով Հայկական ԽՍՀ-ում հրատարակվող գրքերի, գեղարվեստական գրականության առաքումը, թերթերի ու ամսագրերի բաժանորդագրությունը: Սին ու հնարովի պատճառաբանություններով փաստորեն արգելվում էր Հայկական ԽՍՀ-ի հետ մշակութային հնարավոր որևէ կապի հաստատումը: Հալածվում և հետապնդվում էին նրանք, որոնք փորձում էին հետաքրքրվել սեփական ժողովրդի պատմությամբ, նրա հերոսական գրվազներով:

ԸԳԽ-ի հայ գրողը զուրկ է եղել մայրենի լեզվով մարզում հրատարակվելու հնարավորություններից¹⁶, մարզի մի շարք շրջաններում ամիսներով լին գործել ռադիոն, հեռուստատե-

¹⁵ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 11 մայիսի:

¹⁶ Խորհրդային Ղարաբաղ, 1988, 13 մայիսի, 2 օգոստոսի:

սությունը: Գյուղերի մեծ մասը շունեն ակումբ, գրադարաններ, շատ գյուղերում հազվադեպ են ցուցադրվում կինոնկարներ: Էլ շենք խոսում դպրոցական գրադարաններում մայրենի լեզվով գրքերի առկայության ծայրահեղ աղքատության մասին: Այդ բոլորի հակառակ պատկերն էր Հայաստանում: ՀեՄՀ ադրբեջանական կամ խառը դպրոցներում աշակերտները ապահովված էին Ադրբեջանական ԽՍՀ-ում հրատարակվող դպրոցական բոլոր դասագրքերով, դպրոցական և գյուղական գրադարանները լեփ-լեցուն էին Ադրբեջանում հրատարակվող պատմական, գեղարվեստական, մշակութային, տեխնիկատնտեսական, առողջապահական և բազմաթիվ այլ բնագավառներ ընդգրկող գրականություն: Հայաստանում ապրող ադրբեջանական ընտանիքների մեծ մասը օգտվում էին հեռուստատեսային և ռադիոհաղորդումներից, գյուղերում մշտապես ցուցադրվում էին կինոնկարներ: Մինչդեռ Ա. Մուսախանովը խիստ վրդովված գրում է, որ իբր թե «ադրբեջանացիները Հայաստանում 70 տարիների ընթացքում չեն պաշտպանվել խորհրդային իշխանությունների կողմից: Նրանց զրկել են ապրելու, աշխատանքի, բնակարանի իրավունքից և ադրբեջանական կողմը իրենց նախկին ղեկավարների անսկզբունքայնության պատճառով չի հայտարարել իսկական գենոցիդի մասին, ողբ գործադրվել է մի ամբողջ ժողովրդի նկատմամբ»¹⁷:

Նախ, նկատենք, որ Հայաստանում գյուղական հայ բնակչության նկատմամբ օրենքի և օրինականության պահանջները խստորեն գործադրվելու պայմաններում, ադրբեջանացիների համար սահմանված կարգը հաճախ շրջանցվել է՝ հօգուտ նրանց: Դա թեև չի կարելի արդարացնել, բայց իրողությունն է: Բերենք մի երկու փաստ: Գաղտնիք չէ, որ ՀեՄՀ գյուղական վայրերում ադրբեջանական ընտանիքներին հատկացվող տնամերձ հողամասերը մեծ մասամբ գերազանցել են օրենքով նախատեսվող նորմաները (Մասիս, Վեդի, Արարատ, Վարդենիս, Սիսիան, Ամասիա, Մեղրի, Կապան և այլուր): Մինչդեռ հայ ընտանիքներին հատկացվող հողարածիները շատ հաճախ այդ նորմաներից պակաս են եղել և այժմ էլ

պակաս են: Հայկական, մասնավորապես նոր կազմավորվող շատ ընտանիքներ եղել են հողադուրի, այնինչ ադրբեջանական այդպիսի ոչ մի ընտանիք չէր գտնվի:

Երկրորդ, մի շարք շրջաններում (Վարդենիսում, Թալիսում, Արագածում) շատ ադրբեջանացիներ, եղբիներ և քրոջեր ունեին իրենց սեփական հստը, հանրային արտադարերում գիշեր ու ցերեկ արածեցնում էին իրենց 50—100 ուխտարների (կային նաև մինչև 300 ուխտար ունեցողներ), ամբողջ ընտանիքները զբաղվում էին միայն օժանդակ տնտեսությամբ և այնտեղ արտադրվող մթերքների վաճառքով:

Արարատյան հարթավայրում ադրբեջանացիների: աշխատունակ բնակչության մեծ մասը զբաղված էր անձնական օժանդակ տնտեսություններում բանջարեղենի արտադրությամբ և այն վաճառելու հարցերով: Բանջարեղենը վաճառում էին Երևանում, ուխտարն ու կարաոֆիլը՝ Ադրբեջանում (Բաքու, Կիրովաբադ, Նախիջևան և այլուր):

Վարդենիսի գյուղերում կային ադրբեջանական շատ ընտանիքներ, որոնք ավելի քան 0,5 հա հողամասի վրա (այդ պարսպապատ հողամասերը այժմ էլ կարող են վկայել ճրջմարտությունը) աճեցրած տունաներով կարաոֆիլը, ուխտարի միսը առանց որևէ արգելքի վաճառում էին հարևան հանրապետությունում: Մինչդեռ ինքը՝ Հայաստանը, այդ մսի կարիքը շատ էր զգում: Այս բոլորի դիմաց փաստորեն Հայաստանի հողում, նրա աշխատող ձեռքերը մթերքներ էին արտադրում Ադրբեջանի համար: Անշուշտ, բարեկիրթ կլիներ, եթե այդ մթերքների որոշ մասը առաքվեր Ադրբեջան՝ կազմակերպված կարգով, դիմացը համապատասխան դյուղատնտեսական մթերքներ ներմուծելու պայմանով: Արցախցիներ, տասնամյակներ շարունակ կրած ազգային հալածանքի ու ազգային արժանապատվությունը ոտնահարելու հետ մեկտեղ, իր ձեռքով ստեղծած բարիքները անվերադարձ Ադրբեջանին նվիրելու և որպես գաղութ, հումքային կցորդը լինելու պատճառով շարունակաբար լքել է իր հողը, պապենական տուն ու տեղը:

Այս լպիրը դիմումի վերջնական նպատակը պարզ է. թյուրիմացության մեջ գցել խորհրդային ժողովրդին, թարցնել Ադրբեջանում տասնամյակներ շարունակ այլ ժողովուրդների

¹⁷ Մոյսիս, 1990, սեպտեմբեր, № 38:

ձուլման, մասնավորապես հայերի ճնշման ու հալածանքի, այլև 1988—1990 թթ. ամբողջ հանրապետությունում իրականացրած ցեղասպանությունը, որը կիրառվեց միջնադարյան վայրագ ու բիրտ մեթոդներով: Կեղծելով իրական գաստերը, գլխիվայր շրջելով իրականությունը, նպատակադրվում է ավարտի հասցնել իր պատմական հողերից հայ ժողովրդի բռնի տեղահանությունը, վերջնականապես լուրացնել նրա պատմական տարածքը, պատմությունն ու մշակութային արժեքները, երկիրը հայտարարել ազդեցչանական կամ թուրքական:



Ամբողջությամբ առած, լեռնային Ղարաբաղի պրոբլեմը վաղուց ի վեր դուրս է եկել սոցիալ-տնտեսական միջոցառումներով լուծելու շրջանակներից: Այդ միջոցառումները Ադրբեջանի ղեկավարության կողմից իրականացվող տարբերակով տվել են սոսկ ողբերգական արդյունքներ: Լուծումը մեկն է՝ Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական իրավունքների ճանաչումը և դրանց գործնական իրականացումը, այն է, ինքը ժողովուրդը վճռի իր ճակատագիրը, ուժերի լիովին նվիրումով մասնակից դառնա մեծ արարչագործությունների: Դա կնպաստի ազգային հարաբերությունների մթնոլորտի առողջացմանը, տնտեսության ներդաշնակ զարգացմանը, նրա տեմպերի արագացմանը, սոցիալական համապարփակ խնդիրների լուծմանը, բնական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ ի շահ մարդկության հետագա առաջընթացի: Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության պահանջը ոչ թե տարածքային, այլ ԽՍՀՄ սահմանադրական իրավունքների շրջանակներում ինքնորոշման իրավունքի գործնական ճանաչման պարզ խնդիր է:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ԱՆՀԱՏԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԷՆՏՎԱՆՔՆԵՐԸ | 3 |
| 1988 թ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ | |
| Դաս առաջին | 20 |
| Դաս երկրորդ | 24 |
| Դաս երրորդ | 25 |
| Դաս չորրորդ | 26 |
| Դաս հինգերորդ | 29 |
| Դաս վեցերորդ | 32 |
| ՍՈՅՈՒՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼՂՄ-ՈՒՄ | 42 |
| ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ ԼՂՄ-ՈՒՄ | 61 |
| ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԷՄԻՍՅԱՆ ՓԱՍՏԱԲԴԹԵՐԸ | 63 |
| ՓՈՔՐԱԹԻՎ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԱՌԻՄԷԼԻՏԱՅԻՆ ԱԳՐԵՋԱՆՈՒՄ | |
| ՄԻՆՁԵՎ 1988—1990 թթ. ԴԵՊՔԵՐԸ | 80 |
| ՓՈՔՐԱԹԻՎ ԱՋԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՍԵՐՄՈՒՆԵՐԸ ԶԱՅԱՍԱՆՈՒՄ | 89 |
| ԲՆԱՇԽԱՐՀԻՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՂԻՍԱԿԱՆԸ | 94 |
| Սուժալիթ | 98 |
| Ռոնազադի և արտագաղթ | 104 |
| 1989 թ. հուլիս-սեպտեմբերի վայրագությունները | |
| Ազդեցչանում գտնուում են մարդիկ | 119 |
| Քե ինչպե՞ս Սուժալիթը երկնից բացու | 130 |
| ՄՏԱՆՈՎՈՒԹՅՈՒՆ ՓԱՆՍԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՄԱՐ | 152 |
| ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԹԿՈՒՆՔՈՒՄ | 179 |
| ՇՐՋԱՓԱՌՈՒՄ | 195 |
| ԶԱՍԻՓՓՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԱԳՐԵՋԱՆՈՒՄ ԶԱՍՅՎԵԼ Է ԱՎԱՐՏԻ | |
| ԷՆՐԹԻ Է ԴՐՎԱՍ ԱՐՅԱՆԸ | 206 |
| ԶԱՅԿՈՒԼ | 225 |
| ԿԵՂՍՈՒՄ ԵՆ ԱԳՐԵՋԱՆՈՅ ԸՆՏՐՎԱՍ ԽԱՇՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ | |
| ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ | 235 |

**Վարդիթի Եղիշի Խոջաբեկյան
ԱՐՑԱԽԸ ՓՈՐՁՈՒՑԱՆ ԺԱՄԻՆ**

**Владимир Егншевич Ходжабекян
АРЦАХ В ЧАС ИСПЫТАНИЯ**

(На армянском языке)
Ереван «Айастан» 1991

Խմբագիր՝ Ա. Ա. Ասրյան
Նկարիչ՝ Մ. Վ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Պապոյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Յ. Վարդանյան
Վերատպող արագրիչներ՝ Գ. Վ. Գանիելյան

ИБ 7229

Հանձնված է շարվածքի 4. 03. 1991 թ.: Ստորագրված է տպագրության
5. 07. 1991 թ.: Չորմատ 84×108¹/₃₂: Քուլթ տպագրական № 2: Տառա-
տեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 13,44 պլամ. տպագր.
մամ., 11,32 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 20.000: Պատվեր՝ 1920: Գինը՝
3 սուրյի:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՀ նախարարների կաբնրդին աղընթեր մամուլի կոմիտեի № 1 տպարան,
Երևան-10, Ալավերդյան 65:

Типография № 1 Комитета по печати при Совете Министров
Республики Армения. Ереван-10, ул. Алавердяна, 65.